

ԵԱՀԿ

Եվրոպական անվտանգության և
համագործակցության կազմակերպության
Եվրոպական գործադիրություն



Համագործական կորուրյանք
կանոնը առցիցիցին



Նիդեղադիմի օրագավորություն

ԿԱՆԱՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՎՄՔ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՎՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

**ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Վերլուծական տեսություն

**ԵՐԵՎԱՆ
«ԱՍՈՂԻԿ»
2012**

ՀՏԴ 396;342.8
ԳՄԴ 66.74+67.99(2)05
Կ 200

ԵԱՀԿ

Եվրոպայում անվտանգության և
հասարածագության կազմակերպություն
Երևանի գրասենյակ



Համալսարանական կրթությամբ
կանաց ասոցիացիա



Նիդեղանդերի
մագավորություն

Կ 200 Կանաց քաղաքական մասնակցությունը
Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական
ընտրություններին: Վերլուծական տեսություն. - Եր., Ասողիկ, 2012. - 152 էջ

**«Կանաց քաղաքական մասնակցությունը
Հայաստանի Հանրապետության 2012 թվականի խորհրդարանական
ընտրություններին» վերլուծական տեսությունը պատրաստվել է
Համալսարանական կրթությամբ կանաց ասոցիացիայի Գենդերային
հետազոտությունների կենտրոնի կողմից ԵԱՀԿ երևանյան գրասենյակի
աջակցությամբ և Վրաստանում Նիդեղանդերի մագավորության
դեսպանատան ֆինանսավորմամբ:**

**Սույն հրապարակման մեջ արտահայտված կարծիքները կարող են
չհամընկնել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կարծիքներին:**

Համալսարանական կրթությամբ կանաց ասոցիացիայի Գենդերային
հետազոտությունների կենտրոնի փորձագետները երախտազիտություն են
հայտնում հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացու-
ցիչներին, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպութ-
յունների լիդերներին և ակտիվիստներին, բոլորին, ովքեր մասնակցել են ֆոլկուս
խմբերի ու կոր սեղանների աշխատանքներին և աջակցություն են ցուցաբերել՝
արամադրելով վիճակագրական տվյալներ և որիշ նյութեր սույն վերլուծական
տեսությունը պատրաստելու համար:

ՀՏԴ 396;342.8
ԳՄԴ 66.74+67.99(2)05

ISBN 978-9939-50-203-8

ISBN 978-92-9234-165-7

© Համալսարանական կրթությամբ կանաց ասոցիացիա, 2012
Նյութերի օգտագործման դեպքում հղումը պարտադիր է:

© ԵԱՀԿ 2012

**«Կանանց քաղաքական մասնակցությունը
Հայաստանի Հանրապետության 2012 թվականի
խորհրդարանական ընդունություններին»**

վերլուծական գետությունը

**պատրաստել է Համալսարանական կրթությամբ կանանց
ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենսունակ
փորձագեղների խումբը՝ հետևյալ կազմով.**

Զեմմա Հասրաթյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ,
Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, մանկավարժա-
կան գիտությունների թեկնածու, նախագծի ղեկավար

Լիլիթ Չաքարյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախա-
գահ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի
Հյուսիսային համալսարանի կրթության որակի վարչության պետ, պատմա-
կան գիտությունների թեկնածու

Թամարա Հովհաննեսյան

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի վարչության
անդամ, «Նովոյե Վրեմյա» թերթի քաղաքական մեկնարան

Գայանե Արմաղանովա

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի փոխնախա-
գահ, Հայաստանի առողջապահության աշխատողների արհեստակցական
կազմակերպությունների հանրապետական միության նախագահ

Բովանդակություն

| | |
|--|----|
| ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ | 6 |
| ԳԼՈՒԽ 1. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑ- ՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻԲՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԶԱՋԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ | 30 |
| ԳԼՈՒԽ 2. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐՎԱՐԳՈՒՄ | 40 |
| Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը | 40 |
| Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրները կուսակ- ցությունների քաղաքական օրակարգում. կուսակցությունների ծրագրե- րի գենդերային վերլուծությունը և կուսակցությունների նախընտրական ծրագրերը | 45 |
| Կուսակցությունների լիդերների հրապարակային ելույթներում կանանց դերի և քաղաքական մասնակցության զնահատականը | 53 |
| Քաղաքական կուսակցությունների և դրանց ղեկավար մարմինների գենդերային կազմը | 55 |
| Կանանց ներկուսակցական խորհուրդները և միավորումները՝ որպես կանանց քաղաքական սոցիալականացման ինստիտուտներ | 61 |
| ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների համամա- սնական ընտրակարգով ընտրական ցուցակների կազմման սկզբունքները և մեխանիզմները | 65 |
| Կանանց քաղաքական մասնակցության ճանապարհին ընկած խոչընդոտները | 68 |
| Եզրակացությունները | 71 |
| Գլուխ 3. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ | 73 |
| Կանայք քաղաքական կուսակցությունների համամասնական ցուցակներում | 73 |
| Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կուսակցությունների համամասնական ընտրակարգով ընտրացուցակների ձևավորման առանձնահատկությունները: Կանանց ինքնարացարկները նախընտրական շրջանում | 76 |
| Սեծամասնական ընտրակարգով առաջադրված կանայք | 80 |
| Խորհրդարանի պատգամավորի թեկնածու առաջադրված կանանց տարիքային և մասնագիտական կազմը | 87 |

| | |
|---|------------|
| ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔՎՈՏՈՎԱՆ դե յուրե և դե ֆակտ հիմգերորդ գումարման | |
| Ազգային ժողովում: Հետրնտրական ինքնարացարկերը որպես | |
| քվոտաների չեղորացման մեխանիզմ..... | 92 |
| Կանանց խորհրդարան մտնելու սցենարներ..... | 99 |
| Կանանց քաղաքականություն մուտք գործելու մոտիվացիան..... | 106 |
| ԳԼՈՒԽ 4. ԿԱՆԱՆՑ ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ..... | 116 |
| Հասարակական կազմակերպությունները որպես կանանց | |
| հասարակական-քաղաքական սոցիալականացման ինստիտուտ..... | 116 |
| Քաղաքական կուսակցությունների՝ որպես կանանց քաղաքական | |
| սոցիալականացման ինստիտուտների դերը ՀԿ-ների լիդերների և | |
| ակտիվիստների գնահատմամբ..... | 123 |
| Ընտրություններին ՀԿ-ների մասնակցության փորձը..... | 125 |
| Ընտրությունների արդյունքները. գենդերային իրավահասվասարության | |
| հիմնախնդիրը կանանց ՀԿ-ների գնահատմամբ..... | 128 |
| ՀՀ Ազգային ժողովում գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության հասնելու սպասումները ընտրությունների մասին օրենսդրությունում գենդերային քվոտաները բարձրացնելուց հետո | 130 |
| Հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական | |
| մասնակցությանը..... | 131 |
| Մուտք քաղաքականություն. մոտիվացիայի գենդերային հայեցակետերը.. | 133 |
| Կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական | |
| կուսակցությունների համագործակցությունը որպես հասարակության | |
| ժողովրդավարացման գործոն | 135 |
| Խոշընդուները կանանց հասարակական կազմակերպությունների և | |
| քաղաքական կուսակցությունների համագործակցության ճանապարհին... Հասարակական կազմակերպությունների դիրքորոշումը կին | 136 |
| թեկնածուներին պաշտպանելու հարցում..... | 137 |
| Գենդերային քաղաքականության հայեցակարգը և ուսումնականությունը | |
| կանանց և տղանարդկանց հավասարակշռված մասնակցության | |
| ապահովման գործում..... | 138 |
| ՎԵՐՋԱԲԱՆ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ | |
| ԺՈՂՈՎԻ 2012 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ | |
| ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ..... | 140 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ..... | 147 |

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. Մշտադիտարկման նպատակը, խնդիրները և մեթոդները

Մշտադիտարկումը նպատակառությունը է ք. խորհրդարանական ընտրություններում կանաց քաղաքական մասնակցության իրավիճակի դիտարկմանն ու գնահատմանը, օրենսդրական ոլորտում և կառավարման համակարգի քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանաց մասնակցության որակական վերլուծությանը, կանաց քաղաքական մասնակցությունը խոչընդոտող բացասական գործելակերպի և կարծրատիպային պատկերացումների վերհանմանը, հասարակության հասարակական-քաղաքական կյանքում կանաց դերի բարձրացման և քաղաքական գործունեության ոլորտում նրանց ներկայացվածության ընդլայնման հանձնարարականների մշակմանը:

Մշտադիտարկումը կատարվել է գենդերային հավասարության խնդիրների լուծման ընդհանուր մոտեցումների նկատառումով, որոնք ձևակերպված են հիմնարար միջազգային փաստաթղթերում՝ *ՍՍԿ-ի Կանաց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայում*, *ՍՍԿ-ի Կանաց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում*, *Պեկինի հոչակագրում* և *Պեկինի գործողությունների ծրագրում*, *Հազարամյակի հոչակագրում* և *Հազարամյակի գարգացման նպատակներում*:

Մշտադիտարկման ընթացքում հաշվի է առնվել «ՍՍԿ-ի Կանաց նկատմամբ խորականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտողություններ, Հայաստան» (CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, 2009 թ., 2 փետրվարի) փաստաթուղթը, ինչպես նաև դիտողությունների լրացումները (CEDAW/C/ARM/CO/4/Rev.1/Add.1, 2011 թ., 1 նոյեմբերի), մասնավորապես՝ ընտրական գործընթացներին և ՀՀ Ազգային ժողովում կանաց ներկայացվածությանը վերաբերող հանձնարարականները:

Ուսումնասիրության ընթացքում նկատի են առնվել Եվրոպայի խորհրդի՝ հանուն ժողովրդավարության զարգացման գենդերային հավասարության ապահովման խնդրին վերաբերող կարևորագույն փաստաթղթերի դրույթներն ու հանձնարարականները, ինչպիսիք են՝ «Հռչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության» (1997 թ.), «Համայիր մոտեցում կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներին» (1998 թ.), Եվրոպայի խորհրդի «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» [Rec (2003)3], «Սեռերի հավասարություն. առանցքային հարց հասարակությունների համար փոփոխությունների փուլում» (Ակոպիե, 2003), «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» [Rec 1676 (2004)], «Որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին» [Rec 1738 (2006)], «ԶԼՄ-ներում սերսիստական կարծրատիպերի դեմ պայքարի մասին» [Rec 1931 (2010)] հանձնարարականները, ԵԽԽՎ-ի «Ընտրական համակարգը՝ որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածության բարձրացման գործիք» [բանաձև 1706 (2010)], «Եվրոպայում գենդերային հավասարության համար առավել բարենպաստ օրենքների պաշտպանությունը» [բանաձև 1780 (2010)], «Վեհաժողովի ազգային պատվիրակություններում նվազ ներկայացված սերի 30-տոկոսանոց նվազագույն ներկայացվածությունը» [բանաձև 1781 (2010)] բանաձևները, ինչպես նաև 2010 թ. փետրվարին ՀՀ կառավարության հաստատած Գենդերային քաղաքականության հայեցակարգի և չորրորդ գումարման ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի դրույթները:

Մշտադիրակումն իրականացնելիս առաջադրվել են հետևյալ խնդիրները

- ուսումնասիրել Հայաստանում գենդերային իրավիճակը 2012 թ. ընտրական գործընթացների նախաշեմին, վեր հանել քաղաքական ոլորտում ձևավորված գենդերային անհավասարության պատճառները,
- առանձնացնել կանանց քաղաքական մասնակցության վրա ազդող օրիենտիվ և սուբյեկտիվ պատճառները,
- վեր հանել կանանց ընտրական վարքագիծը կանխորոշող գործոններն ու նախադրյալները,
- վերլուծել կանանց քաղաքական մասնակցության փորձը,
- կազմակերպել քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբեր և կլոր սեղաններ,
- անցկացնել հանդիպումներ քաղաքական կուսակցություններում և հասարակական կազմակերպություններում, հարցագրույցներ՝ փորձագետների ընտրված խմբի հետ,

- հետևել քաղաքական կուսակցությունների ընտրական քարոզարշավների ընթացքին,
- վերլուծել ՀԿ-ների մասնակցությունը ընտրական գործընթացներին:

Մշտադիրարկումն անցկացնելիս կիրառվել են հետևյալ մեթոդները

- վերլուծություն՝
 - օրենսդիր իշխանությունում և գործադիր իշխանության՝ քաղաքական որոշումների ընդունման մակարդակի կառույցներում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում կանաց ներկայացվածության,
 - երկրի գենդերային իրավիճակը բնորոշող վիճակագրական տվյալների,
 - քաղաքական կուսակցությունների ծրագրերի, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների, մեծամասնական ընտրակարգով պատգամավորի կին թեկնածուների նախընտրական ծրագրերի,
 - Հայաստանի խորհրդարանի 2012 թ. ընտրություններից առաջ և ընթացքում կանաց քաղաքական մասնակցության իրավիճակի,
- ֆոկուս խմբեր մինչև ընտրությունները քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- ընտրությունների արդյունքների քննարկման կլոր սեղաններ քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- հարցագրույցներ պատգամավորի կին թեկնածուների, քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների կին առաջնորդների և ակտիվիստների հետ ընտրություններից առաջ և հետո,
- ԶԼՄ-ներում ընտրություններին կանաց մասնակցության ներկայացման վերլուծություն:

Ֆոկուս խմբերը և կլոր սեղանները՝ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, անցկացվել են հանրապետության տարածաշրջանների հնարավորին լայն ընդգրկմամբ Երևանում և 9 մարզերի՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի մարզերի 11 քաղաքներում:

II. Մշտադիրարկման փուլերը

Մշտադիրարկումն իրականացվել է երկու փուլով՝

- նախընտրական շրջան և ընտրությունների օրը,
- հետընտրական շրջան:

1. Մշտադիտարկման առաջին փուլը՝ նախընտրական շրջանը և ընտրությունների օրը

1.1. Նախընդունական շրջանում՝ օրենսդրական ոլորտում և կառավարման համակարգի քաղաքական որոշումների ընդունման մակարդակում կանոնաց քաղաքական մասնակցության իրավիքական դիրքարկման ու զնահարձակման ընթացքում, կարգավել է վերլուծությունը:

- 2007 թ. խորհրդարանական ընտրություններից հետո անցած 5 տարում ՀՀ Ազգային ժողովում և գործադիր իշխանության որոշումների ընդունման մակարդակում կանոնաց ներկայացվածության իրավիքական վերլուծություն: Մասնավորապես՝ կատարվել է ՀՀ Ազգային ժողովում, ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ղեկավարությունում, գործադիր իշխանության քաղաքական որոշումների ընդունման մակարդակում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ընտրական հանձնաժողովներում կանոնաց ներկայացվածության վիճակագրական տվյալների վերլուծություն:
- Կանոնաց քաղաքական մասնակցության վերլուծություն մինչև ընտրությունները, ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների գրանցման, կուսակցությունների կողմից համամասնական համակարգով պատգամավորի թեկնածուների ցուցակների ձևավորման և Կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաղաքական կուսակցությունների ցուցակների և մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման շրջանում:
- Քաղաքական կուսակցությունների ծրագրերի, կուսակցությունների քաղաքականության մեջ գենդերային ռազմավարության, կուսակցությունների ղեկավարությունում գենդերային հավասարակշռվածության աստիճանի, կուսակցությունների ղեկավար մարմիններում կանոնաց առաջմղման գործելակերպի, կանոնաց խորհրդական աշխատանքի և ներկուսակցական ժողովրդավարության զարգացման վրա դրանց գործունեության ազդեցության վերլուծություն:
- Քաղաքական կուսակցությունների համամասնական ընտրակարգով և մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների ցուցակների գենդերային քաղաքրիշի վերլուծություն:
- Քաղաքական կուսակցությունների նախընտրական քարոզարշավի վերլուծություն:

1.2. Ուսումնասիրվել են՝

- քաղաքական կուսակցությունների ծրագրերը, գենդերային հիմնախնդիրները քաղաքական գործելակերպում և կուսակցությունների ռազմավարություններում,

- 2012 թ. ընտրությունների նախաշեմին կանանց առաջմղման գործելակեացն ու նրանց ներկայացվածությունը քաղաքական կուսակցությունների դեկավար մարմիններում,
- կուսակցությունների դեկավարությունում գենդերային հավասարակշռվածության աստիճանը հանրապետական մակարդակում և կուսակցությունների տարածաշրջանային կառույցներում,
- կուսակցությունների կանանց խորհուրդների գործելակերպը և դրանց ազդեցությունը ներկուսակցական ժողովրդավարության զարգացման վրա, կանանց խորհուրդների քաղաքական օրակարգը ընտրությունների նախօրեին,
- քաղաքական կուսակցությունների աշխատանքը կանանց քաղաքական ռեզերվի ձևավորման ուղղությամբ,
- կանանց մասնակցությունը քաղաքական կուսակցությունների նախընտրական արշավներում,
- քարոզարշավի առանձնահատկությունները 2012 թ. ընտրություններում և կանանց մասնակցության աստիճանը,
- հասարակական, հատկապես՝ կանանց հասարակական կազմակերպությունների դիրքորոշումն ընտրական գործընթացներին և դիտորդական առաքելություններին մասնակցելու առնչությամբ:

1.3. Մշկադիպարկման առաջին փուլի ընթացքում անցկացվել է 9 ֆոկուս խումբ, այդ թվում՝ 6-ը քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների և 3-ը՝ հասարակական կազմակերպությունների լիդերների ու ակտիվիստների մասնակցությամբ:

Ֆոկուս խմբերի վարման համար սահմանվել են ուսումնասիրվող հիմնական հարցերը՝ և ընդհանրական երկու խմբերի համար, և՝ առանձնահատուկ քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների համար:

Խոնդիր է դրվել պարզելու ֆոկուս խմբերի մասնակիցների՝ **թե՛ քաղաքական կուսակցությունների, թե՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքները՝**

- 2007 թ. ընտրություններից հետո հասարակության մեջ կանանց քաղաքական մասնակցության պատկերացումների փոփոխությունների մասին,
- կանանց և տղամարդկանց՝ խորհրդարանի պատգամավոր ընտրվելու շարժադիրների մասին,
- կանանց քաղաքական մասնակցությունը խոշընդոտող կամ դրան նպաստող գործոնների մասին,
- ներկուսակցական ժողովրդավարության զարգացման վրա կուսակցությունների կանանց խորհուրդների ազդեցության և կուսակցական աշխատանքում կանանց դերի բարձրացման հնարավորությունների մասին,

- քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների համագործակցության ոլորտների և երկրի ժողովրդավարության վրա այդ համագործակցության ազդեցույն մասին:

Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերում նպատակ է դրվել բացահայտել, թե ինչ կարծիք ունեն մասնակիցները կուսակցությունների՝ հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի բարձրացման աշխատանքների մասին ՀՀ կառավարության կողմից Գենդերային քաղաքականության հայեցակարգը և հայեցակարգի իրականացման ռազմավարությունն ընդունելուց հետո, ինչպես նաև կուսակցությունների քաղաքական գործելակերպի փոփոխությունների, կուսակցությունների դեկավար մարմիններում և մարզային կառույցներում գենդերային ներկայացվածության, ընտրական գործընթացներում և կուսակցությունների՝ համամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների ցուցակների կազմմանը կանանց մասնակցության մասին:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերում խնդիր է դրվել բացահայտել մասնակիցների կարծիքները երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման միտումների մասին ՀՀ կառավարության կողմից Գենդերային քաղաքականության հայեցակարգը և հայեցակարգի իրականացման ռազմավարությունն ընդունելուց հետո, ինչպես նաև բացահայտել 2012 թ. ընտրական գործընթացներում կանանց հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավոր ձևերը:

Թե՛ քաղաքական կուսակցությունների և թե՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերում խնդիր է դրվել նաև վեր հանել մասնակիցների իրազեկության աստիճանը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին, որը ՀՀ Ազգային ժողովն ընդունել է առաջին ընթերցմամբ:

Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերն անցկացվել են Երևանում, Վանաձորում, Արտաշատում, Հրազդանում, Արովյանում, Սևանում։ Դրանց մասնակցել է 11 քաղաքական կուսակցությունների 83 ներկայացուցիչ, այդ թվում՝ 24-ը Հայաստանի հանրապետական կուսակցությունից, 17-ը՝ «Օրինաց երկիր» կուսակցությունից և 12-ական ներկայացուցիչներ «Քարգավաճ Հայաստան» և «Ժառանգություն» կուսակցություններից։ Ֆոկուս խմբերի մասնակիցներից 17 կին ընդգրկված էր ընտրություններին մասնակցող 8 քաղաքական կուսակցությունների և մեկ կուսակցությունների դաշինքի ցուցակներում։

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերն անցկացվել են Երևանում, Գյումրիում և Եղեգնաձորում 32 հասարակական կազմակերպությունների 48 լիդերների և ակտիվիստների մասնակցությամբ:

1.4. Անցկացվել է 14 հարցազրույց այն կանանց հետ, որոնք ՀՀ Ազգային ժողովի պարզամափորի քեկնածու են՝ առաջադրվել համամասնական ընդունակարգով, և 6 հարցազրույց՝ հասարակական կազմակերպությունների ակտիվիստների հետ, որոնք փորձագիտական գնահատական են պահի ընդունական գործընթացներին, այդ թվում՝

- **Արդինե Հովհաննիսյանի, Մարգարիտ Եսայանի և Նաիրա Կարապետյանի հետ՝ առաջադրված Հայաստանի հանրապետական կուսակցության ցուցակով,**
- **Էլինար Վարդանյանի՝ «Բարզավաճ Հայաստան» ցուցակով,**
- **Նվարդ Մանասյանի՝ ՀՅԴ-ի ցուցակով,**
- **Հերիքնազ Նազարյանի՝ «Օրինաց երկիր» կուսակցության ցուցակով,**
- **Լյուդմիլա Սարգսյանի և Լիլիթ Մակունցի՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի ցուցակով,**
- **մեծամասնական ընդունակարգով պարզամափորի քեկնածու առաջադրված Անահիտ Բախչյանի («Ժառանգություն» կուսակցությունից) և անկուսակցական Սարիկ Սեյրանյանի հետ,**
- **քաղաքական կուսակցությունների կիս ակտիվիստներ Մարիա Թժրիգյանի (ՀՅԴ կուսակցությունից, Սոցինստերնի փոխնախագահ), Մարիամ Ապրեսյանի («Բարզավաճ Հայաստան» կուսակցությունից), Ֆրիդա Հարությունյանի («Ժառանգություն» կուսակցությունից), Սուսաննա Արքահամյանի («Օրինաց երկիր» կուսակցությունից) հետ:**

Անցկացվել է 6 հարցազրույց հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ, այդ թվում՝ Նատալյա Մարտիրոսյանի (Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի նախագահ), Գոհար Չահնազարյանի (Կանանց ռեսուրսային կենտրոնի համանախագահ), Նոննա Մարգարյանի («Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի նախագահ), Ալիդա Թովուզյանի (Կանանց հանրապետական խորհրդի նախագահ), Աղավնի Կարախանյանի («Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի նախագահ), Ելենա Վարդանյանի (ՀՀ Հանրային խորհրդի գենդերային հարցերի և ժողովրդագրության հանձնաժողովի նախագահ) հետ:

Փորձագետները հետևել են քաղաքական կուսակցությունների առաջադրած և մեծամասնական ընտրակարգով մրցող թեկնածուների հանդիպումներին, կին թեկնածուների, ինչպես նաև ընտրական գործընթացի այլ դերակատարների հրապարակային ելույթներին և նրանց մասնակցությամբ քանավեճերին, մամլ ասուլիսներին և այլ միջոցառումների, որոնք կազմակերպել են կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները, նաև ուսումնասիրել են համացանցի կայքերի նյութերը:

Բացի այդ, փորձագետները հիմնվել են այլ աղբյուրների, մասնավորապես՝ ընտրությունների շրջանում հանրապետությունում անցկացված հասարակական կարծիքի հարցումների, սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքների վրա:

1.5. ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընդունված գործընթացներում կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի դիրքարկման և գնահատման գործընթացում հիմնական ուշադրությունն ուղղվել է հետևյալ հարցերի ընկալությանը

- ի՞նչ չափով է համամասնական և մեծամասնական տեղերի հարաբերակցությունն ազդեցություն բողել խորհրդարանի գենդերային կազմի վրա,
- ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխություններն ինչպես՝ անդրադարձան կանանց համամասնական և մեծամասնական ընտրակարգելու ընտրություններին մասնակցելու հնարավորությունների վրա,
- ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված պարտադիր քվոտան՝ կուսակցական ցուցակներում կանանց 20%-անոց ներկայացվածությունը, ի՞նչ չափով է ՀՀ Ազգային ժողովում կանանց թիվը մեծացնելու նախադրյալներ ստեղծել, ինչպես են ընտրվում կանանց թեկնածությունները քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում ընդգրկելու համար,
- ի՞նչ գործոններ են պայմանավորել կանանց ցածր կամ բարձր մրցունակությունը ընտրություններում,
- ի՞նչ գործոններ են նպաստել կանանց ակտիվացմանը կամ խոշընդունելու նրանց քաղաքական մասնակցությունը:

1.6. Որոշ եզրակացություններ ըստ ընդունված գործընթացներում կանանց քաղաքական մասնակցության իրավիճակի դիրքարկման և գնահատման արդյունքներ

➤ ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններին մասնակցող Հայաստանի հանրապետական կուսակցության, «Քարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր», ՀՅ դաշնակցություն, «Ժառանգություն» կուսակցությունների, Հայաստանի կոմունիստական կուսակցության, Հայաստանի դեմոկ-

րատական կուսակցության և «Սիավորված հայեր» կուսակցության, «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի **քաղաքական ծրագրերի և նախընտրական ծրագրերի վերլուծությունը** հնարավորություն է տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

- Հնայած այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը 2010 թ. հաստատել է Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թ.՝ Հայաստանի Հանրապետության 2011-2015 թթ. գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիրը, **քաղաքական կուսակցությունների ծրագրերում գենդերային քաղաղիչն առհասարակ չփիփարկում:**
- Քաղաքական կուսակցություններից, այդ թվում և կառավարության կողմից նաև նրա քաղաքականության ու գործունեության համար պատասխանատու կուսակցություններից և ոչ մեկը չի որոշել Գենդերային քաղաքականության հայեցակարգի իրականացման, հասարակական-քաղաքական գործունեության ոլորտում կանանց մասնակցության ակտիվացման, կանանց քաղաքական որոշումների ընդունման մակարդակ առաջ մղելու և իշխանության բոլոր մակարդակների կառույցներում գենդերային հավասարակշռված ներկայացվածության հասնելու իր խնդիրները:
- 2012 թ. ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունները չեն սահմանել նաև իրենց խնդիրները Հայաստանի՝ 2002-2007 թթ. ժամանակաշրջանի երրորդ և չորրորդ պարբերական գեկույցների կապակցությամբ ՍԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացնան կոմիտեի հանձնարարականների կատարման ուղղությամբ: Կուսակցությունների մեծ մասի ծրագրերում, փաստորեն, խսպան բացակայում են գենդերային հայեցակետերը, ուշադրություն չի դարձվել ներկուսակցական գործունեության մեջ կանանց ակտիվացման և առհասարակ կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման խնդիրներին:
- Քաղաքական կուսակցությունների ընտրացուցակներում կանանց ներկայացվածության շարժներացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում ութ կուսակցությունների և մեկ կուսակցությունների դաշինքի ցուցակներում ընդգրկվել է 235 կին, ինչը կազմում է 22,9% գենդերային 20%-ի քվոտայի պայմաններում, այն դեպքում, եթե արդեն իսկ 2007 թ. խորհրդարանական ընտրությունների 15%-ի քվոտայի պայմաններում կանանց ներկայացվածությունը կուսակցությունների ցուցակներում կազմում էր 22,6%:

Այսպիսով, գենդերային քվոտայի բարձրացումը 15%-ից մինչև 20% էաւելս չմեծացրեց կանանց ներկայացվածությունը կուսակցական ցուցակներում կազմում էր 22,6%:

րում, ինչը ՀՀ ընտրական օրենսգրքում այն դրույթի ամրագրման հետևանքն է, ըստ որի. «Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը»: Քաղաքական կուսակցությունների մեծ մասը բառացիորեն հասկացավ, որ կանայք պետք է 6-րդ համարից ավելի առաջ չինեն, և կանանց համար «ամրագրեց» 6-րդ, այնուհետև 11-րդ, 16-րդ, 21-րդ և նոյն պարբերականությամբ հաջորդ համարները:

Հետևանքն այն էր, որ կուսակցությունների ցուցակների առաջին հնգյակներում ներկայացվեց ընդամենը 4 կին կամ ընտրական ցուցակներում ընդգրկված կանանց ընդհանուր թվի 1,7%-ը, առաջին տասնյակի կազմում՝ ընդամենը 15 կին կամ 6,4%-ը: 2007 թ. ընտրությունների հետ համեմատած՝ քաղաքական կուսակցությունների ընտրական ցուցակներում ներկայացված կանանց թիվն առաջին հնգյակում նվազել է չորս, իսկ առաջին տասնյակում՝ երկու անգամ: Այսպիսով, ցուցակներում կանանց դասավորության ըստ էության խտրական սկզբունքը՝ ամրագրված օրենքում, անգամ 20%-անոց քվոտայի պարագայում չհանգեցրեց որակապես ՀՀ Ազգային ժողովի գենդերայնորեն զգայուն կազմի ձևավորման:

Ընտրությունների արդյունքները ցույց տվեցին, որ կուսակցությունների քաղաքականությունն ուղղված չի եղել ՀՀ Ազգային ժողովում՝ որպես ներկայացուցչական ժողովդավարության մարմնում, գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության ապահովմանը: Նախընտրական շրջանում կուսակցությունները չմշակեցին կուսակցության ներսում և հասարակության հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի ակտիվացմանն ուղղված որոշակի և հետևողական միջոցներ:

Կուսակցությունների բարձրագույն մարմինները նպատակային աշխատանք չեն տանում հասուկ ժամանակավոր միջոցների՝ որպես գենդերային հավասարության հասնելու գործիքի և Հայաստանում գուգակշռված ժողովդավարության կայացման նախադրյալի անհրաժեշտության նասին կուսակցության անդամների իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Քաղաքական գործելակերպում գենդերային նոտեցումների ներդրման և գենդերային հավասարության հասնելու իրական արդյունքների տեսանկյունից կուսակցությունների քաղաքականությունը իմիտացիա է:

Կանանց առաջմղմանը և գենդերային հավասարության ապահովմանը, օրենսդրական և գործադիր իշխանության մարմիններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ձեռքբերմանը խանգարում է քաղաքական կուսակցությունների դեկավար կառույցներում, որոնք մեծ

մասամբ ձևավորված են տղամարդկանցով, ժամանակավոր հատուկ միջոցների անհրաժեշտությունը չըմբռնելը:

Առավել բարձր գեներային քվոտաներ և դրանց հասնելու իրական մեխանիզմներ ընդունելու ճանապարհին լուրջ խոշնդրություն է մնում տղամարդ պատգամավորների մեծ մասի հայրիշխանական մտածողությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նրանցից շատերը, որոնք գործնականում չեն մասնակցում օրենսդրական գործունեությանը, պատրաստ չեն հրաժարվելու պատգամավորական մանդատից և հեռանալու ՀՀ Ազգային ժողովից:

Իշխանության կառույցները, կրթական համակարգը, զանգվածային լրատվամիջոցները չեն կատարում ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի այն հանձնարարականները, որոնք վերաբերում են տեղեկատվական-ճանաչողական աշխատանքներին՝ ուղղված հասարակական գիտակցության մեջ կանանց հասարակական-քաղաքական մասնակցության նշանակության դրական պատկերացման ձևավորմանը և գեներային կարծրատիպիական հաղթահարմանը, ԶԼՄ-ներում կանանց դերի ճիշտ լուսաբանմանը:

Կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերը ցույց տվեցին, որ շատ լիդերներ և ակտիվիստների մեծ մասը տեղեկացված չեն, որ ՀՀ կառավարությունն ընդունել է Գեներային քաղաքականության հայեցակարգը և հայեցակարգի իրականացման ռազմավարությունը, ինչպես նաև տեղյակ չեն Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական գեներացների կապակցությամբ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներին: Իրագել է ին միայն ֆոկուս խմբերի այն մասնակիցները, որոնք այս կամ այն կերպ համագործակցել են կանանց ՀԿ-ների հետ կամ ունկնդել են Համալսարանական կրթությամբ կանանց ասցիացիայի կանանց լիդերության դպրոցի կամ ուրիշ ՀԿ-ների կրթական ծրագրերի դասընթացները:

Թե՛ քաղաքական կուսակցություններում, թե՛ հասարակական կազմակերպությունների սեկտորում, թե՛ հասարակական գիտակցության մեջ չի չեավորվել գեներային քվուրայի անհրաժեշտության լրմունումը: Քաղաքական գործընթացի այնպիսի կարևոր դերակարգութեր, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները՝ առավել չափով, հասարակական կազմակերպությունները՝ որոշ չափով, և զանգվածային լրավամիջոցները, գեներային քվուրայի՝ որպես օրենսդիր իշխանությունում ՀՀ Ազգային ժողովում՝ ներկայացուցչական ժողովրդավարության մարմնում, կանանց և դղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման անհրաժեշտ և արդյունավել գործիքի Էուրյունը մեկնարանող աշխագանք չեն լրանում: Քվուրայի որպես գեներային հալասարության հասնելու հավույլ ժամանակավոր միջոց, դրակալին ընկալվում է որպես գույքը և կրոպական

**կառույցներին, ոչ թե որպես զուգակշռված ժողովրդավարության՝ քաղաքա-
ցիական հասարակության հիմքի չև ավորում անհրաժեշտ պայման:**

➤ **Ֆոկուս խմբերում արգահայտված կարծիքների ամփոփումը ցույց
պալեց,** որ թե՛ քաղաքական կուսակցությունների, թե՛ հասարակական կազմա-
կերպությունների ներկայացուցիչները ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերա-
յին քվուտայի ավելացումը մինչև 20% դրական են ընդունել, սակայն ֆոկուս
խմբերի շատ մասնակիցներ կանանց թեկնածությունների ընդգրկումը քաղա-
քական կուսակցությունների ցուցակների յուրաքանչյուր հնգյակում՝ սկսած
6-րդ համարից, գնահատեցին որպես խորականություն և կարծիք հայտնեցին,
որ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով կանանց 20%-անոց
ներկայացվածությունը չի ապահովվի:

Ֆոկուս խմբերում կարծիք հայտնվեց նաև, որ քաղաքական կուսակցութ-
յունների մեծ մասը նպատակառողված աշխատանք չի տանում կանանց կադ-
րերի պատրաստման համար, քաղաքական-իրավական գիտելիքների հարս-
տացման կրթական ծրագրեր չի իրականացնում և լիդերական հմտություններ
չի սերմանում քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ կանանց
ակտիվություն ներգրավելու միջոցով։ Կուսակցություններն անհրաժեշտ աշխա-
տանք չեն տանում իրենց անդամների գենդերային իրազեկությունը բարձրաց-
նելու ուղղությամբ, հատկապես՝ տղանարդկանց, որոնք առավել չափով են
հակված գենդերային կարծրատիպերի։

Քաղաքական կուսակցությունները շահագրգռություն չեն ցուցաբերում թե՛
ներկուսակցական աշխատանքներում կանանց ներգրավելու, թե՛ իշխանութ-
յան կառույցներում նրանց բարձր պաշտոնների մակարդակում և տեղական
ինքնակառավարման ղեկավար մարմիններում առաջ մղելու հարցում։

Ֆոկուս խմբերի մասնակիցները նշում էին, որ գենդերային քվուտան 15%-ից
մինչև 20% բարձրացումն ամենայն հավանականությամբ ընտրություննե-
րի արդյունքներով կանանց 20%-անոց ներկայացվածություն չի ապահովվի
խորհրդարանում, սակայն կարող է նպաստել, որ կուսակցությունները սկսեն
մտածել կանանց քաղաքական կաղըեր պատրաստելու և կանանց կուսակ-
ցության սիստեմատիկ քաղաքական գործունեության մեջ ներգրավելու մա-
սին՝ չահմանափակվելով նրանց քաղաքական աշխատանքներում ներգրավ-
մամբ միայն նախընտրական շրջաններում։

Ինչպես և 2007 թ. ընտրությունների մշտադիման դեպքում, ֆոկուս
խմբերի մասնակիցները կարծիք հայտնեցին, որ արևմտյան երկրների օրի-
նակով Հայաստանի շատ քաղաքական կուսակցություններում ստեղծված
կանանց խորհրդներն էական դեր չեն խաղում կանանց կադրերի պատ-
րաստման ու առաջխաղացման հարցում։ Կանանց խորհրդները չեն ազդում
կուսակցական որոշումների, այդ թվում և կուսակցությունների ընտրական ցո-
ւցակների ձևավորման վրա։ Նշվել է, որ կուսակցություններում դեռևս կանանց

բարձրագույն կուսակցական պաշտոններում և քաղաքական որոշումների մակարդակի իշխանական կառույցներում առաջ քաշելու շահագրգոռություն չկա: Ընդգծվել է նաև, որ կանայք կուսակցություններում համախմբված չեն գենդերային հավասարության և կանանց առաջ մղելու զաղափարների շուրջը: Կուսակցությունների կանանց խորհուրդները պատասխանատվություն չեն գումար քաղաքական գործունեության ոլորտում կանանց առաջ մղելու համար:

Ֆոկուս խմբերի մասնակիցների մեծ մասի կարծիքով՝ կուսակցությունների կին անդամների ներգրավումը նախընտրական արշավում սահմանափակվում է նրանց ընդգրկմամբ ընտրական հանձնաժողովներում և կազմակերպական այլ աշխատանքներում: Կուսակցությունների կին անդամները հանրային քաղաքականության դերակատար չեն հանդիսանում, ինչի հետևանքով կանանց քաղաքական մասնակցությունը լայն հասարակայնության սեփականությունը չի դառնում: Կանանց չեն ընդգրկում նախընտրական քաղաքականության մշակման գործընթացում, չեն ներգրավում ընտրական ցուցակների ձևավորման գործում և նախընտրական քարոզության աշխատանքներում:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ֆոկուս խմբերի մասնակիցների ճնշող մեծամասնությունը նշել է, որ 2012 թ. ընտրական գործընթացներում կանանց ՀԿ-ների ակտիվ մասնակցություն չի նկատվում, ավելին, 2007 թ. ընտրությունների համեմատությամբ՝ ակտիվությունը որոշ չափով նվազել է: Ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը հիմնականում դրսերվել է ՀԿ-ների ակտիվիստների և ընտրազանգվածի տարբեր խմբերի համար կրթական ծրագրերի անցկացմամբ՝ ուղղված ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների մասին իրազեկության բարձրացմանը:

Ընտրությունների օրը դիտորդական առաքելության իրականացման համար սուսկ եզակի կանանց ՀԿ-ներ են գրանցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովում որպես տեղական դիտորդներ: Այսուհանդերձ, կանայք քավական լայնորեն են ներկայացվել որիշ ՀԿ-ների ցուցակներում, որոնք տեղական դիտորդական առաքելություն էին իրականացնում: Կանանց քազմամարդ խումբ էր ներկայացված «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ի դիտորդական առաքելության շրջանակներում:

Կանանց ՀԿ-ների շատ ակտիվիստներ, որոնք ներկայացնում են կրթության համակարգը, ընդգրկվել են ընտրական հանձնաժողովներում: Այդ մասին նշվել է նաև Հայաստանի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՄՀԳ-ի դիտորդական առաքելության դեկավար Ռադմիլա Շեկերինսկայի ելույթում:

Չնայած կանանց ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների համագործակցության առանձին օրինակներին՝ ընդհանուր

առմամբ ընտրությունների նախապատրաստության գործընթացում և ընտրությունների անցկացման ընթացքում նրանց միջև համագործակցություն չի ձևավորվել:

2. Մշտադիտարկման երկրորդ փուլը՝ հետընտրական շրջանը

2.1. Հեղունգրական շրջանում կարարվել է բնագրաշավիճականացման կողմէության իրավիճակի գնահատում

Ընտրարշավին կանանց քաղաքական մասնակցության դիտարկումն ընդգրկել է.

- ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների շրջանում քաղաքական կուսակցությունների կանանց մասնակցության գործելակերպի գնահատումը,
- քարոզարշավում քաղաքական կուսակցությունների կանանց ունեցած մասնակցության վերլուծությունը,
- սոցիոլոգիական կենտրոնների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների՝ ընտրական գործընթացի մշտադիտարկումների նյութերի ուսումնասիրությունը,
- ընտրությունների արդյունքների մասին նամակ ասուլիսների և միջազգային դիտորդների եզրակացությունների վերլուծությունը,
- ընտրությունների արդյունքների մասին տեղական դիտորդների հաշվետվությունների և նամակ ասուլիսների ուսումնասիրությունը:

2.2. Հեղունգրական շրջանում անցկացվել է 6 կլոր սեղան, այդ թվում՝

- չորս կլոր սեղան քաղաքական կուսակցությունների մասնակիցների հետ,
- երկու կլոր սեղան՝ հասարակական կազմակերպությունների ղեկավարների և ակտիվիստների հետ:

Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ կլոր սեղաններն անցկացվել են Երևանում, Դիլիջանում, Էջմիածնում և Գավառում 13 քաղաքական կուսակցությունների 55 ներկայացուցիչների մասնակցությամբ, այդ թվում՝ 18-ր Հայաստանի հանրապետական կուսակցությունից, 7-ր «Օրինաց երկիր» կուսակցությունից, 3-ական ներկայացուցիչների «Քարգավաճ Հայաստան» և ՀՅ դաշնակցություն կուսակցություններից, 5-ր «Ժառանգություն» կուսակցությունից: Կլոր սեղաններին մասնակցել է նաև հասարակական կազմակերպությունների 28 ակտիվիստ:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կլոր սեղաններն անցկացվել են Վանաձորում և Աշտարակում 21 հասարակական կազմակերպությունների 48 ղեկավարների և ակտիվիստների մասնակցությամբ:

Կլոր սեղանների ընթացքում թե՛ քաղաքական կուսակցությունների, թե՛ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների քննարկմանն են ներկայացվել հետևյալ հարցերը:

- ընտրությունների արդյունքների ձեր գնահատականը,
- ձեր սպասումները ընտրություններին կանանց մասնակցությունից և դրանց արդարացման աստիճանը,
- ինչպիսի՞ն է կանանց քաղաքական մասնակցության փոփոխությունների շարժընթացը 2007 թ. ընտրությունների համեմատությամբ,
- կա՞ն արդյոք իրական արդյունքներ ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտան 15%-ից նինչ 20% բարձրացումից,
- համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված կանանց քարոզարշավի ձեր գնահատականը,
- 2012 թ. ընտրություններում կանանց հաջորդություններն ու ձախողումները, դրանց դրսևորման պատճառները,
- պատգամավորական մանդատներից կանանց հրաժարման շարժադիրները:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր սեղանների ընթացքում, հաշվի առնելով նրանց գործունեության առանձնահատկությունները, քննարկվել են նաև կանանց կազմակերպությունների մասնակցությունը ընտրական գործընթացներում, ՀԿ-ների կրղմից համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված կանանց աջակցելու փորձը, ընտրությունների ազդեցությունը կանանց քաղաքական մասնակցության անհրաժեշտության մասին հասարակական կարծիքի ձևավորման վրա:

2.3. Որոշ եզրակացություններ մշտադիլքարկման երկրորդ փուլի արդյունքների հիման վրա

➤ ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրությունների քարոզարշավն էապես տարբերվում էր նախորդ ընտրություններից: Ընտրողների հետ հանդիպումների ժամանակ կուսակցությունների մեծ մասը հանդես չէր գալիս որպես ժողովրդավարական ինստիտուտ, այդ թվում և քարոզարշավին կանանց մասնակցելու տեսանկյունից: Առաջատար կուսակցությունները՝ «Հայաստանի հանրապետական կուսակցությունը և «Քարգավաճ Հայաստանը», իրենց քարոզարշավը հիմնականում վարեցին առաջնորդների մակարդակով:

Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր սեղանների մասնակիցները նոյնապես նշեցին, որ 2007 թ. ընտրությունների հետ համեմատած՝ իրենց մասնակցությունը 2012 թ. քարոզարշավում նվազագույն էր, դա ընդգծվեց մասնական մարզերում անցկացված կլոր սեղանների ժամանակ: ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կանայք քարոզարշավի ակտիվ մասնակից չդարձան, և սա այն դեպքում, երբ կանայք կուսակցություններում նշանակալի ներուժ են ներկայացնում:

Հայաստանի քաղաքական կուսակցություններում դեռևս ներկուսակցական ժողովրդավարություն չի ձևավորվել: Կանայք փաստորեն օտարված են կուսակցությունների քաղաքական գործելակերպի սահմանմանը, ուստի վազական առումով կարևոր խնդիրների լուծումներին մասնակցելուց, նրանց մասնակցությունը հիմնականում մարզինալացվում է քարեգործական գործունեության ոլորտում:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները՝ կլոր սեղանների մասնակիցները, նշում էին, 2007 թ. ընտրությունների հետ համեմատած՝ կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության նվազումը, ինչպես նաև կառավարման համակարգի քաղաքական որոշումների ընդունման մակարդակից կանանց օտարման շարունակական նիտումը և ընտրական գործընթացներում կանանց հիմնականում միջին ողակներում ներգրավելու գործելակերպը:

➤ **Քաղաքական կուսակցությունների կողմից ընտրական գործընթացներում հասարակական կազմակերպությունների դերի թերագուահատումը**

Թեև որոշ կուսակցությունների համամասնական ընտրացուցակներում ընդգրկվել են մի շարք ՀԿ-ների դեկավարներ, ընտրական գործընթացը ցույց տվեց, որ հասարակական կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտ, դուրս են մնացել քաղաքական կուսակցությունների տեսադաշտից: Ընտրական գործընթացներին հասարակական կազմակերպությունների մասնակցությունն ի սկզբանե համակարգված բնույթ չի ունեցել:

ՀԿ-ների հետ անցկացված կլոր սեղանների շատ մասնակիցներ, ինչպես նաև մի շարք խոշոր կազմակերպությունների դեկավարներ անհատական գրույցների ընթացքում նշել են, որ կուսակցությունները հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունը «Փոխս գցեցին» ընտրական գործընթացներում իրենց երիտասարդական կառույցների և մասամբ ուսանողների ներգրավման հետ: Տարակուսանք են հարուցում բուն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաստագրման գործելակերպը և հավաստագրերի հանձնման անշառությունը, ինչպես նաև տեղական դիտորդների 31500 քվաքանակը:

Մասնակիցների մեծ մասը 2012 թ. ընտրությունների գործընթացներում հասարակական սեկտորի մասնակցությունը որակել է պասիվ և նշել, **որ կանանց կազմակերպությունները ոչինչ չկարողացան նախաձեռնել կիև թեկնածուներին պաշտպանելու համար, քանի որ օրենքով հասարակական կազմակերպություններին արգելված է քաղաքական գործունեություն իրականացնել:**

Հստ ՀԿ-ների առաջնորդների գնահատման՝ Հայաստանի հասարակական կազմակերպությունները, անկասկած, էական դեր են խաղում կանանց քաղաքական սոցիալականացման հարցում: Ընդամենը ՀԿ-ների ակտիվիստները հատուկ նշանակություն են վերագրում ոչ այնքան կին թեկնածուների աջակցությանն ու պաշտպանությանն անմիջականորեն ընտրական գործընթացներում, որքան հասարակական կազմակերպությունների նպատակառուղղած և հետևողական աշխատանքին միջնորդական շրջաններում: Միաժամանակ շատ մասնակիցներ նշել են, որ քաղաքական կուսակցությունները, դրանց կազմակերպչական կառույցները և կանանց խորհուրդները նախաձեռնություն չեն ցուցաբերում հասարակական սեկտորի հետ կապերի ամրապնդման և համագործակցության հաստատման հարցում:

Առաջարկություններ են արվել նաև կանանց հասարակական-քաղաքական ակտիվության բարձրացման ուղղված կրթական ծրագրերի ակտիվացման անհրաժեշտության մասին, հատկապես՝ տարածաշրջաններում: Կանանց հասարակական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը մեծացնելու նպատակով կարծիք է հայտնվել կանանց ՀԿ-ների համախմբման անհրաժեշտության մասին:

➤ **Քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր սեղանների մասնակիցների՝ ընտրական գործընթացի արդյունքների գնահատականը**

Անցկացված կլոր սեղանները հնարավորություն տվեցին վեր հանելու կուսակցությունների կողմից ընտրական ցուցակներով անցած թեկնածուներին «մաղելու» մեխանիզմը, որոնց մեջ առավել մեծ թիվ էին կազմում կանայք: Կլոր սեղանների մասնակիցների կարծիքով՝ պատգամավորի թեկնածուների, մասնավորապես՝ կանանց ինքնարացարկներն իրականացվում են հարկադրման ճանապարհով, «կուսակցական կարգապահության» թերապրանքով: Ուշագրավ է, որ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ անցկացված կլոր սեղանների որոշ մասնակիցներ ինքնարացարկները որակեցին որպես «կուսակցական կարգապահության դրսորում», ուրիշները դա գնահատեցին որպես կուսակցական գործունեության ժողովրդավարական սկզբունքների և ընտրություններին մասնակցող կուսակցությունների անդամների իրավունքների խախտում:

Բանավեճների ընթացքում ՀԿ-ների կին ակտիվիստները պնդում էին այն կարծիքը, որ պատգամավորական մանդատից կանանց իրաժարումը կարելի է բնութագրել որպես ճնշում կանանց վրա և թաքնված խորականություն նրանց նկատմամբ: Օրենսդրությանը և կուսակցական գործունեությանը տեղյակ կին լիդերներն ու ակտիվիստները ճշում էին, որ կին թեկնածուների ինքնարացարկի գործելակերպը՝ որպես հիմնախնդիր, թաքնված է բուն ընտրական

օրենսգրքի գենդերային քվոտայի մասին հոդվածի ձևակերպման մեջ: Տվյալ բացրողումը կամ շատերի կարծիքով՝ միտումնավոր և շրջված ձևակերպումը պետք է փոխավի: Մասնակիցներն առաջարկում էին իրավիճակը կարգավորել երկու միջոցով:

առաջին՝ ամրագրել դրույր այն մասին, որ կանայք պետք է կազմեն 20% ոչ թե կուսակցությունների ընդունական ցուցակներում ԿԸՀ-ում գրանցվելինն, այլ 5%-ի արգելոք հաղթահարած և ընդունակների արդյունքներով ՀՀ Ազգային ժողով մտած կուսակցությունների ցուցակներում,

**երկրորդ՝ ամրագրել դրույր, լսոր որի՝ մանդալից հրաժարված կնոջ գեղ-
դր պետք է գրաղեցնի կուսակցության ընդունական ցուցակի հաջորդ կիմք:**

Այդ միջոցները, կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով, կնպաստեն, որ կուսակցություններն առավել պատասխանատվությամբ կազմեն ընտրական ցուցակները և վերացնեն ցուցակներում այսպես կոչված «դրածո» կանանց ընդգրկումը, որոնց հիմնական առաքելությունը կուսակցության համար անհրաժեշտ պահին մանդալից հրաժարվելն է:

III. Եզրակացություններ ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններին կանանց քաղաքական մասնակցության մասին

Ինչպես նշվել է վերը, ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններն անցել են ՀՀ ընտրական օրենսգրքում որոշակի փոփոխություններ կատարելուց հետո, մասնավորապես՝ գենդերային քվոտան 15%-ից բարձրացվեց մինչև 20%, և պահանջ դրվեց, որ քաղաքական կուսակցությունների ցուցակների որևէ հնագակում (սկսած 2-րդ համարից), յուրաքանչյուր սեռի ընդգրկվածությունը չգերազանցի 80%-ը:

Ըստությունների արդյունքներով՝ ՀՀ Ազգային ժողով անցավ 5 կուսակցություն. Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացավ ձայնների 44,1%-ը, «Բարգավաճ Հայաստանը»՝ 30,2%-ը, «Ժառանգությունը»՝ 5,8%-ը, ՀՅ դաշնակցությունը՝ 5,7%-ը, «Օրինաց երկիրը»՝ 5,5%-ը և կուսակցությունների «Հայ ազգային կոնգրես» դաշինքը՝ 7,1%-ը:

Կանանց ներկայացվածությունը ՀՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովում կազմում է 10,67% 2007 թ. ընտրությունների 9,2%-ի դիմաց, այսինքն՝ քվոտայի բարձրացումն ապահովել է անշան առաջընթաց:

ՀՀ Ազգային ժողովում տեղերի մեծ մասը ստացած Հայաստանի հանրապետական կուսակցության խմբակցության 69 պատգամավորների թվում ընդամենը 9-ն են կին կամ՝ 13%-ը:

Թվաքանակի մեծությամբ երկրորդ խմբակցության՝ «Բարգավաճ Հայաստանի» կազմում 37 պատգամավորներից սույ 2-ն են կին, ինչը կազմում է ըն-

դամենը 5,4%, այն դեպքում, եթե չորրորդ գումարման Ազգային ժողովում կանայք այդ խմբակցությունում կազմում էին 12%:

«Հայ ազգային կոնգրեսի» խմբակցության 7 պատգամավորների շարքում միայն մեկ կին կա՝ 14%: ՀՅ դաշնակցության խմբակցությունը խորհրդարան մտավ առանց կանանց, այն դեպքում, եթե 2007 թ. ընտրությունների արդյունքներով ՀՅԴ-ն այն երկու կուսակցություններից մեկն էր, որոնք, իրենց կազմով ապահովելով կանանց 18,7%, գերազանցեցին օրենքով հաստատված 15%-ի քվոտան:

Հինգերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված վեց խմբակցություններից միայն երկուսն են ապահովել իրենց կազմում կանանց 20%-ի ներկայությունը՝ «Ժառանգությունը» և «Օրինաց երկիրը»՝ ներկայացնելով 1-ական կին 5 պատգամավորից բաղկացած խմբակցությունում:

Քաղաքական կուսակցությունները, համամասնական ընտրացուցակներում ներկայացնելով միջինը 22,8% կանանց, դեռ ֆակտո, ըստ ընտրությունների արդյունքների, իրենց խորհրդարանական խմբակցություններում ընդգրկեցին ընտրական ցուցակներում ներկայացվածի կեսից եւ թիւ թվով կանանց:

Քանի որ 14 կանանցից երկուսն ընտրվել են մեծամասնական ընտրակարգով, կարելի է անդել, որ խորհրդարանական կուսակցությունները որևէ առաջընթաց չունեցան օրենքով նախատեսված գենդերային քվոտան ապահովելու հարցում:

Ավելին, ընտրական օրենսգրքում ամրագրված 20%-անոց քվոտան, որ կոչված էր ապահովելու կանանց համապատասխան մասնակցությունը, որոշ իմաստով արժեգրկվեց: Ըստ էության, կանանց թիվը մեծացնելուն նպաստելու համար օրենքով նախատեսված մեխանիզմը չգործեց ներկուսակցական փոխատեղումների և ինքնարացարկների պատճառով:

Մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավոր ընտրված կանանց թիվի շարժնթացի ուսումնափրությունը՝ սկսած 1995 թվականից, վեր է հանում նվազման միտում, ինչը բացատրվում է մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դաժան պայքարով և առևտրայնացմանք, սև տեխնոլոգիաների կիրառմամբ և սուլ մասամբ միամանդատ ընտրատարածքների թիվ նվազմամբ: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հետևանքով միամանդատ ընտրատարածքների թիվը ԱԺ երկրորդ գումարումից (1999) մինչև չորրորդ գումարումը (2007) նվազել է մոտավորապես երկու ամգամ, այն դեպքում, եթե մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանց թիվը նվազել է 10 ամգամ:

Այսուհանդերձ, հարկ է նշել մեծամասնական ընտրակարգով ընտրություններում կանանց մասնակցության որոշակի ակտիվացումը 2007 թ. ընտ-

բությունների համեմատությամբ: Եթե 2007 թ. առաջադրված 11 կանանցից 6-ը հետագայում ինքնարացարկ հայտնեցին՝ այդպես էլ շնորհելով ընտրական մրցավազքի մեջ, ապա 2012 թ. ընտրություններում ընդամենը մեկ ինքնարացարկ է հայտնվել, այն դեպքում, եթե մեծամասնական ընտրակարգով ինքնարացարկ է հայտնել 40 տղամարդ թեկնածու: Մեծացել է նաև այս կանանց թիվը, որոնք քվեարկվել են մեծամասնական ընտրակարգով ինքնարացարման սկզբունքով: Եթե 2007 թ. բոլոր հինգ քվեարկվող կանայք առաջադրվել էին իրենց կուսակցությունների նախաձեռնությամբ, ապա 2012 թ. ընտրություններում քվեարկվող 11 կանանցից 6-ը անկուսակցական էին, և միայն 2-ն էին ինքնարացարմարկվել կուսակցությունների կողմից:

Կանանց ներկայացվածության նվազումը Ազգային ժողովում այն իրողության հետևանքն է, որ 2012 թ. ընտրություններում, ինչպես 2007 թ., պահպանվեց **հելլունդրական ինքնարացարկների զործելակերպը:** Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ ինքնարացարկի դիմում է ներկայացրել պատգամավորի 102 թեկնածու, որոնցից 26-ը՝ կանայք, ինչը կազմում է 25%, ընդ որում, նրանցից 24-ը ներկայացրել են այն կուսակցությունները, որոնք պատգամավորական մասդատների թվով, ըստ ընտրությունների արդյունքների, գրադարձել են առաջին և երկրորդ տեղերը: Եվ եթե Հայաստանի հանրապետական կուսակցության 14 ինքնարացարկ հայտնած կանանցից միայն մեկն էր ցուցակի անցողիկ տեղում, իսկ մնացածը ներկայացված էին 46-րդ տեղից սկսած, ապա «Քարգավաճ Հայաստան» 10 մանդատից հրաժարված կանանցից 3-ը տեղեր էին գրադարձնում կուսակցության ցուցակի մինչև 28-րդ համարը, այսինքն՝ անցողիկ տեղերում էին:

Այսպիսով, օրենսդրությամբ ներդրված 20%-անց քվորան և քաղաքական կուսակցությունների ցուցակների յուրաքանչյուր հնգյակում կանանց ընդունակությունը պահանջոր, սկսած միայն 2-րդ համարից, կանանց ներկայացվածության իրական մեծացում չափահանցին: ՀՀ նորութիր Ազգային ժողովի՝ որպես ներկայացուցչական ժողովության մարմնի գենդերալ իհազմքը շարունակում է մնալ գենդերայնորեն անհավասարակշիռ: Կանայք ՀՀ Ազգային ժողովում կազմում են ընդամենը 10,67%, ինչը զգալիորեն ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից, որը կազմում է 19,6%:

Որոշ դրական փոփոխություններ ყեղի ունեցան ՀՀ Ազգային ժողովի ղեկավարությունում և նրա մշղական հանձնաժողովներում: Խորհրդարանի փոխխոսնակ ընտրվեց Հերմինե Նարդայանը, եվրոպական ինստեգրացիայի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Նահիրա Զոհրաբյանը, մարդու իրավունքների և հասարակական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Էլինար Վարդանյանը:

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության դիտարկումն ու գնահատումը հնարավորություն տվեցին վեր

հանելու ընտրություններում կանաց ցածր մրցունակությունը պայմանավորող պատճառները և այն գործոնները, որոնք խոչընդոտում են կանաց քաղաքական կարիերան.

- **պետական մակարդակով կանաց կաղուերի պատրաստման համակարգի և առաջադրման համար կաղուերի ռեզերվի բացակայությունը,**
- **կանաց սահմանափակ ներկայացվածությունը հասարակության կենսագործունեության այն ոլորտներում և կառավարման այն մակարդակներում, որտեղ կանացը կարող են քաղաքական պատրաստության դպրոց անցնել և որպեսից կարող են քաղաքականության ոլորտ առաջ քաշվել,**
- **կանաց առաջմղմանը, պետական կառավարման ոլորտի որոշումների ընդունման մակարդակում գենդերային անվասարակշռության հաղթահարմանն ուղղված պետական գենդերային քաղաքականության դասնադրությունը,**
- **քաղաքական կուսակցությունների կողմից << Ազգային ժողովում որպես ներկայացուցչական մարմնում, կանաց ներկայացվածության բարձրացման միջոցների մշակման անհրաժեշտության քերագործումը,**
- **ներկուսակցական ժողովրդավարության դեֆիցիտը, կանաց քաղաքական սոցիալականացման և հասարակական-քաղաքական ոլորտում նրանց մասնակցության ակտիվացման կուսակցական մեխանիզմների բացակայությունը,**
- **ընդունական գործընթացների անկարարությունը, քաղաքական պայքարի քրեականացումը և ընդունական գործընթացների առևտության բարձր ասդիճանը,**
- **ժողովրդավարական ինսպիրատուրների՝ հասարակական կազմակերպությունների, առաջին հերթին՝ կանաց կազմակերպությունների բոլորությունը, ինչպես նաև կանաց հասարակական շարժում չչեւավորվելը,**
- **կանաց շրջանում քաղաքական պայքարի փորձի բացակայությունը և քեկնածու կանաց՝ ընդունակավի վարման ժամանակակից գեխնողակիանությունը,**
- **հասարակության քաղաքական մշակույթի ոչ բավարար մակարդակը և կանաց քաղաքական լիդերության պատրաստման ու զարգացման համակարգի բացակայությունը,**

- **անվարահությունը կին քեկնածուների նկագմամբ, որ պայմանավորում է խպրական գործելակերպերը չգիտակցելը հասարակության մեջ և իրենց իսկ կանանց շրջանում,**
- **կանանց ցածր ինքնազմահարականը և ներքին հոգեբանական արգելքները՝ որպես կուսակցություններում և հասարակական շարժման մեջ կանանց քաղաքական սոցիալանացման համակարգի քաղակայության հետևանք,**
- **հասարակության մեջ հայրիշխանական նախադրամադրվածության և գեներացիային կարծրագիտակերի գերիշումը, գակավին կանանց քաղաքական մասնակցության չիրափուակները,**
- **հասարակության քաղաքական կյանքում կանանց մասնակցության սահմանափակ ոլորտի մասին կարծրագիտային պարկերացումների գործածումը ԶԼՄ-ներում:**

IV. Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններին կանանց քաղաքական մասնակցության դիտարկման ու գնահատման արդյունքները մի շարք հանձնարարականների հնարավորություն են տալիս.

Կանանց քաղաքական իրավունքների մասին ՍՎԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի 2002-2007 թթ. ժամանակաշրջանի գեկույցի կապակցությամբ ՍՎԿ-ի Կանանց նկագմամբ խպրականության վերացման կոնյունկի հանձնարարականների իրականացման և գեներացիային հավասարության հասնելու նախագաղության օրենսդրության կաղաքականության մեջ կանանց ներգրավման ոլորտում.

■ ՀՀ կառավարությանը

- ապահովել պետության միջազգային պարտավորությունների կատարումը, մասնավորապես՝ Արևելյան գործընկերության միջոցառումների, գեներացիային հավասարության հասնելու և քաղաքական գործունեության մեջ կանանց ներգրավման ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկել պետական գեներացիային քաղաքականության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, ապահովել նախարարությունների և տարածաշրջանային իշխանության մարմինների կողմից կառավարման համակարգի որոշումների ընդունման մակարդակում կանանց առաջ մղելու վերաբերյալ Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման լայն վերահսկողությունը,

- ուսումնասիրել եվրոպական երկրների փորձը, պետական գործելակերպում դրական խտրականության մեթոդների ներդրման հնարավորությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարակշռության հասնելու համար,
- քաղաքական կուսակցությունների գործունեության ֆինանսավորումն իրականացնել՝ հաշվի առնելով նրանց կողմից իրականացվող գենդերային քաղաքականությունը և կանանց քաղաքական մասնակցության առաջմղման ապահովումը:

ՀՀ Ազգային ժողովին

- արագացնել ՀՀ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի ընդունումը՝ դրանում նախատեսելով հասարակության հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովման գործիքներ,
- ՍԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներին համապատասխան՝ քննարկել ՀՀ ընտրական օրենսգրքում կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան առնվազն 25%-ի բարձրացման փոփոխություն մտցնելու հարցը, օրենսդրության ամրագրել, որ ցուցակի յուրաքանչյուր հնգյակում պետք է մյուս սեռի առնվազն մեկ ներկայացուցիչ լինի, իսկ պատգամավորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է գրադեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը:

Քաղաքական կուսակցություններին

- մշակել և իրականացնել համալիր միջոցառումներ քաղաքական կուսակցությունների ծրագրերում և գործելակերպում գենդերային բաղադրիչներն ընդգրկելու ուղղությամբ, իրականացնել կուսակցությունների անդամների գենդերային լուսավորություն,
- ուսումնասիրել եվրոպական քաղաքական կուսակցությունների գենդերային հավասարության հասնելու փորձը և դրական խտրականության մեթոդների կիրառման հնարավորությունը,
- նպաստել կուսակցություններում կանանց կաղրերի պատրաստմանը, ձևավորել կուսակցությունների դեկավար կառույցներում կանանց առաջմղման մեխանիզմներ,
- կատարելագործել կանանց քաղաքական առաջխաղացման հարցերում քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների և կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցության ձևերը:

Հասարակական կազմակերպություններին

- աջակցել ՀԿ-ների կանանց լիդերության դպրոցների կազմակերպմանը՝ մայրաքաղաքում և հանրապետության մարզերում առավել մրցունակ կին լիդերների ընտրության սկզբունքի կիրառմամբ,
- մշակել մոդուլներ և ներդնել ընտրարշավներին կանանց պատրաստման համայիր ծրագրեր, ներառյալ քաղաքական-իրավական և տնտեսական գիտելիքների հարստացումը, ընտրարշավների կազմակերպման և ԶԼՄ-ների հետ համագործակցության տեխնոլոգիաների ուսուցումը, լիդերության հոգեբանական վարժանքները:

Գենդերային լրասավորության ուղղությամբ

- ընդլայնել գենդերային դասընթացների ներդրումը դպրոցական և բուհական կրթության համակարգերում,
- իրականացնել բնակչության գենդերային լրասավորության կրթական ծրագրեր ԶԼՄ-ների բոլոր տեսակների ու խողովակների միջոցով,
- կազմակերպել հատուկ կրթական ծրագրեր լրագրողների համար կանանց լիդերության աջակցության նպատակով, խրախուսել ԶԼՄ-ներում փիար արշավների ներդրումը՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և կանանց առաջմղմանը, հատկապես՝ ընտրությունների շրջանում:

ԳԼՈՒԽ 1.

ԿԱՆԱՅՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՈՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովի հիմնգերորդ գումարման ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության հիմնախորդի ուսումնասիրությունը և գենդերային իրավիճակի գնահատումը 2012 թ. ընտրությունների նախօրեին անցկացվել է՝ Հայաստանի միջազգային պարտավորությունների, երկրի հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղանարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին միջազգային փաստաթղթերի բովանդակած պահանջների ու հանձնարարականների կատարումը հաշվի առնելով:

Վերլուծվել է՝ Հայաստանի վավերացրած ՍՍԿ-ի կոնվենցիաների, ինչպես նաև պետական ինստիտուտների գործունեության մեջ, ուազմավարությունների մշակման, որոշումների պլանավորման և ընդունման մակարդակում գենդերային բաղադրիչի ներառման մասին Եվրոպայի խորհրդի բանաձևերի և հանձնարարականների կատարումը։ Ուսումնասիրության ընթացքում հաշվի են առնվել նաև Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական գեկույցների վերաբերյալ ՍՍԿ-ի կանանց նկատմամբ խորականության վերացման կոմիտեի Եզրափակիչ դիտողությունները¹, ինչպես նաև այդ Դիտողությունների լրացումը², մասնավորապես՝ խորհրդարանին ուղղված հանձնարարականները, որոնք վերաբերում են ընտրական գործընթացներին և կանանց ներկայացվածությանը ՀՀ Ազգային ժողովում։

1993 թ. ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին ՍՍԿ-ի կոնվենցիան, 2006 թ.՝ Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը։ Կոնվենցիայում, որը գենդերային հավասարության ապահովման հիմնարար գործիք է, ոչ միայն մեկնաբանվում է

1 ՍՍԿ-ի Կանանց նկատմամբ խորականության վերացման կոմիտեն, որ բաղկացած է 23 փորձագետներից, դիտարկում է կոնվենցիայի իրականացման ընթացքը, ուսումնասիրում այն գեկույցները, որոնք ներկայացնում են Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան վավերացրած պետությունները։

2 CEDAW/C/ARM/CO/4/Rev.1/Add.1, 1 նոյեմբերի 2011 թ.։

«կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը, այլև նախատեսվում են դրա հաղթահարման մեխանիզմները: Կոնվենցիայում նախատեսվում է մասնակից պետությունների կողմից «տղամարդկանց և կանանց միջև փաստացի հավասարության հաստատումն արագացնելուն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ընդունումը»³:

Իրավիճակի դիտարկումն ու գնահատումը վեր հանեցին, որ չնայած ՀՀ կառավարության ընդունած կարևոր փաստարդերին⁴, որոնք վերաբերում են գենդերային հավասարությանը, քաղաքականությունը Հայաստանում մնում է գենդերայնորեն չեզոք: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական գեկույցների կապակցությամբ իր դիտողություններում անհանգստություն է հայտնել «... **այն կապակցությամբ, որ մասնակից պեղությունը քաղաքականության մեջ և ծրագրերում նախապարզությունը գոալիս է սեղ դեսանկյունից չեզոք ձևակերպումներին, ինչը կարող է կանանց պարշաճ պաշտպանություն չապահովել ուղղակի և անուղղակի խրբրականությունից, խոշնալուրել կնոջ և զղամարդու ֆորմայ և փաստացի հավասարության չեռոքերումը, ինչպես նաև հանգեցնել անհետվաղական մուրեցման կանանց մարդու իրավունքների ճանաչման և դրանց հետևելու ոլորզում»⁵:**

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն հանձնարարել է նաև քննարկել ընտրական օրենսգրքում գենդերային քվուտան «քարձրացնելու և այն առաջարկվող ավելի քան 20%-ի մակարդակի հասցնելու հնարավորությունը», «քարձրացնել կանանց ներկայացվածությունը քաղաքական և հասարակական կյանքում, այդ թվում և միջազգային մակարդակով»: Կոմիտեն առաջարկում է մասնակից պետությանը. «Համաձայն կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի և կոմիտեի թիվ 25 և 23 Ընդհանուր հանձնարարականների, անցկացնել ժամանակավոր միջոցների կիրառման դիտարկում: Նման միջոցների կիրառումը կանանց քաղաքական ներկայացվածության ընդլայնման նպատակով պետք է ժամկետների և քվուտաների մեծացման հետ մեկտեղ ընդգրկի նպատակային ցուցանիշները»⁶:

Հայաստանը 2007 թ. վավերացրել է Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, որը հրչակում է տղամարդկանց հետ հավասար պայմաններում բոլոր ընտրություններում, առանց որևէ արգելքի, կանանց

³ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդվ. 4:

⁴ ՀՀ կառավարությունը 2004 թ. հաստատել է «Հայաստանի Հանրապետությունում կանանց դրույթան բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը», 2010 թ.՝ «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ուղղմավարական ծրագիրը»: 2011 թ. ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթրցմանը ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

⁵ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կամիստե, Եղբափակիչ դիտողություններ, Հայաստան, CEDAW/C/ARM/CO/4/Rev.1, 2 փետրվարի 2009 թ.:

⁶ Նույն տեղում:

քվեարկելու իրավունքը, առանց որևէ խտրականության՝ ընտրվելու իրավունքը, «հասարակական-պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու և ազգային օրենքով սահմանված բոլոր հասարակական-պետական գործառույթները կատարելու» իրավունքը:

Հայաստանը միացել է Պեկինի հոչակագրին և Պեկինի գործողությունների ծրագրին, ստորագրել է Միավորված ազգերի կազմակերպության Հազարամյակի հոչակագիրը և Հազարամյակի նպատակները⁷՝ պարտավորություն ստանձնելով իրականացնել հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման միջոցների համակարգը: Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են ՍԱԿ-ի կանաց կարգավիճակի հանճանաժողովի նստաշրջաններին, ներկա են եղել կանաց դրությանը վերաբերող կարևորագույն հիմնախնդիրների քննարկումներին:

Գենդերային հավասարության հասնելու և կանաց իրավունքները և հնարավորություններն ընդլայնելու գործընթացն արագացնելու նպատակով ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2010 թ. հովհանն ստեղծել է ՍԱԿ-ի հատուկ կառույց գենդերային հավասարության և կանաց իրավունքների ու հնարավորությունների ընդլայնման հարցերով՝ «ՍԱԿ՝ կանայք»:

Քաղաքականության գենդերային կողմերի և քաղաքական մասնակցության վերաբերյալ հանճնարարականներ է ընդունել Եվրոպայի խորհուրդը: Ի տարբերություն ՍԱԿ-ի կոնվենցիանների՝ այդ հանճնարարականները պարտավորեցնող չեն անդամ պետությունների համար, սակայն համաձայն Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15b հոդվածի՝ Նախարարների կոմիտեն անդամ պետությունների կառավարություններին «հանճնարարականների կատարման ընթացքի մասին» հարցում անելու լիազորություն ունի, ընդ որում, հնարավոր չէ պատկերացնել նի ժողովրդավարական պետություն, որը չի հետևում վերոնշյալ փաստաթղթերում հոչակված սկզբունքներին: Եվ երկրորդ՝ դրույթները ենթակա են պարտադիր կատարման Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար, որոնց թվում է նաև Հայաստանը:

Գենդերային հավասարության ապահովման հիմնախնդիրների վերաբերյալ հիմնարար են հետևյալ փաստաթղթերը. «Հոչակագիր կանաց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության հիմնական չափանիշի մասին» (Ստամբուլ, 1997թ.), «Համալիր մոտեցում կանաց և տղամարդկանց իրավահավասարության խնդիրներին» (Ստրասբուրգ, 1998թ.),

7 ՍԱԿ-ի կանաց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Եվրափակիչ դիստորիքուններում (1, 2 փետրվարի 2009 թ.) կոչ է անում մասնակից պետությանը «կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կատարելիս լիովին օգտագործել Պեկինի հոչակագիրը և գործողությունների ծրագիրը, որոնք ուժեղացնում են կոնվենցիայի դրույթները», և ընդգծում է, որ «կոնվենցիայի արդյունավետ իրականացումը սկզբունքորեն կարևոր է Հազարամյակի զարգացման նպատակներին հասնելու համար»:

«Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» [Rec(2003)3], «Մեռերի հավասարություն. առանցքային հարց հասարակությունների համար փոփոխությունների փոլում» (Ակուխե, 22 և 23 հունվարի 2003 թ.), «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» [Rec 1676 (2004)], «Որոշումների կայացման գործընթացին կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին» [Rec 1738 (2006)], «Ընտրական համակարգը որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածությունը բարձրացնելու գործիք» [1706 (2010) բանաձև], «Պայքար ԶԼՄ-ներում սեքսիստական կարծրատիպերի դեմ» [Rec 1931 (2010)]:

Rec(2003)3 համանարարականի բացատրական ծանուցման մեջ նշվում է, որ «Երկար տարիների ընթացքում Եվրոպայի խորհուրդը հատուկ ուշադրություն է դարձնում հավասարության և ժողովրդավարության հարցերին»: Զուգակշռված ժողովրդավարություն հասկացությունն առաջին անգամ քննարկվել է «Զուգակշռված ժողովրդավարություն. Եվրոպայի խորհրդի գործունեության 40 տարին» (Ստրասբուրգ, 6-7 նոյեմբերի 1989 թ.) սեմինարի շրջանակներում: Այդ սեմինարին հետևեց մասնագետների խմբի պատրաստած գեկույցը զուգակշռված ժողովրդավարության մասին, որը հրապարակվեց 1995 թ. սկզբին:

Զեկույցը, բացի «զուգակշռված ժողովրդավարություն» հասկացության մեկնաբանությունից, բովանդակում է ուազմավարական դիրեկտիվներին առնչվող առաջարկություններ՝ ուղղված նրան, որ կանանց հնարավորություն տրվի դառնալու հասարակության լիարժեք և ակտիվ անդամ՝ օգտվելով նոյն իրավունքներից, ինչ տղամարդիկ, և ստանձնելով նրանց հետ ամբողջ պատասխանատվությունը: Այդ ուազմավարական դիրեկտիվները ենթադրում են նաև հավասար շեմերի և նապատակային թվաքանակի ներդրում՝ տարրեր պետական մարմիններում և քաղաքական կուսակցություններում կիրառելու համար:

Հետագա տարիներին բազմաթիվ փաստաթղթերում նշվել են վերոնշյալ հավասարարական շեմերը: Մասնավորապես՝ «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» համանարարականում առաջարկվում է «նապատակ դնել մինչև 2020 թ. առնվազն մինչև 40% մեծացնել կանանց ներկայացվածությունը խորհրդարաններում և այլ ընտրական մարմիններում»⁸:

Եվրոպական կառույցների փաստաթղթերում նախատեսված են հանձնարարականներ հավասարության ապահովման ուղիների մասին, դրանցից հարկ է առանձնացնել՝

- այն էլեկտրոնային համակարգերի բարեփոխումը, որոնք բացասաբար են ազդում ընտրովի մարմիններում կանանց քաղաքական ներկայացվածության վրա՝ դրանք փոխելով այնպես, որ ապահովեն գենոերային

⁸ ԵԽԽՎ 1676 (2004) համանարարականը «Ընտրություններին կանանց մասնակցության մասին»:

1

- հավասարակշռված ներկայացուցչություն⁹,
- հասուլ ուսուցման կազմակերպում և տեղեկատվական աջակցության ցուցաբերում ընտրություններում իրենց թեկնածությունն առաջադրած կանանց համար¹⁰,
 - համապատասխան օրենսդրական և վարչական միջոցների ձեռնարկում այն նպատակով, որ ընտրված ներկայացուցիչները (կանայք և տղամարդիկ) հնարավորություն ունենան համատեղելու ընտանեկան կյանքը հասարակական պարտականությունների հետ, մասնավորապես հորդորել խորհրդարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին անել անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի ընտրված ներկայացուցիչների (կանանց և տղամարդկանց) աշխատանքային օրակարգը և աշխատանքի մերոդները չհակասեն մասնագիտական գործունեությունն ընտանեկան կյանքի հետ համատեղելու սկզբունքներին¹¹,
 - անել անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի պետական կառավարման ոլորտն օրինակ ծառայի թե՛ ղեկավար պաշտոններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածության ապահովման, թե՛ ծառայողական առաջնադաշտական համար կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ընձեռման հարցում¹²,
 - հորդորել խորհրդարաններին ... համայիր մոտեցում ցուցաբերել աշխատանքի ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության հիմնախնդրին¹³,
 - պաշտպանել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը բոլոր քաղաքական քանավեճերին, հատկապես նրանց, ովքեր հատուկ հետաքրքրություն են ցուցաբերում գենդերային հավասարության խնդիրներին, այդպիսով «կամուրջ» գցելով կանանց համար քաղաքացիական հասարակության և քաղաքական կյանքի միջև¹⁴:

Եվրոպական կառույցների շատ փաստաթղթերում կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման առունով հատուկ տեղ է հատկացվում քաղաքական կուսակցություններին, մասնավորապես՝

- քաղաքական կուսակցությունների ակտիվ ձեռնարկումներին՝ ուղղված մեծ թվով կին թեկնածուների առաջադրմանը¹⁵,

9 Տե՛ս ԵԽԽՎ «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» թիվ 1676 (2004) հանձնարարականը, ինչպես նաև ԵԽ Նախարարների կոմիտեի «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» Rec(2003)3 հանձնարարականի հավելվածը:

10 «Ընտրություններին կանանց մասնակցության մասին»:

11 Rec (2003)3 հանձնարարականի հավելված:

12 Նոյն տեղում:

13 Նոյն տեղում:

14 ԵԽԽՎ «Որոշումների ընդունման գործընթացում կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին» թիվ 1489 (2006) բանաձև:

15 ԵԽԽՎ «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» թիվ 1676 (2004) հանձնարարական:

- քաղաքական կուսակցությունների համար գենդերայնորեն չեզոք քվուտաների սահմանմանը յուրաքանչյուր սեռի թեկնածուների պահանջվող թվի համար, հատկապես՝ երկակի քվուտավորման համակարգի կիրառմանը, քանի որ դրանք ընտրություններում կանանց հաղթանակի ամենամեծ հավանականությունն են ապահովում¹⁶,
- քաղաքական կուսակցությունների պետական ֆինանսավորմանը՝ հաշվի առնելով նրանց գործունեության գենդերային բաղադրիչը, այն նկատառումով, որ խթանվի կուսակցությունների աջակցությունը գենդերային հավասարությանը¹⁷,
- տնտեսական խթաններին այն կուսակցությունների համար, որոնց դեկավար մարմիններում և ընտրված թեկնածուների թվում կանայք արդեն առնվազն 40% են կազմում¹⁸:

Փաստաթղթերում նաև կանանց քաղաքական մասնակցության մշտադիտարկման, «քաղաքականության և հասարակական կյանքի հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում ձեռք բերված արդյունքների գնահատման հետևյալ ցուցանիշների» օգտագործման հատուկ հանձնարարականներ կան.

- i. յուրաքանչյուր կուսակցությունից խորհրդարանում և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը (անդրազգային/ազգային/դաշնային/ տարածաշրջանային),
- ii. յուրաքանչյուր կուսակցությունից խորհրդարանում ընտրված կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը յուրաքանչյուր կուսակցության կին թեկնածուների և տղամարդ թեկնածուների տոկոսային հարաբերության համեմատությամբ (հաջողության գործակիցը),
- iii. կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը վեհաժողովների ազգային պատվիրակություններում (օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վերաժողովում և Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսում), ինչպես նաև միջազգային կազմակերպություններում և համաժողովներում,
- iv. կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը ազգային, դաշնային և տարածաշրջանային կառավարությունների կազմում,

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ ԵԽՆՎ «Որոշումների ընդունման գործընթացում կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին» թիվ 1489 (2006) քանաձել:

- v. Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ազգային, դաշնային և տարածաշրջանային կառավարությունների գործունեության տարբեր ոլորտներում (նախարարական պորտֆել/նախարարություն) նախարար/պետքարտուղար կանանց և տղամարդկանց թիվը,
- vi. բարձրաստիճան պաշտոնյա կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը և նրանց բաշխումը՝ ըստ գործունեության ոլորտների,
- vii. գերազույն դատարանի տղամարդ և կին դատավորների տոկոսային հարաբերությունը,
- viii. կառավարության կողմից նշանակվող մարմիններում կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը,
- ix. ազգային մակարդակում քաղաքական կուսակցությունների ղեկավար մարմինների կազմում կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը,
- x. ձեռնարկատերերի միությունների, արհմիությունների և սինդիկատների անդամ կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերությունը դրանց ղեկավար մարմիններում ազգային մակարդակում¹⁹:

Վերջին երկու տարվա ընթացքում, ի լրումն վերոնշյալ փաստաթղթերի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունել է նաև թիվ 1780 (2010) «Եվրոպայում գեներային հավասարության համար առավել բարենպաստ օրենքների աջակցությունը» բանաձեռ, որում ընդգծվում է: «Կանանց և տղամարդկանց հավասարությունը յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության գոյության կարևոր և պարտադիր պայման է: Ավելին՝ ընթացիկ տնտեսական ճգնաժամի խորապատկերում կանանց իրավունքների սահմանափակման տանող բացասական հետևանքների վտանգ կա»²⁰:

Ընդունելով, որ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը և նրանց իրավունքների պաշտպանությունը խաղաղության ապահովման, կայուն ժողովրդավարության, տնտեսական զարգացման, հետևաբար և ԵԱՀԿ տարածաշրջանում անվտանգության և կայունության կարևոր նախապայման են, հղում անելով Պեկինի գործողությունների ծրագրին՝ ԵԱՀԿ-ն ընդունել է գեներային հավասարության աջակցության և կանանց ակտիվացման գործողությունների ծրագիր²¹:

19 Rec (2003)3 հանձնարարականի հավելված:

20 ԵԽԽՎ «Եվրոպայում գեներային հավասարության համար առավել բարենպաստ օրենքների աջակցությունը» թիվ 1780 (2010) բանաձեռ:

21 ԵԱՀԿ գեներային հավասարության աջակցության 2004 թ. գործողությունների ծրագրի մասին թիվ 14/04 որոշում (Սոֆիա, 7 դեկտեմբերի 2004 թ.):

ԵԱՀԿ-ի աշխատանքն այդ ուղղությամբ ընդգրկում է հետևյալ հատվածները. գենդերային հիմնախնդիրների սխստեմատիկ ներառում կառույցների գործունեության մեջ աշխատանքային մքննոլորտ ձևավորելիս և ԵԱՀԿ աշխատակիցներին ընտրելիս, գենդերային հիմնախնդիրների ներառում ԵԱՀԿ գործունեության, քաղաքականության մեջ, ծրագրերում և նախագծերում: Ընդ որում «շեշտը դրվում է, մասնավորապես, կանանց հնարավորությունների ընդլայնման և հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքում տղամարդկանց հետ հավասար կանանց մասնակցության վրա՝ անդամ պետությունների ժողովրդավարության և տնտեսության զարգացման համատեքստում»^{22:} ԵԱՀԿ-ն խորհուրդ է տալիս հետևել Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՍԱԿ-ի կոնվենցիային, հավասար հնարավորություններ ապահովել քաղաքական հասարակական կյանքին կանանց մասնակցության համար և ստեղծել ազգային մեխանիզմներ կանանց դրության բարելավման համար:

2010 թ. ԵԱՀԿ-ն անցկացրել է մարդկային չափման «Գենդերային հավասարակշռության և քաղաքական ու հասարակական կյանքին կանանց մասնակցության խրախուսումը» լրացուցիչ խորհրդակցությունը (Վիեննա), որի 2-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվել է «Կանանց՝ որպես քաղաքական կուսակցությունների և ընտրովի պաշտոնատար անձանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը» հիմնախնդիրը: Այդ նստաշրջանում, մասնավորապես, ընդգծվել է. «Քաղաքական կուսակցությունները կարող են դիտարկվել որպես կանանց քաղաքական մասնակցության երաշխավորներ:»

Միջազգային մակարդակում ընդունված պարտավորություններին և չափորչին համապատասխան՝ սեռի հատկանիշով անհստրականության սկզբունքը տարածվում է քաղաքական կուսակցությունների վրա թե՛ գործադիր ու դեկավար մարմնների կազմի, թե՛ ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առումով: Բացի այդ, ներկուսակցական բազմակարծությունը և թափանցիկությունը որոշումների ընդունման գործընթացում առանցքային գործուներ են, որոնք ազդում են կանանց՝ ընտրովի պաշտոններում առաջադրվելու և ընտրովի պաշտոններում իրենց կուսակցությունների կողմից աջակցություն ստանալու հնարավորությունների վրա»^{23:}

Դիտարկելով կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման քաղաքականության ազգային համատեքստը՝ հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՍԱԿ-ի կոնվենցիան Հայաստանը վավերացրել է դեռևս 1993 թ.,

²² Նույն տեղում:

²³ «Գենդերային հավասարակշռության և քաղաքական ու հասարակական կյանքին կանանց մասնակցության խրախուսումը» մարդկային չափման լրացուցիչ խորհրդակցություն, 6-7 մայիսի 2010 թ., Հռոբրոգ, Վիեննա, Ծանրագրված օրակարգ, <http://www.osce.org/ru/odirh/67683>

1

Հայաստանի կառավարությունը քաղաքականության ոլորտում գենդերային հավասարության ապահովման հիմնախնդիրներին առավել ակտիվորեն սկսել է անդրադարձնալ XX դարի 90-ական թթ. վերջում:

2000 թ. դեկտեմբերի 29-ին Հայաստանի վարչապետին կից ստեղծվեց կանաց հարցերի հանձնաժողով, որը խորհրդատվական կարգավիճակ ուներ: 2004 թ. ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում կանաց դրության բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը»:

2005թ. ներկայացվեց Հայաստանի ազգային գեկույցը՝ Հազարամյակի գարգացման նպատակների մասին, որում Հայաստանը պարտավորվել է մինչև 2015 թ. կանանց ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովի, նախարարների, փոխնախարարների, մարզպետների ընդիհանուր թվում հասցնել ավելի քան 25%-ի, իսկ համայնքների դեկավարների թվում՝ ավելի քան 10%-ի²⁴:

ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին ՍԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը և Կանանց քաղաքական իրավունքների մասին ՍԱԿ-ի կոնվենցիան:

Նշանակալի փոփոխություններ են մտցվել ՀՀ օրենսդրության մեջ: 2007 թ. ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցվեցին, որոնց շնորհիվ ամրագրվեց քաղաքական կուսակցությունների համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակներում 15%-ի թվուա կանանց համար: ՀՀ ընտրական օրենսգրքում 2011 թ. գենդերային քվուան բարձրացվեց մինչև 20%, և սահմանվեց կուսակցությունների ընտրացուցակներում գենդերային ներկայացվածության հետևյալ հաջորդականությունը.

«Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեղի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը» (հոդվ. 108, կետ 2):

Սկսած 2008-ից՝ գենդերային դիսկուրսն ակտիվանում է Հայաստանի կառավարության պաշտոնական ծրագրերում: Այսպես, կառավարության 2008-2012 թթ. ծրագրի «Սոցիալական պաշտպանություն» բաժնում գենդերային հավասարությունը ներկայանում է առաջնահերթ խնդիրների շարքում: 2008 թ. հոկտեմբերի 30-ին Հայաստանի կառավարության հաստատված «Կայուն գարգացման ծրագրում» ռազմավարական առաջնահերթությունների թվում

24 http://www.un.am/am/MDGs_in_Armenia

ճանաչվել է կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարությունը:

2010 թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց պետության Գենդերային քաղաքականության հայեցակարգը, իսկ 2011 թ.՝ Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի «Գենդերային քաղաքականության իրականացնան ռազմավարությունը կառավարման և որոշումների ընդունման մակարդակում» բաժնում հստակ նշված են կառավարության խնդիրները. Կնևով կոնվենցիայի և Պեկինի գործողությունների ծրագրի, ինչպես նաև գենդերային հավասարության վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթերի պահանջների կատարում, հատուկ միջոցների ներդրում իշխանության օրենսդրական և գործադիր մարմիններում կանանց 30%-անց ներկայացվածության հասնելու համար:

2011 թ. ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Թվարկված փոփոխությունները ՀՀ օրենսդրության մեջ, պետական մակարդակով ընդունված ռազմավարություններն ու ծրագրերը, լինելով դրական միջոցներ, որոշ չափով նպաստել են կանանց քաղաքական ակտիվության մեծացմանը, դրանով իսկ հանգեցրել Հայաստանի գենդերային իրավիճակի փոփոխության և նախադրյալներ ստեղծել իշխանությունում գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության հասնելու համար:

ԳԼՈՒԽ 2.

ԿԱՆԱԿ ՄԱՍԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

2

1. Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը

Քաղաքական մասնակցության մշտադիտարկում անցկացնելիս քննարկվել են այն գործողությունները, որոնց միջոցով քաղաքացիներն ազդում են կան փորձում են ազդել քաղաքական համակարգի գործունեության վրա: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կանանց քաղաքական մասնակցության աստիճանը տղամարդկանցից էապես ցածր է: Ծառ երկրների քաղաքական էլիտայում մեծամասնությունը դեռևս տղամարդիկ էն: Պատճառը հասարակության գենդերային մշակույթն է, դարեր շարունակ արմատավորված խորական գործելակերպը կանանց նկատմամբ, գենդերային կարծրատիպերը, կանանց կրկնակի ծանրաբեռնվածությունը և այլն:

Ժողովրդավարական գործընթացների խորացմանը զուգընթաց՝ փոխսկում են թե՛ քաղաքական մասնակցության տեսակներն ու ձևերը, թե՛ դերակատարների ակտիվությունը: Հասարակական գիտակցության խոր փոփոխություններ են տեղի ունենում, հարստանում է քաղաքական օրակարգը: Երկրների քաղաքական կյանքին կանանց մասնակցելուն զուգահեռ՝ արմատական փոփոխություններ են տեղի ունենում հասարակության սոցիալական կյանքում, փոփոխսկում է քաղաքական օրակարգը, նոր մակարդակ է բարձրանում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը: Հենց դրանով է բացարկվում այն հանգամանքը, որ ժողովրդավարական հանրություններն անմիջական կապ են տեսնում գենդերային հավասարության ապահովման և ժողովրդավարության զարգացման միջև:

Գենդերային հավասարության դիտանկյունից ժողովրդավարության ձեռքբերումները գնահատելու համար երևան է եկել մի նոր եզրույթ՝ «զուգակշռված ժողովրդավարություն», որի իդեալը իշխանության կառույցներում կանանց և տղամարդկանց 50:50 հարաբերակցությամբ ներկայացվածությունն է:

«Զուգակշռված ժողովրդավարություն» հասկացությունն առաջին անգամ քննարկվել է 1989 թ. նոյեմբերի 6-7-ը Ստրասբուրգում կայացած «Զուգակշռված

Ժողովրդավարություն՝ Եվրոպայի խորհրդի 40 տարվա գործունեությունը» սեմինարի շրջանակներում, այնուհետև՝ զուգակշռված ժողովրդավարության մասին փորձագետների խմբի գեկույցում, որը հրատարակվել է 1995 թ. սկզբին:

Հետագա տարիներին ավելի ուշադիր սկսեցին ուսումնասիրել կանանց ակտիվացումը խոչընդոտող պատճառները: 1995 թ. արդեն Պեկինի գործողությունների ծրագրում նշված էր. «Չատ քաղաքական կուսակցությունների և պետական կառույցների աշխատանքի ավանդական դրվագը նախկինի պես խոչընդոտում է կանանց մասնակցությունը հասարակական կյանքին: Կանանց քաղաքական պաշտոն գրադեցնելու ձգումանը կարող են խանգարել խորական մոտեցումներն ու գործելակերպը, ընտանեկան ու երեխաների խնամքի պարտականությունները, պետական պաշտոն հայցելու և այն գրադեցնելու համար պահանջվող մեծ ծախսերը»:

- Ակսեցին դիտարկել քաղաքական կուսակցությունների՝ քաղաքականության մեջ կանանց ներգրավելու և որոշումների ընդունման բոլոր մակարդակներում գենդերային հավասարակշռություն ապահովելու շահագրգորությունը՝ որպես կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման կարևոր գործուններից մեկը: Քաղաքական կուսակցություններին հանձնարարվեց.
- ուսումնասիրել քաղաքական կուսակցությունների կառույցներն ու ընթացակարգերը՝ կանանց մասնակցության համար ուղղակի կամ անուղղակի խորական արգելքներ ստեղծող բոլոր գործունները վերացնելու նպատակով.
- մշակել նախաձեռնություններ, որոնք հնարավորություն կտան կանանց համակողմանի մասնակցության ունենալու բոլոր ներքին դեկավար կառույցներում և նշանակովի ու ընտրովի պաշտոնների համար թեկնածուների առաջադրման գործընթացներում.
- գենդերային հիմնախնդիրներն ընդգրկել քաղաքական ծրագրում, միջոցներ ձեռնարկել քաղաքական կուսակցությունների դեկավարությունում տղամարդկանց հետ հավասար հիմունքներով կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնման համար.
- կառուցղական միջոցներ ձեռնարկել կանանցից ռազմավարական դեկավար պաշտոններում լիդերների, վարչարարների և ռազմավարական դեկավար պաշտոններում կառավարողների «կրիտիկական զանգված» ձևափորելու համար.
- սեփական ուժերի նկատմամբ վստահությունն ամրապնդող ուսուցում կազմակերպել՝ ուղղված դեկավարման հմտությունների զարգացմանը և կանանց ու աղջիկներին օգնություն ցույց տալուն.
- ստեղծել վերապատրաստման համակարգեր այն կանանց համար, որոնք համապատասխան փորձ չունեն, մասնավորապես՝ կազմակերպել ուսուցում, այդ թվում՝ դեկավար գործունեության, հոեստորական

արվեստի հմտությունների և ինքնահաստատման, ինչպես նաև քաղաքական արշավների վարման ուսուցում:

Գենդերային հավասարության հասնելու մեխանիզմների մշակումով, այդ թվում՝ քաղաքական ոլորտում, զբաղվում են բազմաթիվ եվրոպական կառույցներ՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպայի խորհրդին կից Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների հարցերի հանձնաժողովը, Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի ղեկավար կոմիտեն, Նախարարների կոմիտեի կանանց և տղամարդկանց հավասարության հիմնախնդրի գեկուցողների խումբը: Գենդերային ոլորտում քաղաքականության մշակման համար ստեղծվել է Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտը: Այդ կառույցների հանձնարարականները պարտադիր են այն երկրների համար, որոնք ստորագրել կամ միացել են վերը նշված փաստաթղթերին:

Եվրոպական կառույցների կողմից հանձնարարված փաստաթղթերի շարքում կարենոր տեղ ունեն հետևյալները. «Հոչակագիր կանանց և տղամարդկանց հավասարության՝ որպես ժողովրդավարության գլխավոր չափանիշի մասին» (1997 թ.), «Համալիր մոտեցում կանանց և տղամարդկանց հավասարության խնդիրներին» (1998 թ.), Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» [Rec (2003)3] հանձնարարականը, Կանանց և տղամարդկանց հավասարության հարցերի նախարարների 5-րդ համաժողովի «Սեռերի հավասարություն. առանցքային հարց հասարակությունների համար փոփոխությունների փուլում» հոչակագիրը և գործողությունների ծրագիրը (Ակոպին, 2003), Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» [Rec 1676 (2004)], «Որոշումների ընդունման գործընթացներին կանանց մասնակցությունը երաշխավորող մեխանիզմների մասին» [Rec 1489 (2006)] հանձնարարականները, «Ընտրական համակարգը որպես քաղաքական կյանքում կանանց ներկայացվածությունը բարձրացնելու գործիք» 1706 (2010) բանաձեռնություն սեքսիստական կարծրատիպերի դեմ պայքարը» [Rec 1931 (2010)] հանձնարարականը:

Եվրոպայի խորհուրդն անդամ պետություններին, ի թիվս կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանն ուղղված օրենսդրական և վարչական միջոցների, առաջարկում է «դիտարկել կուսակցությունների պետական ֆինանսավորման կիրառումը՝ խթանելու նրանց կողմից աջակցությունը կանանց և տղամարդկանց հավասարությանը»²⁵: Ի լրումն Նախարարների կոմիտեի

²⁵ Եև Նախարարների կոմիտեի «Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին», Rec (2003) 3 հանձնարարականը անդամ պետություններին, հավելված և բացատրական ծանուցում (12 մարտի 2003 թ.):

«Քաղաքական և պետական որոշումների կայացման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» [Rec (2003)3] հանձնարարականում՝ ուղղված անդամ պետություններին, դրա հավելվածում և բացատրական ծանուցման մեջ (12 մարտի 2003 թ.) հանձնարարվում է նաև «տեղեկացնել քաղաքական կուսակցություններին այն ռազմավարությունների մասին, որոնք կիրառվում են տարրեր երկրներում և նայատակ ունեն նպաստել կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությանն ընտրական մարմիններում։ Խրախուսել ռազմավարություններից մեկի կամ մի քանիսի կիրառումը և աջակցությունն իրենց դեկավար մարմիններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությանը»²⁶:

Փորձը ցույց է տալիս, որ քաղաքական կուսակցությունները կարող են նպաստել կանանց քաղաքական մասնակցության համար բարենպաստ հասարակական կարծիքի ձևավորմանը, կանանց թեկնածությունների առաջադրմանը պետական իշխանության օրենսդրական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում։ Չատ երկրներում քաղաքական կուսակցությունները գենդերային հիմնախնդիրները կուսակցությունների ծրագրերում և քաղաքական օրակարգում ընդգրկելու նախաձեռնողները դարձան՝ հանուն գենդերային անհավասարակշռության հաղթահարման։ Քանի որ կուսակցությունների կարևորագույն գործառույթն ընտրովի պաշտոնների համար թեկնածությունների ընտրությունն է և կառավարության ձևավորումը, կուսակցությունները պետք է շահագրգորություն ցուցաբերեն իշխող էլիտայի համար բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման հարցում։

Կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման համար կարևոր նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- կուսակցության բարյա-արժեքային համակարգում գենդերային հիմնախնդիրների ներառման աստիճանը,
- կուսակցական ավանդույթները և կուսակցությունում գենդերային հավասարության գաղափարների առաջնորդման համար բարենպաստ միջավայրի ստեղծումը,
- կուսակցության առաջնորդների՝ գենդերային հավասարությանը նպաստող քաղաքական վարքագիծը, գենդերային դիսկուրսի առկայությունը նրանց իրապարակային ելույթներում,
- գենդերային հավասարությունն իրական քաղաքականության մեջ՝ կուսակցության ներսում և պետական պաշտոնների նշանակումներում,
- կուսակցության շահագրգորությունը թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց կադրային կազմի պատրաստման խնդրում,

²⁶ Նույն տեղում։

- կանանց տոկոսը կուսակցությունների նախընտրական ցուցակներում, կուսակցության՝ ընտրությունների համամասնական համակարգով ընտրական ցուցակներում կանանց ընդգրկելու պատրաստակամության աստիճանը գենդերային քվոտաների բացակայության կամ առկայության պայմաններում,
- կուսակցության դեկավար մարմինների գենդերային կազմը,
- քաղաքական որոշումների ընդունման գրոծընթացին կանանց մասնակցության հնարավորությունները, կուսակցությունում իրական ազդեցություն ունենալու և իշխանության աստիճանը:

ՀԱՅԱՀԻՍԱՐԻԱՅԻՆ ՎԻՐՅԱ Ի, որ կուսակցությունների քաղաքականության մեջ երեք մոդելում է նկարվում.

- խորական, երբ կանանց արգելվում է կուսակցություններին անդամագրվելը.
- գենդերայնորեն չեղոք, երբ կուսակցությունները չեն ընկալում գենդերային հիմնախնդիրները կամ ընդունում են միայն խոսքով: Այդ դեպքում կուսակցությունների իրական քաղաքականության մեջ կամ գենդերային չեղոք քաղաքորիչները բացակայում են, կամ նմանակման բնույթը ունեն.
- կուսակցությունների գենդերայնորեն զգայուն քաղաքականություն, երբ կուսակցությունները դեկավարությունում և իշխանական կառույցներում կանանց առաջմղման մեխանիզմներ են մշակում կամ վարում են «դրական խորականության» քաղաքականություն՝ հատուկ ժամանակավոր միջոցների կիրառմամբ:

Ակսած 1970-ական թթ.²⁷ որոշ երկրներում կուսակցությունները ներդրեցին կուսակցական քվոտավորում (իշխանության դեկավար մարմինների քվոտավորում՝ ամրագրելով կուսակցությունների կանոնադրություններում), ինչպես նաև ընտրությունների ժամանակ համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակների քվոտավորում կամ խորհրդարանի տեղերի վերապահում: Կուսակցությունների կողմից նման քաղաքականությունը հաճախ վարփում է կամավոր: Դա հատկապես վերաբերում է Հյուսիսային Եվրոպայի երկրների քաղաքական կուսակցություններին²⁷:

²⁷ Նորվեգիայի Ժողովրդավարական սոցիալիստների կուսակցության կանոնադրությունում դրույց կա կուսակցության յուրաքանչյուր մակարդակում կանանց ներկայացվածության առնվազն 40%-ի քվոտայի մասին: Նույն օրինակին շրուտով հետևեցին նաև որիշ կուսակցություններ: Շվեյցարիա և Ֆինլանդիայում դրական խորականությունը կիրառվում է շատ կուսակցությունների կողմից, թեպետ այդ երկրների օրենսդրությունում նման պահանջված:

**2. Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրները
կուսակցությունների քաղաքական օրակարգում. կուսակցությունների
ծրագրերի գենդերային վերլուծությունը և կուսակցությունների
նախընտրական ծրագրերը**

Հայաստանի գենդերային իրավիճակի վերլուծությունը ցույց տվեց, որ քաղաքական կուսակցությունները հիմնականում գենդերայնորեն չեզոք մուտքում են ցուցաբերում: Դա դրսևորվում է թե՝ կուսակցական դեկալարության գենդերային կազմում, թե՝ ծրագրերում և ընտրությունների ժամանակ ընտրական ցուցակները կազմելիս:

Քաղաքական կուսակցության ծրագիրը՝ որպես փաստաթուղթ, արտացոլուվ կուսակցության գաղափարախոսությունը, բովանդակելով նրա նպատակների և քաղաքական գործունեության եղանակների, դրանց հասնելու ուղիների թվարկումը, սահմանում է մոտեցումները հասարակության այս կամ հիմնախնդրին, այդ թվում և գենդերային հավասարությանը և կանանց ու տղամարդկանց զուգակշռված մասնակցությանը կուսակցության գործունեությանը: Եվ եթե քաղաքական կուսակցությունն իրոք հանդես է գալիս որպես ժողովրդավարական արժեքների կողմնակից, գենդերային մոտեցումն արտացոլվում է թե՝ նրա հիմնական (ռազմավարական), թե՝ նախընտրական (մարտավարական) ծրագրում:

Հաշվի առնելով, որ նախորդ տարիներին մենք քաղաքական կուսակցությունների ծրագրերի գենդերային վերլուծություն ենք կատարել, սույն դիտարկման և գնահատման ընթացքում խնդիր ենք դրել վեր հանել, թե կատարվել են արդյոք քաղաքական կուսակցությունների ծրագրերի փոփոխություններ ՀՀ կառավարության ընդունած Գենդերային քաղաքականության հայեցակարգից և Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրից հետո, արդյոք կուսակցությունների ծրագրերը գենդերայնորեն ավելի զգայուն են դարձել ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ 2002-2007 թթ. ժամանակաշրջանի համար Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական գելույցների վերաբերյալ արած Եզրափակիչ դիտողություններից հետո:

2012 թ. վերլուծության ընթացքում ուշադրություն է դարձվել կուսակցությունների ծրագրերի ուսումնասիրությանը՝ հետևյալ հայեցակետերով.

- կուսակցությունների վարած գենդերային քաղաքականության հետևողականությունը և դրանց գենդերային զգայնության բարձրացումը,
- գենդերային հիմնախնդիրների նկատմամբ կուսակցությունների հետաքրքրության կայունությունը,
- կուսակցությունների հիմնական և նախընտրական ծրագրերի համեմատությունը:

Ուսումնասիրվել են «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի և հետևյալ կուսակցությունների հիմնական և նախընտրական ծրագրերը։ Հայաստանի հանրապետական կուսակցություն, «Քարգավաճ Հայաստան», ՀՅ դաշնակցություն, «Օրինաց երկիր», «Ժառանգություն», Հայաստանի դեմոկրատական կուսակցություն, Հայաստանի կոմունիստական կուսակցություն, «Միավորված հայեր»։

Թվարկված կուսակցություններից Հայաստանի հանրապետական, «Քարգավաճ Հայաստան», ՀՅ Դաշնակցություն, «Օրինաց երկիր», «Ժառանգություն» կուսակցությունները մասնակցել են 2007 թ. խորհրդարանական ընտրություններին։

2

2012 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցած կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանցում հիմնականում արտացոլված են սոցիալական խնդիրներ՝ դրույթներ ընտանիքի ամրապնդման, մայրության և մանկության պաշտպանության, կանանց վերաբրտության դերի մասին։ Քաղաքական կուսակցությունների ծրագրերում չկան որոշումների ընդունման մակարդակում գենդերային հավասարակշռության ապահովման և կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման մասին դրույթներ։

Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրում ընդգծվում է.

- «Պետությունը պետք է աջակցի քաղաքական համակարգի զարգացմանը, ժողովրդավարության կայացմանը, մասնակի և փուլային բարեփոխումների ճանապարհով՝ հասարակության անընդհատ բարելավմանը։ Ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին՝ ուղղված լինելով դրա արդիականացմանը։
- Հայ հասարակության իմքն ավանդական ընտանիքն է։ Անոր և առողջ ընտանիքների ձևավորումը, ընտանիքում ազգային-ավանդական արժեքների պահպանումն ու զարգացումը պետք է լինեն պետության կարևորագույն խնդիրներից։»

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի հանրապետական կուսակցությունը՝ որպես իշխող կուսակցություն, որ պատասխանառու է ՀՀ կառավարության քաղաքականության համար, կոչված է աջակցելու ՀՀ կառավարության հաստատած Գենդերային քաղաքականության հայեցակարգի և Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ.ռազմավարական ծրագրի իրականացմանը։

Հայաստանի հանրապետական կուսակցության նախընդրական ծրագրում «Հավասար իրավունքներ, հավասար ինարավորություններ» առանձին բաժնում, նախատեսվում են հավասար իրավունքներ և ինարավորություններ երիտասարդության, անապահով ընտանիքների, սահմանափակ ինարավորություններով մարդկանց, տարբեր համայնքների համար: Այսուհանդեռձ, տվյալ բաժնում բացակայում է կանանց և տղամարդկանց իրավունքների և ինարավորությունների հավասարության հիմնախնդրի ձևակերպումը: Մինչդեռ ՄԱԿ-ի և եվրոպական կառույցների փաստաթղթերում հավասարությունը հիշատակելիս միշտ ընդգծվում է «կանանց և տղամարդկանց իրավունքների և ինարավորությունների հավասարությունը»:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում «Իրավական պետության կառուցում», «Քաղաքացիական հասարակության զարգացում» բաժններում, բացակայում են գենդերային հավասարության հիմնախնդրները, և առհասարակ գենդերային բաղադրիչն ընդգրկված չէ այս ծրագրում: Սակայն ծրագրում բվարկված առաջնահերթ խնդիրների շարքում դրույթ կա կանանց մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման նախն: Ծրագրի «Տեղական ինքնակառավարման զարգացում» բաժնում ընդգրկված է ուշագրավ դրույթ: «...Համայնքներում աստիճանաբար անցում կատարել ավագանիների ընտրական խառը՝ մեծամասնական և համամասնական համակարգի, իսկ հետագայում՝ 100-տոկոսանոց համամասնական ընտրահամակարգի»: Անկասկած, այս դրույթի կենսագործումը, կիրառելով գենդերային քվուսայի մեխանիզմը, կարող է նպաստել տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածության ընդլայնմանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընդրական ծրագրի և հիմնական ծրագրի դրույթները նույնն են: Սակայն «Խաղաղ, կայուն տարածաշրջան» բաժնում ընդգծվում է, որ կուսակցությունը հանդես է գալիս «Արեւելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում Հայաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական ենթակառուցվածքները եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու օգտին»:

«Յ դաշնակցություն կուսակցության ծրագրում գենդերային հավասարության մասին դրույթներ չկան: Սակայն կուսակցության նախընտրական ծրագրի սոցիալ-տնտեսական բաժնում ընդգրկված է դրույթ կանանց զբաղվածության ապահովման մասին: «Թերև արդյունաբերության զարգացումը կղիտարելի ներկրվող մի շարք ապահովելու արտադրությունը Հայաստանում կազմակերպելու, զբաղվածություն (հատկապես՝ կանանց շրջանում) ապահովելու... տնտեսական մասին»: Ընդգրկված է նաև կարևոր դրույթ ծննդաբերության արձակուրդում գտնվող կանանց աշխատանքային ստաժի մասին. «Կընդուն-

վի օրենք, որի համաձայն՝ մինչև երկու տարեկան երեխա խնամող շաշխատող կանաց համար այդ ժամանակահատվածը կհամարվի աշխատանքային ընդհանուր ստաժ»:

«Ազգային-ժողովրդավարական ժամանակակից պետության կառուցում» բաժնում, ի թիվս այլ դրույթների, նշվում է 100-տոկոսանոց համամասնական ընտրահամակարգի անցնելու անհրաժեշտությունը:

2007 թ. Հայ հեղափոխական դաշնակցությունը միակ կուսակցությունն էր, որ նախընտրական ծրագրում հատուկ բաժին ուներ՝ «Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը»։ Իրավահավասարության ապահովմանը վերաբերող դրույթների շարքում նշված էր.

- «աշխատանքի շուկայում կանաց մրցունակության բարձրացման և ընտանեկան պարտականությունների համատեղման մեխանիզմների ստեղծմանը նվիրված ծրագրերի ներդրումը,
- քվոտավորման արդյունավետ մեխանիզմների ստեղծումը կանաց քաղաքական իրավունքների իրականացման համար,
- հասարակության մեջ կանաց դերի բարձրացման ծրագրերի ընդունման և իրականացման և քաղաքացիական հասարակության՝ սեռերի իրավահավասարության ապահովմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությունը»²⁸:

Հարկ է նշել, որ ՀՅԴ-ն խորհրդարանական լսումների ժամանակ ակտիվութեն պաշտպանում էր «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը։ ՀՅԴ-ն սոցիալիստական կուսակցություն է, հանդիսանում է Սոցինտերնի անդամ, իսկ ամբողջ աշխարհում գենդերայնորեն զգայուն ծրագրերով ու գործունեությամբ աշքի են ընկնում հենց ճախ ուղղության կուսակցությունները։ 2012 թ. կուսակցության նահանջը 2007 թ. նախընտրական ծրագրի գենդերայնորեն զգայուն դրույթներից, ըստ երևոյթին, ժամանակավոր երևոյթ է։

Նշանակալի դրույթներ են ընդգրկված «**Ժառանգություն» կուսակցության ծրագրում», որը լրացվել և փոփոխվել է 2008 թ.։ Ծրագրում մայրության, մանկության և ընտանիքի պաշտպանության մասին ավանդական դրույթի կողքին անհանգստություն է արտահայտվում գյուղական ընտանիքների կապակցությամբ, որոնք տղամարդկանց միգրացիայի պատճառով հայտնվել են դժվարին կացության մեջ։ «Երբեմնի կայուն, ավանդականորեն անփոխարինելի ու ընդօրինակելի գյուղական ընտանիքները հայտնվել են պառակտման եզրին, քանի որ տղամարդիկ արտագնա աշխատանքի են մեկնել մոտիկ ու հեռու արտասահմաններ»։**

28 Հայ հեղափոխական դաշնակցության ծրագիր: Երևան, 2007, էջ 17-18:

Ծրագրում դրույթ կա բանակի ամրապնդման մասին, որում ասվում է, որ հարկ է կամավորության սկզբումքով բանակում ծառայելու հնարավորություն տալ կանանց և աղջիկներին. «Այս ուղիղով հնարավոր է նաև կանանց և աղջիկների կամավոր հիմունքներով ավելի լայն ներգրավումը ՀՀ գինված ուժերի հատուկ ստորաբաժանումներում»:

Կուսակցության նախընտրական ծրագիրը բովանդակում է նաև դրույթներ ընտրական համակարգի բարելավման վերաբերյալ. «Բարելավել ընտրական համակարգը, այդ թվում՝ ապահովելով բացառապես համամասնական ընտրակարգով Ազգային ժողովի ընտրությունների անցկացումը...»:

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում ընդգրկված է դրույթ հասարակական կազմակերպությունների վերաբերյալ, որում ասվում է. «Փոփոխություն կատարել հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով՝ ամրագրելով պետական իշխանության նարմինների գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հստակ մեխանիզմներ»:

Կուսակցության ծրագրում չկան դրույթներ կանանց քաղաքական մասնակցության մասին, սակայն ՀԿ-ներում կանանց ներգրավելու մասին դրույթը կարող է նպաստել կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը:

«Օրինաց երկիր» կուսակցության խմբակցության ղեկավար Հեղինե Բիջարյանը ներկայանում է որպես ՀՀ Ազգային ժողով ՀՀ կառավարության ներկայացրած և առաջին ընթերցմամբ ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախազդի համահեղինակ, այսուհանդերձ գեներային հավասարությունն առաջնահերթ չի դիտվում թե՝ «Օրինաց երկիր» կուսակցության ծրագրում, թե՝ նախընտրական ծրագրում: Նախընտրական ծրագրի «Ընտանիքի, մայրության և մանկության խնդիրների լուծմանը՝ առաջնահերթություն» բաժնում զգայի ուշադրություն է դարձվում ընտանիքի պաշտպանությանը, և առաջարկվում են համալիր միջոցառումներ այդ խնդիրը լուծելու համար:

Հայաստանի ղենոկրատական կուսակցության ծրագրում գեներային մոտեցումը բացակայում է, թեպես դեռ 1995 թ. կուսակցության նախընտրական ծրագրում առաջին անգամ առաջադրված էր իշխանության կառույցներում կանանց ներգրավելու խնդիրը:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների ընտրական դաշինքի նախընտրական ծրագիրը փաստաթղթերի համալիր է: Այն ընդգրկում է «Նախընտրական ծրագրի հիմնական դրույթները», ինչպես նաև մի շարք ծրագրեր՝ մշակված գործունեության տարբեր փուլերում, որոնցում ընդգրկված է հիմնախնդիրների լայն սպեկտր, սակայն գեներային նոտեցումը դրանց մեջ բացակայում է:

Ի տարբերություն մնացած կուսակցությունների՝ «Սիավորված հայեր»²⁹ կուսակցության ծրագիրը, ընդունված 2012 թ. կուսակցության 6-րդ արտահերթ համագումարում, նախատեսում է «պետական և հասարակական-քաղաքական կառույցներում կնոջ դերի բարձրացում և կարևորագույն գործընթացներում նրա համակողմանի ընդգրկում»:

Քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերի ուսումնասիրությանը ձեռնամուխ են եղել նաև մի շարք հասարակական կազմակերպություններ: Նրանցից մի քանիսն ընտրողների իրազեկությունը բարձրացնելով նպատակով կուսակցությունների դրույթները ներկայացրել են իրենց հրապարակումներում և ԶԼՄ-ներում:

2

Մասնավորապես «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ՀԿ-ն ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրությունների նախօրեին հրատարակեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններ: Ընտրողի ուղեցույց», որում կուսակցությունների ներկայացուցիչների կողմից լրացված հարցարերթիկի հիմնան վրա ներկայացրեց դրանց գաղափարական առանձնահատկությունները, նպատակները, խնդիրները, գործունեությունը և ծրագրային դրույթները: Ուղեցույցի ներածությունում նշված է, որ առաջարկված հարցարերթիկը լրացրել են կուսակցությունների պատասխանատու ներկայացուցիչներ:

Սակայն մեր ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկան կուսակցությունների նախընտրական ծրագրերի և տվյալ ժողովածուում շարադրված մտքերի տարբերություններ: Այդ հանգամանքին ուշադրություն դարձրին նաև ուղեցույցի հեղինակները: Ելնելով մեր մշտադիտարկման նպատակներից՝ հատուկ ուշադրություն նվիրեցինք «Կանանց շահերի պաշտպանությունը և պայքարը կանանց նկատմամբ բռնության դեմ» բաժնին:

Այսպես, ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրային դրույթներից նշված են հետևյալները.

- «Ազգային և տարածաշրջանային մակարդակներում հասարակական-քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում քաղաքականության մշակման մեջ և քաղաքական պրակտիկայում գեներացին բաղադրիչի ներառում.
- Գեներացին հավասարության քաղաքականության մշակման և իրականացման ազգային և ինստիտուցիոնալ մեխանիզմներ ներառող միասնական համակարգի ձևավորում.

29 Կուսակցությունը ստեղծվել է 2000 թ., սակայն քաղաքական ակտիվությամբ աչքի չի ընկել: 2003 թ. կուսակցության առաջնորդ Ռուբեն Ավագյանը, որ «Մանց» համալսարանի ռեկտորն է, առաջարկվեց Հայաստանի Հանրապետության նախագահի թեկնածու:

- Գենդերային հավասարության քաղաքականության մշակման և դրա իրականացման ընթացքի մշտադիտարկման կազմակերպչական միջոցառումների ապահովում»³⁰:

Գրքում ներկայացված «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրային դրույթներում նշված է. «Կուսակցությունը հանդես է գալիս քաղաքական կյանքում կանաց դերի մեծացման օգտին: Կարևոր է կանաց մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը, ինչպես նաև այդ որոշումների կենսագործմանը»³¹:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը չի պատասխանել տվյալ բաժնի հարցերին:

Հարցաթերթիկի հարցերին տվյալ պատասխաններում «Օրինաց երկիր» կուսակցությունը կարծիք է հայտնել, որ «հասարակության կենսագործությունը բոլոր ոլորտներում կանաց ինտեգրումը կնպաստի ինչպես հասարակության կայուն զարգացմանը, այնպես էլ կրաքարացնի կանաց իրավունքների պաշտպանության մակարդակը»³²:

«Ժառանգություն» կուսակցությունն առաջարկում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝

- «օրենսդրություն սահմանել... կանաց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորել դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները,
- գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությամբ՝ ընտրություններն անցկացնելիս կանաց համար հավասարապես ապահովել արդարացի և իրական հնարավորություններ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարդիններ ընտրելու և ընտրվելու իրավունքն իրականացնելու համար»³³:

Հարցերի իր պատասխաններում Հայաստանի դեմոկրատական կուսակցությունն ընդգծում է. «Դեմոկրատական սոցիալիզմը բացառում է սոցիալական տարբերությունները կնոջ և տղամարդու միջև: Հաշվի առնելով ֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ կուսակցությունը գտնում է, որ անհրաժեշտ է կանաց համար սահմանել արտոնություններ՝ ապահովելով նրանց դերը հասարակության մեջ որպես մոր, դաստիարակի, ընտանիքը պահպանողի և ամրապնդողի»³⁴:

30 Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով՝ մասնակցող կուսակցություններ: Ընտրողի ուղեցույց: Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ: Երևան, 2012, էջ 131:

31 Նոյն տեղում, էջ 21:

32 Նոյն տեղում, էջ 146:

33 Նոյն տեղում, էջ 34:

34 Նոյն տեղում, էջ 115:

Կոնգրեսի մեջ մտնող յուրաքանչյուր կուսակցություն ուղեցույցում ներկայացրել է կանանց շահերի պաշտպանության հիմնախնդրի իր պատկերացումը, ընդ որում՝ կուսակցությունների մոտեցումները խիստ տարբեր են:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քաղաքական կուսակցությունների մեծ մասի նախընտրական ծրագրերում բացակայում են այն գենդերային մոտեցումները, որոնք ներկայացված են տվյալ ուղեցույցում: Բայց քանի որ հարցարերթիկը լրացրել են «կուսակցությունների պատասխանատու ներկայացուցիչները», կարելի է եզրակացնել, որ գենդերային դիսկուրսը կուսակցությունների օրակարգում որոշ չափով, այնուամենայնիվ, պետք է առկա լինի, այսուհանդերձ, միանգամայն ակնհայտ է, որ քաղաքական պրակտիկայում կուսակցությունները գենդերային հավասարության հիմնախնդրին այնքան էլ կարևոր նշանակություն չեն տալիս, որպեսզի այն ընդգրկվի կուսակցությունների ծրագրերում:

Այսպիսով, կուսակցությունների մեծ մասի ծրագրերում չկան դրույրական՝ նպարակառուղղված գենդերային հավասարության առաջնային, կանանց քաղաքական մասնակցության զարգացմանը և կանանց առաջադրմանն իշխանության որշումների բնորոշումնան մակարադակի մարմններում: Նշանակալի ուշադրություն նվիրելով բնագանիքի հիմնախնդիրներին՝ կուսակցություններն իրենց ծրագրերում հաշվի չեն առնում սոցիալ-քաղաքական իրողությունները, քավարարություն են բնագանիքի պաշտպանության մասին բնդիանուր դրույրներով՝ դրսերելով բնագանիքի ավանդապաշտպական խառնածքը և շագ հաճախ սահմանափակվում են մայրության և մամկության չկական պաշտպանությամբ:

Աչքի է զարնում այն հանգամանքը, որ կուսակցությունների ծրագրերում հաշվի չեն առնվում ՍՎԿ-ի և Եվրոպայի խորհրդի հանձնարարականները կուսակցություններին գենդերային հավասարության ապահովման վերաբերյալ, ինչը կարող էր էապես հարստացնել կուսակցական ծրագրերը նոր գաղափարներով և մոտեցումներով, այդ թվում և ընտանիքի ու ծնողների պաշտպանության առումով: Բացի այդ, որոշ հանձնարարականների ընդունումը և դրանց իրացումը կարող էին նվաստել կանանց դրույթյան էական բարելավմանը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում, կանանց կրկնակի ծանրաբեռնվածության նվազմանը և այդպիսով նրանց քաղաքական ակտիվացմանը³⁵:

35 «Մասնավոր սեկտորի ներգրավումը բիզնեսի սոցիալական պատասխանատվության շրջանակներում և գործող օրենսդրության հարմարեցումը ճկուն աշխատանքային գրաֆիկի ներդրմանը ինչպես հայրերի, այնպես էլ մայրերի համար, որպեսզի նրանց գործառությները բաշխվեն առավել հավասարակշռված, այլ կերպ ասսած, որպեսզի կանայք ազատվեն կրկնակի բնորոշ՝ աշխատանքից և տնային տնտեսության վարումից, և խրախուսվի տղամարդկանց առավել ակտիվ մասնակցությունն ընտանիքի կյանքին» (Բանաձև 1720 (2010) «Ընտանիքի ամրապնդումը որպես զարգացման գործոն ճգնաժամի պայմաններում»):

Քաղաքական կուսակցությունների ծրագրերում կանանց առաջման մեխանիզմների բացակայությունը թելադրում է եզրակացնել, որ հասարակության ժողովրդավարացման ներկայիս փուլում գենդերային հավասարության ապահովումն առաջնահերթ ուղղություն չի համարվում կուսակցությունների քաղաքականության մեջ: Գենդերայնորեն զգայուն նոտեցումների ներդրումը կարող էր նպաստել հեռանկարում կանանց ներուժի զարգացմանը: Կուսակցությունների կողմից իրենց դեկավար մարմիններում կանանց առաջ մելու հատուկ մեխանիզմների կիրառումը և ներկուսակցական ժողովրդավարության զարգացումը կրացաներ կանանց նկատմամբ խսրականության դրսևումները:

3. Կուսակցությունների լիդերների հրապարակային ելույթներում կանանց դերի և քաղաքական մասնակցության գնահատականը

Թեև կուսակցական ծրագրերի վերլուծությունը վեր հանեց դրանց գենդերայնորեն չեզոք նկարագիրը, որոշ դրական փոփոխություններ, այնուամենայնիվ, կուսակցությունների քաղաքական պրակտիկայում նկատվում են, հատկապես՝ կուսակցությունների դեկավարների հրապարակային ելույթներում, որոնցում հնչում է կանանց քաղաքական ակտիվացման թեման: Սկսած 2009 թվականից՝ Արևելյան գործընկերության ծրագրում Հայաստանի ներգրավելուց հետո կանանց քաղաքական մասնակցության խնդիրն ավելի է արդիականացել: Կուսակցությունների դեկավարները և պետական մակարդակի քաղաքական գործիչներն իրենց ելույթներում սկսում են հիշել քաղաքականության մեջ կանանց լայնորեն ներգրավելու անհրաժեշտության մասին:

Այսպես, 2010 թ. նոյեմբերին Հայաստանի հանրապետական կուսակցության նախագահ, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը կուսակցության կանանց խորհրդի առջև ելույթում նշել է. «Սենք պահպանողական կուսակցություն ենք, և մեր արժեքային համակարգում ընտանիքը, երեխաները, իհարկե, ամենակարևոր քաղաքիչներից են, բայց երբեք ո՛չ իմ, և ո՛չ էլ մեր կուսակցության դեկավարության մտքով իսկ չի կարող անցնել, որ հանրապետական կանանց գործունեությունը կամ մեր հայ կանանց գործունեությունը պետք է սահմանափակվի ամուր, լավ ընտանիք ունենալով, երեխաների դաստիարակությամբ կամ էլ ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելով: ... Սենք միշտ ընդգծել ենք կանանց ակտիվության անհրաժեշտությունը: Սեզ համար շատ մեծ շուայություն կիխներ, եթե փորձեինք սահմանափակել կանանց հնարավորությունները: ... Սենք մշտապես տեղ ենք տվել մեր կուսակցից կանանց, բայց դեռևս այստեղ շատ մեծ անելիքներ ունենք: Միջին օդակներում, այս, կանանց մասնակցությունը բավականաշափ մեծ է, բայց, ինչպես կանայք, այդ թվում՝ հանրապետական կանայք, այնպես էլ ամբողջ պետական

համակարգը պետք է տեսնեն, որ իրենք բարեխիղճ ծառայելու, բարեխիղճ աշխատելու ընթացքում զրկված չեն պաշտոնեական առաջխաղացումից»³⁶:

2012 թ. մարտին Հայաստանի հանրապետական կուսակցության համագումարում ունեցած ելույթում Սերժ Սարգսյանը ողջունեց ՀՀԿ-ում կանանց թվի մեծացումը և ընդգծեց, որ «ընտանիքի սյունը» լինել չի նշանակում խոհանոցի կալանավոր լինել... Դրա լավագույն ապացույցը ՀՀԿ-ի շարքերում կանանց ներգրավվածության աճն է»:

2012 թ. մայիսին Հայաստանի հանրապետական կուսակցության 20-ամյակին նվիրված նիստում կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանը կրկին անդրադարձավ հասարակության մեջ կանանց դերին. «Ես այսօր ել այն կարծիքին եմ, որ կանանց դերը Հայաստանի պետական և քաղաքական համակարգի բոլոր մակարդակներում է ավելի պետք է ամրապնդվի... **Գաղղթիր չէ, որ կանանց ակդիմ մասնակցությունը քաղաքական կյանքին բարձրացնում է հասարակայնության զգոնության ասդիմանը. Պատահական չէ, որ այն երկրություն, որին կանայք ակդիմորեն են ներկայացված քաղաքական կյանքում, ցածր է կոռուպցիայի մակարդակը»³⁷:**

Երկրի հասարակական-քաղաքական կյանքին կանանց մասնակցության նշանակության մասին քանից հանդես են եկել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովհաննելին և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Կուսակցությունների առաջնորդները կանանց առաջմղման թեման ակտիվորեն հնչեցնում են Մարտի 8-ին, ինչպես նաև կուսակցությունների ակտիվիստների առջև ելույթ ունենալիս: Այսպես, «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղրամյանը, ողջունելով կուսակցության Կանանց միության գործունեությունը, նշել է, որ այդ կառույցը ներդրվել է եվրոպական կուսակցությունների օրինակով և հնարավորություն է տալիս լուծելու կանանց ակտիվացման հիմնախնդիրներ՝ կիրառելով իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Կուսակցության առաջնորդը ողջունում է նաև կանանց ներգրավումը իշխանության կառույցներում՝ որոշ հույսեր կապելով դրա հետ. «Մենք շահագործված ենք, որ հայ կանայք կարողանան ակտիվորեն ներգրավված լինել մեր երկրի կառավարման գործընթացում, քանի որ գաղափարական, քաղաքական պատշաճ պատրաստվածություն և բրծվածություն ունեցող կինը կարող է քաղաքական կառույցներին հղոր ուժ տալ»³⁸:

36 Հայաստանի հանրապետական կուսակցության կանանց խորհրդի անդամների առջև կուսակցության 20-ամյակի կապակցությամբ ունեցած ելույթից, <http://ankakhi.com/2010/11/74207/>

37 2012 թ. մարտին Հայաստանի հանրապետական կուսակցության 13-րդ համագումարում Սերժ Սարգսյանի ելույթից, <http://news.am/rus/news/96634.html> Սերժ Սարգսյանի ելույթ՝ ՀՀԿ 20-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում 7or.am/am/news/view/13216/

38 Արթուր Բաղրամյանի կուսակցության Կանանց միության 7-րդ համագումարում ունեցած ելույթից, 04.03.2012:

Պարբերաբար անդրադառնալով կանանց քաղաքական մասնակցության թեմային՝ Արթուր Բաղդասարյանն անհանգստություն է հայտնում իշխանության կառույցներում կանանց ցածր ներգրավվածության կապակցությամբ. «Հայաստանում ցածր մակարդակի վրա է գտնվում կանանց ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքին, հատկապես՝ պետական կառավարման ոլորտում»³⁹:

Կուսակցական կյանքում կանանց դերի և կանանց քաղաքական մասնակցության թեմային է անդրադառնում նաև «Քարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանը: Հանդես գալով 2012 թ. ստեղծված Երիտասարդ աղջիկների խորհրդի առաջին նիստում՝ Գագիկ Ծառուկյանը, ողջունելով այդ խորհրդի ստեղծումը, հույս հայտնեց, որ «**Երիտասարդ աղջիկները, լինելով ավելի պարասիսնակու, պետք է համախմբվեն, փորձն իրենց քաղաքական, խորհրդարանային գործունեության մեջ ակտիվ մասնակցեն կուսակցական աշխարանքին»⁴⁰:**

Քաղաքական կուսակցությունների առաջնորդների ելույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեպետ շատ դանդաղ, բայց կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրը սկսում է մտնել նրանց ելույթների թեմաների մեջ՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով որոշումների ընդունման մակարդակում այդ հիմնախնդիրների նկատմամբ քաղաքական կուսակցությունների առավել լուրջ մոտեցման համար:

4. Քաղաքական կուսակցությունների և դրանց դեկավար մարմինների գեներային կազմը

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների՝ երկրոս գրանցված է 74 քաղաքական կուսակցություն (2012 թ.), որոնցից: Դանցից 19-ը մասնակցել են 2012 թ. խորհրդարանական ընտրություններին (ընդ որում, 10-ն ընդդիմադիր «Հայ ազգային կոնգրես» միության կազմում են):

Քաղաքական կուսակցությունների կազմի իրական պատկերը հնարավոր չի բվում, քանի որ շատ կուսակցություններ վիճակագրական հաշվառում չեն անցկացնում և ճշգրիտ տվյալներ չունեն իրենց գեներային կազմի վերաբերյալ: Սույն ուսումնասիրության շրջանակներում մենք վեր ենք հանել կանանց ներկայացվածությունը 2012 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցություններում և կուսակցությունների դաշինքում: Օգտագործվել և քննական վերլուծության են ենթարկվել կուսակցությունների գեներային կազմի մասին տվյալները, որոնք առկա էին նաև մինչև ընտրությունները հրապարակված «ՀՀ ԱԺ 2012 թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններ» ուղեցույցում:

39 <http://news.am/arm/news/16121.html>

40 Գագիկ Ծառուկյան՝ Երիտասարդ աղջիկների խորհրդի առաջին նիստում ունեցած ելույթից, http://www.youtube.com/watch?v=xcsuhpebK_2s

**Կուսակցություններում և ընտրական դաշինքներում կանանց
ներկայացվածությունը**

| Կուսակցություն | Կուսակցությունում կանանց %-ը | Կուսակցության դեկավար մարմնում կանանց %-ը | Կուսակցությունում կանանց %-ը | Կուսակցության դեկավար մարմնում կանանց %-ը |
|--|------------------------------|---|------------------------------|---|
| | 2007 | | 2012 | |
| 1. Հայաստանի հանրապետական կուսակցություն | 30% | 2,8% | 51% | 10% |
| 2. «Բարգավաճ Հայաստան» | 40% | 11,4% | - | 8% |
| 3. Հայ հեղափոխական դաշնակցություն | 25% | 9,5% | 14% | 10% |
| 4. «Օրինաց Երկիր» | 68,3% | 30% | 69% | 9% |
| 5. «Ժառանգություն» | 52% | 22% | 45% | 45% |
| 6. «Հայ ազգային կոնֆես» կուսակցությունների ընտրական դաշինք | - | - | 46% | 12% |
| 6.1 «Ազատություն» | - | - | 32% | |
| 6.2. «Ժողովրդա - վարական հայրենիք» | - | - | 27% | |
| 6.3. «Ժողովրդա վարական ուղի» | - | - | 27% | |
| 6.4. Հայաստանի ժողովրդական կուսակցություն | 40 | 17 | 40% | |
| 6.5. Հայաստանի լիբերալ կուսակցություն | - | - | 42% | |

| | | | | |
|--|---|---|---------------|-----|
| 6.6. Հայաստանի կանաչների (սոցիալ-էկոլոգիական) կուսակցություն | - | - | 61% | |
| 6.7. Հայոց համագույշին շարժում | - | - | 32% | |
| 6.8. «Հայոց հայրենիք» | - | - | 19% | |
| 6.9. «Հանրապետություն» | - | - | Տվյալներ չկան | |
| 6.10 Պահպանողական կուսակցություն | - | - | 25% | |
| 7. Հայաստանի կոմունիստական կուսակցություն | - | - | 22% | 20% |
| 8. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն | - | - | 25% | 20% |
| 9. «Միավորված հայեր» | - | - | 38% | 38% |

Բերված տվյալները ցույց են տալիս, որ կուսակցությունները գենդերային կազմով, ավելի սոռուզ՝ կանանց ներկայացվածությամբ կարելի է դասակարգել երեք խմբի:

- կանանց ներկայացվածությունը 30%-ից ցածր է,
- կանանց ներկայացվածությունը կազմում է 30-50%,
- կանանց ներկայացվածությունը 51% և ավելի է:

Ինչպես երևում է աղյուսակից, առաջին խմբում՝ 30%-ից ցածր, հայտնվել են Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ինչպես նաև 4 կուսակցություն, որոնք մտնում են ընդդիմադիր «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ) միության մեջ: ՀԱԿ-ի դեկավարության 16 անդամներից 2-ն են կին, ինչը կազմում է 12%:

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ՀՅԴ-ն կանանց ներկայացվածության առումով, նախորդ շրջանի համեմատ, նահանջ կամ հետրմբաց է ու նեցել: 2003 թ. կանանց ներկայացվածությունը կուսակցությունում կազմել է 19%: Այնուհետև կուսակցությունը Սոցիալիստական ինտերնացիոնալ ընդուն-

վելու ցանկություն է հայտնել: Սոցինտերնի սկզբունքներից մեկը, որ հռչակված է Երիկայի խարտիայում, գենդերային հավասարության ապահովումն է⁴¹:

ՀՅԴ-ն Սոցինտերնի անդամ է դարձել 2004 թ., որից հետո կանանց թիվը կուսակցությունում սկսել է աճել: Կուսակցությունը Սոցինտերնի փորձագետների մասնակցությամբ անցկացրել է սեմինարներ, որոնք նպաստել են գենդերային իրազեկությանը: 2007 թ. կանանց ներկայացվածությունը կուսակցությունում հասել է 25%-ի: Կուսակցության խմբակցությունը խորհրդարանում գենդերայնորեն առավել հավասարակշռվածներից էր: Սակայն, ըստ վերջին տվյալների, 2012 թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին կանանց ներկայացվածությունը կուսակցությունում իջավ 14%-ի: ՀՀ Ազգային ժողովի ընտրություններից հետո Դաշնակցության խմբակցություն կին չկա:

2

Երկրորդ խոմքում, որտեղ կանանց ներկայացվածությունը 30-50% է կազմում, հայտնվել է «Ժառանգություն» կուսակցությունը (45%), ինչպես նաև այն կուսակցությունների մեծ մասը, որոնք մտնում են ՀԱԿ-ի մեջ (միշտ ներկայացվածությունը միությունում 46% է):

Երրորդ խոմքն (51%) են մտել Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Օրինաց երկիր», «Միավորված հայեր» կուսակցությունները, ինչպես նաև Հայաստանի կանաչների (սոցիալ-էկոլոգիական) կուսակցությունը, որ ՀԱԿ-ի կազմում է:

Որոշ կուսակցություններ, օրինակ՝ «Քարգավաճ Հայաստանը», ճշգրիտ տվյալներ չունեն իրենց գենդերային կազմի մասին. «Օրինաց երկիր» կուսակցությունը, որ ընտրություններից հետո վերակազմավորման գործընթացում է, կարողացավ միայն մոտավոր տվյալներ տալ:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կուսակցությունների մեծ մասի դեկավարությունում որոշակի կայուն անհավասարակշռություն է հաստատվել թեպետ որոշ կուսակցություններում, համեմատած 2007 թ. հետ, կանանց ներկայացվածությունը մի քիչ մեծացել է:

Այսուհանդերձ, զգալի թվով կամ բարձր տոկոս կազմող կանայք կուսակցություններում բարձր քաղաքական ակտիվության և բարձր կարգավիճակի և կամ ներկուսակցական ժողովրդավարության ուժեղացման վրա ազդող հնարավորության վկայություն չեն: Ֆոկուս խմբերի տվյալները ցույց են տալիս, որ կանայք կուսակցություններում հաճախ մարգինալացված են, և որոշ կուսակցությունների քաղաքականության մեջ զգալի է կանանց նկատմամբ բարնված խտրականությունը: Դա հաստատվում է ֆոկուս խմբերում ոչ միայն կանանց,

41 Սոցիալիստական ինտերնացիոնալի Երիկայի խարտիայում, որն ընդունվել է 2003 թ. Սան Պատրիում՝ Սոցինտերնի XXII կոնգրեսում, խնդիր է դրված «նպաստել աձնական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովմանը, այդ թվում և մեր կուսակցություններում, բոլոր ոլորտների դեկավար պաշտոններում և բոլոր մակարդակներում»:

այլև տղամարդկանց ունեցած ելույթներում. «...Այս պահի դրությամբ էլի տղամարդիկ են գերակշռող դերը ստանձնել, կանանց ներգրավում են զուտ նրա համար, որ չասեն՝ չկան»⁴²: Կամ. «Ինչպես և ամեն տեղ, իմնական կորիգը տղամարդիկ են՝ դեկավարները խորհուրդներում: Կարող է մեկ-երկու կին լինել, դա էլ մոդայի համար. չեն կարող չանել»⁴³:

Հաճախ կանանց կապվածությունն ընտանիքին հակադրվում է նրա քաղաքական կարիերային, և միտք է հնչում, թե քաղաքականությանը մասնակցող կանայք «ուրիշ» են, ինչը նույնպես քաքնված խորականության դրսուրում է: «...Որովհետև քաղաքականությամբ զբաղվող կանայք որոշակի տեսակի մարդիկ են, որոնք երբեմն հասարակականը կարողանում են ընտանիքից վեր դասել, և նրանք իրենց էությամբ հրապարակային կանայք են, սովորաբար այդ դասին են պատկանում հատկապես չամուսնացած կանայք, դա իմ դիտարկումն է: Այն կանայք, որոնք ընտանիքի հոգսերով ծանրաբեռնված են, ժամանակ չունեն: Քաղաքականությամբ զբաղվող կանայք կամ չունեն այդ հոգսը, կամ ազատված են այդ հոգսերից»⁴⁴:

Խորականության առկայությունը հաստատվում է նաև սոցիոլոգիական հարցումներով: Հստ 2010 թ. վերջին անկացված հարցման արդյունքների՝ «Գոյություն ունի՞ ՀՀ-ում խորականություն կանանց նկատմամբ» հարցին բոլոր հարցվածների 46,4%-ը դրական է պատասխանել⁴⁵: Սակայն նույն հարցման արդյունքների համաձայն՝ «Ո՞ր ոլորտներում գոյություն ունի խորականություն» հարցին 23,8%-ը բոլոր պատասխաններից նշել է քաղաքական ընտրությունների ոլորտը, 23,7%-ը՝ պետական կառավարման, և միայն 13,6%-ն է նշել քաղաքական կուսակցությունները⁴⁶:

Կուսակցությունների կին անդամների կարծիքները խորականության առկայության մասին տարբեր են՝ սկսած լրիվ ժխտումից մինչև լրիվ հաստատումը (անկասկած, խորականություն կա):

«Քաղաքականության մեջ չեմ հանդիպել խորականության, ինչքան համագումարների մասնակցել եմ, թե՛ մեզ մոտ, թե՛ կենտրոնում կարծիքի հետ հաշվի են նստում, լսում են, մեր կուսակցության մեջ չեմ նկատել, մյուսների մասին, բնականաբար, չգիտեմ, ոչինչ չեմ կարող ասել»⁴⁷:

Կանանց ներգրավում են միայն այն ժամանակ, երբ պետք է օգտագործել նրանց հմարավորությունները, իսկ դափնիներ ստանալու ժամանակ առաջ

42 Արտաշատի ֆոլկուս խմբում ՀՀՇ-ի տղամարդ անդամի ելույթից:

43 Արովյանի ֆոլկուս խմբում ԲՀԿ-ի կին անդամի ելույթից:

44 Արտաշատի ֆոլկուս խմբում «Ժառանգություն» կուսակցության տղամարդ անդամի ելույթից:

45 Օսիպով Վ. Մասնակցային գործընթացներ. գործոններ, խոշնդրություններ, դիրքորոշումներ //Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գեներացին առանձնահատկությունները. գելույց սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ.- Երևան, 2011, էջ 40:

46 Նոյն տեղում, էջ 43

47 «Ժառանգություն» կուսակցության կին անդամի հետ հարցազրույցից:

են մղվում տղամարդիկ. «Անկասկած (խտրականություն) կա: Երբ պետք է օգտագործել կանաց ուժը, կանայք ներգրավվում են, իսկ երբ պտուղները հավաքելու ժամանակն է, գալիս են ուժեղ տղամարդիկ, պաշտոններ և այլն»⁴⁸: Կուսակցության ղեկավար մարմիններում կանայք ներկայացված չեն. «...Կուսակցության ղեկավար մարմիններում կանայք ներկայացված չեն, չէ՞ որ մեկը այսի աշխատի, մյուսը՝ ղեկավարի»⁴⁹:

Անուղղակի խտրականության առկայությունը հաստատում է նաև այն հանգամանքը, որ շատ հաճախ կանացն և տղամարդկանց նկատմամբ կիրառվում են երկակի չափորոշիչներ. «Այն, ինչ ներվում է տղամարդուն, կնոջը չի ներվում, ու ամեն ինչ գտնվում է տղամարդկանց իշխանության տակ: <1-ը, մյուս հեռուստաղնկերությունները սկսում են քննարկել կանացն սխալ պահվածքը, սխալ խոսքը. սխալ մոտեցումը... Ուղղակի երկու ստանդարտ է աշխատում կանացն նկատմամբ»⁵⁰:

Շատ հաճախ կուսակցությունների կին անդամները ժխտում են խտրական գործելակերպի առկայությունը, սակայն չեն կարող բացատրել, թե ինչու իրենց հետ հաշվի չեն նստում, ինչու իրենք չեն մասնակցում քաղաքական կուսակցությունների՝ Ազգային ժողովի ընտրությունների համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակների կազմմանը և կուսակցական ծրագրերի մշակմանը: Ընդ որում, նշանակություն չունի, թե ինչ կուսակցություն է, և ինչ դիրք է գրավում կուսակցությունում այս կամ այն կինը: Մոտեցումների տարբերությունն այս դեպքում բացատրվում է խտրականություն երևույթի մասին կանացն իրազեկության աստիճանով:

Հիշեցնենք, որ Կանացն նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ԱՄԿ-ի կոնվենցիայի թիվ 25 Ընդհանուր մեկնաբանություններում կոնվենցիայի առաջին հոդվածի առնչությամբ տրվում է հետևյալ մեկնաբանությունը. «Անուղղակի խտրականությունը կարող է տեղ գտնել այն դեպքում, երբ օրենքները, ուսումավարությունները և ծրագրերը հիմնված են զենդերային առումով բվացյալ չեզոք չափանիշների վրա, որոնք իրենց փաստական ազդեցությամբ կործանարար հետևանքներ են ունենում կանացն համար»:

Գենդերային առումով չեզոք օրենքները, ուսումավարությունները և ծրագրերը կարող են ոչ միտումնավոր ամրապնդել անցյալում տեղ գտած խտրականության դրսորումների հետևանքները: Դրանք ինքնարերաբար կարող են մողելավորված լինել տղամարդկանց կենսակերպի հիման վրա և շնչառել կանացն կենսափորձի նկատառմանը, որը տարբերվում է տղամարդկանց կենսափորձից: Այդ տարբերությունների գոյությունը կարող է բացատրվել հասարակության մեջ կնոջ դերի մասին կածրատիպային պատկերացումների

48 ՕԵԿ-ի կին անդամի հետ հարցազրոյցից:

49 Աւանի ֆոկուս խմբում ՀՅԴ-ի կին անդամի ելույթից:

50 Երևանի ֆոկուս խմբում ԱԺՄ-ի կին անդամ՝ գենդերային փորձագետի ելույթից:

առկայությամբ և վարքագծի մոդելներով, որոնք հիմնված են կանանց և տղամարդկանց կենսարանական տարրերությունների վրա⁵¹: Այսինքն՝ կարելի է ասել, որ եթե «կարծրատիպային» պատկերացումների, մոտեցումների և մոդելների» առկայության պատճառով կանանց չի հաջողվում մրցակցել կուսակցություններում տղամարդկանց հետ, գոյություն ունի անողղակի խտրականություն, և կուսակցությունները պարտավոր են նման ռազմավարություններով և ծրագրերով նպաստել այնպիսի օրենքների ընդունմանը, որոնք ուղղված են հնարավորությունների հավասարության ապահովմանը:

Կանանց լիդերության դպրոցներում ձեռք բերելով քաղաքական փորձ և գիտելիքներ, ինչպես նաև որիշ երկրների գործընկերների հետ կապերի աշխուժացման շնորհիվ կանանց մեջ տեղի է ունենում խտրական գործելակերպի գիտակցում, կուսակցություններում ակտիվանում է կանանց ներկուսակցական միավորումների՝ կանանց խոհուրդների կամ միությունների գործունեությունը:

5. Կանանց ներկուսակցական խորհուրդները և միավորումները՝ որպես կանանց քաղաքական սոցիալականացման ինստիտուտներ

Հայտնի է, որ շատ կուսակցություններում ստեղծվել են ներկուսակցական միավորումներ՝ կանանց խորհուրդներ կամ միություններ: Ուսումնախրությունը ցույց է տվել, որ ինչպես և նախորդ տարիներին, այդ խորհուրդների աշխատանքն ավելի շատ ուղղված է բարեգործությանը, որոշ չափով՝ կուսակցական ծրագրի իրականացմանը, որում բացակայում են կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման խնդիրները: Ավելին, խզում է նկատվում կանանց խորհուրդների ծրագրային դիրքորոշումների և քաղաքական գործելակերպի միջև:

Այսպես, Հայաստանի հանրապետական կուսակցության կանանց խորհրդի ծրագրում նշված են հետևյալ ուղղությունները:

- ՀՀԿ գաղափարախոսության, կանոնադրական խնդիրների և ծրագրերի կատարում և քարոզություն,
- հայկական հոգևոր, մշակութային և պատմական արժեքների քարոզություն՝ ելմելով ազգի և հայրենիքի հավիտենականության գաղափարներից,
- կանանց, ընտանիքի, մայրության և մանկության բազմավիսի հիմնախնդիրների վերհանում և լուծում՝ ելմելով յուրաքանչյուր անհատի, ընտանիքի, հետևաբար և ազգի արժանավայել կեցությունն ապահովելու հրամայականից,
- ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, հայոց պետականության ամրապնդմանը նպաստում:

51 <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/General%20recommendation%2025%20%28Russian%29.pdf>

Հայաստանի հանրապետական կուսակցության կանանց խորհրդի ղեկավարությունը բաղկացած է 10 անդամից: Ինչպես և նախորդ տարիներին, կանանց խորհրդի կազմում գործում են կազմակերպչական, գաղափարա-քարոզական և սոցիալական հիմնախնդիրների, մշակույթի, կրթության, առողջապահության, կանանց ձեռներեցության, հասարակությունում կանանց ղերի բարձրացման հարցերի կոմիտեներ:

«Օրինաց երկիր» կուսակցության կանանց միության ծրագրային դրույթ-ներում նշված են նրա խնդիրները.

- ուսումնասիրել և բարձրացնել կանանց խնդիրները,
- կատարելագործել կանանց իրավական և քաղաքական մշակույթը,
- պաշտպանել սոցիալական և իրավական շահերը,
- բարձրացնել կանանց ֆունկցիոնալ դերը ընտանիքի ամրապնդման գործում,
- ամրապնդել և ապահովել կանանց ներգրավվածությունը աշխատանքի շուկայում,
- աջակցել կանանց ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը
- սերտորեն համագործակցել ՀՀ-ում գործող ՀԿ-ների հետ,
- լուծել օրենսդրական և գործադիր մարմիններում կանանց ներկայացվածության հարցերը:

Իրականում, ինչպես ցույց է տալիս փորձը, քաղաքական կուսակցությունների կանանց խորհրդներն ավելի շատ զբաղվում են բարեգործությամբ, կազմակերպում են տարբեր մշակութային միջոցառումներ, իրենց սահմանափակ հնարավորությունների շրջանակներում նպաստում են կանանց աշխատանքի տեղավորմանը: Այսուհանդերձ, ինչպես ցույց են տալիս քաղաքական կուսակցությունների գործունեության վերջին տարիների հետազոտությունները, ինչպես նաև սույն հետազոտության շրջանակներում անցկացված փոկուս խմբերի և կլոր սեղանների մասնակիցների կարծիքների վերլուծությունը, կանանց խոհուրդները և կանանց միությունները նպատակառությամբ գործունեություն չեն ծավալում կանանց քաղաքական սոցիալականացման, նրանց քաղաքական-իրավական գիտելիքների հարստացման և կուսակցությունում նրանց ղերի բարձրացման ուղղությամբ: Նրանց գործունեության բարեգործական ուղղվածությունը հանգեցնում է կուսակցությունում կանանց ղերի մարզինալացման և կուսակցության գաղափարական ու կազմակերպչական գործունեությանը կանանց մասնակցության, ներկուսակցական աշխատանքի առավել կարևոր հատվածներում կանանց և տղամարդկանց գուգակշռված մասնակցության հասնելու և հետևաբար ներկուսակցական ժողովրդավարության զարգացման խնդրում կանանց հնարավորությունների նվազման: Մտահոգող

Է այն փաստը, որ կուսակցությունների շատ ակտիվիստների կողմից՝ թե՛ կին, թե՛ տղամարդ, կուսակցական գործունեության կարևոր խնդիրների լուծմանը կանանց մասնակից շղարձնելու գործելակերպը քննադատաբար չի գնահատվում, ավելին, ընկալվում է որպես կուսակցություններում «կանանց դերի» ինքնին հասկանալի փաստ:

Ֆոկուս խմբերը վեր հանեցին, որ տվյալ իրավիճակի գնահատումը կուսակցությունների կին անդամների և այն կանանց կողմից, որոնք ակտիվորեն մասնակցում են կանանց խորհուրդների աշխատանքներին, տարբեր են:

ՀՀԿ Գեղարքունիքի մարզի Կանանց խորհրդի նախագահ. «Մենք շատ ակտիվ գործունեություն ենք ծավալում և կանանց համար միջոցառումներ ենք անում, մեր կանանց համար. փորձում ենք, որ ուշադրության կենտրոնում լինեն»⁵²: Կամ. «Կանանց խորհուրդը նաև կնոջ համար որպես քաղաքական գործիչ կայանալու դպրոց է, ինստիտուտ է»⁵³:

Այսուհանդերձ, ինչպես ցույց տվեցին ֆոկուս խմբերը, կանանց խորհուրդների կին անդամների ու ակտիվիստների և կուսակցությունների շարքային անդամների կարծիքներն այդ կապակցությամբ տրամադրուեն հակառակ են. կուսակցությունների կին ակտիվիստների կարծիքով՝ կանանց խորհուրդները մեծ դեր են խաղում՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ, կանանց տեսանելի են դարձնում կուսակցություններում, մինչդեռ կուսակցությունների շարքային անդամների կարծիքով՝ «կանանց խորհուրդները չեն կատարում իրենց ֆունկցիաները», «կանանց խորհուրդները չեն աշխատում տարածաշրջաններում», «կուսակցության կին անդամների շարքում գաղափարախոսական և քաղաքական աշխատանքը հետ է մնում այն խնդիրներից, որոնք թելադրում է ժամանակը, մասնավորապես՝ երկրի՝ թե՛ կուսակցության ներսում, թե՛ առհասարակ երկրի հասարակական-քաղաքական կյանքում գենդերային հավաարության հասնելու պարտավորությունների կատարումից»:

Ֆոկուս խմբերի և կլոր սեղանների մասնակիցները նշում էին, որ կազմակերպող միջոցառումները շատ հաճախ չեն ծառայում կուսակցություններուն նրանց հեղինակության կամ ինքնազնահատման բարձրացմանը: «Համարյա բոլոր կուսակցություններն ունեն կանանց խորհուրդներ, սակայն դրանք ավելի շուտ բարեգործություն են անում, մարզային կառույցներում համարյա կանայք չկան»⁵⁴: Կամ. «Վերադառնալով կուսակցություններին կից կանանց խորհուրդների գործունեությանը, պետք է արձանագրենք, որ նրանք իրենց գործունեությամբ ոչնչով չեն տարբերվում հասարակական և բարեգործական կազմակերպություններից: «Տուն է, բռոյ լինի» սկզբունքով են գործում, լուծում են մարդկանց բուժման, սոցիալական աջակցության խնդիրներ, ոչ մի լուրջ

52 Ելենորա Մալխասյանի ելույթից Երևանի ֆոկուս խմբում:

53 Ժամանակակից կամ անդամների ելույթից:

54 Աևանի ֆոկուս խմբում Հանրապետական կուսակցության կին անդամի ելույթից:

հիմնախնդիր չեն քննարկում և լուծում չեն տալիս: Նույնն է՝ երիտասարդական թևերը»^{55:}

Այդ իսկ պատճառով շատերը կարծիք էին հայտնում, որ կանանց խորհրդները չեն նպաստում կանանց քաղաքական սոցիալականացմանը: «Ես Հայաստանի դեպքում դեմ եմ կանանց խորհրդներին: Ամբողջ աշխարհում այդ փորձն ինձ շատ գրավում է: Բայց Հայաստանում, ինձ թվում է, ուս միջոց է, որ տղամարդիկ մեկուսացնեն կանանց: Ոնց որ ասեն. «Գնացեք, ես էլ խաղալիքը, գնացեք խաղալիքը, ձեր հարցերով գրաղվեք»: Կանայք էլ խարվում են ու չեն մտնում քաղաքական հարցերի մեջ, երկրորդական հարցերով են գրաղվում: Ու ստացվում է, որ կանայք գրաղվում են կանանց հարցերով, իսկ տղամարդիկ գրաղվում են քաղաքական հարցերով: Իմ մեջ այդ տպավորությունն է, և ես դրանից վախենում եմ»^{56:}

Կամ մի ուրիշ կարծիք. «Ես կարծում եմ, որ պարտադիր չէ՝ կինը կայանա այս խորհրդի միջոցով»^{57:}

Կուսակցությունների մեծ մասում կանանց քաղաքական գործունեության ոլորտում առաջ մղելու որևէ մեխանիզմ չկա: «Դա բազմիցս են նշել կանայք հարցազրույցների ընթացքում: Կանայք հաճախ նշում էին, թե ինչ դժվարություններ են ստիպված եղել հաղթահարել, որպեսզի տեսանելի և լսելի լինեն: «Կուսակցության ներսում նպաստո՞ւմ են կանանց առաջընթացին» հարցին կին լիդերը՝ կանանց խորհրդի ղեկավարը, պատասխանում է. «Առանձնապես արգելք չեմ տեսնում, բայց հասուկ խթան՝ որպես այդախին, ուս էլ չեմ տեսնում»:

«Որպես կանանց խորհրդի նախագահ կարո՞ղ եք հանձնաժողովն օգտագործել որպես խողովակ մյուս կանանց տեսանելի դարձնելու համար, թե՞ հնարավորություններ այնքան էլ չկան» հարցին մարզային կանանց խորհրդի նախագահը պատասխանում է. «Արգելքներ չկան, եթե ես կանանց ակտիվացնելու նախաձեռնություն ունենամ, ոչ ոք դեմ չի լինի, ընդհակառակը՝ ուրախ կլինեն, բայց մոտիվացիան թույլ է, քաղաքականությանը հետաքրքրվող կանանց թիվը փոքր է»:

Ինչպես երևում է աղյուսակից, կուսակցություններում կանանց թվաքանակը բավական մեծ է: Այլ հարց է, որ նրանց շարքում բոլորը չեն, որ ակտիվ են: Բայց չէ՝ որ հենց ուս է կանանց խորհրդների խնդիրը՝ նպաստել իրենց կուսակցություններում կանանց ակտիվացմանը, պայքարել կուսակցություններում խտրական գործելակերպի դրսնորումների և գենդերային կարծրատիպերի դեմ:

55 Սևանի Փոկուս խմբում Հանրապետական կուսակցության կին անդամի ելույթից:

56 Երևանի Փոկուս խմբում ԱԺՄ-ի կին անդամի՝ գենդերային փորձագետի ելույթից:

57 Երևանի Փոկուս խմբում Իրինա Գասպարյանի ելույթից:

6. «Հ Ազգային ժողովի ընտրություններում կուսակցությունների համամասնական ընտրակարգով ընտրական ցուցակների կազմման սկզբունքները և մեխանիզմները

«Յուրաքանչյուր քաղաքական կուսակցությունների լավագության կանանց և դրամարդկանց թիվը կուսակցությունների այն առաջնարարության համար կանոնավոր է, որն առնվազում է կանանց ներկայացվածությանը խորհրդարաններում»⁵⁸:

ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում քաղաքական կուսակցությունների ցուցակների կազմման մեխանիզմների ուսումնասիրությունը վկայում է ներկուսակցական ժողովրդավարության դեֆիցիտի մասին: Ինչպես և նախորդ տարիներին, կուսակցությունների շարքային անդամները, որպես կանոն, ընտրական ցուցակների կազմմանը չեն մասնակցում և տեղյակ չեն, թե ինչ սկզբունքով են կազմվում ընտրական ցուցակները: Անգամ ցուցակում ընդգրկված թեկնածուներն առանձնապես տեղյակ չեն ցուցակների կազմման մոտեցումների մասին, և հաճախ անհայտ է մնում, թե ինչ սկզբունքով է կուսակցության անդամին վերապահվել այս կամ այն տեղը, լինի նա կին թե տղամարդը: Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ ցուցակների կազմման մեխանիզմների մասին իրազեկությունը շատ ավելի ցածր է մարզերում, քան Երևանում:

Կուսակցական ցուցակներում կանանց ընդգրկելու հարցում վճռական դեր է խաղացել ՀՀ ընտրական օրենսգրքում 20-տոկոսանոց գենդերային քվոտան: Անհրաժեշտ թվով կանանց ապահովելու համար կուսակցությունների դեկավարները հաճախ դիմել են կանանց խորհրդի օգնությանը: «Հրավիրել են մարզային կառույցների կանանց խորհրդների նախագահներին և խնդրել են, որ ցուցակ ներկայացնեն՝ կանանց ցուցակը՝ երեք-չորս կին»⁵⁹:

2012 թ. ընտրությունների նորարարությունն այն էր, որ հաճախ կուսակցական ցուցակների թեկնածուներին առաջարկվում էր միանգամից գրել երկու դիմում, մեկը՝ ցուցակում ընդգրկվելու համաձայնության մասին, մյուսը՝ պատգամավորական մանդատից հրաժարվելու: Ժեպետ հետընտրական կլոր սեղանների ժամանակ կին թեկնածուները փորձել են արդարացնել իրենց կուսակցությունների քաղաքականությունը, դիտվել է նաև անհամաձայնություն նման քաղաքականության առնչությամբ:

Հայաստանի որևէ կուսակցություն նախաձեռնություն չի ցուցաբերել և կամավոր կուսակցական կառույցներում կանանց թիվը մեծացնելու մեխանիզմներ չի գործադրել, հասուն միջոցներ չի ձեռնարկել, օրինակ՝ ներկուսակցական քվոտաներ: Ստորև բերված է աղյուսակ այն երկրների ներկայացմանք,

58 Եև Նախարարների կոմիտեի «Քաղաքական և պետական որոշումների ընդունման գործընթացին կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին» [Rec (2003)3] հանձնարարականից:

59 Երևանի ֆոկուս խմբում Էլեոնորա Մալխասյանի երույթից:

որտեղ կիրառվում են քվոտաներ: Աղյուսակում մտնում են որոշ հետխորհրդային հանրապետություններ, նախկին սոցիալիստական ճամբարի երկրներ և կայուն ժողովրդավարությամբ երկրներ:

Աղյուսակ⁶⁰

**Պետությունների ազգային խորհրդարանների ստորին պալատներում
կանանց ներկայացվածության շարժընթացը 2000-2012 թթ.⁶¹**

| N | Պետություն | 2000 | 2005 | 2010 | 2012 | Աճը | Օրենսդիր քվոտաներ | Կուսակցական քվոտաներ |
|---|--------------|------|------|------|------|-----|----------------------|----------------------|
| | Հայաստան | 3 | 5 | 9 | 11 | 8 | + | |
| | Մակեդոնիա | 8 | 19 | 33 | 31 | 23 | + | |
| | Ղրղզստան | 1 | 0 | 26 | 23 | 22 | + | |
| | Բելգիա | 23 | 35 | 39 | 38 | 15 | + | |
| | Իսպանիա | 22 | 36 | 37 | 36 | 14 | + | |
| | Մոլդովա | 9 | 22 | 24 | 20 | 11 | | + |
| | Ուգրեկստան | 7 | 18 | 22 | 33 | 26 | + | |
| | Հունաստան | 6 | 13 | 17 | 19 | 13 | | + |
| | Իտալիա | 11 | 12 | 21 | 22 | 11 | | + |
| | Բուլղարիա | 11 | 22 | 21 | 21 | 10 | | |
| | Ֆրանսիա | 11 | 12 | 19 | 19 | 8 | + | |
| | Իսլանդիա | 35 | 33 | 43 | 40 | 5 | | + |
| | Չեխիա | 15 | 17 | 22 | 22 | 7 | | + |
| | Լեհաստան | 13 | 20 | 20 | 24 | 11 | | + |
| | Թուրքիա | 4 | 9 | 9 | 14 | 10 | | + |
| | Նիդեռլանդներ | 36 | 37 | 41 | 41 | 5 | | + |
| | Ռումինիա | 7 | 11 | 11 | 11 | 4 | + | |
| | Շվեյցարիա | 43 | 45 | 46 | 45 | 2 | | + |
| | Նորվեգիա | 36 | 38 | 40 | 40 | 4 | | + |
| | Ֆինլանդիա | 37 | 38 | 40 | 43 | 6 | | |
| | Լիտվա | 18 | 22 | 19 | 19 | 1 | | + |
| | Կանադա | 21 | 21 | 22 | 25 | 4 | | + |
| | Ավստրիա | 27 | 34 | 28 | 28 | 1 | | + |
| | Դանիա | 37 | 37 | 38 | 40 | 3 | | |
| | Ռումանիա | 8 | 5 | 8 | 8 | 0 | | + |
| | Ադրբեյչան | 12 | 13 | 11 | 16 | 4 | | |
| | Վրաստան | 7 | 9 | 7 | 7 | 0 | | + |

60 Աղյուսակը կազմվել է «Գենդերային հավասարությունը ընտրովի պաշտոններում. գործողությունների վեցասաթիճան պլան» քաղային հետազոտության տվյալների հիման վրա քաղաքական կուսակցություններում կանանց մասնակցության աջակցության ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ուղեցույցի մշակման համար, 2011 թ., էջ 16-17, <http://www.osce.org/ru/odihr/80989>

61 2012 թ. տվյալները ներկայացված են մայիսի 31-ի դրությամբ:

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ մի շաբթ պետություններում քվոտաների ներդրման արդյունքներն ավելի համեստ են, քան մյուսներում: Ընդ որում, առանձին երկրներում ավելի մեծ արդյունք են տվել ընտրական քվոտաները, որիշներում՝ կուսակցական: Այս կամ այն քվոտայի արդյունավետության օրինաչափությունները չեն դիտարկվում: «Գենդերային հավասարությունն ընտրովի պաշտոններում. գործողությունների վեցաստիճան պլան» ուսումնասիրությունում այդ տարերությունները բացատրվում են մի շաբթ գործուններով, այդ թվում՝ «քվոտաների ներդրման եղանակով, այսինքն՝ օրենսդիր ձևակերպումների առանձնահատկություններով, պահանջներով և խախտումների համար պատժամիջոցներով, ինչպես նաև հասարակայնության աշքում քվոտաների լեզիտիմությամբ»⁶²:

Հայաստանում քվոտաների ցածր արդյունավետության պատճառների մասին բավական խոսվում է հաջորդ գլխում, ինչ վերաբերում է քվոտաների լեզիտիմությամբ, ապա հայ հասարակությունում դրանք բավական լեզիտիմացված են: 2011 թ. անցկացված սոցիոլոգիական հարցման արդյունքներով՝ հարցվածների 57,2%-ը արտահայտվել է քվոտաներ ներդնելու օգտին, դեռ է արտահայտվել ընդամենը 11.2%-ը, մնացածները կամ անտարբեր են եղել հիմնախնդրի նկատմամբ, կամ դժվարացել են պատասխանել: Հետաքրքիր է, որ կուսակցությունների անդամների շարքում քվոտաներ մտցնելու կողմնակիցների ցուցանիշը զգալիորեն ավելի բարձր է եղել՝ 65,6%⁶³:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ հասարակությունը քվոտաներն ընկալում է որպես անհրաժեշտություն իշխանությունում գենդերային հավասարակշռության հասնելու ճանապարհին, և կուսակցությունները պետք է փոխեն համամասնական ցուցակները կազմելու մեխանիզմները, ավելի լայնորեն օգտագործեն ժամանակավոր հասուկ միջոցները գենդերային հավասարության ապահովման և թե՛ կուսակցություններում, թե՛ առհասարակ երկրում կանանց դեկավար պաշտոններում առաջադրելու համար:

62 «Գենդերային հավասարությունն ընտրովի պաշտոններում. գործողությունների վեցաստիճան պլան», էջ 31, <http://www.osce.org/ru/odihr/80989>

63 Հովհաննիսյան Հ. Քաղաքացիական և քաղաքական մասնակցության ընդհանուր ցուցանիշները և դրանց գենդերային առանձնահատկությունները // Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները. զեկույց սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ.- Երևան, 2011, էջ 16:

7. Կանանց քաղաքական մասնակցության ճանապարհին ընկած խոչընդունելիք

Դարեր ի վեր քաղաքականությունը համարվել է տղամարդու գրադամունք: Կանայք զրկված են եղել քաղաքական գործունեությամբ գրադադարի իրավունքից: Կանանց քաղաքական ակտիվության առաջին բռնկումը բուրժուական հեղափոխության դարաշրջանում եղավ, բայց նրանք քաղաքականությանը մասնակցելու օրինական իրավունք ստացան միայն XX դարի սկզբին: Սակայն մինչ օրս աշխարհի երկրների մեծ մասի քաղաքական էլիտայում հիմնականում տղամարդիկ են, կանանց քաղաքական մասնակցությունը տղամարդկանցից ցածր է: Ընդ որում, ինչքան ավանդապահ է հասարակությունը, այնքան ցածր է կանանց քաղաքական մասնակցության մակարդակը, և նախկինի պես պահպանվում են այն գործոնները, որոնք խոչընդունում են կանանց քաղաքական առաջխաղացումը:

Իրավիճակի դիտարկան ընթացքում ուսումնասիրվել են այն գործոնները, որոնք խոչընդունում են Հայաստանում կանանց քաղաքական մասնակցությունը:

Այդ գործոնների մեծ մասը քննարկել են ֆոկուս խմբերի և կլոր սեղանների մասնակիցները:

Կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդունող գործոնները վերլուծելիս դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝

- ինստիտուցիոնալ,
- սոցիալ-մշակութային և հոգեբանական:

7.1 Կանանց քաղաքական մասնակցությունը խոչընդունող ինստիտուցիոնալ գործոնները

7.1.1 Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման ազգային մեխանիզմի բացակայությունը

Ներկայիս մեխանիզմները դեռևս չեն համապատասխանում ազգային մեխանիզմի չափանիշներին⁶⁴, որոնք շարադրված են ԿՆԽՎԿ/CEDAW կոմիտեի թիվ 6 Ընդհանուր հանձնարարականում⁶⁵ և Պեկինի գործո-

64 Տե՛ս Կանանց նկատմամբ խորականության բոլոր ձևերի վերացման մասին ԱՍԿ-ի կոնվենցիա: Այլընտրանքային գեկույց Հայաստանի Հանրապետությունում 2002-2006 թթ. ժամանակաշրջանում կոնվենցիայի կոնհիտեի հանձնարարականների կատարման մասին:

65 Հանձնարարականների համաձայն՝ ազգային մեխանիզմը պետք է՝ ա) խորհրդատվություն իրականացնի կանանց վրա պետական քաղաքականության ազդեցության վերաբերյալ, բ) կանանց դրության համակողմանի մշտակիտարկում վարի և գ) մշակի ու ներմին խորականության վերացման քաղաքականություն, ծրագրի և միջոցներ: Տե՛ս CEDAW Committee. General Recommendation No. 6 “Effective National Machinery and Publicity” (seventh session, 1988): <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/index.html>

դրագրում⁶⁶, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի «Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման ազգային մեխանիզմների հարցը: Կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման ազգային մեխանիզմների ստեղծման և կիրառման հիմնարար սկզբունքները և դրական փորձի օրինակներ» (Ստրասբուրգ, 15 դեկտեմբերի 2001 թ., EG (2001) 7)⁶⁷ ուղեցույցում:

7.1.2 Օրենսդրական հիմքերի անրավարարությունը, մասնավորապես՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հարավորությունների ապահովման մասին»ՀՀ օրենքի բացակայությունը⁶⁸

7.1.3 Ընդունական համակարգի անկապարությունը կանանց քաղաքականության մեջ առաջ մղելու առումով

- ՀՀ ընտրական օրենսգրքում հատուկ ժամանակավոր միջոցների անկատարությունը և անբավարար հստակ ձևակերպումը: 2012 թ. խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ ՀՀ Ազգային ժողովում համամասնական ընտրական համակարգով կանանց ներկայացվածությունն ընդլայնելու նպատակով քաղաքական կուսակցությունների ցուցակներում գենդերային քվուտան 15%-ից մինչև 20% բարձրացնելն այդպես էլ ՀՀ Ազգային ժողովի գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության կարգավորող միջոց չդարձավ, քանի որ այն գործ էր արգելող մեխանիզմներից, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ կանխել կանանց՝ որպես թերի ներկայացված խմբի քվուտանների օգտագործումը ցուցակում հաջորդող տղամարդկանց թեկնա-

- 66 Հաստ Պեկինի գործողությունների ծրագրի 201-րդ կետի. «Կանանց դրույթան բարելավման ազգային մեխանիզմը կառավարության շրջանակներում քաղաքականության համակարգման կենտրոնական ստորաբաժնումն է: Նրա գլխավոր խնդիրն այն է, որ աջակցի կառավարությանը քաղաքականության բոլոր ոլորտներում գենդերային հիմնախնդիրները հաշվի առնելու գործում: Նման ազգային մեխանիզմների արդյունավետ գործառության համար անհրաժեշտ պայմանները ներառում են՝
- ա) նման մեխանիզմի ենթակայությունը կառավարության նախարար անդամի առավել քարձը մակարդակի պաշտոնատար անձին,
- բ) ինստիտուցիոնալ մեխանիզմների կամ գործընթացների առկայություն, որոնք անհրաժեշտության դեպքում նպաստում են ապակենորոնացված պլանավորմանը, իրականացմանը և վերահսկողությանը ստորին և ավելի քարձը մակարդակի ոչ կառավարական և համայնքային կազմակերպությունների ներգրավման նպատակով,
- գ) քավականաչափ ծավալի ռեսուրսների առկայություն բյուջետային միջոցների և կադրերի ապահովման առումով,
- դ) բոլոր ոլորտներում կառավարության կողմից նշակվող քաղաքականության վրա ազդեցությունը:
- 67 Համաձայն Եվրոպայի խորհրդի ուղեցույցի՝ «սեռերի հավասարության մեխանիզմը ինստիտուցիոնալ կառավարական և որոշ դեպքերում խորհրդարանական կառույց է՝ ստեղծված կանանց դերը բարձրացնելուն աջակցելու և կանանց ու տղամարդկանց հավասարության օրենքի և անհարականության սկզբունքի ապահովմանը նպաստելու նպատակով»:
- 68 «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին»ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմանը:

ծությունների համար, անգամ մանդատից կանանց «կամավոր հրաժարման» դեպքում:

- Ընտրությունների առևտրայնացման բարձր աստիճանը. ընտրարշավների անցկացման ծախսերի օրենսդրական սահմանափակումների բացակայությունը և կանանց ֆինանսական պաշարների սահմանափակությունը;
- Կանանց ցածր ներկայացվածությունը գործարարության ոլորտում, ձեռնարկատեր կանանց փոքր թիվը:

7.1.4 Կանանց առաջ մղելու հարցում կուսակցությունների շահագրգորության չևսավորման իրավական մեխանիզմների բացակայությունը.

2

- ներկուսակցական ժողովրդավարության անրավարարությունը,
- կանանց առաջնորդման կուսակցական մեխանիզմների բացակայությունը,
- կանանց կադրերի պատրաստման տարրերակված համակարգի և կանանց լիդերության աջակցության բացակայությունը,
- քաղաքական կյանքում գենդերային հավասարության ապահովման գծով միջկուսակցական միավորումների բացակայությունը,
- ներկուսակցական քաղաքական գործընթացների վրա կանանց կուսակցական միավորումների դրույլ ազդեցությունը,
- կուսակցությունների՝ գենդերային քաղաքականության նկատառումով պետական ֆինանսավորման համակարգի բացակայությունը:

7.2 Սոցիալ-մշակութային և հոգեբանական գործուները.

- մասկուլինային քաղաքական մշակույթի գերիշխանությունը,
- քաղաքական պայքարի դաժան և օլիգարխիկ բնույթը,
- մրցակցության մեջ կանանց և տղամարդկանց անհավասար հնարավորությունները,
- հասարակությունում տղամարդկանց և կանանց վարքագծի տարրեր մողելների արմատավորումը, որոնք չեն նպաստում կանանց քաղաքական սոցիալականացմանը, քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց նկատմամբ երկակի շափորշչների առկայությունը,
- գենդերային կարծրատիպերի առկայությունը, որոնք չեն խրախուսում կանանց քաղաքական ակտիվությունը,
- հայ իրականության մեջ կին քաղաքական գործիչների՝ որպես դերային մողելների դրական օրինակների անբավարարությունը,
- հասարակության և իրենց իսկ կանանց կողմից խստրական գործելակերպը չգիտակցելը,
- կին բեկնածուների բավարար չտիրապետելը ընտրարշվի կառուցման մեթոդներին,

- կանանց կրկնակի ծանրաբեռնվածությունը, ժամանակի սղությունը, ինչը դժվարություններ է առաջացնում ընտանելիան պարտականությունները և քաղաքական առաջխաղացումը համատեղելու հարցում,
- կանանց համախմբված հասարակական շարժման բացակայությունը,
- կանանց քաղաքական մասնակցությանը ԶԼՄ-ների ոչ բավարար աջակցությունը, որոնք հաճախ վերարտադրում են հասարակական-քաղաքական կյանքում կանանց դերի կարծրատիպային պատկերացումը,
- պետական և ոչ կառավարական սուբյեկտների բույլ սոցիալական գործնկությունը որոշումների ընդունման բոլոր մակարդակներում,
- կանանց ցածր ինքնազնահատականը կամ «փնճնախտրականությունը»:

Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանի պետական գենդերային քաղաքականության մեջ դրական փոփոխություններ են նկատվել: Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրում նշված են այն խնդիրները, որոնց լուծումը կնպաստի գենդերային անհավասարության հաղթահարմանը: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև վերը շարադրված գործուները, որոնք խոչնրոտում են կանանց քաղաքական ակտիվությունը: Կանանց քաղաքական մասնակցության ակտիվացումը մեծապես կնպաստի Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության ռազմավարական նպատակների իրականացմանը:

2

8. Եզրակացություններ

- Հայաստանի քաղաքական կուսակցությունների քաղաքականության և գործունեության մեջ գենդերային հավասարության հասնելու նպատակներն առաջնահերթ չեն:
- Քաղաքական կուսակցությունների ծրագրերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հազվադեպ բացառություններով, կուսակցությունները օրենսդիր և գործադիր իշխանությունների որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարակշռություննը հաղթահարելու նպատակ չեն դնում:
- Կուսակցությունների քաղաքականությունը, որպես կանոն, շարունակում է գենդերայնորեն չեզոք մնալ: Կազմակերպչական միջոցառումները, մասնավորապես՝ կանանց խորհուրդների կամ կանանց այլ միավորումների և խմբերի կազմակերպումը կուսակցություններում կանանց ակտիվություն չի ապահովում, կանայք բույլ են ներգրավված կուսակցության քաղաքականության ձևավորման և կուսակցության ու առհասարակ երկրի առջև ծառացած արդիական հիմնախնդիրների լուծման գործում:

- Կանանց քաղաքական մասնակցության հիմնախնդիրն արտացոլված չէ քաղաքական կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում և կանոնադրություններում: Քաղաքական կուսակցությունները չեն մշակում իրենց ղեկավար մարմինների ձևավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք ներառեին կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունը: Հայաստանի ոչ մի կուսակցություն ներկուսակցական գենդերային քվոտաներ ներդնելու նախաձեռնություն չի ցուցաբերել:
- Կանայք պատշաճ չափով ներկայացված չեն կուսակցությունների բարձրագույն մարմիններում, ինչի հետևանքով նրանց դերն աննշան է կուսակցությունների քաղաքականության ձևավորման և ներկուսակցական ժողովրդավարության հզրացման խնդրում:
- Կուսակցություններում բացակայում է կանանց քաղաքական սոցիալականացման և կանանց իրավաքաղաքական գիտելիքների հարստացման, կուսակցական աշխատանքի ժամանակակից ներողների իրազեկման համակարգը:
- Կուսակցությունների ներսում գենդերային հավասարության գաղափարների քարոզչություն չի տարվում, կանանց խորհուրդները կանանց քաղաքական մասնակցության բարձրացման գծով հատուկ խորհրդատվություն չեն անցկացնում, կուսակցությունների ներսում գենդերային թեմաներով բանավեճեր չեն կազմակերպում, փոքրաթիվ սեմինարները որակական արդյունք չեն տալիս և չեն մեծացնում կանանց ազդեցությունը, չեն նպաստում բարնված խորականության հաղթահարմանը:
- Կուսակցություն ընդունվելուց հետո շատ կանայք ժամանակի ընթացքում կրցնում են հետաքրքրությունը կուսակցական աշխատանքի նկատմամբ այս պատճառով, որ նրանց քաղաքական գործընթացի ակտիվ դերակատարի դերը կուսակցությունում հաճախ հանգում է առանձին բարեգործական ակցիաների, ինչը նրանց քաղաքական դերը վերածում է ստատիստների, որոնք կուսակցական գործունեության ոչ հրատապ գործառույթներ են կատարում:

ԳԼՈՒԽ 3.

ԿԱՆԱՅՔ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐՈՒՄ

1. Կանայք քաղաքական կուսակցությունների համամասնական ցուցակներում

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում առաջադրված ութ կուսակցությունների և մեկ դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված 1026 թեկնածուներից 235-ը կանայք են, ինչը միջինը կազմում է 22,9%: ՀՀ Ազգային ժողովի 2007 թ. ընտրություններում, երբ ընտրական օրենսգրքով գործում էր կանանց ներկայացվածության 15%-անց քվոտան, կուսակցությունների ցուցակներում ընդգրկված կանայք միջինը կազմում էին 22,6%:

Այսպիսով, ՀՀ ընտրական օրենսգրքում 20%-ի գենդերային քվոտայի ամրագրումից հետո կուսակցությունների ԿԸՀ ներկայացվող ցուցակներում սեռերի տոկոսային հարաբերակցությունը փաստորեն չի փոխվել, ինչը հենց սկզբում նվազեցրեց խորհրդարանում կանանց թվի մեծացման հավանականությունը: Ցուցակների վերլուծությունը ցույց տվեց, որ կանանց հատկացվող տեղերի դասավորության առումով նույնպես առաջընթաց չի նկատվել:

Ընտրական օրենսգրքում ամրագրված սկզբունքը՝ «սկսած երկրորդ համարից յուրաքանչյուր հաջորդ հնգյակում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ մինչև ցուցակի վերջը) մի սեռի անձանց ներկայացվածությունը չպետք է գերազանցի 80%-ը», կուսակցությունների մեծ մասն ընկալել է զուտ բարացի՝ կանայք պետք է լինեն յուրաքանչյուր վեցերորդի հաճախականությամբ, բայց ոչ ավելի առաջ, քան վեցերորդ տեղը: Օգտվելով ցուցակներում կանանց դասավորության՝ օրենքում նշված, ըստ էության, խորական սկզբունքից՝ կուսակցությունների մեծ մասը կենսագործել է իր համար «ամենաշահավետ» տարրեկար՝ կանանց «վերապահելով» 6-րդ, 11-րդ, 16-րդ, 21-րդ և հետագա տեղերը:

Արդյունքում բոլոր ութ կուսակցությունների և մեկ դաշինքի ցուցակների առաջին տասնյակի կազմում ներկայացվել է 15 կին կամ առաջադրված կանանց ընդհանուր թվի 6,4%-ը, իսկ առաջին հնգյակում՝ ընդամենը 4 կին՝ 1,7%-ը: Նախորդ՝ 2007 թ. ընտրությունների համեմատությամբ՝ հետընթաց է

դիտվել, ինչն արտահայտվել է այն իրողությամբ, որ ցուցակների անցողիկ տեղերում ներկայացված կանանց թիվն առաջին տասնյակում կրճատվել է երկու անգամ և առաջին հնգյակում, որը, ըստ էության, նվազագույն շեմն է ՀՀ Ազգային ժողով անցնելու համար, չորս անգամ:

Համամասնական ընտրակարգով կանանց մասնակցության համեմատական աղյուսակ

| | 2003 | 2007 | 2012 |
|---|---|---|---|
| Համամասնական ընտրակարգով առաջադրված կանայք | 162 կին 1143 թվականուներից 14,1% | 297 կին 1313 թվականուներից 22,6% | 234 կին 1026 թվականուներից 22,8% |
| Առաջին տասնյակ | 27 կին 162-ից 16,6% | 37 կին 297-ից 12,4% | 15 կին 234-ից 6,4% |
| Առաջին հնգյակ | 6 կին 162-ից 3,7% | 17 կին 297-ից 5,7% | 4 կին 234-ից 1,7% |

Ընդհանուր առմամբ, առաջադրված կուսակցությունների մեծ մասը սահմանափակվել է ընտրական օրենսգրքում ամրագրված քվոտայով: Սիայն երկու կուսակցություն է ընտրացուցակում օրենքով նախատեսված քվոտայից ավելի կանանց ներկայացրել՝ «Միավորված հայերը»՝ 37,9% և ՀՅ դաշնակցությունը՝ 31,7%, սակայն բարձր տոկոսը որևէ կերպ չի անդրադարձել վերջնական արդյունքի և ՀՀ Ազգային ժողովում կանանց քվի վրա, քանի որ «Միավորված հայերը» Ազգային ժողով չանցավ, իսկ ՀՅ-ն ԱԺ մտավ ընդամենը իննգ պատգամավորով, որոնց թվում կին չկա:

Կանայք ամենից քիչ ներկայացված են «Օրինաց երկիր» կուսակցության ցուցակում (20,2%), և սա այն դեպքում, երբ կանանց ներկայացվածությունն այդ կուսակցությունում բավական բարձր է՝ 60%: «Հայ ազգային կոնֆերեն» դաշնաբի ցուցակում կանայք կազմել են 20,3%, այսինքն՝ ճիշտ և ճիշտ հանձնարարված քվոտայի սահմաններում: Ընդ որում, ՀԱԿ-ը սկզբում գրանցելու է ներկայացրել մի ցուցակ, որում կանայք ընդամենը 17,6% էին, այսինքն՝ սեռերի հարաբերակցության առումով պահպանված չեր անգամ քվոտայի սկզբունքը, և միայն վերջնական գրանցման պահին փոփոխություն մտցվեց. կանանց ներկայացվածությունը մեծացավ մինչև 20,3%: Այն փաստը, որ սկզբում սիսալ է բույլ տրվել և խախտվել է քվոտան, անուղղակիրեն վկայում է, որ ցուցակը կազմելիս կանանց ընդգրկման խնդիրն առաջնահերթ չի եղել:

Այսուհանդերձ, ընդիմադիր կուսակցություններն իրենց ցուցակներում ավելի շատ կանանց են ընդգրկել, քան կոալիցիոն կուսակցությունները. ՀՅԴ-ն՝ 32% և «Ժառանգությունը»՝ 25%:

Կանանց ներկայացվածությունը համամասնական ցուցակներում

| Կուսակցություն | Ընդհանուր թիվը | Կանանց թիվը | % | Տեղերը |
|--|----------------|-------------|--------|-------------------------------|
| «ՔԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» (ՔՀԿ) | 165 | 36 | 21,8% | 6, 11, 16, 21, 26, 31, 36 |
| «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» | 73 | 18 | 24,6% | 3, 9, 11, 14, 17, 26, .31, 33 |
| «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԴԱԾԻՆՔ (ՀԿԿ) | 123 | 25 | 20,3 % | 6, 11, 16, 21, 26, 31, .36 |
| ՀԱՅ ՅԵՂԱԾՓՈԽԱԿԱՆ ԴԱԾՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՅԴ) | 85 | 27 | 31,7% | 6, 11, 16, 20, 22, 27, 30 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԴԿ) | 45 | 12 | 24,4% | 5, 6, 7, 8, 16, 21 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀԿԿ) | 75 | 16 | 21,1% | 6, 11, 16, 21, 26, 31, 41 |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ՀՀԿ) | 253 | 54 | 21,3% | 6, 11, 16, 21, 26, 31, 36 |
| «ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ» | 29 | 11 | 37,9% | 3, 6, 9, 11, 14, 16, 18, .20 |
| «ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» (ՕԵԿ) | 178 | 36 | 20,2 % | 2, 11, 16, 21, 26, 31, 36 |

Կուսակցական ցուցակների առաջին հնգյակում կամ, ինչպես կուսակցություններում են ասում, «արբության սրբոցում» կանանց ներկայացրել են միայն Դեմոկրատական կուսակցությունը, «Միավորված հայերը», «Օրինաց երկիրը» և «Ժառանգությունը»:

Առաջին տասնյակում ամենից շատ կանանց են ներկայացրել Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ տեղերը) և «Միավորված հայերը» (3-րդ, 4-րդ, 9-րդ տեղերը):

Քանի որ կուսակցությունների մեծ մասը կանանց վերապահել է 6-րդ, 11-րդ, 16-րդ և 21-րդ տեղերը, նույնիսկ այսպես կոչված «ծանրքաշային» կուսակցությունների շարքում, որոնք մեծ քվով մանդատների են հավակնում, կանանց բավական ցածր ներկայացվածություն է դիտվել ոչ միայն առաջին տասնյակում, այլև առաջին քսանյակում, որտեղ, պարզվում է, ներկայացվել է ոչ ավե-

լի, քան 3 կին: Բացառություն են ՀՅ դաշնակցությունը, որի ցուցակի առաջին քսանյակում ներկայացվել է 4 կին, և «Ժառանգությունը՝ 5 կին:

Կուսակցությունների մեծ մասի կուսակցական ցուցակները կազմվել են «ինչքան հեռու ցուցակի սկզբից, այսինքն՝ ինչքան խորհրդարան անցնելու քիչ հնարավորություն, այնքան շատ կանայք» սկզբունքով:

ՀՅ դաշնակցությունը կարողացավ իր ցուցակներում գրեթե 32% կանանց ներկայություն ապահովել Եվրոպայի համաձարարած այսպես կոչված «կայծակնային սկզբունքի» կիրառման շնորհիվ, այսինքն՝ ցուցակում կին և տղամարդ թեկնածությունների հերթագայության: Սակայն «կայծակի» սկզբունքը կիրառվել է միայն 20-րդ համարից հետո:

Կուսակցական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, **որ կանանց ներկայացվածության առումով կուսակցությունները շատ ավելի պահպանողական գրնավեցին, քան հասարակությունը, որը, ըստ սոցիոլոգիական հարցումների արդյունքների, պարագաւ է խորհրդարանում ավելի շատ կանանց գեւանել, քան կուսակցություններն այսօր կարող են ընդգրկել իրենց ցուցակներում:**

Այսպես, ըստ հարցման տվյալների, որն անցկացրել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը 2008 թ.⁶⁹, «Ի՞նչ եք կարծում, քանի՞ կին պատզամասվոր պետք է ներկայացված լինի խորհրդարանում» հարցի պատասխանում հարցվածների 85,5%-ը նշել է կանանց 20-50%-ի միջակայքը, ինչը ցույց է տալիս Հայաստանի խորհրդարանում կանանց իրական ներկայացվածության և հասարակության սպասումների անհամապատասխանությունը: Հարցվածների ընդամենը 14,5%-ն է կարծում, որ կանանց թիվը Ազգային ժողովում պետք է 10%-ից պակաս կազմի, այսինքն՝ այնքան, որքան դե ֆակտո ներկայացված է խորհրդարանում:

2. Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կուսակցությունների համամասնական ընտրակարգով ընտրացուցակների ձևավորման առանձնահատկությունները: Կանանց ինքնարացարկները նախընտրական շրջանում

Եական տարբերությունը ՀՀ Ազգային ժողովի 2007 թ. ընտրություններից այն է, որ կուսակցությունների ներսում ցուցակների ձևավորման գործընթացը, որի մանրամասները, որպես կանոն, չեն հրապարակվում, այս անգամ հանրության սեփականությունը դարձավ, քանի որ այդ գործընթացն ուղեկցվեց մի շարք հրապարակային սկանդալներով, որոնց կենտրոնում հենց կանայք էին: Կուսակցությունները ստիպված էին որոշ բացատրություններ տալ ցուցակների կազմման հիմքում ընկած սկզբունքների մասին, սակայն նրանց փաստարկները մեծ մասամբ համոզիչ չեին:

69 Հարցմանը մասնակցել է 1300 մարդ Երևանից և Հայաստանի բոլոր մարզերից:

Նախընտրական փուլում արձանագրված դեպքերի վերլուծությունը կուսակցությունների կաղրային բաղաքականության մասին որոշ ընդհանուր եզրակացություններ անելու հնարավորություն է տալիս, որի առանձնահատկությունները, ըստ Էության, առավել վառ է արտահայտվել հատկապես գենդերային բաղադրիչի միջոցով:

Կուսակցության ցուցակը ԿԸՀ ներկայացնելու փուլում «Ժառանգություն» կուսակցությունից հեռացավ նրա դեկավարության անդամ Կարինե Հակոբյանը, որը, ներկայացված լինելով «Ժառանգության» և «Ազատ դեմոկրատների» միասնական ցուցակի 10-րդ տեղում, տվյալ առիթով հրավիրված մամլո ասուլիսում դժգոհություն հայտնեց ցուցակի կազմնան սկզբունքների կապակցությամբ: Ցուցակի կազմը, նրա խոսքով, անակնկալ դարձավ ոչ միայն իր համար: Այդ փաստի անուղղակի ապացույցները ստացվեցին ուսումնասիրության ընթացքում և ֆոկուս խնդրերի ու խորքային հարցագրույցների միջոցով: Տվյալ մեղադրանքի կապակցությամբ կուսակցությունը սահմանափակվեց այն բացատրությամբ, որ ներկուսակցական ժողովրդավարության սկզբունքները չեն խախտվել, և ցուցակներով զբաղվել է աշխատանքային խումբը, որի կազմում Կարինե Հակոբյանը չի եղել:

Համանման խնդիրներ ծագեցին նաև «Ժառանգության» այլ ակտիվ ներկայացուցիչների առնչությամբ, որոնք հայտնվել էին ոչ անցողիկ տեղերում: Դրանց թվում էին չորրորդ գումարման ԱԺ պատգամավորներ Անահիտ Բախչյանը, որ ներկայացվել էր ցուցակի 14-րդ տեղում, և Լարիսա Ալավերդյանը՝ 41-րդ տեղում: Ընդ որում, մեկնաբանություններն այդ կապակցությամբ ներկայացրեց ոչ թե կուսակցության դեկավարությունը, այլ իրենք՝ թեկնածուները:

Անահիտ Բախչյանը, մասնավորապես, հայտարարեց, որ «Վիրավորանքի մասին խոսք անգամ չի կարող լինել», որ «Ժառանգություն» կուսակցությունը միշտ էլ առաջնորդվել է ոռտացիայի սկզբունքով, և կուսակցության դեկավարը պաշտպանում է այն կարծիքը, որ հարկ է մշտապես նոր մարդկանց ներգրավել, ոչ թե անընդհատ հենվել միևնույն կազմերի վրա:

Հարկ է նշել, որ Անահիտ Բախչյանն առաջադրվեց նաև մեծամասնական ընտրատարածքում, և չնայած հաղթանակի որոշ հնարավորություններին, չնացավ, իսկ կուսակցության կիրառած «ոռտացիայի» արդյունքն այն եղավ, որ «Ժառանգության» խմբակցությունը, որի կազմում երեք կին կար, խորհրդարան նշտավ նոր թիմով, որում ներկայացված է միայն մեկ կին՝ Զարուիի Փոստանցյանը:

«Ժառանգություն» կուսակցության ևս մեկ «ոռտացիան» էլ ավելի անհասկանալի մնաց հասարակության համար: Խոսքը Լարիսա Ալավերդյանի մասին է, որը ներկայացված էր ցուցակի 41-րդ տեղում: Մի պատգամավորի առնչությամբ, որն անցած ընտրություններում երկրորդն էր «Ժառանգության» ցուցա-

կում և իր հեղինակությամբ նպաստում էր կուսակցության խորհրդարան մտնելուն, 41-րդ տեղը տարակուսանք առաջացրեց հասարակությունում և ԶԼՄ-ներում:

Այդ կապակցությամբ մեկնարանություններ տալիս Լարիսա Ալավերդյանը հայտարարեց, որ խորհրդանշական է ընտրել ցուցակի 41-րդ տեղը՝ դրանով արտահայտելով սկզբունքային անհամաձայնությունը «Ազատ դեմքրատների» հետ դաշինքի կապակցությամբ: Ամեն դեպքում, անգամ անկուսակցական լինելով, նա մինչև ընտրությունները գերծ մնաց դեմքրատներից, որոնք կարող էին վնասել կուսակցության հեղինակությունը, և հայտարարեց. «41-րդ տեղը ցուցակում ուղերձ է հասարակությանը, որ հավերժական պատգամավորներ չեն լինում»: Արդեն ընտրություններից հետո նա ինքնարացարկի դիմում ներկայացրեց ԿԸՀ՝ այդախով ցույց տալով, որ խօսում է հետագա համագործակցությունը «Ժառանգություն» կուսակցության հետ: Այդ փուլում նրա տված մեկնարանություններից հետևում էր, որ իր անհամաձայնությունը պայմանավորված է եղել ոչ միայն ցուցակի կազման սկզբունքով, այլև առավել խորքային պատճառներով, այդ թվում՝ կուսակցության կիրառած «գուցեն գրագետ, քայլ անձամբ իր համար անընդունելի քաղաքական տեխնոլոգիաները»:

«Ես հայտնել եմ իմ ընդհանուր անհամաձայնությունն այն սկզբունքին, որով ձևավորվել է ցուցակը... Ես ասել եմ, որ կմնամ թիմի հետ մինչև ընտրությունների ավարտը: Քանի որ, ինչպես օրենքը է ասում, մենք իրավունք ունեինք, այսպես ասած, կողմնորոշվելու, ես կողմնորոշվել եմ... Իմ անհամաձայնությունը ոչ թե կաղողային, մարդկային առումով, շատ ավելի խորքային է՝ կապված նրանց կիրառած տեխնոլոգիաների հետ: Հնարավոր է՝ «Ժառանգության» տեսանկյունից ամեն ինչ գրագետ է, քայլ դա ինձ համար ընկալելի չէ: Ես հպարտ եմ, որ նման թիմում եմ աշխատել, և հուսամ՝ խորհրդարան անցած այդ 5 հոգին էլի կաշխատեն զանասիրաբար, և հնարավոր է՝ ավելի մեծ հաջողությունների հասնեն, քան մենք ժամանակին: Ուղղակի ցանկանում եմ, որ եթե քաղաքական կուսակցությունների անդամները ինչ-որ քայլ են անում, մտածեն ոչ թե այսօրվա, այլ իինք տարվա կտրվածքով», - նշել է՝ Լարիսա Ալավերդյանը⁷⁰:

Պակաս հարցեր չառաջացրեց և կանանց ոռտացիան Դաշնակցության ցուցակում: Հստ խորհրդարանական մոնիթորինգի տվյալների⁷¹ հինգ տարվա ընթացքում մեծ ակտիվություն ցուցաբերած պատգամավոր Լիլիթ Գալստյանը հայտնվեց կուսակցության ցուցակի 20-րդ տեղում: Կուսակցությունը, այս կապակցությանք բացատրություն տալով, հայտարարեց, որ 20-րդ տեղը համարում է անցողիկ իր համար, անգամ 30-րդը: Սակայն փաստը մնում է փաստ, որ Դաշնակցություն կուսակցությունը չպաշտպանեց Լիլիթ Գալստյանին նաև մեծամասնական համակարգով առաջադրվելու հարցում: Ինքը՝ պատգա-

70 Լարիսա Ալավերդյանի հարցազրույցից:

71 www.parliamentmonitoring.am

մավորք, սկզբում վճռական էր տրամադրված և նույնիսկ հայտարարեց մանուկում, որ պատրաստ է առաջադրվել մեծամասնական ընտրատարածքում, բայց սպասում է կուսակցության որոշմանը: Հարկ է նշել, որ Լիլիթ Գալստյանը, այդուհանդերձ, փաստորեն միակ կինն էր ՀՅԴ-ում, որ բավական ակտիվ էր մասնակցում կուսակցության նախընտրական արշավին:

Եթե անգամ համաձայնենք քաղաքական կուսակցությունների այն կարծիքին, թե ընտրական ցուցակների կազմումը խիստ ներկուսակցական խնդիր է, հարկ է ընդգծել, որ հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ինչ սկզբունքով են ձևավորվում դրանք: Եվ եթե խոսքը ոռտացիայի սկզբունքը կիրառելու փորձի մասին է, ապա հարց է ծագում, թե ինչու են կանայք տղամարդկանցից շատ ավելի հաճախ ենթարկվում ոռտացիայի: Եվ որքանով է թույլատրելի կուսակցությունների համար իրենց իսկ զանքերով աճեցրած կանանց կաղըերին օտարելու շռայլությունը, որոնք, ընդսմին, լիովին արդարացրել են կուսակցության վստահությունը:

Բարդ իրավիճակ ստեղծվեց նաև «Օրինաց երկիր» կուսակցության ցուցակի առնչությամբ: Առաջինը, դեռ նախընտրական արշավի մեկնարկից առաջ, ընտրացուցակը, այնուհետև նաև կուսակցությունը լրեց «Օրինաց երկիր» մամլո քարտուղար Սուսաննա Աբրահամյանը՝ հայտարարելով, որ 36-րդ տեղը կուսակցության ցուցակում ցույց է տալիս, որ կուսակցության հեղինակությունը պահպանելու իր զանքերը չեն գնահատվել ըստ արժանվույն: Իր մեկնարանություններում նա մեղադրեց կուսակցության ղեկավարությանը ցուցակը կազմելու գործընթացում ժողովրդավարության սկզբունքները խախտելու և ցուցակը միանձնյա կազմելու համար:

«Մեր երկիրը ձեռնամուխ է եղել քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական պետության կերտմանն ուղղված աննախադեպ բարեփոխումների, ինչում, ինչպես հայտնի է, իր վճռորոշ դերն ունի հանրային իրազեկումն ու լրատվությունը: Այս առումով իշխանության ամենաներկայացուցչական թիվ՝ Ազգային ժողովի ձևավորման պահին ես, լինելով ՕԵԿ-ի մամուլի խոսնակ, պարզապես չեմ կարող հանդուրժել իմ հայտնիքները նախընտրական ցուցակի 36-րդ հորիզոնականում: Ավելին, ցուցակի կազմման ընթացքում չի կիրառվել ժողովրդավարության սկզբունքը, քանի չի կարող ժողովրդավար գնահատվել ցանկացած որոշման միանձնյա կայացումը: Կուսակցության քաղխորհուրդը և համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները նախապես պետք է իմանան, թե իրենք ցուցակի որ հասվածում պետք է ընդգրկված լինեն, և տան իրենց համաձայնությունը, որպեսզի այսօր ստեղծված իրավիճակը չլինի, քանի որ մի քանի կանայք արդեն իսկ ինքնարացարկ են հայտարարել»⁷²:

72 Սուսաննա Աբրահամյանի հետ հարցազրույցից:

Կուսակցությունն այդ մեղադրանքին չարձագանքեց: Ընդհանուր առամբ նախընտրական շրջանում⁷³ «Օրինաց երկրի» ընտրացուցակը լրեց վեց կին, որոնք ներկայացված էին 36-169-րդ տեղերում: Իրենք՝ կանայք, բացի Սուսաննա Արրահամյանից, իրենց ինքնարացարկը որևէ կերպ չմեկնարանեցին, և թեկնածուների զանգվածային արտահոսքը մամուլում ներկայացվեց որպես «ոչ անցողիկ տեղերում ներկայացված կանանց դժգոհության ալիք», իսկ կուսակցությունը շտապեց հայտարարել, որ ինքնարացարկները կապված են տեղական ընտրական հանձնաժողովների աշխատանքներում այդ կանանց ընդգրկման հետ⁷⁴: Անկախ ինքնարացարկների պատճառներից՝ «Օրինաց երկիր» կուսակցության ցուցակում կանանց ներկայացվածությունը նվազել է 17%-ով, ինչին ԿԸՀ-ն չարձագանքեց որպես օրենքի խախտման: Այսուհետերձ նման ցածր մասնարամինն անհարիր է մի կուսակցության համար, որի շարքերում կանայք 60% են կազմում:

Պատգամավորի թեկնածու կանանց հրապարակային հայտարարությունների և հարցազրույցների վերլուծությունը վեր հանեց երկու ներհակ օրինաշափություններ, որոնք միևնույն երևույթի հետևանք են: Եթե որոշ թեկնածուների համար ոչ անցողիկ տեղը, իրենց իսկ խոստվանությամբ, «տիհած անակնկալ» էր, ապա ուրիշների համար կուսակցությունների ցուցակներում ընդգրկվելը, ընդ որում՝ անցողիկ տեղերում, «հաճելի անակնկալ» դարձավ: Երկու դեպքում էլ նման հայտարարություններն անուղղակիորեն վկայում են, որ կուսակցություններում ցուցակների կազմումը ոչ ժողովրդավարական և ոչ բափանցիկ ընթացք է ունեցել:

3. Մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանայք

Սկսած ՀՀ Ազգային ժողովի առաջին գումարումից՝ մեծամասնական համակարգով ընտրված կանանց թիվը նվազման միտում է ունեցել:

Մեծամասնական ընտրակարգով ընտրված կանայք իինգ գումարումների ԱԺ կազմում

| | 1995 | 1999 | 2003 | 2007 | 2012 |
|-------------|------|------|------|------|------|
| Կանանց թիվը | 4 | 2 | 1 | - | 2 |

73 Հաստ ՀՀ ընտրական օրենսգրքի 128-րդ հոդվածի 2-րդ մասի՝ պատգամավորի թեկնածուները ինքնարացարկի մասին հայտարարությունը կարող են ներկայացնել ԿԸՀ ոչ ուշ, քան ընդուրություններից տասն օր առաջ:

74 Հաստ ՀՀ ԿԸՀ-ի 12.04.2012 թ. տվյալների:

ՀՀ Ազգային ժողովում կանանց թվի նվազման շարժմաբացը բացատրվում է մեծամասնական ընտրատարածքներում դաժան պայքարով, մեծամասնական ընտրությունների առևտրայնացմամբ, սև տեխնոլոգիաների կիրառմամբ և մասամբ մեծամասնական ընտրատարածքների թվի փոքրացմամբ: Այսպես, ընտրական օրենսգրքի փոփոխություններից հետո միամանդատ ընտրատարածքների թիվը ԱԺ երկրորդ գումարումից (1999) մինչև չորրորդ գումարումը (2007) նվազել է գրեթե 2 անգամ, մինչդեռ մեծամասնական ընտրակարգով առաջադրվող կանանց թիվը նվազել է 10 անգամ:

Կանանց թեկնածությունների առաջադրման և անցողիկության առումով ավելի ճիշտ կիහնի վերջին երկու գումարումների համեմատությունը, քանի որ մեծամասնական ընտրատարածքների թիվը մնացել է նույնը՝ 41: Այդ համեմատության համատեքստում կարելի է խոսել մեծամասնական ընտրատարածքներում կանանց ակտիվության, ինչպես նաև ընտրվելու հնարավորությունների մեծացման մասին:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանց ներկայացվածության շարժընթացը

| | 2003 | 2007 | 2012 |
|------------------------------|---------------------------|-------------------------|--------------------------|
| Առաջադրված կանայք | 22 (558) 3,9 % | 5 (132) 3,8% | 11 (139) 7,9% |

Փոփոխություններ են նկատվել նաև որակական առումով: Եթե անցած ընտրություններում առաջադրված 11 կանանցից 6-ը հետագայում ինքնարացարկ տվեցին՝ այդպես էլ նախընտրական արշավ չնտնելով, ապա 2012 թ. ընտրություններում միայն մեկ ինքնարացարկ է արձանագրվել⁷⁵, մինչդեռ մեծամասնական ընտրակարգով թեկնածուների թվում ինքնարացարկի դիմած տղամարդկանց թիվը 40 էր:

Չնայած այն հանգամանքին, որ մեծամասնական ընտրատարածքներում առաջադրումն ամենից հաճախ տեղի է ունենում կուսակցությունների նախաձեռնությամբ, և այդ միտումն ընտրությունից ընտրություն մեծանում է, 11 կանանց թվում, որոնք քվեարկվել են 2012 թ. ընտրություններում, 6-ն անկուսակցական էին և միայն 2-ն էին (Վկոլետա Պետրոսյան և Գայանե Առուստանյան) ինքնառաջադրվել կուսակցության աջակցությամբ: Համեմատության համար նշենք, որ 2007 թ. բոլոր քվեարկվող կանայք անկուսակցական էին և առաջադրվել էին կուսակցությունների նախաձեռնությամբ:

75 Տավուշի մարզում՝ թիվ 40 ընտրատարածքում, ինքնարացարկ է հայտնել Սուսաննա Արքահամյանը, որն առաջադրվել էր Մարինե Մարտրյանին այլբնորանք ապահովերությամբ, և հանել է իր թեկնածությունը, եթե ընտրատարածքում ի հայտ է եկել ևս մեկ թեկնածու:

Սեծամասնական ընտրակարգով առաջադրվել են՝

Գայանե Առուստամյան, լրագրող, ինքնառաջադրում 1-ին ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 3 թեկնածուների շարքում, ՀԱԿ-ի աջակցությամբ,

Զարուհի Փոստանջյան, չորրորդ գումարման ԱԺ պատգամավոր «Ժառանգություն» կուսակցությունից, առաջադրվել է 4-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 5 թեկնածուների շարքում,

Սարիկ Մեյրանյան, «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր, անկուսակցական, ինքնառաջադրում 4-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 5 թեկնածուների շարքում,

Հեղինե Բիշարյան, չորրորդ գումարման ԱԺ պատգամավոր «Օրինաց երկիր» կուսակցությունից, առաջադրվել է 11-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 4 թեկնածուների շարքում,

Անահիտ Բախչյան, չորրորդ գումարման ԱԺ պատգամավոր «Ժառանգություն» կուսակցությունից, առաջադրվել է 12-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 6 թեկնածուների շարքում,

Գոհար Վեզիրյան, «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի լրագրող, ինքնառաջադրում 12-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 6 թեկնածուների շարքում,

Վիոլետա Պետրոսյան, անկուսակցական, ինքնառաջադրում 13-րդ ընտրատարածքում, Երևանում, քվեարկվել է 2 թեկնածուների շարքում ՀԱԿ-ի աջակցությամբ,

Կարինե Պողոսյան, Հայաստանի հանրապետական կուսակցության թեկնածու, Արտաշատի թիվ 1 դպրոցի տնօրեն, առաջադրվել է 17-րդ ընտրատարածքում, Արտաշատում, քվեարկվել է 4 թեկնածուների շարքում,

Օքելյա Վահանյան, անկուսակցական, ինքնառաջադրում 32-րդ ընտրատարածքում, Լոռու մարզում, քվեարկվել է 5 թեկնածուների շարքում,

Նարինե Մովսիսյան, Երևանի գյուղատնտեսական համալսարանի Կապանի ուսումնական կենտրոնի տնօրեն, ինքնառաջադրում 38-րդ ընտրատարածքում, Սյունիքի մարզում, քվեարկվել է 4 թեկնածուների շարքում,

Մարինե Մարաբյան, «Ինտերնեյշնլ Մասիս տորակո»-ի գործադիր տնօրեն, առաջադրվել է 40-րդ ընտրատարածքում, Տավուշի մարզում, քվեարկվել է 2 թեկնածուի շարքում Հայաստանի հանրապետական կուսակցության աջակցությամբ:

Պատգամավոր են ընտրվել Մարինե Մարաբյանը («Ինտերնեյշնլ Մասիս տորակո»-ի գործադիր տնօրեն, 25400 ձայն) և Կարինե Պողոսյանը (Արտաշատի թիվ 1 դպրոցի տնօրեն, 26435 ձայն)⁷⁶, որոնք քվեարկվել են ՀՀԿ-ի գորակցությամբ:

76 Թիվ 17 ընտրատարածքի ընտրությունների արդյունքները վիճարկվել են սահմանադրական դատարանում, հայցը ներկայացրել է թեկնածու Գագիկ Ներսիսյանը, որը տվյալ ընտրատարածքում անենարիշ ձայններն են ստացել (2028):

Մարինե Մարաբյանը ստացել է իր ընտրատարածքում ձայների 79%-ը, իսկ Կարինե Պողոսյանը՝ 68%-ը: Կարինե Պողոսյանի դեպքում վճռական դեր է խաղացել իշխող կուսակցության աջակցությունը, իսկ Մարինե Մարաբյանն իր հաղթանակի համար մեծ հաշվով պարտական է իրեն աջակցող «Ինտերնեյշնալ Մասիս տորակո» ընկերությանը, որի գործադիր տնօրենն էլ հանդիսանում է ինքը: Ընկերության դեկավարը՝ նախկին պատգամավոր Սիրայել Վարդանյանը, դեռ անցած ընտրություններում լուրջ աշխատանք է տարել այս ընտրատարածքում՝ աջակցություն ցույց տալով բնակչությանը սոցիալական ոլորտում և աշխատատեղերի ստեղծման գործում: Մարինե Մարաբյանի նախընտրական քարոզարշավի ընթացքում նրա պաշտպանությանք հանդես եկող Սիրայել Վարդանյանը վստահեցրել է ընտրողներին, որ Մարինե Մարաբյանի ընտրվելու դեպքում այդ քաղաքականությունը կարունակվի: Հստ եռյան, Մարինե Մարաբյանի ստացած ձայներն այդ ընտրատարածքում տարված բավական ակտիվ աշխատանքի արդյունք են: Պատգամավորի թեկնածուն ներկայացել է որպես «հայրենական արտադրողի շահերի պաշտպան»:

Փաստորեն, բոլոր ընտրատարածքներում կանայք բավական բարձր վարկանիշ են ունեցել: Կանանց մեծ մասը, ըստ ստացած ձայների քանակի, գրադարձել է երկրորդ կամ երրորդ տեղը: Եվ փաստորեն ամենուր կանայք պարտվել են միայն խոշոր ձեռնարկությունների ներկայացուցիչներին, որոնց կազմակերպչական և նյութական հնարավորությունները զգալիորեն ավելի մեծ են եղել:

Հեղինե Բիշարյանը և Վիղետա Պետրոսյանն իրենց ընտրատարածքներում ստացել են ձայների 34%-ը:

Զարուիի Փոստանջյանը 4-րդ ընտրատարածքում ստացել է ձայների 20%-ը, այն դեպքում, երբ նույն ընտրատարածքում քվեարկվող ՀՀԾ-ի նախագահ Արամ Մանուկյանը՝ ընդամենը 16,7%-ը: Սարիկ Սեյրանյանն այդ նույն ընտրատարածքում ստացել է ձայների 11%-ը:

Գայանե Առուստամյանը ստացել է ձայների 15%-ը, Անահիտ Բախչյանը՝ 12,7%-ը, իսկ նրա մրցակիցը նույն ընտրատարածքում՝ լրագրող Գոհար Վեզիրյանը՝ ընդամենը 2%-ը:

Անահիտ Բախչյանն իր նախընտրական հարցազրույցում նշել է, որ միակ թեկնածուն, որը ընտրավագրի ընթացքում աշխատել է իր դեմ, Գոհար Վեզիրյանն է: Անահիտ Բախչյան-Գոհար Վեզիրյան հակամարտությունը դիտարկվել է նաև նախընտրական հրապարակային բանավեճերի ընթացքում: Անգամ նրանց նախընտրական կարգախոսներն էին մոտեցումների որոշ բախում պարունակում: Անահիտ Բախչյանը, բազմամյա փորձ ունենալով կրթության ոլորտում, վերաձևակերպելով իր կուսակցության կարգախոսը, հավաստում էր՝ «Գալիս եմ հանուն որակյալ կրթության»: Վեզիրյանը, իհմնվելով լրագրողա-

կան գործունեության սեփական սկզբունքների վրա, առարկություններ չհանդուրժող տոնով կոչ էր անում. «Թեկադրիր քո կամքը, դու ես իշխանությունը»:

«Հնատրապայրարում կի՞մ-տղամարդ տարբերություն չկար, ամձերի հարց էր, և այդ առումով կին մրցակից ինձ ավելի շատ «խփեց», քանի տղամարդիկ: Տղամարդկանց կողմից ես ոչ մի արտահայտություն ու հայտարարություն իմ հասցեին չեմ լսել: Բայց, ցավոր սրտի, ընդդիմություն ներկայացնող լրագրող գործընկերուհիս բոլորից շատ «աշխատեց» իմ դեմ, հատկապես՝ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթում իր կողմից գետեղված այն մտացածին լուրով, թե իրը ես ընտրակաշառության Second hand-ի այրանքի տեսքով: Այդ քայլն իմ լեզուն ուղղակի կարծացրեց, որովհետև դրանից անմիջապես հետո դատախազությունից ինձ զանգահարեցին, հետաքրքրվեցին՝ այդպես է, թե ոչ, և երբ պատասխանեցի, որ բնական է՝ լուրը իրականությանը չի համապատասխանում, ինձ հակադարձեցին՝ տեսնում եք, եթե ձերը սուս է, ասսածեր ահազանգերը ընտրակաշառների մասին ևս սուս են: Եվ ինձ մինչև հիմա շատ հետաքրքրի է՝ ինչ շահեց այդ թերթը դրանից, առավել ևս, որ դա որևէ ազդեցություն չունեցավ նրա ստացած ձայների վրա...»⁷⁷:

3

Բախչյանը, պատասխանելով այն հարցին, թե ինչ ընտրողի վրա է իր հույսը դնում, նշել է, որ իր ընտրողներն այն ծնողներն են, որոնք մտահոգված են իրենց երեխաների կրթության համար: Վեզիրյանն ակտիվորեն հանդիպում էր ընտրողների հետ, սակայն իր արշավը կառուցում էր ոչ թե պողիտիվով կամ իր ինչ-ինչ խոստումներով, այլ հիմնականում իր ընդդիմախոսների քննադատությամբ ու մերկացումներով: Մանուկի հետ շփումներում նա ներկայանում էր բավական հավակնությունով՝ որպես «Հայաստանի ապագա նախագահ»:

Միևնույն ընտրատարածքում երկու կնոջ առաջադրումը, ինչպես հայտնի է, քաղաքական տեխնոլոգիները համարում են աննպատակահարմար քայլ, քանի որ կանանց ընտրվելու հնարավորությունները բաժանվում են: 2012 թ. ընտրություններում նման երկու ընտրատարածք կար, երկուսն էլ՝ մայրաքաղաքում: Դա առանձնապես հստակ երևաց 4-րդ ընտրատարածքի ընտրությունների արդյունքում, որտեղ առաջադրված էին Սարիկ Սեյրանյանը և Զարուհի Փոստանջյանը: Ընտրատարածքի ընտրությունը պայմանավորված էր երկու թեկնածուների բնակության վայրով, ինչն այդ հանգամանքն է, ինչպես նրանք նշել են իրենց հարցազրույցում, վճռորոշ եղել: Երկուսն էլ ներկայացել են որպես իշխանամետ թեկնածուների այլընտրանք, այսինքն՝ գործել են միևնույն քաղաքական դաշտում և միևնույն ընտրողի համար:

Սարիկ Սեյրանյանն իր քարոզարշավում շեշտադրում էր երկու հայեցակետ. լրագրողի մասնագիտությունը, որը քաղաքացիական դիրքորոշում ունի, և մայրությունը, այսինքն՝ «մոր, որը լավ ապագա է ցանկանում իր որդու հա-

77 Անահիտ Բախչյանի հետ հարցազրույցից:

մար»: Սեյրանյանի նախընտրական կարգախոսը մտածված էր մասնագիտական մոտեցմամբ. «**Միասին խմբագրենք Ազգային ժողովը»:**

Զարուիի Փոստանցյանը հանդես էր գալիս իրավապաշտպանի և չորս երեխաների մոր դերում, թեպետ նրա քարոզարշավում ենթադրվող մայրության շեշտադրումը չեղորացված էր: Զարուիի Փոստանցյանը, ինչպես և «Ժառագործուն» կուսակցությունը, որը ներկայացնում է նա, քարոզարշավ էր վարում «**Գալիս եմ հանուն արդարության**» կարգախոսով:

Երկուսն էլքավական գրագետ և արիեստավարժ քարոզարշավ էին վարում, բացի այդ, շատ ակտիվորեն հանդես էին գալիս սոցիալական ցանցերում, ինչն ինքնին նոր տեխնոլոգիա էր ներկայիս ընտրություններում: Երկուսն էլ աշխուժորեն հաղորդակցվում էին մամուլի հետ՝ չխուսափելով հրապարակային բանավեճերից: Ինչոր պահի Սարիկ Սեյրանյանի դեմ սև փիար օգտագործվեց: Ցանցերում նրան վարկարեկելու փորձ նկատվեց, նրան ներկայացրին որպես իր ամուսնու՝ Հովհաննես Շահինյանի՝ այդ ընտրատարածքի նախկին թաղապետի հետնորդ⁷⁸: Ինըը՝ Սեյրանյանը, քարոզարշավի ընթացքում իրեն լիովին հեռու էր պահում իշխող կուսակցությունից՝ ընդգծված հանդես գալով որպես անկուսակցական թեկնածու:

«**Դժբախտաբար, այսօրվա Հայաստանի քաղաքական համակարգում կարևորվում է ոչ թե անձը, անհատը, այլ մանր խմբերը, այդ խմբերի շահերը: Իմ առաջադրմամբ ես առաջին հերթին պայքարում եմ այդ մտածողության դեմ, և հավատացեք՝ կոտրելու եմ այդ կարծրատիպը: Բացի այդ, որպես մեծամասնականով ընտրված անկուսակցական պատգամավոր՝ հետագայում Ազգային ժողովում կաշկանդված չեմ լինի ցանկացած առողջ նախաձեռնության միանալու կամ քննադատելու հարցում»⁷⁹:**

Քարոզարշավի ընթացքում ՀՅԴ ընդդիմադիր կուսակցությունը հայտարարեց, որ պաշտպանում է Սարիկ Սեյրանյանին այդ ընտրատարածքում՝ ելնելով նրա բարձր պրոֆեսիոնալ որակներից:

Ըստիանուր առմամբ, 4-րդ ընտրատարածքն ամենահետաքրքիրն էր ձայների բաշխվածության առումով: Երեք ընդդիմադիր թեկնածուները՝ Զարուիի Փոտանցյանը (6827 ձայն), Սարիկ Սեյրանյանը (3661 ձայն) և Արամ Մանուկյանը (5453 ձայն) միասին ստացան քիչ ավելի, քան այդ ընտրատարածքում հաղթանակ տարած խոշոր ձեռնարկատեր Արտակ Սարգսյանը՝ 15896 ձայն, այսինքն՝ ձայները բաժնավեցին ոչ միայն կանանց միջև, այլև քաղաքական սպեկտրի երկու քենուների միջև: Եվ ինչքան էլ տրտնջան ընդդիմադիր թեկնածուները, թե ընտրողը հակված է շահադիտական ընտրության՝ հիմնված «փողատեր» թեկնածուների նախընտրական կաշառքի կամ տարեր բնույթի

78 Ընտրական քարոզարշավի ընթացքում Հովհաննես Շահինյանն անակնկալ ՀՀԿ-ից հեռանալու դիմում ներկայացրեց:

79 Սարիկ Սեյրանյանի հետ հարցազրույցից:

սոցիալական խոստումների վրա, ձայների բաշխումը 4-րդ ընտրատարածքում ցույց տվեց, որ միասնական ընդդիմադիր թեկնածու ունենալու դեպքում ընդդիմադիր տրամադրված ընտրողները կարող էին հաղթանակ տանել, և հաղթողը կարող էր և կին լինել:

Մեծամասնական թեկնածուների շարքում ամենաքիչ ձայները ստացել է անկուսակցական թեկնածու Օֆելյա Վահանյանը (32-րդ ընտրատարածք): Այս թեկնածուն աչքի ընկավ իր եկամուտների հայտարարագրով, որում ոչ մի տող չկար, այսինքն՝ մի տարվա ընթացքում փաստորեն նա որևէ եկամուտ չէր ունեցել: Նույնային գծիկ էր դրված նաև աշխատանքի վայրի դիմաց: ԿԸՀ ներկայացված հաշվետվությունում գծիկ էր դրված նաև նախընտրական քարոզարշավի ժամանելու դիմաց: Այդուհանդեռձ, նրա նախընտրական կարգախոսն էր «Ապրենք արժանապատիվ»: Թեկնածուն ստացավ 179 ձայն: Օֆելյա Վահանյանի նման թեկնածուների առաջադրումը հասարակության մեջ ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ: Խնդիրն այն է, որ եթե տղամարդկանց դեպքում բոլոր թերությունները վերագրվում են թեկնածուի անձին, ապա կանանց դեպքում «Էլ ինչ կարելի է սպասել կանանցից» կարգի ընհանրացումներն անխուսափելի են:

3

Ընտրողների վրա բացասական տպավորություն է բողնում թեկնածուի գործողությունների և արարքների անորոշությունը: Ներկայիս ընտրարշավի առանձնահատկությունն այն էր, որ թե՛ կուսակցությունների ընտրական ցուցակները, թե՛ մեծամասնական թեկնածուների ցուցակները ԿԸՀ ներկայացվեցին և հրապարակվեցին օրենքով սահմանված ամենավերջին ժամկետում, ինչն ինքնին անդրկուլյան գործներացների մասին շշուկների ու ենթադրությունների տեղիք էր տալիս: Եթե հաշվի առնենք, որ մեծամասնական թեկնածուների համար ընտրատարածքի ճիշտ ընտրությունը, ըստ քաղաքական տեխնոլոգիների գնահատման, պայմանավորում է հաջողության կեսը, ապա կանանց դեպքում այդ քայլը, որպես կանոն, մտածվում է նախապես: Այդ իսկ պատճառով բացասական տպավորություն թողեց այն փաստը, որ վերջնաժամկետից երեք օր առաջ թեկնածու Գոհար Վեզիրյանը հայտարարեց մանուլում, որ դեռ չի որոշել, թե որ ընտրատարածքում է քվերակվելու⁸⁰:

Ներկայիս ընտրությունների ևս մի առանձնահատկություն էր կին թեկնածուի նկատմամբ բացահայտ սեքսիզմի աղմուկ հանած դեպքը: 1-ին ընտրատարածքի թեկնածու Ռուբեն Հայրապետյանը, ի պատասխան բանավեճի հրավերի, որ արել էր նրա մրցակից Գայանե Առուստամյանը, ասաց, որ նրա հետ բանավեճի մեջ չի մտնի, քանի որ «նա կին է»: Ուշագրավ է, որ Ռուբեն Հայրապետյանի տղամարդ գործընկերները, փոխանակ դատապարտեին նրա

80 ՀՀ ընտրական օրենսդրի 127-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների գրանցման փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55, և ոչ ուշ, քան 45 օր առաջ՝ 12.03.2012 - 22.03.2012:

վարքագծի անընդունելի ոճը, շտապեցին իրենց թեկնածությունն առաջարկել Հայրապետյանի հետ բանավեճի, այսինքն՝ «սողամարդու խոսակցության» համար: Բավական հետաքրքիր արձագանքեցին Հայրապետյանի հարձակմանը կին թեկնածուները⁸¹, որոնց մեծ մասը դատապարտեց պատգամավորին, բայց նաև փորձեր եղան արդարացնելու նրան, թե իրականում «նա ասել է լավ իմաստով...»: **Նման մողեցումը կարելի է դիմել որպես հերրական ապացույց այն իրողության, որ իրենք՝ կանայք, միշտ չեն, որ զիվակցում են իրրականության դրսերումները:**

Ինքը՝ թեկնածու Գայանե Առուստամյանը, հայտարարեց մամուլում, որ կանանց կազմակերպությունները չարձագանքեցին սեքսիզմի դրսերմանը, և դա զարմացնում է իրեն⁸²:

Հարկ է նշել, որ դա մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանց միակ պահանջատիրությունը չէր կանանց հասարակական կազմակերպությունների նկատմամբ: Անահիտ Բախչյանը նույնպես հայտարարեց մամուլում, որ որևէ կանանց կազմակերպություն չի պաշտպանել իրեն ընտրություններում: Այս իրավիճակը, անկասկած, առանձին վերլուծություն է պահանջում: Սր կողմից՝ ընտրությունների անհաջող արդյունքի կամ կին թեկնածուների նկատմամբ բացասական գործընթացների պատասխանատվությունը հասարակական սեկտորին վերագրելու փորձ է նկատվում: Մյուս կողմից՝ նման պահանջատիրության առկայությունը վկայում է, որ նախ՝ կանանց կազմակերպությունների և կին թեկնածուների համագործակցության մեխանիզմն ընտրություններից առաջ և ընթացքում չեն կարգավորվել, երկրորդ՝ որոշ շափով անըմբուղություն կա միմյանցից երկու կողմերի ակնկալիքներում: Այդ մասին են վկայում նաև տվյալ հարցի ըննարկումները ֆոկուս խմբերում, որոնք ցույց տվեցին, որ կին թեկնածուների կողմից հանագործակցության ցանկությունը շատ հաճախ դեմ է առնում կանանց հասարակական սեկտորին ընդառաջ քայլեր անելու անկարողությանը կամ չկամությանը:

4. Խորհրդարանի պատգամավորի թեկնածու առաջադրված կանանց տարիքային և մասնագիտական կազմը

Պատգամավորի թեկնածուների ցուցակների վերլուծությունը 2012 թ. խորհրդարանի համար քենակվող կանանց տարիքային կազմի և զբաղվածության ոլորտների մասին որոշ եզրակացություններ անելու, ինչպես նաև դրանք 2007 թ. ընտրությունների ժամանակ կատարված ուսումնասիրության տվյալների հետ համեմատելու հնարավորություն է տալիս:

Այսպես, համամասնական ընտրակագով խորհրդարան մտնելու համար քվեարկվող թեկնածուների տարիքային տվյալների վերլուծությունը ցույց է


81 Ըստ բանավեճների նյութերի, որոնք կազմակերպվել են նախընտրական շրջանում Կին լիներների ֆորումի կողմից NDI-ի աջակցությամբ:

82 Գայանե Առուստամյանի հետ հարցազրոյցից:

տալիս (տե՛ս դիագրամը), որ առավել ներկայացուցչական է 40 տարեկանից բարձր տարիքային խումբը՝ 72%: Նույն օրինաչափությունը նկատվել է նաև 2007 թ., երբ պատգամավորի թեկնածու կանաց 72,8%-ը 40-ից բարձր տարիքային խմբում էր: Արդի կանաց քաղաքական լիդերությունն օգտագործում է այն պաշարները, որոնք ձևավորվել են դեռ խորհրդային ժամանակներում, և առավել ակտիվություն են ցուցաբերում ավագ տարիքի կանայք, որոնք գործադիր, օրենսդիր և տեղական իշխանությունների կառույցներում աշխատանքի վորք ունեն:

Նախկինի պես ցուցակներում ամենասակավաթիվը մինչև 30 տարեկան կանայք են. 2012 թ. ընտրություններում երիտասարդությունը կազմել է 9%, 2007 թ.՝ 7%: 30-40 տարեկանների խումբը 2012 թ. կազմել է 20%, 2007-ին՝ 19,4%:

ԹԵԿՆԱԺՈՒՅՑ ԿԱՆԱՑ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ



Փորձի առկայությունը, անկասկած, թե՛ քաղաքականապես ակտիվ կանաց, թե՛ տղամարդկանց տարիքային աստիճանակարգությունը կանխորոշող գլխավոր գործոնն է, սակայն կանաց դեպքում դա միակ պատճառը չէ:

Քաղաքականության մեջ ամենասակավաթիվը վերարտադրողական տարիքի՝ մինչև 40 տարեկան կանայք են, երբ երեխանները փոքր են, և երիտասարդ ընտանիքը բախվում է այն դժվարություններին, որոնք երկրորդ պլան են մղում ոչ միայն երիտասարդ կանաց քաղաքական կարիերան, այլև շատ հաճախ նաև մասնագիտականը: “Դա նշում են իրենք՝ կանայք, այդ են վկայում թե՛ Հայաստանում, թե՛ այլ երկրներում անցկացված հետազոտությունները: Այդուհանդերձ, ոչ մեծ դրական շարժման գոյություն ունի մինչև 30 տարեկանների խմբում. դա երիտասարդ կանաց այն խումբն է, որը մեծացել է անկախության պայմաններում, հաճախ լավ կրթություն է ստացել արտասահմանում և մասնագիտական առաջնադաշտում է ունեցել ըստ արևմտյան շափանիշների: Ընտրված պատգամավորներից այդ տարիքային խմբին է պատկանում միայն մեկ պատգամավոր, 4-ը պատկանում են մինչև 40 տարեկանների խմբին, մնացածը 40 տարեկանից բարձր խմբում են:


40-ից բարձր տարիքի կանանց երեխաները հասուն են, ընտանեկան կենցաղը կարգավորված է, և դա, ըստ իրենց իսկ կանանց գնահատականների, կարևոր գործոն է, որի շնորհիվ իրենք հնարավորություն են ունենում իրացնելու իրենց ներուժը թե՛ մասնագիտական գործունեության, թե՛ քաղաքականության մեջ: Բացի դրանից, վերջին տարիներին ակնհայտորեն կոտրվում են կարծրատիպերը, և ավելի ու ավելի շատ կանայք են քաղաքական ու մասնագիտական ակտիվություն ցուցաբերում՝ ունենալով փոքր երեխաներ:

Դա մեծապես պայմանավորված է կենցաղային պայմանների բարելավմամբ և լավ վարձատրվող աշխատանքով, որոնք հնարավորություն են տալիս կանանց նվազեցնելու երեխաների խնամքի հետ կապված ֆիզիկական և ժամանակային ծանրաբեննավածությունը և զբաղվելու մասնագիտական առաջիւագնամբ կամ քաղաքական գործունեությամբ: Մասնավորապես, պատգամավոր կանանց շարքում երկու քազմազավակ կանայք կան, մնացած մեկ երկու երեխա ունեն, միայն երկուսն են, որ ամուսնացած չեն:

Համենայն դեպք, բոլոր կանայք փաստորեն, որոնք հարցման են ենթարկվել սույն հետազոտության ընթացքում, ընդգծել են, որ քաղաքական ակտիվության անհրաժեշտ և պարտադիր պայմանը ընտանիքի և հարազատների աջակցությունն ու ըմբռնումն է, լինեն նրանք ամուսններ թե՛ ծնողները: Այդ թեզը հաստատվել է նաև անցած հետազոտության ընթացքում:


Քերպերկող կին թեկնածուների մասնագիտական գրադաժության վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենաներկայացուցչական խումբը կրության ոլորտի աշխատողներն են՝ 33%, ընդունի 2007 թ. նրանց թիվն ավելի փոքր է՝ 25%: Խումբը միատարր չէ, մեծ մասը կրթական հաստատությունների դեկավար են՝ դպրոցի, քոլեջի, բուհի տնօրիններ, և շատ փոքր թիվ են կազմում կրթության ոլորտի պետական պաշտոնյաները:

Կին թեկնածուների գրադաժության ոլորտները



- Նախարարներ, փոխնախարարներ
- Իրավաբաններ
- Սշակույրի աշխատողներ
- ԶԼՄ-ների ներկայացուցիչներ
- ՏԻՄ-ների պատվարներ
- ՀԿ-ների ներկայացուցիչներ
- Գործող պատգամավորներ
- Առողջապահության աշխատողներ
- Կուսակցական աշխատողներ
- Բիզնեսի ներկայացուցիչներ
- Պետաշխատողներ
- Զաշխատղներ
- Կրթության աշխատողներ


Երկրորդ տեղում ժամանակավոր շաշխատող թեկնածուներն են՝ 15%: 2007 թ. այդ խումբն ամենամեծն էր և կազմում էր մոտ 25%, այսինքն՝ չեր աշխատում յուրաքանչյուր չորրորդ թեկնածուն: Ինչպես ցույց տվեցին հարցումները ֆուլուս խմբերում, նման թեկնածուները նվազ մրցունակ են թե՛ գործընկերների, թե՛ ընտրողների աշքում, քանի որ քվերակվում են աշխատանք գտնելու նպատակով:



3


Հաջորդ խումբը, ըստ ներկայացվածության, պետական պաշտոնյաներն են՝ պետական տարբեր գերատեսչությունների և կառույցների ծառայողներ: Իշխող կուսակցության ցուցակում ներկայացված էին նաև քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող կանայք՝ նախարարներ և փոխնախարարներ, որոնք կազմում էին 1%: Սակայն բոլորն էլ հրաժարվեցին մանդատից հօգուտ իրենց պաշտոնի: Կուսակցական ցուցակներում պետական վերին օղակների պաշտոնյաների ընդդրկումը, որոնք հետազոտում հանում են իրենց թեկնածությունը կամ հրաժարվում են պատգամավորական մանդատից, կուսակցություններում բացատրում են այն համգամանքով, որ կաճանց այդ խումբն ընտրողին ներկայացնում է կուսակցության թիմը:

Հաջորդ խմբը, որոնք հավասարապես են ներկայացված, տարբեր մակարդակների կուսակցական աշխատողներն են, այսինքն՝ այն կանայք, որոնք որպես իրենց աշխատանքի վայր նշում են կուսակցական կառույցները (9%՝ 2007 թ. 13,2%-ի դիմաց) և նույնքան՝ 9% կազմող այն թեկնածուները, որոնք որպես իրենց աշխատավայր նշում են թիգնես կառույցները: Այս խումբը նույնպես միատարր չէ, դրա կազմում 25%-ը ձեռնարկությունների հիմնադիրներ և սեփականատերեր են, և 75%-ը՝ թիգնես ընկերությունների կառավարողներ (մենեջերներ): 2007 թ. հարաբերակցությունը գրեթե նույնն էր. թիգնես կառույցների աշխատակիցները կազմում էին 7%, իսկ մասնավոր ձեռներնեցները կամ ձեռնարկությունների ղեկավարները՝ ընդհամենը 2,4%:



Ինչպեսև 2007 թ., թեկնածու կանանց մոտ 4%-ը քաղաքականություն է եկել հասարակական սեկտորից: Այդ երեսույթն արդեն սովորական գործելակերպ է դարձել. կուսակցություններն իրենց շարքերն են ընդունում հասարակական սեկտորում կայացած լիդերների և ակտիվիստների, որոնց մեջ նաև կանայք կան, և օգտագործում են նրանց կազմակերպչական ներուժն ու համբավը: Նույն շարժառիթներով էլ ցուցակներում ընդգրկվում են, ընդ որում՝ անցողիկ տեղերում, մշակույթի և արվեստի մեծ ճանաչում ունեցող գործիչներ: Վերջին նորարարությունը շոու թիգնեսի աստղի ընդգրկումն էր: Ընդհանուր առմամբ, մշակույթի գործիչները ցուցակներում կազմում են 2%:

Առողջապահության ոլորտի աշխատողները կազմում են 5%, ընդ որում, նրանց կեսը դեկավար պաշտոններ է վարում:




2007 թ. համեմատությամբ՝ կրկնակի մեծացել է լրագրողների թիվը՝ 2%: Տեղական իշխանությունների դեկավարները կազմում են 3%: Օրենսդրական իշխանության համար հետաքրքրություն են ներկայացնում գործող իրավաբանները, նրանք ցուցակներում կազմում են 2%: Գործող կին պատգամավորները 4% են: Այդուհանդերձ, Ազգային ժողովի «կանանց կազմը» նորացավ երկու երրորդով:

Կուսակցությունների ցուցակներում ընդգրկված անկուսակցական կանանց թիվն ընդհանուր հաշվով նվազել է՝ 9%,՝ 2007 թ. 12%-ի դիմաց: Հարկ է նշել, որ քաղաքական կուսակցություններն անկուսակցական կանանց ներգրավում են միայն այն դեպքում, եթե նրանք արդեն իրենց մասնագիտության ոլորտում կամ ինչ-որ պաշտոնում կայացած անձինք են կամ հաջողորդական դրսութելով իրենց հասարակական սեկտորում՝ հանրային ճանաչում ունեն:

Այսուհանդեռձ, ի տարբերություն 2007 թ., անկուսակցական կանանցից ոչ որ խորհրդարան չմտավ: Անգամ այն կանայք, որոնք նախորդ գումարման ժամանակ խորհրդարան էին մտել որպես անկուսակցական, այժմ կրկին քվեարկվեցին (ի դեպ, անցողիկ տեղերում) արդեն որպես տվյալ կուսակցության անդամ: Անկուսակցականների մի մասը կուսակցության անդամ դարձավ անմիջապես ընտրություններից առաջ, բացառված չէ՝ ցուցակում տեղ գրավելու դիմաց: Նման մոտեցումը կիրառվում է նաև տղամարդկանց նկատմամբ, ընդ որում, ոչ միայն ցուցակներ կազմելիս, այլև պաշտոնի նշանակելիս, հետևաբար անկուսակցականների թիվը ցուցակներում պետք որ նվազման միտում ունենա:

3



5. Գենդերային քվուտան դեյուրե և դե ֆակտո հինգերորդ գումարման Ազգային ժողովում: Հետընտրական ինքնարացարկները որպես քվուտանների չեղորացման մեխանիզմ

Կանանց ներկայացվածությունը հինգերորդ գումարման Ազգային ժողովում տոկոսային արտահայտությամբ կազմում է 10,67%, և դա նշանակում է, որ չորրորդ գումարման ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական կուսակցությունները, ընտրական օրենսգրքում գենդերային քվուտան մեծացնելով մինչև 20% և նախընտրական համամասնական ցուցակներում հասարակայնությանը ներկայացնելով 22,8% կանանց, ընտրությունների արդյունքում դե ֆակտո իրենց խորհրդարանական խմբակցություններում ընդգրկեցին ցուցակներում մտցված թեկնածությունների կեսից էլ քիչ կանանց:

2007 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ գործող 15%-անց քվոտայի պայմաններում կուսակցական ցուցակներով Ազգային ժողովի պատգամավոր ընտրվեց 12 կին (9,16%), իսկ մեծամասնական ընտրատարածքներում ոչ մի կին չընտրվեց: Քանի որ 2012 թ. 14 կանանցից երկուսն ընտրվել են մեծամասնական համակարգով, ակնհայտ է, որ խորհրդարանական կուսակցությունները կանանց առաջադրման հարցում որևէ առաջընթաց չեն ունեցել: Ավելին՝ Հայաստանի ընտրական օրենսգրքում ամրագրված 20%-անց քվոտան, որ կոչված էր ապահովելու կանանց համապատասխան մասնակցությունը, ինչ-որ առումով արժեգրկվեց:

Հստ էության, ՀՀ Ազգային ժողովում կանանց առաջ մղելու մեխանիզմը, որ նախատեսված էր օրենսդրությամբ, չգործեց ներկուսակցական ինքնարացարկներով իրականացված «փոխատեղումների» պատճառով, որոնց դրդապատճառները մեծ մասամբ լայն հասարակայնության համար մութ ու անհասկանալի մնացին: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների և առաջին հերթին կանանց ՀԿ-ների գնահատականներում (և դա ցույց տվեցին ֆոկուս խմբերի և կլոր սեղանների քննարկումները) շատ հստակ դիտարկվում է կանանց նկատմամբ թարմված խորականություն, ավելին՝ ժողովրդավարական մոտեցումների տեսանկյունից կանանց անունների «օգտագործումը» օրենքը շրջանցելու նպատակով բարոյական չէ և հաճգեցնում է օրենսդրության ու քաղաքացիական հասարակության իրավական հիմքերի համահարթման:

Պատճառների ու հետևանքների առավել մանրակրկիտ վերլուծության համար Ժամանակ է անհրաժեշտ, սակայն անզամ ՀՀ Ազգային ժողով անցած կանանց ընդհանուր պատկերը կուսակցություններում նրանց ներկայացվածության մասին որոշ եզրահանգումներ անելու հիմք է տալիս:

Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցությունում 69 պատգամավորից 9-ը կանայք են, ինչը կազմում է 13%, այն դեպքում, եթե կուսակցության նախընտրական ցուցակում կանանց թիվը կազմել է 21,3%:

«Քարգավաճ Հայաստանի» խմբակցության կազմում 37 պատգամավորից 2-ն են կին կամ ընդհանուր 5,4%-ը, այն դեպքում, եթե կուսակցության նախընտրական ցուցակում ներկայացված կանայք կազմել են 21,8%:

Հայ ազգային կոնգրեսի խմբակցության 7 պատգամավորների մեջ մեկ կին կա, որ կազմում է 14%: Կոնգրեսի նախընտրական ցուցակում կանայք կազմել են 20,3%:

«Օրինաց երկրի» խմբակցության կազմում 6 պատգամավորներից միայն մեկն է կին, ինչը կազմում է 16%, իսկ կուսակցության նախընտրական ցուցակում կանանց մասնաբաժինը կազմել է 20,2%:

«Ժառանգության» խմբակցությունում ընդամենը մեկ կին կա, որ կազմում է 20%, իսկ նախընտրական ցուցակում կանայք 24,6% են եղել:

Հայ եեղափոխական դաշնակցության խորհրդարանական խմբակցությունում՝ բաղկացած 5 պատգամավորից, կին չկա, այս դեպքում, եթե նախընտրական ցուցակում կանայք կազմել են 32%:

Խմբակցությունների ներկայիս և նախորդ գումարման կազմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հանրապետական կուսակցության խմբակցությունում կանանց թիվն էապես մեծացել է՝ 3,1%-ից մինչև 13%:

«Քարգավաճ Հայաստան» կուսակցությունը, նախորդ գումարման ժամանակ ներկայացնելով 12% կին, կանանց ներկայացվածությունը նվազեցրել է մինչև 5%: Խմբակցության պատգամավորների թիվը մեծացել է մինչև 12 մարդու, մինչդեռ կանանց թիվը կրճատվել է:

Կանանց ներկայացվածության առումով էական հետընթաց է նկատվում ՀՅԴ խմբակցությունում. չորրորդ գումարման խորհրդարանում 18,7% կանանց ներկայացվածությունը ունեցած այս կուսակցությունը ներկայիս ընտրությունների արդյունքում ոչ մի կին չի ներկայացնում:

Սուաջընթաց չկա նաև «Օրինաց երկիր» կուսակցությունում, որի խմբակցության կազմում, ինչպես նախկինում, այժմ էլ մեկ կին կա:

«Ժառանգություն» կուսակցության խմբակցությունում, որի կազմում չորրորդ գումարման խորհրդարանում եղել է 42,8% կին, ներկայիս ընտրությունների արդյունքներով կանայք կազմում են 24,6%:

Հիմնական մեխանիզմը, որով գենդերային քվոտան չզործեց, հետընտրական ինքնարացարկների գործելակերպը դարձավ: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ ինքնարացարկի դիմում է ներկայացրել պատգամավորի 102 թեկնածու, որոնցից 26-ը կամ 25%-ը կանայք են:

Որո՞նք են պատգամավորական մանդատից հրաժարվելու դրդապատճառները: Հետընտրական ինքնարացարկների վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանելու որոշ օրինաչափություններ:

Ինքնարացարկների մեծ մասը պայմանավորված է ցուցակում ընդգրկված թեկնածուի աշխատանքով գործադիր իշխանությունում: Բայց եթե տղամարդկանց դեպքում այդ պատճառով մանդատից հրաժարվածների թիվը կազմել է մոտ 80%, ապա կանանց դեպքում պատկերն այլ է: Անշուշտ, ինքնարացարկ հայտնած կանանց շարքում էլ կան այնպիսիք, որոնք բարձր պաշտոն են զբաղեցնում գործադիր իշխանությունում կամ այլ ոլորտներում, սակայն նրանց թիվն ընդամենը 30%-ի է հասնում: Մնացած դեպքերում պատգամավոր դառնալու մտադրությունից հրաժարվելու պատճառները մնում են չբացահայտված լայն հասարակայնության համար, քանի որ նման քայլի գնացած կանանց ճնշող մեծամասնությունը չի ցանկանում մեկնարանել իր հրաժարումը:

Այն հանգամանքը, որ թեկնածուն չի կարողանում համոզիչ հիմնավորել հրաժարման իր որոշումը, դրդում է եզրակացնելու, որ դա կարող է կուսակցական թելադրանքի հետևանք լինել: Եվ եթե ներառենք, որ որոշումն ընդունում է կուսակցությունը՝ ելնելով, դիցուք, այն հանգամանքից, որ տվյալ կինն այնքան էլ արժանի չէ պատգամավոր դառնալու, որքան տղամարդը, ապա հարց է ծագում՝ ինչու են կանայք, տեղյակ լինելով նման հեռանկարի մասին, սկզբում ցուցակում ընդգրկվելու համաձայնություն տախս՝ դրանով վարկարեկելով իրենց և խոշընդուելով օրենքով նախատեսված գենդերային քվուայի մեխանիզմի գործադրումը:

Հատ դեպքերում պատգամավորական մանդատից հրաժարման իրական պատճառները տրամարանորեն չեն բացատրվում, համենայն դեպս, հենց այդ եզրակացությունն է թելադրում ինքնարացարկի դիմում ներկայացրած կին թեկնածուների ցուցակների վերլուծությունը:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ ինքնարացարկի դիմում է ներկայացրել պատգամավորի 102 թեկնածու, նրանցից 26-ը կանայք են և կազմում են 25%, ընդ որում, 24-ը ներկայացրել են այն կուսակցությունները, որոնք ընտրությունների արդյունքում պատգամավորական մանդատների թվով զրադեցրել են առաջին և երկրորդ տեղերը: Ի դեպ, եթե Հայաստանի հանրապետական կուսակցության ցուցակից դիմում ներկայացրած 14 կանանցից ընդամենք մեկն էր անցողիկ տեղում, իսկ մանացածը տեղ էին զրադեցնում 46 համարից հետո, ապա «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակից պատգամավորական մանդատից հրաժարված 10 կանանցից երեքը տեղ էին զրադեցնում մինչև անցողիկ 28-րդ համարը:

Վերլուծելով տվյալ ցուցակը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նախարարների և փոխնախարարների պորտֆելները լիովին կարող են ծանրակշիռ փաստարկ ծառայել խորհրդարանի պատգամավոր դառնալու հեռանկարից հրաժարվելու հարցում: Բայց մյուս դեպքերում մանդատից հրաժարվելու շարժանիքներն այնքան էլ ակներև չեն:

Բավական անակնելալ էր ՀՅԴ-ում ստեղծված գենդերային իրավիճակը: Ինչպես արդեն վերը նշել է, փորձառու և չորրորդ գումարման խորհրդարանի աշխատանքներում բավական ակտիվ Լիլիթ Գալստյանի և Ռուզաննա Առաքելյանի անունները ցուցակում ընդրկվեցին 10-րդ համարից հետո: Սիանգանայն ակնհայտ էր, որ կուսակցությունը ընտրությունների էր զնում շատ տեղեր ստանալու ակնկալիքով, ուստի կանխատեսվում էր, որ Լիլիթ Գալստյանը և Ռուզաննա Առաքելյանը կընտրվեն: Սակայն Սոցինստերնի անդամ և ՀՀ ընտրական օրենսգրքում 30%-անոց քվուա նացնելու օգտին ակտիվորեն հանդես եկող կուսակցության պարագայում անբացարելի են թե՛ կանանց դասավորությունը ցուցակում, թե՛ նրա հետագա գործողությունները: Մանդատից Արտյուշ Շահբայյանի հրաժարվելուց հետո, որը երրորդ տեղն էր զրադեցնում ցուցակում, ընտրված հնգյակ պիտի մտներ Կարինե Հարությունյանը, որը 6-րդ

տեղում էր: Սակայն մանդատից նրա հրաժարվելու շնորհիվ Դաշնակցությունը, որ համամասնական ցուցակում կանանց 32% էր ապահովել, ՀՀ Ազգային ժողով ներկայացավ բացառապես տղամարդկանցով:

Այսպիսով, ինքնարացարկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ անհրաժեշտ է ՀՀ ընտրական օրենսգրքում ներդնել այնպիսի մեխանիզմ, որը կվանի կուսակցությունների կողմից գենդերային քվոտայի խախտումը և բույլ չի տա, որ կանանց՝ որպես խորհրդարանում չներկայացված սեռի քվոտայով տեղեր գրադեցնեն տղամարդիկ:

Այս կարծիքն են հայտնում ֆոկուս խմբերի քննարկումների մասնակիցները՝ նշելով, որ իհմնական խնդիրը կապված է օրենքի բացի հետ: Խոսքն ընտրական օրենսգրքում գենդերային քվոտայի մասին դրույթի ձևակերպման մասին է: Ֆոկուս խմբերի մասնակիցներն առաջարկում են խնդիրը կարգավորել հետևյալ երկու միջոցով.

- կամ ամրագրել դրույթ այն մասին, որ կանայք պետք է կազմեն ոչ թե ընտրական ցուցակների, այլ մանդատ ստացածների 20%-ը,
- կամ ամրագրել դրույթ, որի համարձայն՝ մանդատից հրաժարված կնոջ տեղը պետք է գրադեցնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը⁸³:

Այդ միջոցները, ըստ կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների, կնապաստեն կուսակցական ցուցակների առավել պատասխանատու կազմմանը և կրացառեն ցուցակներում այսպես կոչված «պատահական» կանանց ընդգրկումը, որոնց իհմնական առաքելությունը կուսակցության համար անհրաժեշտ պահին մանդատից հրաժարվելն է:

Հարկ է նշել, որ մանդատից հրաժարվելու գործելակերպը կարող է ի չիք դարձնել քվոտաների յուրաքանչյուր բարձրացումը, ուստի տվյալ փուլում բոլոր առաջարկներն ուղղված էին հենց այդ մեխանիզմի չեզոքացմանը: Այդ տեսակետն են պաշտպանում նաև որոշ նոր ընտրված կին պատգամավորներ:

«Հստ իս, խնդիրն այն է, որ օրենքով պահանջվում է, որ կանանց բիզուր լինի կուսակցության կողմից ներկայացվելիք համամասնական ցուցակում, բայց ոչ թե Ազգային ժողովում: Այսինքն՝ ցուցակից ինքնարացարկ հայտնելու դեպքում պահանջ չի դրվում, որ ինքնարացարկի դիմած կին թեկնածուի փոխարեն նրա տեղը գրադեցնի մյուս կին թեկնածուն, ոչ թե նրան հաջորդող տղամարդը: Կարծում եմ՝ օրենքի բացը հենց այդ է, և մասնավորապես դա է պատճառը, որ ԱԺ-ում, ի տարրերություն օրենքով քվոտավորված ցուցակների, կանանց ներկայությունն այլքան էլ մեծ չէ: Նայում ենք ցուցակներին՝ իդեալական են կազմված, բայց...»⁸⁴:

Քվոտան չգործելու և ՀՀ Ազգային ժողովում կանանց ընդամենը 10%-ի ներկայության երկրորդ պատճառը, ֆոկուս խմբերի մասնակիցների կարծիքով,

83 Ֆոկուս խմբերի նյութերից:

84 Նախրա Կարապետյանի հետ հարցազրույցից (ՀՀԿ):

քաղաքական կամքի դեֆիցիտն է կուսակցություններում, երբորդ պատճառը ցուցակներում ընդգրկվելու չափանիշներն են, որոնք անհրաժեշտ է փոփոխել:

«Եթե չափանիշը ոչ թե մարդու մասնագիտական կամ բարոյական արժանիքներն են, այլ փողը, ունեցվածքը, դիրքը, ապա հազիվ թե կանանց համար տեղ գտնվի, քանի որ մեզանում կին օլիգարխներ չկան: Դա շատ հստակ տեսանելի է մեծամասնական ընտրություններում, որոնց դեպքում կանայք հիմնականում պարտվեցին «փողատեր» մրցակիցներին: Հնարավոր է, որ եթե կանանց ներկայացվածության քվոտաները չիննեին, խորհրդարանում առհասարակ ոչ մի կին չիններ»⁸⁵:

Այն թեզը, թե քվոտայի բացակայության դեպքում կարող էր ավելի վատ լինել, հաստատվեց նաև 2007 թ. խորհրդարանական ընտրությունների գործընթացում: Այդ հանգամանքն ապացուցում է, որ անհրաժեշտ է ոչ միայն կատարելագործել քվոտան, այլև բարձրացնել: Կարծիք կա, որ քվոտայի արմատական բարձրացումը կնպաստի դրա իրականացումը խոչընդոտող բացասական գործելակերպի վերացմանը:

Քվոտայի՝ որպես կանանց առաջնահան ինստիտուցիոնալ հնարավորության կիրառման անհրաժեշտությունն ապացուցվում է վերջին 10 տարիներին երկրի խորհրդարանում կանանց ներկայացվածության շարժնթացով:

| Գումարման տարերիվը | Կին պատգամավորների ներկայացվածությունը |
|-----------------------------------|--|
| 1985 Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհուրդ | 35,6% |
| 1990 ՀՀ Գերագույն խորհուրդ | 3,5% |
| 1995 ՀՀ Ազգային ժողով | 6,3 % |
| 1999 | 3,1 % |
| 2003 | 5,3 % |
| 2007 | 9,2 % |
| 2012 | 10,7 % |

Համեմատության համար ասենք, որ Խորհրդային Հայաստանի 1985 թ. Գերագույն խորհրդում կանայք կազմել են 35,6%:

1990 թ. միայն մեծամասնական ընտրակարգով ձևավորված Հայաստանի Գերագույն խորհրդում 260 պատգամավորներից միայն 9-ը կամ 35%-ն էին կանայք:

Հայաստանի Ազգային ժողովի 1995 թ.⁸⁶ առաջին գումարման կազմում 190 մանդատից կանանց բաժին հասան 12-ը կամ տեղերի 6,3%-ը: Նրանցից 8-ը

⁸⁵ Ֆոկոս խմբում կին լիերների ֆորումի համադասող խորհրդի նախագահ Դուստրիկ Սլիմիքարյանի հայտնած կարծիքից:

ընտրվել էին «Շամիրամի» ցուցակով, իսկ մնացած 4-ն անցել էին մեծամասնական ընտրակարգով:

Կին պատգամավորներն ամենից քիչ են ներկայացված եղել 1999թ.¹ երկրորդ գումարման ԱԺ-ում. 131 պատգամավորներից միայն 4-ն էին կին, ինչը կազմում էր ընդհանուր տեղերի 3%-ը: Ընդ որում, նրանցից 2-ն ընտրվել են մեծամասնական համակարգով:

2003 թ.² երրորդ գումարման Ազգային ժողովում կին պատգամավորների թիվը հասել էր 7-ի (5,3%) 131-ից, գործել է ըստ էռթյան անհախաղեալ խտրական բնույթի 5%-անց քվոտան կանանց համար, որ ամրագրված էր ընտրական օրենսգրքում: Նրանցից մեծամասնական համակարգով ընտրվել է ընդհանուր մեկ կին:

2007 թ.³ չորրորդ գումարման խորհրդարանում գործել է արդեն 15%-անց քվոտան, և մանդատ է ստացել 12 կին կամ 9,2%-ը: Մեծամասնական ընտրակարգով խորհրդարան չի անցել և ոչ մի կին:

2012 թ. ընտրությունների ժամանակ գենդերային քվոտան մեծացել է մինչև 20%, որի արդյունքում հինգերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացվել են 14 կին պատգամավորներ (10,7%): Ընդ որում, նրանցից երկուսն ընտրվել են մեծամասնական ընտրակարգով:

Այսպիսով, անցած 20 տարվա ընթացքում կանանց թիվը Հայաստանի խորհրդարանում մեծացել է ընդհանուր 7%-ով, ընդ որում, անգամ նման անհնանա աճն ապահովվել է համամասնական ընտրակարգով գենդերային քվոտաների կիրառման շնորհիվ: Հաշվի առնելով կանանց ներկայացվածության նման շարժնթացը, կարելի է կանխատեսել, որ նման տեմպերով նույն այդ 20%-ի քվոտային հասնելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 25 տարի: Ընդամենը, աշխարհի խորհրդարաններում այսօր արդեն կանանց թիվը կազմում է միջինը 19,5%, իսկ կանանց ներկայացվածության ամենացածր ցուցանիշը իշխանության օրենսդիր մարմնում արձանագրվել է արաբական երկրներում՝ ընդհանուր 11,3%:

Քվոտաների հակառակորդները, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները ֆոկոս խմբերում, երկու փաստարկ են բերում: **Առաջին՝** «շտապելու կարիք չունենք», և քվոտան պետք է բարձրացնել աստիճանաբար: Հասարակության զարգացման գործնթացների համատեքստում, որը արդի աշխարհում անմիջականորեն կապվում է կանանց քաղաքական մասնակցության հետ, այդ բանաձևը չի արդարացնում: **Երկրորդ՝** «քվոտաների ճանապարհով խորհրդարանում կարող են հայտնվել նաև կրվորուիհիներ»: Ուշագրավ է, որ բոլոր կուսակցությունների կանանց մասնակցությամբ նախընտրական քանավեճերի ընթացքում⁸⁶ նման հարցադրմանը ազատական քաղաքական ուժի՝

86 Նախընտրական քանակեթերը՝ «Քանավիճություն են միայն կանայք» ձևաչափով, կազմակերպել է Կին լիդերների համաժողովը նախընտրական քարոզարշավի ժամանակ NDI-ի աշակերտացությամբ:

ՀԱԿ-ի երիտասարդ ներկայացուցիչ Լիլիթ Մակունցը պատասխանել է. «Իսկ ի՞նչ վաս է, եթե խորհրդարանում կրթվորուիիներ նույնպես լինեն»: Եթե հաշվի առնենք, որ այս պատասխանն արժանացավ լարանի ծափահարություններին, ապա կարելի է խոսել հասարակական կարծիքի որոշ առաջընթացի մասին, եթե քվուտաների հակառակորդների կողմից տարածվող կաղապարը ըմբռնում չի գտնում երիտասարդ սերնդի կանանց շրջանում, որոնք ժողովրդավարական արժեքներն ընկալում են ավագ սերնդից միանգամայն տարբեր դիտանկյունով:

6. Կանանց խորհրդարան մտնելու սցենարներ

Խորհրդարանի համար քվեարկվող կանանց և ՀՀ Ազգային ժողովի կին պատգամավորների կենսագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք մեծ մասամբ համապատասխանում են քաղաքականություն մուտք գործելու հետխորհրդային տարածության համար տիպական սցենարներին: Ընդ որում, ընտրությունների շարժընթացում որոշակի փոփոխություններ ու միտումներ են նկատվում:

6.1. «Քաղաքականությունը որպես մասնագիտական առաջխաղացման շարունակություն»

2012 թ. ընտրություններում առավել տարածված է եղել «քաղաքականությունը որպես մասնագիտական առաջխաղացման շարունակություն» սցենարը: Դա բնորոշ է այն կանանց, որոնք նախքան խորհրդարան մտնելը հաջող մասնագիտական կարիերա են ունեցել, լինի դա պետական ծառայության, գործարար թե այլ ոլորտում: Ընդ որում, քննավ պարտադիր չէ, որ նրանք հենց սկզբուն մասնագիտական կարիերան դիտեն որպես քաղաքական գործունեության պլացմարմ: Նման սցենարն իրականացնելիս հնարավոր են հետևյալ տարբերակները:

6.1.1. Ընդգրկում կուսակցական ցուցակներում դեկավար պաշտոնից

Նման կանանց թիվը մեծ էր իշխող Հանրապետական կուսակցության ցուցակներում, սակայն նրանք ի սկզբանե մտադիր չեն եղել պատգամավոր դառնալ: Նրանց դերը կուսակցական ցուցակների ներկայացուցչականությունն ապահովելն է եղել, ինչպես հենց կուսակցություններն են քացարում, ընտրողին «քիմի անդամներին» ներկայացնելու համար: Բացառություն են կրթության ոլորտի դեկավար պաշտոններ զքաղեցնող կանայք, որոնք առավելապես դպրոցի տնօրենն են: Կրթության ոլորտի դեկավար բազմաթիվ թեկնածուներից, որոնք ընդգրկված են կուսակցական ցուցակներում, խորհրդարան մտան միայն երկուար՝ Ռուզաննա Սուրայյանը Հանրապետական կուսակցությունից, որը դպրոցի տնօրենի պաշտոնը համատեղում էր կուսակցության քաղխորհրդի անդամության հետ, և մեծամասնական ընտրակարգով՝ Արտաշատի դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը Հանրապետական կուսակցությունից:

6.1.2. Մուլյք քաղաքականություն հաջող մասնագիտական կարիերայի միջոցով

Այս պարագայում առավել գործում ունի երկու գործերակ՝ քաղաքական լրագրողի կարիերան և իրավաբանի կարիերան։ Երկու դեպքում էլ անցումը քաղաքականություն գործունեության արևարական փոփոխություն չէ, պրամաքանորեն հիմնավորված է և կարող է դիմում որպես կարիերայի աճ։

Քաղաքական լրագրությունից խորհրդարան են մտել ԱԺ պատգամավորներ Նախրա Զոհրաբյանը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից, Մարգարիտ Եսայանը Հանրապետական կուսակցությունից, և առաջադրվել են մեծամասնական ընտրակարգով Սարիկ Սեյրանյանը՝ «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր, Գոհար Վեզիրյանը՝ «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի թղթակից, Գայանե Առուստամյանը՝ «Ա1+» կայքի լրագրող, և Հայաստանի դեմոկրատական կուսակցության ընտրացուցակով՝ «Ավանգարդ» թերթի խմբագիր Զուլիետա Մարտիրոսյանը։

Կին լրագրողների նման «մակընթացությունը» քաղաքականությունում բացատրվում է Նախրա Զոհրաբյանի հաջող օրինակով, որն ընտրվել է ՀՀ Ազգային ժողովի եվրոպական մշտական հանձնաժողովի դեկանար և անցած հինգ տարիների ընթացքում կարողացել է կայանալ որպես պատգամավոր։

Խորհրդարանի համար առաջադրված բոլոր լրագրողները քաղաքական գիտելիքների բավականաշափ պաշար ունեին, լավատեղյակ էին ներքաղաքական, այդ թվում և անդրկուլյայան գործնքացներին, լավ էին պատկերացնում սոցիալական խնդիրները։ Բացի այդ, մասնագիտական գիտելիքների շնորհիվ շահեկանորեն տարբերվում են իրենք իրենց ներկայացնելու հմտությամբ, տիրապետում են փիար տեխնոլոգիաներին և ինքնազնահատականի հարցում խնդիր չունեն։ Իրենց մուտքը քաղաքականություն այդ բեկնածուները համոզիչ են հիմնավորում և միևնույն մոտեցմանք։

«Ծուրջ երկու տասնամյակ աշխատում եմ մամուլում, վերջին 8 տարիները՝ որպես «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր։ Այսինքն՝ ակամայից քաղաքականության մեջ եմ և զրադարձ եմ քաղաքականությամբ, ըստ էության՝ ամենօրյա ռեժիմով։ Եվ այդ առումով մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին իրականում ընդամենը քաղաքականության ձևաչափի փոփոխություն է, իսկ պատգամավորական մանդատը՝ քաղաքականության գործիքի փոփոխություն»⁸⁷։

«Ամրող աշխարհում կա այս միտումը, երբ երկարամյա լրագրողները որոշում են նորություններ լուսարանողից, նորություններ հայրայրողից դառ-

87 Սարիկ Սեյրանյանի հետ հարցազրոյցից։

նաև այդ նորությունների ստեղծողը: Ես լրագրող եմ աշխատում արդեն շատ երկար, և իմ կյանքում եկավ մի պահ, երբ որոշեցի ոչ թե վագել նորությունների հետևից, այլ մասնակցել դրանց ստեղծմանը, քաղաքականություն լուսարանուից դառնալ այդ քաղաքականության մասնակիցը, ինչու ոչ, նաև ստեղծողներից մեկը: Եվ պարզապես ուրախ եմ, որ ինձ տրվեց այդ հնարավորությունը⁸⁸:

«Պատգամավորության թեկնածու իմ առաջադրվելու մեջ զարմանալի ոչինչ չկա, անցալ անգամ միայն տարիքային ցենզի համար չառաջադրվեցի: 10 տարի շարունակ ես զրաղվել եմ հրապարակային գործունեությամբ: Իմ բազմաթիվ գործընկերներից ես տարբերվել եմ նրանով, որ հաճախ քաղաքացու խնդիրը դարձել եմ իմ անձնական խնդիրը և արել եմ հնարավոր ամեն բան՝ լուծելու այդ խնդիրը, իսկ ավելի հաճախ՝ լուծում պարտադրելու համապատասխան շրջանակներին՝ պետական չինովական ու պաշտոնյաներին: Կարծում եմ՝ ես վաստակել եմ մեծամասնական ընտրակարգով առաջադրվելու իրավունքը: Ինձ այդ լիազորությունը տվել է հասարակությանը, և այս առումով ես հաշվետու եմ բացառապես հասարակությանը: Ես, կարելի է ասել, հասարակության միացյալ թեկնածու եմ...»⁸⁹:

Իրավաբանական կրթությունը և փաստաբանի կարիերան, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, նույնպես կանանց համար քաղաքականություն մուտք գործելու լավ ցատկահարթակ են: Այսպես, «Միավորված հայեր»կուսակցության ներկայացուցիչները, որի ցուցակներում ընդգրկված կանայք 38% էին կազմում, նախընտրական քարոզարշավի ժամանակ հայտարարեցին, որ կուսակցության անդամների 70%-ը իրավաբան են⁹⁰:

Խոսուն է Ազգային ժողովի պատգամավոր Զարուիի Փոստանջյանի օրինակը, որը քաղաքականություն մտավ որպես կայացած փաստաբան: Այս գումարման խորհրդարանում ավելացավ ևս երկու փաստաբան՝ Արփինե Հովհաննիսյանը Հանրապետական կուսակցությունից և Էլինար Վարդայանը «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունից, որոնք իրավաբանական կրթություն ունեն: Արփինե Հովհաննիսյանի իրավաբանական կարիերայի սկիզբը կապված է պետական կառույցների հետ. աշխատանք ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմում, ՀՀ նախագահի աշխատակազմում, ՀՀ Ազգային ժողովում որպես նախագահի խորհրդական, ի լրումն՝ ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հաշվի առնելով նրա տարեկան էլ չկա՝ նրա կարիերան կարելի է սրբնաց համարել: Եթե նկատի ունենանք նաև դաշնաբացների ունկնդրումը Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցում, ապա կարելի է ասել, որ գործ ունենք խորհրդարան կնոջ մուտքի իդեալական սցենարի հետ:

88 Մարգարիտ Եսայանի հետ հարցազրույցից:

89 Գոհար Վեզիրյանի՝ Slaq.am-ին տված հարցազրույցից:

90 Գայանե Անդրեսյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից:

«Ավարտել եմ Զեմման Հասրայիանի ղեկավարած գենդերային դպրոցներից մեկը: Ըստ իս, նման դպրոցների դերը շատ կարևոր է. նրանք հնարավորություն են տալիս ոչ միայն հավելյալ գիտելինքներ ձեռք բերելու գենդերային խնդիրների մասին, այլև օգնում են ավելի լավ հասկանալու գենդերային հարաբերությունները հասարակության մեջ, ինչպես նաև տալիս են հնարավորություն դիտարկելու ցանկացած հարցը այդ տեսանկյունից»⁹¹:

Ելինար Վարդանյանը փաստաբանական գործը համատեղել է հասարակական գործունեության հետ, և այդ առումով նրա մուտքը քաղաքականություն համադրում է երկու սցենար՝ մասնագիտության միջոցով և հասարակական սեկտորի միջոցով: Բավական տարածված սցենար այն կուսակցությունների համար, որոնք իրենց շարքերն են ներգրավում այն կանանց, որոնք դրսեորզել են հասարակական սեկտորում կամ կայացել են որպես հասարակական գործիչ: ՀՀ անցյալ գումարման Ազգային ժողովում նման սցենարի վառ օրինակ էր Լարիսա Ալավերդյանը: Մի կողմից՝ նման փորձը խոսում է հասարակական սեկտորի օգտին, որը կանանց հնարավորություն է տալիս դրսեորզելու իրենց ունակությունները, մյուս կողմից՝ վկայում է կուսակցությունների «սպառողական» վերաբերմունքի մասին հասարակական կազմակերպությունների նկատմամբ, որոնց հետ համագործակցությունը սահմանափակվում է այդ սեկտորի լիդերների ներգրավմամբ իրենց ցուցակներում:

6.1.3. Մուլքը «Հզզային ժողով մասնագիտական շահերն առաջ դրանք ներկու նպարակով»

Այս խմբին կարելի է վերագրել այն կանանց, որոնք քաղաքականություն են մտել գործարար ոլորտից և բացահայտ հանդես են զայիս քիզիսի շահերի պաշտպանությամբ: Նոր գումարման խորհրդարանում այդպիսին է Մարինե Մարաբյանը, որը քվեարկել է մեծամասնական ընտրատարածքում «Ինտերնեյշնալ Մասիս տորակո» ընկերության աջակցությամբ, և որի թեկնածությունը պաշտպանել է Հանրապետական կուսակցությունը: Իր նախընտրական քարոզարշավում Մարինե Մարաբյանը խոստացել է պաշտպանել հայրենական արտադրողի շահերը: Այդ սցենարը նոր չէ և հաջողությամբ փորձարկվել է 2003 թ. ընտրությունների ժամանակ, երբ խորհրդարան մտավ քիզմես մենեջմենի երկու ներկայացուցիչ՝ Արմինե Հովհաննիսյանը ՀՅԴ-ից և Հոհիսիմե Ավետիսյանը Հայաստանի աշխատավորների կուսակցությունից: Վերջինս, ի դեպ, «Քարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցալով առաջարկվել է նաև 2012 թ. ընտրություններում, բայց ինքնաբացարկ է տվել: Նախորդ գումարման խորհրդարանում այդ սցենարի ներկայացուցիչը Գոհար Ենոքյանն էր: Ժամանակին քաղաքականություն մտավ Հերմինե Նադյալյանը՝ լինելով Հայաստանի ձեռներեցների միության նախագահը և հետագայում շարունա-

91 Արփինե Հովհաննիսյանի հետ հարցագրույցից:

կեց իր կարիերան Հանրապետական կուսակցությունում ու խորհրդարանում. կուսակցությունում նա ղեկավարում է Կանանց խորհուրդը, իսկ քաղաքականության մեջ ընտրվել է հինգերորդ գումարման Ազգային ժողովի փոխխոսնակ:

6.2. «Քաղաքականությունը որպես մասնագիտություն»

«Քաղաքականությունը որպես մասնագիտություն» սցենարը բնորոշ է այն կանանց, որոնք ակտիվություն են դրսնորել մանկական տարիներից, լավ կուսակցական դպրոց են անցել և վառ արտահայտված լիդերական որակներ ունեն:

6.2.1. Պարզամավորի թեկնածուների ցուցակներում այն կանանց ընդգրկումը, որոնք ակրիպ են եղել դեռևս խորհրդային ժամանակներից կոմերիդիուրյունում, պրիմիտրյունում, կուսակցությունում:

Այդ սցենարը բնորոշ է եղել ազգային ժողովի առավել վաղ գումարումներին, կանանց այդ կոհորտայի ներկայացուցիչներից նոր խորհրդարանում չկան, չնայած այն հանգամանքին, որ ընտրացուցակներում ննան կանայք եղել են: Քաղաքականությունից հեռացել են նաև այն կանայք, որոնք քաղաքական կարիերա են արել անկախության ավիքի վրա և քվեարկվել են անցած գումարումներում. Կարինե Դանիելյան, Հրանուշ Խառայյան: Բոլորն ել շարունակում են ակտիվություն դրսնորել հասարակական սեկտորում:

Հասարակական սեկտոր հեռանալու մասին են հայտարարել շատ կանայք՝ ինքնարացարկ հայտնելով տարրեր պատճառներով. Կարինե Հակոբյան և Լարիսա Ալավերդյան («Ժառանգություն» կուսակցություն), Սուսաննա Աբրահամյան («Օրինաց երկիր» կուսակցություն) և այլն: Դա վկայում է, որ այս կանայք որոշակի ներուժ և կարիերայի նպատակառություն ունեն հանրային ոլորտում, լինի դա քաղաքականություն թե հասարակական գործունեություն:

6.2.2. Այն կանանց մուտքը խորհրդարան, որոնք կուսակցական կարիերա են արել վերջին պար պարունակություն

Ներկայիս գումարմանը բնորոշ է այն կանանց մուտքը քաղաքականություն, որոնք կուսակցական կարիերա են արել վերջին 10 տարում: Նրանցից խորհրդարանում ներկայացված են Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության առաջնորդ Լյուդմիլա Սարգսյանը, «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ Հեղինե Բիշարյանը, «նոր սերնդի» ներկայացուցիչներից՝ ՍԻԱԿ կուսակցության ղեկավար պաշտոն գրադեցնող Նաիրա Կարապետյանը, որը խորհրդարան մտավ ՀՀԿ-ի ցուցակով:

«Արդեն չորս տարի է՝ հանդիսանում են ՍԻԱԿ-ի ղեկավար մարմնի անդամ, որը քաղաքական դաշտում առանձնանում է քաղաքական սերնդափոխության

բացառիկ առաջարկով, որն այսօր տեղ է գտել ՀՀ նախագահ *Սերժ Սարգսյանի* նախընտրական ծրագրում և ակտիվորեն իրականացվում է նրա կողմից: *Սեր կուսակցության* առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ *ՄԻԱԿ-ն* ուժեղ կադրային ռեսուրս է, բավական լուրջ երիտասարդ մասնագետներ ունի տարրեր ոլորտներից, և մեր՝ որպես ՀՀԿ-ում *ՄԻԱԿ-ի* պատվիրակների այսօրվա առաքելությունը Հանրապետական կուսակցության խորհրդարանական խմբակցությունում մեր կուսակցության տեսակետներն ու մոտեցումները տեղ հասցնելն է»⁹²:

«Բնույթով սոցիալ-դեմոկրատ եմ, և *ՄԻԱԿ-ն* ամենահոգեհարազատն էր ինձ համար: Կուսակցության շարքերը մտել եմ 2003-ին, յոթ ամիս անց դարձա *ՄԻԱԿ* ատենապետ: Շատ դժվար ժամանակահատված էր: Տղամարդկանց համար հեշտ չէ ընդունել կին լիդերի գործունեությունն ու գոյությունը: Ավագրնական շրջանում վարչությունը, որի առաջարկությամբ դարձա ատենապետ, մարդիկ էին, որոնք ինձ գործի մեջ տեսել էին և համարեցին, որ ես այն մարդն եմ, որը կարող է ստանձնել այդ պարտականությունները: Այդ ժամանակ ինչ-որ չափով պատրաստ չէի մտնելու մեծ քաղաքականություն, որով հետև կուսակցական առաջխաղացման ճանապարհը շատ կարծ տևեց: Բայց ինձ ընտրեցին, երևի այդ պահին ամենահարմար մարդը ես էի: *Աշխատելուն զուգահեռ շատ բաներ սովորում էի»⁹³:*

Կուսակցության շարքերում երիտասարդ, լավ կրթություն ստացած կանանց ներգրավման սցենարը, որ հազվադեպ չէ արտասահմանում և առաջին անգամ կիրառվել է նախորդ ընտրություններում, բնորոշ է նաև 2012-ի ընտրություններին: Նման կանանց ճանապարհը դեպի քաղաքականություն անցնում է կուսակցությունների երիտասարդական միություններով, շատ կուսակցություններ հաճույքով են ընդգրկում նրանց իրենց ընտրական ցուցակներում: Սակայն դժվար է վստահաբար խոսել քաղաքական կարիերա անելու նրանց նպատակաւորվածության մասին, նրանց անդամակցությունը կուսակցություններին կարող է կյանքի ճանապարհի որոնման մասը, հանրային քաղաքանության մեջ իրենց դրսորենու փորձ լինել: Նրանց շարքում շահեկանորեն առանձնանում են հատակ նպատակադրված երիտասարդ կանայք, որոնք գենդերային կրթություն են ստացել և բարձրածայնում են իրենց պատկերացումներն այդ խնդիրների մասին:

Այդ տեսանկյունից տպավորիչ է Նվարդ Մանասյանի օրինակը: Նա ուսումնասիրության ընթացքում միակ թեկնածուն էր, որը չերկնչեց արտաքերելու «Փեմինիզմ» բառը՝ իրեն դիտելով ֆեմինիստական շարժման համակիրների թվում: Թեկնածուի դիրքորոշումը ձևավորվել է ՀՅԴ-ի սոցիալիստական գաղափարախոսության և գենդերային հիմնախնդիրների անձնական խոր գիտելիքների հիման վրա:

92 Նախրա Կարապետյանի հետ հարցազրույցից:

93 Լյուդմիլա Սարգսյանի հետ հարցազրույցից:

«1990-1995 թթ. սովորել եմ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի կիրեռնետիկայի ֆակուլտետում: Մագիստրոսական ուսումը շարունակել եմ Հայաստանի ամերիկյան համալսարանի քաղաքագիտության դպրոցում, ապա երկրորդ մագիստրոսական աստիճանը ստացել եմ ԱՍՆ Ցինցինատիի համալսարանի պլանավորման դպրոցում՝ մասնագիտանալով հանրային քաղաքականության և տնտեսական զարգացման ոլորտում: 2000-ից աշխատել եմ ՀՀ կրթության և գիտության նախարարությունում որպես առաջատար մասնագետ, ապա՝ նախարարի օգնական, որից հետո աշխատել եմ Համաշխարհային բանկում որպես կրթական ծրագրերի խորհրդատու: Այնուհետև վերադարձել եմ ՀՀ կրթության և գիտության նախարարություն և գործել որպես նախարարի խորհրդական:»

2007-ից դասավանդում եմ Երևանի պետական լեզվաբանական համալսարանում և ներկայումն ունեկավարում եմ համալսարանի որակի ապահովման կենտրոնի աշխատանքները: 2009-ից Եվրահանձնաժողովի կողմից Տեմպուս ծրագրի շրջանակներում ձևավորված Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խմբի անդամ եմ: Բացի այդ, դասավանդում եմ Երևանի տնտեսագիտական համալսարանում:

Դասավանդման հիմնական ուղղությունները՝ կրթության քաղաքականության և գեներացիային հարցեր քաղաքականության մեջ: Դրանք ոչ միայն կանանց վերաբերող հարցեր են, այլև բոլոր այն շեղումները, կարծրատիպային-վարքագծային սխեմաները, որոնք հանգեցնում են սահմանափակումների: Օրինակ՝ ինչպես կարելի է քաղաքականության մեջ շտկել այս խնդիրները, որոնք բերում են տնտեսական անհավասար պայմանների, իրավունքների իրացման անհավասար հնարավորությունների և այլն: Դրանք շատ կարևոր հարցեր են այս մասնագետների համար, որոնք վաղը ստանձնելու են այդ ոլորտի կառավարումը»:

6.3. «Քաղաքականությունը որպես հետևանք»

6.3.1. *Մուգը քաղաքականությունն որպես քվորայի արդյունք*

Քվոտայի արդյունքում քաղաքականություն մուտք գործելու սցենար, այսինքն՝ եթե առաջադրումը տեղի է ունենում կուսակցական ցուցակներով կանանց ներկայացվածության պարտադիր քվոտան լրացնելու անհրաժեշտությամբ: Ցավոք, այդ սցենարը բնորոշ է այն կանանց, որոնց ակտիվությունը թելադրվում է տղամարդկանց կողմից: Հենց այդ կանայք են, որպես կանոն, որ համաձայնում են ինքնարացարկ տալ, և այդ առումով նրանց քաղաքականություն մուտք գործելու մասին կարելի է խոսել մեծ վերապահությամբ: Նման կանայք կուսակցություններում ապահովում են հնագանդ ու հավատարիմ մեծամասնությունը, նրանք քաղաքականության մեջ առաջխաղացման կողմնորշում չունեն, բայց միշտ պատրաստ են ենթարկվելու իրենց առաջադրող

կուսակցական դեկավարության որոշումներին: Նման իրավիճակը հասարակությունում գոյություն ունեցող խորական գործելակերպի հետևանք է, որի առկայությունն իրենք՝ կանայք, չեն գիտակցում:

6.3.2. Այս կամ չափով ճանաչում ունեցող կանանց ներգրավումը

2012 թ. ընտրություններում երկու նոր սցենարներ ի հայտ եկան, որոնք, եթե խորությամբ դիտարկենք, վերը թվարկվածների տարատեսակ են: Խոսքը բլոգեր Իզաբելլա Աբգարյանի առաջադրման մասին է «Ժառանգություն» կուսակցության ցուցակում և երգչուի Շուշան Պետրոսյանի առաջադրման՝ Հանրապետական կուսակցության ցուցակում: Երկու դեպքում էլ այս կամ այն չափով գործ ունենք թեկնածուի հանրաճանաչությունը կուսակցության շահերին ծառայեցնելու հետ:

Անշուշտ, ընտրացուցակներում ստեղծագործող նտավորականության ներգրավումը հազիվ թե կարելի է նոր սցենար անվանել, Շուշան Պետրոսյանի պարագայում նորությունը հայրենական իրականության համար սուկ շոու բիգ-Բեսի ներկայացուցիչ ներգրավումն էր, ինչպես նաև այդ գործընթացն ուղեկցող որոշ էպատաժը: Ուշագրավ է այդ առումով լրատվամիջոցներում բարձրացած ալիքը, որը փորձում էր պարզել՝ արդյոք շոու բիգնեսի մյուս ներկայացուցիչները նո՞յնային պատգամանակոր դասնալու ցանկություն ունեն:

Ինչ վերաբերում է Իզաբելլա Աբգարյանին, ապա նրա համբավը սահմանափակված էր սոցիալական ցանցերով, և նրա ներգրավումը կուսակցական ցուցակում կարելի է դիտել որպես կուսակցության՝ սոցիալական ցանցերն իր կողմը գրավելու փորձ: Այդ տարածության համար պայքարը ժամանակակից ընտրությունների բնորոշ գիծ է ոչ միայն Հայաստանում, և կարելի է ենթադրել՝ մեծ է հավանականությունը, որ ապագայում այն էլ ավելի կուժեղանա:

7. Կանանց քաղաքականություն մուտք գործելու մոտիվացիան

Խորհրդարան մտնելու համար քվեարկվող կանանց մոտիվացիաների ուսումնասիրության համար առնվազն երեք փոխկապակցված հարցեր էին առաջադրվել.

- ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված կին պատգամավորների ակտիվությունն ազդե՞լ է հասարակական կարծիքի վրա՝ կանանց քաղաքական ակտիվության մասին պատկերացումների առումով:
- Ինչո՞ւ պետք է կանայք ներկայացված լինեն քաղաքականության մեջ (այս հարցն ուղղակիորեն չի տրվել, բայց ուսումնասիրության ընթացքում ֆոկուս խմբերի մասնակիցները և հարցազրույց տվողները քննարկել են այս հիմնախնդիրը սեփական նախաձեռնությամբ):
- Ի՞նչ շարժառիթներով են առաջնորդվում խորհրդարանի համար քվեարկվող կանայք, և տարբերություններ կա՞ն տղամարդկանց մոտիվացիայից:

Եթե համեմատենք այդ հարցերի պատասխանները 2007 թ. հետազոտության արդյունքների հետ, ապա հայեցակարգային առումով, բացի օրենսդիր մարմնում կանանց ներկայության անհրաժեշտությունը հիմնավորող առավել տարածված փաստարկներից, որևէ նոր բան չի ասվել: Ընդ որում, այդ հարցի թե՛ պատգամավորի թեկնածուների, թե՛ ընտրողների պատասխանները փաստորեն համընկնում էին: Երկու դեպքում էլ շեշտադրվում էր այն, որ կանանց մուտքը պայմանավորում է որոշակի դրական փոփոխություններ. մքննուրութի բարեկավում խորհրդարանում, առավել կշռադատված որոշումներ, արդարություն, ուշադրություն սոցիալական հիմնախնդիրներին:

Փաստասխանների վերլուծությունը վկայում է, որ այն փաստարկները, որոնք երկար տարիներ ակտիվորեն թերում էին լոկ կանանց կազմակերպությունները, իրականում արձագանք են գտնում հասարակության մեջ և յուրացվում են շատ կանանց կողմից, որոնք քաղաքականության մեջ են կամ ձգտում են մուտք գործել քաղաքականություն:

«Ես կողմ եմ, որ մեծ թվով կանայք լինեն Ազգային ժողովում, որովհետև մեր երկրում պակասում են կին քաղաքական գործիչները, հասարակությունում կան հարցեր, որոնք ավելի ռացիոնալ պատասխան կտանակ կանանց կողմից: Եվ, վերջապես, ես այն մտքին եմ, որ հայ կանայք ավելի աշխատանք ու ազդիվ են, քան տղամարդիկ, առավել ևս՝ մեր Ազգային ժողովում»:

«Հատկապես կանայք են ի գորու շեզորացնելու բախումները, առողջ բանականության չափարաժն մտցնելու այն ժամանակ, երբ տղամարդիկ չափն անցնում են, և վեճն անլուծելի է թվում»:

«Չեմ թերազնահատում տղամարդուն, բայց կինն ավելի հավասարակշռված է, ավելի հանգիստ, ավելի համբերատար: Իսկ սրանք կարևոր հատկանիշներ են: Եթե խորհրդարանում շատ կանայք լինեն, խորհրդարանի «դեմքը» կլինի ավելի գեղեցիկ»:

«Կողմ եմ, իհարկե, որ կանայք լինեն, բայց ոչ շատ մեծ թվով: Կանանց մտածելակերպը, աշխարհներակարումն ու զգացմոնքային դաշտն ուրիշ է, ըստ այդմ՝ մեկ այլ կողմից կնայեն տվյալ հարցին կամ խնդրին: Բացի այդ, մեր խորհրդարանը փոփոխության և նորության կարիք ունի, իսկ պատգամավոր տղամարդիկ, մանավանդ նման որակի, դժվար թե կարողանան ճիշտ և առողջ որոշումներ ընդունել»:

«ԱԺ-ն էլ, կարծում եմ, կաշխուժանա, բանավեճեր կլինեն, պատասխանատվորյունը կմեծանա...»⁹⁴:

94 Ֆոկոս խմբերի մասնակիցների կարծիքներից:

Գրեթե նույն մտածողությամբ են կին թեկնածուների պատասխանները.

«Չաղաքականության մեջ կնոց դերը և քարձու է, և՝ կարևոր, որովհետև կինը շատ ավելի հանդուրժողական է, կինը շատ ավելի ճշուն մտածելակերպ ունի և առանձին հարցերը լուծելիս կինը շատ արագ կարող է կողմնորոշվել»⁹⁵:

«Կանայք քաղաքական դաշտ կրերեն սոցիալական արդարություն, հավասարակշռվածություն, բազմազանություն, տեսանկյունների բախում: Հասարակության 50%-ը չի մասնակցում որոշումների կայացմանը և քննարկումներին: Փաստորեն, մենք 50%-ով աղքատացել ենք, քանի որ հասարակության մի մասի տեսանկյունները չեն կարող միշտ ճիշտ լինել»⁹⁶:

«Եկել եմ քաղաքականություն, որովհետև ուզում եմ, որ այն ավելի մարդկային կերպարանքով լինի, ավելի բարոյական: Ապրենք մի երկրում, որտեղ սահմանադրությունն օրենքը է բոլորի համար, երկիր, որտեղ օրենքը կպաշտպանի մարդուն: Ուզում եմ, որ քաղաքացին պահանջատեր լինի ու հետևողական իր պահանջատիրությանը, որ հասկանա՝ յուրաքանչյուր մարդ ավելի մեծ արժեք ունի, քան եկող ու գնացող իշխանությունները»⁹⁷:

Նույն համոզման են սոցիոլոգ փորձագետները.

«Կանայք պետք է ավելի շատ ընդգրկվեն խորհրդարանում, որովհետև նրանք ավելի շատ դրական լիցքեր են բերում: Տղամարդիկ ավելի ազրեսիվ կեցվածք ունեն, հաճախ՝ կովարար, այս առումով կանայք կարող են մքնարկություր մեղմացնող դեր ունենալ ոչ միայն Ազգային ժողովում, այլև ընդհանրապես քաղաքական կյանքում և գործընթացներում»⁹⁸:

Քաղաքականության մեջ կանանց ներկայությունն արդարացնող առավել տարածված փաստարկի հիմքում համեմատությունն է ընտանիքում նրանց դերի հետ: Սա, ըստ էության, կնոջ դերի վերաբերյալ կարծրատիպային պատկերացումները նրանց քաղաքական ակտիվության օգտին գործադրելու փորձ է: Այս փաստարկին են դիմում և ընտրողները, և՝ թեկնածուները:

«Իհարկե, հաճելի կլինի, եթե կանայք շատ լինեն Ազգային ժողովում, կանանց դերը մեծ է ամենուր: Հատկապես ընտանիքում կնոց դերն անզնահատելի է՝ ընտանիքի կազմակերպումից, երեխայի ծնունդից մինչև նրանց դաստիարակություն, կրություն, մինչև... Իսկ պետությունն էլ մի մեծ ընտանիք է, ու վստահ եմ, որ կինն այստեղ անելիքներ շատ ունի»:

«Հայաստանը մեծ ընտանիք է: Այդ ընտանիքից մի տպավորություն են ստանում, որ մայրը՝ կինը, բացակայում է, հայրը զբաղված է իր գործերով, շատ քիչ է լինում տանը, հետևանքն այն է, որ մեր մեծ տունը շատ կեղտուն է, մեծ ու

95 Էլինար Վարդանյանի հետ հարցազրույցից (ԲՀԿ):

96 Նվարդ Մանասյանի հետ հարցազրույցից (ՀՅԱ):

97 Լյուդմիլա Սարգսյանի հետ հարցազրույցից (ՀԱԿ):

98 Սոցիոլոգ Գևորգ Պողոսյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից:

շարածճի երեխաները խլել են փոքրերի հացը և շաղ ու բախտավոր շրջում են, իսկ փոքրերը լացակումած ման են զախ: Սա է մեր հայոց ընտանիքի տեսքը: Եթե կինը գա խորհրդարան, ապա պետք է սկսի մաքրությունից, դա հնարավոր է անել միայն օրենքներով: Շատերը եղել են Եվրոպայում և նախանձով են նայում այդ քաղաքների մաքրությանը: Եթե հայտնիեն խորհրդարանում, ապա օրենքի ուժ կստանա քաղաքի մաքրության մասին օրենքը: Կանայք շատ գործ ունեն անելու, և կանց մասնակցությունը շատ կարևոր է»⁹⁹:

«Քաղաքականության մեջ կանայք շատ կազմակերպված են: Համեմատենք ընտանիքի հետ. առավոտից երեկո կինը պատասխանատվություն ու հետևողականություն է ցուցաբերում ընտանիքի ամեն հարցի նկատմամբ, կարողանում է ուզել միջինը գտնել, համերաշխություն մտցնել, բյուջեն ճիշտ բաշխել և այլն»¹⁰⁰:

Տղամարդկանց և կանանց մոտիվացիաների համեմատությունը վեր է հանում մոտեցումների և գնահատականների որոշ տարրերություններ. ի տարրերություն կանանց՝ տղամարդկանց ավելի շատ շահադիտական մոտեցուն է վերագրվում: Ընդ որում, իշխանության ձգտումն ինքնին բացասական գործոն չի դիտվում: Ուսումնասիրության մասնակիցներն ընդգծում էին, որ դա դրսւորվում է այն դեպքում, եթե խորհրդարան մտնելը տղամարդկանց կողմից դիտվում է որպես «տանիք բիզնեսի համար», իսկ պատգամավորական մասնդատն «անձեռնմխելիության» երաշխիքներ է տալիս: Այդ համատեքստում անձեռնմխելիության կարգավիճակը վերացնելու, ինչպես նաև պատգամավորներին հետ կանչելու ինստիտուտի ներդրման առաջարկներ էին հնչում:

Քննարկումները ցույց տվեցին, որ կին թեկնածուների և խորհրդարան ձգողող օլիգարխների շարժադիրները համեմատելիս ֆոկուս խնդերի մասնակիցների համակրանքն ուղղված էր կանանց: Այսուհետերձ, իրական կյանքում՝ ընտրություններում, ընտրողները ձայնը տվել են այլ սկզբունքով: Դա առանձնապես հստակ է դրսւորվել մեծամասնական ընտրատարածքներում, որտեղ կին թեկնածուները հաճախ բողոքում էին, որ ընտրողներն իրենցից ակնկալում են «ասֆալտ զցելու» կամ վերելակը վերանորոգելու խոստումներ և կամ, որ շատ ավելի վատ է, բացահայտ նախընտրական կաշառք են սպասում...

«Դժբախտաբար, մարդիկ այնպիսի սոցիալական վիճակում են, որ ոմանք նաև վերցնում են այդ գումարները»¹⁰¹:

«Ինչ վերաբերում է փողիմ, ապա այս գործոնը մեր ընտրատարածքում էլ կա. որ քաղամաս մտնում են, բնակիչն արդեն գույքագրված է, մեկին տաղավար են խոստացել, մյուսին՝ փուտրովի դաշտ, ինձնից էլ ասփալտ են ուղել»¹⁰²:

99 Ժամանակակից՝ WomenNet.am-ին տված հարցագրույցից (ՀԴԿ):

100 Կարիքն Հարությունյան՝ WomenNet.am-ին տված հարցագրույցից (ՀՅԴ):

101 Սարիկ Սեյրանյանի հետ հարցագրույցից:

102 Գոհար Վեզիրյանի՝ WomenNet.am-ին տված հարցագրույցից (թիվ 12 ընտրատարածք):

Այսուհանդեռձ, հասարակական կարծիքի սպեկտրում մշտապես առկա է այն դիրքորոշումը, որ տարբերություն չկա՝ ինչ սերի է թեկնածուն, գլխավորն այն է, «քե ինչպիսի կին է, և ինչպիսի տղամարդ է»։ Այս կարծիքին կարելի էր համաձայնել, եթե այն իհմնախնդիրն այլ հարքություն չտեղափոխեր. ստացվում է, որ մեզանում կանանց քաղաքականությունից դուրս մղելու խնդիր գոյություն չունի, խնդիրը միայն թեկնածուների որակներն են։

«Կարևոր սեռը չէ, այլ ԱԺ անդամների պրոֆեսիոնալիզմը, այն, թե ինչքան լրջորեն են նրանք մոտենում իրենց գործին, պատսախանատվության ինչ աստիճանով։ Եվ ես համաձայն չեմ, որ կին պատգամավորին դժվար է կաշտել։ Պարզապես տղամարդիկ ավելի շատ են քարախսված կոռուպցիայում, քանի որ դեկավար պաշտոնները իհմնականում կենտրոնացած են նրանց ձեռքում։ Իսկ կանայք հաճախ ավելի ազատ ու շահամոլ են լինում»։

«Ամեն ինչ կախված է այն քանից, թե ինչ կանայք կհայտնվեն խորհրդարանում։»

Նման մոտեցման համատեքստում ուշագրավ է ԱԺ նախկին պատգամավոր Լարիսա Ալավերդյանի կարծիքը. «Չպետք է սպասես, որ երկիրը փոխսիի, հավասար պայմաններ լինեն, և նոր միայն կանայք մտնեն ակտիվ քաղաքականություն։ Հենց կանանց մուտքով է փոխսկելու երկիրը»։

Հարկ է նշել, որ շատ կին թեկնածուներ նախընտրական ելույթներում իրենց մուտքը քաղաքականություն բացատրում էին հենց փոփոխությունների հասնելու ձգտումով։

«Խորհրդարան մտնելու որոշումը կայացրել եմ՝ սրտացավությունից ելնելով։ Կարևոր չէ դեկավարել, կարևոր ինչ-որ քան սկսելն է, փոխելը։ Կարծրատիպեր կան, դրանք կոտրել է պետք։ Կորիլ ունեմ տալու, իսկ կորիլ տալու լավագույն ձևը օրենսդրում լինելն է։ Ստածող, չհամաձայնող, վիճող Ազգային ժողով եմ ուզում...»¹⁰³։

«Լրատվության մեջ աշխատելով՝ ցանկացել եմ փոխել հասարակության կյանքը, հավատալով եմ աշխատել, նույնը կշարունակեմ նաև քաղաքականության մեջ»¹⁰⁴։

Եվ քանը միայն այն չէ, որ «փոփոխություններ» բառը շեշտադրվում էր իշխող կուսակցության կարգախոսում և նախընտրական քարոզչության ընթացքում լայնորեն օգտագործվում նաև ուրիշ կուսակցությունների կողմից։ Կանանց մասնակցության համատեքստում «փոփոխություններ» բառն առանձնահատուկ նշանակություն ուներ։ Այն հարցին, թե անցած գումարման խորհրդարանում կանանց ակտիվությունն ազդե՞լ է հասարակական կարծիքի վրա,

103 Ծուշան Պետրոսյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից (ՀՀԿ)։

104 Մարգարիտա Եսայանի հետ հարցազրույցից (ՀՀԿ)։

կարծիքները բաժանվում էին: Եթե խոսենք փորձագետների կարծիքի մասին, ապա այն այս հարցում անվերապահ է. պատզամավորները բոլորի աշխի առջև են, և ըստ այնմ, թե ինչպես կանայք կդրսեորեն իրենց խորհրդարանում, անկասկած, կճանապարհի հասարակական կարծիք կանանց մասին առհասարակ քաղաքականության մեջ:

«Տասըր տարի առաջվա և այսօրվա մտածելակերպի պարզ համեմատությունը հնարավորություն է տալիս փաստելու, որ հասարակության վերաբերմունքը կանանց հանդեպ փոխվում է, կանանց ավելի շատ են սկսում վատահել, քան նախկինում։ Դրան հատկապես նպաստում է որոշ կիս պատգամավորների աշխույժ գործունեությունն ի նպաստ հասարակական շահերի։ Փոփոխությունները կանանց օգտին են, ուղղակի այդ փոփոխությունները շատ դանդաղ են ընթանում»¹⁰⁵։

«Օրոշ քաղաքական ուժերի ցուցակներում որոշակի հորիզոնականներում կանանց են դնում, քանի որ օրենքի պահանջը կա: Օրենքին են հետևում, օրենքի պահանջից դրւու կետերում կանայք մեծ մասամբ չկան: Սակայն անգամ պարտադրված լինելու պարագայում քայլը դրական են զնահատում: Կանանց գործունեությունները խորիրդարանում և քաղաքականությունում ընդհանրապես հաջողված են: Օրինակներ ունենք «Ժառանգություն» խմբակցության պարագայում»¹⁰⁶:

Ֆոկուս խմբերում կարծիքներն այս առնչությամբ տարրեր էին: Որոշ մասնակիցներ կին պատգամավորների ակտիվությունը բացառապես դրական էին գնահատում, ընդգծում էին, որ նրանք իրենց օրինակով ցույց են տալիս, թե ինչ-պիսին պետք է լինի իսկական պատգամավորը: Ուրիշները հոռեւտեական էին արտահայտվում՝ պնդելով, որ ակտիվություն էլ կա, ակտիվություն էլ, և ակտիվության ոչ բոլոր դրսերումներն են, որ հասարակության աշբում ընդունելի են կանաց համար: Տվյալ կարծիքի պարագայում, ըստ երևոյթին, որոշակի դեր են խաղում կարծրատիպերը:

«Ես կարծում եմ, որ հասարակության կարծիքն էապես փոխվել է կնոջ մասնակցության առումով. պատրաստ են կնոջը տեսնել թե՛ որպես նախարար, թե՛ որպես պատգամավոր, ընդհանրապես որոշումների կայացման մակարդակի ցանկացած պաշտոնում: Եվ դա ասում եմ ոչ թե ենթելով պատգամավորների ակտիվությունից, այլ մասնակցել եմ 2007-ի ընտրարշավիճ և հիմա ել եմ մասնակցում: Ակնհայտ տարրերություն կա: Երբ ընտրողների՝ համայնքի ներկայացուցիչների հետ Անահիտ Բախչյանի հանդիպումը պետք է կազմակերպեինք, այս ժամանակ շատ դժվար էր լսարան ստեղծել, հասարակության ուշադրությունը կենտրոնացնել, երբ կին պատգամավորն էր հանդիպում: Իսկ եթե տղամարդն էր հանդիպում, շատ ավելի հեշտ էր լսարան ապահովել: Բայց հիմա էապես տարրեր եր»:

105 Սովորություն՝ WomenNet.am-ին տված հարցազրույթի

106 Քաղաքացիությունը՝ WomenNet.am-ին տված հարցազրոյշից:

Կանանց՝ քաղաքականություն մտնելու դրդող պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրենց՝ կին թեկնածուների հայտնած մոտիվացիան և սպասումները քաղաքականություն մտնելուց ընդհանուր առմամբ համընկնում են:

«Չեմ կարծում, որ քաղաքականությամբ զբաղվելու համար շարժառիթի անհրաժեշտություն կա: Մարդու կամ մտածող է, կամ ոչ, երբեք ինձ դուքս չեմ համարել քաղաքական գործընթացներից, որովհետև մշտապես ինձ մտահոգել է այն, ինչ կատարվում է երկրում: Եվ բնական է՝ այդ մտահոգությունները ստիպել են կողմնորոշվել՝ լինել ուղղակի քաղաքացի», որը դիտողի կարգավիճակում է, թե՞ քաղաքացի, որը ցանկանում է գործընթացների վրա ազդելու հնարավորություն ունենալ և այս երկրում ինչ-որ բարեփոխման գործընթացի մասնակցել: Այդ ամենը մեզանց յուրաքանչյուրն անում է զավակների, սերնդի համար, և եթե ինչ-որ հարցում թերանում է կամ անտարբեր է, ապա դա անտարբերություն է սեփական երկրի, ժողովրդի, սեփական զավակի նկատմամբ: Իսկ եթե անտարբեր չես, կամա-ականա մասնակցում ես բոլոր քաղաքական գործընթացներին»¹⁰⁷:

3

«Ես ուզում եմ ապրել իմ երկրում». սա շարժառիթների ամենատարածված ձևակերպումն է, որով այս կամ թեկնածուն որոշել է առաջադրվել: Երկրորդ, ոչ պյակաս տարածված ձևակերպումը. «Ես ուզում եմ, որ իմ երեխաներն ապրեն կարգին երկրում»: Եթե համեմատելու լինենք նախորդ ընտրությունների հետ, ապա շարժառիթների ձևակերպումները, որոնցով կանայք որոշել են քաղաքականություն գնալ, շատ ավելի հստակ ու գրագետ են դարձել:

«Ես Ազգային ժողովում ներկայացնելու եմ և՛ ընդդիմադիր քաղաքացու, և՛ իշխանամետ քաղաքացու շահերը: Հավատացնում եմ ձեզ, որ մեր շահերն ընդհանուր են: Սենք բոլորս ուզում ենք ապրել ուրիշ Հայաստանում և կարող ենք պարտադրել մեր կամքը քաղաքական բոլոր ուժերին՝ իշխանության էլ, ընդդիմության էլ: Ժամանակն է, որ հասարակությունն ինքը պարտադրի իր խաղի կանոնները և դառնա իրական գործոն, ոչ թե շարունակի մնալ մարզինալ մի զանգված, որի գլխին ինչ խաղ ուզում են, խաղում են»¹⁰⁸:

«Վաղուց մեծ ցավ եմ ապրել՝ և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական ցավ, երբ տեսել եմ ԱԺ-ի դատարկ կամ կիսադատարկ դահլիճում անցկացվող նիստերը, քնած պատզամավորի, մեծ ցավ եմ զգացել, երբ իմ, իմ ժողովրդի հոգսերը, խնդիրները բարձրածայնող չի եղել, և իհմնականում դա է եղել պատճառներից մեկը, որ որոշել եմ առաջադրվել»¹⁰⁹:

«Պետք է հնարավորության սահմաններում աջակցեմ կրթության ոլորտի բարեփոխումներին: Ես՝ որպես երիտասարդ մայր, ոլորտի փորձագետ և

107 Լյուդմիլա Սարգսյանի հետ հարցազրոյցից (ՀԱԿ):

108 Գոհար Վեգիրյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրոյցից (թիվ 12 ընտրատարածք):

109 Նարինե Մովսիսյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրոյցից (թիվ 38 ընտրատարածք):

ուսուցիչ, լավ գիտեմ, թե ինչ խոշընդուներ կան կրթության որակի, հետազա ընթացքի, աշխատանքի հետ կապված»¹¹⁰:

«Ուզում եմ քաղականության մեջ ասել իմ՝ որպես մասնագետի խոսքը, ուզում եմ այն գիտելիքները, որ ճեղք եմ բերել և դեռ պետք է ճեղք բերեմ, ծառայեցնել հանուն ՀՀ ժողովրդի: Յանկացած գործի մոտենաւ եմ մեծ նվիրումով, նոյնիսկ ամենափոքր խնդիրը փորձում եմ լուծել այնպես, կարծես դա իմ վերջին հարցն է»¹¹¹:

Կանանց նախընտրական քարոզարշավում նոր թեմա են գենդերային մուտեցումների ձևակերպումները: Իհարկե, բնավ ոչ բոլոր կին թեկնածուներն են դիմել այդ թեմային: Բայց եթե համեմատում ենք նախորդ ընտրությունների հետ, ապա 2007 թ. կին թեկնածուները, ենթելով անհասկանավի մնալու մտավախությունից, փաստորեն չեն շոշափում այդ թեման: Եվ այն, որ ներկայիս ընտրություններում գենդերային թեման հենչում էր, վկայում է, որ որոշ փոփոխություններ են տեղի ունենում թե՛ իրենց՝ պատգամավորի թեկնածուների, թե՛ հասարակության ընկալումներում՝ կապված կանանց քաղաքական մասնակցության և տղամարդկանց ու կանանց իրավահավասարության հիմնախնդիրների հետ:

«Գիտեք, ես կցանկանայի հեջար հազնել, քան հասկանալ, որ ներքուստ կրում եմ անտեսանելի այդ հեջարը: Գուցե, եթե հազնելի այդ հեջարը, ավելի շուտ հասկանայի, որ անհավասար եմ ու ամեն օր պայքարեի այդ անհավասարությունը շտկելու համար: Ինձ քվում է՝ եթե կարծ կամ բաց զգեստ եմ հազնում, եթե երեկոյան դուրս եմ զալիս փողոց, ապա ազատ եմ: Բայց իրականում ազատ չեմ, ամենահանգրվանային տեղերում իմ ազատությունը միանգամից կապվում է: Երբ ամուսնանում եմ, իմ ամուսինն ու սկեսուրը կարող են տնօրինել իմ ճակատագիրը, սահմանափակել ծնողներին տուն այցելությունը, որոշել իմ փոխարեն՝ աշխատեմ, թե ոչ, երեխա ունենամ, թե ոչ, քանիս ունենամ, ինչ սեղի ու ինչպես դաստիարակեմ»¹¹²:

«Հայաստանում կանայք միշտ եղել են ազատ և տղամարդկանց հետ հավասար մասնակցել են կենսական խնդիրների լուծմանը, բայց դա չի վերաբերում կանանց քաղաքական ներգրավվածությանը: Հայաստանի Հանրապետությունը շկարողացավ ապահովել սեռերի հավասարաշափ նեկայացվածությունը քաղաքական դաշտում և հասկանալով, որ տեսանելի ապագայում չի կարող հասնել այդ հավասարությանը, որդեգրեց կանանց նկատմամբ հովանավորչական մոտեցումն ու վերաբերմունքը: Վերջին 20 տարվա ընթացքում պետքությունը ճգնաժամային վիճակում էր գտնվում, և դա իր համապատասխան ազդեցությունն ունեցավ նաև կանանց հիմնախնդիրների վրա, որոնք մղվեցին երկրորդ պլան: Այն ոլորտներում, որտեղ ներգրավված էին կանայք,

110 Կարինե Հարությունյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից (ՀՅԴ):

111 Արփինե Հովհաննեսյանի հետ հարցազրույցից (ՀՀԿ):

112 Նվարդ Մանասյանի հետ հարցազրույցից (ՀՅԴ):

կրրություն, մշակույթ, առողջապահություն, կնոջ աշխատավարձը չի բավարարում նվազագույն կենսական հարցերի ապահովման համար: Այդ պատճառով էլ Հայաստանում նկատվում է աղքատության ֆեմինացում: Ելնելով այս ամենից՝ կինը, առավել քան երբեմ, կարիք ունի ներգրավված լինելու քաղաքականությունում, և դա ոչ միայն բոլորի վրա, այլև պրակտիկայում»¹¹³:

«Կինը տղամարդկանց կողմից օգտագործվում է որպես անվայել արարքների գործիք: Հիմնական կեղծիքները՝ ընտրակեղծիքները, կանանց ձեռքերով են արգում, ինչը ինձ համար ցավոտ թեմա է: Սահմանադրության խախտումները նույնապես կատարվել են կանանց ձեռքերով, և ես կցանկանայի, որ մենք մեզ ավելի շատ գնահատենք և ստիպենք բոլորին հարգել մեզ և դրանով առավել բարձրացնենք կանանց դերը հասարակական և քաղաքական կյանքում»¹¹⁴:

«Իմ ողջ գործություններության ընթացքում, լինի դա հասարակական թե քաղաքական դաշտում, ես միշտ էլ եղել եմ կանանց ակտիվ մասնակցության ջատագովք: Քանի որ Ազգային ժողովում նոր եմ, ու ժամանակ է պետք հասկանալու, թե որ մշտական հանձնաժողովում եմ ներկայացված լինելու ու կոնկրետ որ ոլորտում եմ առավել ակտիվ ներկայացված լինելու, իհմա դժվար է ուրվագծել գալիք գործունեության կոնկրետ ուղղությունները: Բայց լիահույս եմ, որ յուրաքանչյուր տեղ, որտեղ կտեսնեմ կանանց իրավունքների ուսնահարման դեպքը, առաջին բարձրածայնողներից մեկը ես կլինեմ»¹¹⁵:

«Չնայած խաղի կանոնները սահմանում են տղամարդիկ, և կանանց համար մի փոքր դժվար է խաղալ այդ կանոններով, սակայն այն կանայք, որոնք փորձ են անում «գուրս գալ իրենց խոհանոցներից» և նպատակառության առաջ են գնում, շատ քանի են հասնում»¹¹⁶:

«Խորիրդային իշխանության տարիներին կինը գրադեցնում էր պետական պաշտոններ, դեկավարում տարրեր քնազավառներ, ներդրում ուներ երկրի կառավարման գործում: Կանայք իրենց դրսնորում էին տղամարդկանց հավասար: Այսօր կինն անտեսված է: Չնայած ունենք կանայք, որոնք իրենց ներդրումն ունեն այս իշխանության մեջ, սակայն չնշին տոկոս են կազմում: Հիմնանաց չեն վստահում, թե ինչու, չես հասկանում: Խորականությունը մեծ է: Կան ինդիրներ, որոնք կինը կարող է ավելի լավ ու ճիշտ լուծել, քան տղամարդը, բայց վստահությունը քիչ է»¹¹⁷:

«Իրականում խնդիրն այն է, թե ինչպես ենք մեր երեխաներին, հատկապես՝ աղջիկներին դաստիարակում: Հիմնականում ուսումնական ծրագրերում աղջիկներին նախապատրաստում են մայր, կին լինելում: Ուսումնական ծրագրը, բայց վստահությունը քիչ է»¹¹⁸:

113 Սիմա Խսկանդարյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից («Սիմավորված հայեր» կուսակցություն):

114 Լիլիթ Սակունցի հետ հարցազրույցից (ՀԱԿ):

115 Նաիրա Կարապետյանի հետ հարցազրույցից (ՀՀԿ/ՍԻԱԿ):

116 Լուղմիլա Սարգսյանի հետ հարցազրույցից (ՀԱԿ):

117 Դոնարա Նալբանդյանի՝ WomenNet.am-ին տված հարցազրույցից (ՀԿԿ):

րերում չեմ հիշում մի ծրագիր, որտեղ կնոջը նախապատրաստեին հասարակական-քաղաքական կյանքին: Կինը պետք է լինի հեզ, մայր: Իսկ հասարակական-քաղաքական կյանքում կմասնակցի այնքանով, որքանով թույլ կտա իր ժամանակը, կամ որքանով թույլ կտան ընտանիքի անդամները: Թերևս զրբերում բացառություն էր միայն Այծեմնիկի մասին պատմությունը, որտեղ կինը մարտնչողի դերում էր: Ունենք կարծրացած մտածելակերպի խնդիր: Եվ չպետք է քննադատել միայն տղամարդկանց, ասել, որ թույլ չեն տալիս մեզ աշխատել, զործել: Որքանո՞վ է կինն այսօր պատրաստ և ուզում է մասնակցել քաղաքական կյանքին: Պետք է մտածելակերպի փոփոխության ուղղությամբ աշխատանք տանել»¹¹⁸:

¹¹⁸ Էլինար Վարդանյանի հետ հարցազրույցից (ԲՀԿ):


ԳԼՈՒԽ 4.

ԿԱՆԱՅՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՅՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հասարակական կազմակերպությունները որպես կանանց հասարակական-քաղաքական սոցիալականացման ինստիտուտ

Կանանց հասարակական կազմակերպությունները՝ որպես քաղաքացիական հասարակության կառույցներ, ավելի ու ավելի մեծ դեր են խաղում Հայաստանի ժողովրդավարական գործընթացներում։ Ըստ քաղաքացիական հասարակության վիճակի հետազոտության արդյունքների, որն անցկացվել է 2010 թ. «CIVITAS. Քաղաքացիական հասարակության համարիվ» նախագծի շրջանակներում, «Քառնըրփարք ինտերնեյշնլի» աջակցությամբ, Հայաստանը գնահատված է որպես «կայուն զարգացող երկիր, որտեղ հասարակական կազմակերպությունների հատվածը շարունակում է առաջ շարժվել մեծ քայլերով»։

Վերջին 5 տարիների ընթացքում հանրապետությունում երևան են եկել ավելի քան 1000 նոր հասարակական կազմակերպություններ։ Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ իրավաբանական անձանց թիվը, որոնք գրանցվել են արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալությունում, 2007 թ. 2726-ից 2012 թ. մայիսի 1-ին հասել է 3900-ի։ ՀԿ-ների թվի աճը կազմել է 143%։ Ընդ որում, կանանց ՀԿ-ների թիվը նույն ժամանակաշրջանում 76-ից հասել է 250-ի, այսինքն՝ աճել է ավելի քան 3 անգամ։ Եթե 2007 թ. կանանց կազմակերպությունները կազմել են բոլոր ՀԿ-ների 2,8%-ը, ապա 2012 թ. արդեն՝ 6,5%-ը։



Այսուհանդերձ, բնակչության զբաղվածության վիճակագրության վերլուծությունը՝ հիմնված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ուսումնասիրության վրա, բացահայտեց, որ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց զբաղվածությունը հասարակական հատվածում նվազման միտում ունի, ընդ որում՝ հանրապետության քաղաքների զբաղվածների հաշվին: Իսկ գյուղական տարածաշրջաններում, ինչպես երևում է ստորև բերված աղյուսակում, ընդհակառակը՝ հասարակական կազմակերպություններում զբաղվածների թիվը 2009 թ. 500-ից 2011 թ. հասել է 700 մարդու:

Հասարակական հատվածում զբաղվածները, 1000 մարդ¹¹⁹


| | 2009 | 2010 | 2011 |
|------------|------|------|------|
| Ընդհանունը | 10,5 | 5,5 | 6,5 |
| Տղամարդիկ | 5,3 | 3,5 | 4,3 |
| Կանայք | 5,2 | 2,0 | 2,2 |
| Քաղաք | 10,0 | 5,1 | 5,8 |
| Գյուղ | 0,5 | 0,5 | 0,7 |

ՀԿ-ներում զբաղվածների տվյալների գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ զբաղվածության ընհանուր նվազման խորապատկերում կանանց զբաղվածության նվազման տեմպերը ավելի մեծ են, քան տղամարդկանց զբաղվածությանը: Այսպես, եթե 2009 թ. ՀԿ-ներում բոլոր զբաղվածների թվով կանայք կազմել են 1%, իսկ զբաղված տղամարդիկ՝ 0,9%, ապա 2010 թ. կանանց զբաղվածությունը ՀԿ-ներում նվազել է մինչև 0,4%, իսկ տղամարդկանց շրջանում՝ մինչև 0,5%:

ՀԿ-ներում կանանց և տղամարդկանց զբաղվածության հարաբերակցության շարժները

| | 2009 | 2010 | 2011 |
|-----------|-------|-------|------|
| Տղամարդիկ | 50,5% | 63,3% | 66% |
| Կանայք | 49,5% | 36,7% | 34% |

Զբաղվածությունը ՀԿ-ներում



119 Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության 2009- 2011 թթ. հիմնական արդյունքները:

ՀԿ-ներում գրաղվածների գծանկարը վկայում է, որ հասարակական հատվածում գրաղվածության գեներացիային հարաբերակցությունը փոխվում է հօգուտ տղամարդկանց: Եթե 2009 թ. տղամարդիկ և կանայք հասարակական հատվածում ներկայացված են եղել գրեթե հավասար հարաբերակցությամբ, ապա 2011 թ. տղամարդիկ կազմել են արդեն ՀԿ-ներում գրաղվածների 66%-ը, ինչը հակասում է հասարակությունում արմատացած այն կարծիքին, թե հասարակական հատվածը կանանց գործունեության ոլորտ է: Հասարակական հատվածում գրաղվածության շարժներացը վեր է հանում հստակ արտահայտված միտում. այնտեղ, որտեղ վճարվող աշխատանք կա, կանայք աստիճանաբար դուրս են նղուտ:

Վերլուծելով վերը բերված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ չնայած հասարակական կազմակերպությունների թվական աճին, այդ թվում և կանանց, այդ կազմակերպություններում գրաղվածության ցուցանիշների նվազումը վկայում է դրանց ակտիվության որոշ անկման և ֆինանսական անկայունության մասին: Հայաստանի հասարակական հատվածը նախկինի պես զարգանում է արտաքին ֆինանսավորման և արտաքին դրնորների հաշվին: Այդ մասին էին խոսում նաև հասարակական կազմակերպությունների լիդերները հետազոտության շրջանակում անցկացված կլոր սեղանների, ֆոկուս խմբերի ժամանակ ծավալված քննարկումների և իրենց հետ անցկացված հարցազրույցների ընթացքում: Ինչպես նշել է «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ի նախագահ Նոննա Մարգարյանը:

«Հաստ ՀԿ-ներ, որոնք սնկի պես աճեցին, մերկայում, պատկերավոր ասած, մարտում են: Դրան, իմ կարծիքով, հանգեցնում է դրամաշնորհների նվազումը, երկրից դոնոր կազմակերպությունների հետանալը: Հիմա շատ գրանցված, բայց չգործող ՀԿ-ներ կան գրեթե բոլոր ոլորտներում»¹²⁰:

Միաժամանակ հետազոտության մասնակիցները նշել են, որ ոչ միայն ֆինանսական գործուներուն են խանգարում հասարակական սեկտորի, այդ թվում կանանց հասարակական կազմակերպությունների զարգացմանն ու հզրացմանը և քաղաքական գործընթացների վրա նրա ազդեցության մեծացմանը, այլև դեռևս առկա այնպիսի խոչընդոտներ, ինչպիսիք են.

- Հասարակական կազմակերպությունների կողմից կառավարման ժողովրդավարացման ոճի ոչ լիարժեք յուրացումն ու կիրառումը :
- Առաջնորդության համար մրցակցությունը և փոխադարձ վստահության ու հարգանքի բացակայությունը: Կազմակերպությունների դեկավարների հավակնությունները:
- Պետության և քաղաքացիական հասարակության միջև ոչ լիարժեք երկխոսության ծավալումը: Իրականացվող պետական քաղաքականությունը»:

120 Նոննա Մարգարյանի հետ հարցազրույցից:

Այսուհանդեռձ, անցկացված ուսումնասիրությունը վկայում է, որ շնայած ներգրավվածության ցածր մակարդակին՝ կանանց հասարակական կազմակերպությունները ավելի ու ավելի նշանակալի դեր են խաղում Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման խնդրում: Ընդլայնվում են հասարակական կազմակերպությունների գործունեության ոլորտները, և բեայես ոչ բոլոր կանանց կազմակերպություններն են, որ առաջնահերթություն են դիմում քաղաքականության մեջ կանանց անմիջականորեն առաջ մղելու խնդիրը, միևնույն է, կատարելով քազմարիվ գործառույթներ տարրեր ոլորտներում՝ նրանք ավելի ու ավելի շոշափելի ազդեցություն են թողնում իշխանությունների գործողությունների, անհրաժեշտ նորմատիվ ակտերի ընդունման, արդյունավետ սոցիալական քաղաքականության ձևավորման ու իրականացման վրա:

Նկատելիորեն բարձրացել է գործող ՀԿ-ների պրոֆեսիոնալիզմը, և ամրապնդվում է նրանց համագործակցությունը պետական կառույցների հետ: Նախարարություններում, հատկապես՝ սոցիալական ոլորտում գործող, ինչպիսիք են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունները, սերտ գործընկերային հարաբերություններ են հաստատվել այդ ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունների հետ, որոնք հրավիրվում են մասնակցելու ընդունվող ծրագրերի ու նորմատիվ փաստաթղթերի մշակման ու քննարկմանը, դրանց իրականացման գնահատմանը: Լինելով կապող օղակ քաղաքացիների և կառավարման մարմինների միջև՝ ՀԿ-ները կարողանում են լրիծել ծրագրերի իրականացման ընթացքում ծագող շատ խնդիրներ, դրանց մեջ համապատասխան փոփոխություններ ու լրացումներ նոցնել և հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով: Աշխայժ համագործակցություն է ծավալվում հասարակական հատվածի և գործադիր իշխանության մարմինների միջև տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մակարդակում, ինչին մեծապես նպաստում են նաև դրամաշնորհների հատկացման պայմանները՝ ուղղված հանրապետության տարածաշրջանների համայնքային և տնտեսական զարգացմանը:

Հասարակական կազմակերպությունների ակտիվիստների գնահատմամբ. «ՀԿ-ները Հայաստանում ավելի պատրաստված են դառնում, ավելի լավ են հասկանում իրենց դերը, գործառական առումով փոխվում են՝ դառնալով ավելի ուժեղ լորրինգի և պաշտպանության ոլորտում»:

Հայաստանի հասարակական հատվածի զարգացման ցայտուն միտումը վերջին 5 տարիներին նրա համախմբումն է: Հասարակական կազմակերպությունների լիդերները իշխանության վրա ազդեցության արդյունավետությունը բարձրացնելուն միտված ջանքերի միավորման անհրաժեշտության ըմբռնումից անցան դրա իրականացմանը: Համաձայն «CIVITAS. Քաղաքացիական

հասարակության համարիվ» հետազոտության արդյունքների՝ ներհատվածային համագործակցության և տեղեկատվության փոխանակման զարգացումը նշանակալի մակարդակի է հասել: Միայն հետազոտության նախորդած 3 ամսվա ընթացքում հարցված կազմակերպությունների 71%-ը հանդիպումներ է ունեցել նմանատիպ հարցերով գրադարձող ուրիշ կազմակերպությունների հետ, իսկ 64%-ը տեղեկատվություն է փոխանակել: Աճում է հասարակական կազմակերպությունների տարրեր միավորումների թիվը: Այսպես, միայն 2007 թ. ընտրական գործընթացներում իրազեկության բարձրացման և հասարակական շահերի պաշտպանության գծով դրամաշնորհային ծրագրերի իրականացման ընթացքում ձևավորվել է 8 դաշինք, որոնցից 3-ը հետազոտում վերածվել են մշտական գործող ցանցերի: Այսիվ գործում է բնապահպանական դաշինքը, որը միավորում է Էկոլոգիական հարցերով գրադարձող 35 ոչ կառավարական կազմակերպությունները: 2010 թ. ստեղծվել են ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցող ավելի քան 100 հասարակական կազմակերպությունների ցանցը և Մոր ու մանկան առողջության դաշինքը, որի մեջ մտնում են 48 կանանց կազմակերպություններ:

Սկսած 2009 թվականից՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կանանց լիդերության դպրոցի շրջանավարտուները մասնակցում են «Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն» նախագծի շրջանակներում տրամադրվող փոքր դրամաշնորհների մրցույթին, որի նպատակներից մեկը հասարակական կազմակերպությունների համագործակցության հզրացումն ու ամրապնդումն է, հասարակական կազմակերպությունների ցանցի ստեղծումը: Նախագծի մասնակից կազմակերպությունների առաջարկությամբ 2009 թ. ձևավորվեց «Համաձայնություն» հասարակական կազմակերպությունների ցանցը, որում ընդգրկվել են ոչ միայն Երևանում, այլև մարզերում գործող մի շարք հասարակական կազմակերպություններ:

Քաղաքացիական հասարակության հետազա զարգացման նպատակով իշխանության կառույցները քաղաքացիական հասարակության կարևոր ինստիտուտների ձևավորման քայլեր արեցին և հասարակության մեջ կանանց դերը բարձրացնելու միջոցներ ծերանարկեցին:

2008 թ. ստեղծվեց ՀՀ նախագահին առընթեր Հանրային խորհուրդը, որի գործունեությունն ուղղված է՝

- պետության քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների շահերը ներկայացնելուն,
- քաղաքացիական հասարակության կայացմանը նպաստող ավանդույթների ձևավորմանը,

- քաղաքացիական նախաձեռնությունների իրականացման աջակցությանը՝ ուղղված հանրապետության քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը:

Չատ կարեոր է, որ Հանրային խորհրդի 12 հանձնաժողովների շարքում գործում են քաղաքացիական հասարակության կայացման և ժողովրդագրության ու գենդերային հարցերի հանձնաժողովները:

2009-ից ակտիվացել է դեռևս 2000 թ. հանրապետության վարչապետին առընթեր ստեղծված Կանանց խորհրդի գործունեությունը, որը որոշակի ավանդ ունի 2010 թ. կառավարության կողմից Գենդերային քաղաքականության հայցեկարգը և Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրն ընդունվելու հարցում:

ՀՀ Ազգային ժողովն առաջին ընթերցմանք ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից ստեղծվել է «Ընդդեմ գենդերային բռնության» միջգերատեսչական հանձնաժողովը:

2011 թ. ՀՀ կառավարությունն ընդունել է նաև Գենդերային բռնության դեմ ազգային ծրագիրը և Գենդերային բռնության դեմ 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը:

Ուստմնասիրությունը ցույց է տվել, որ հասարակական կազմակերպությունները մեծ դեր են խաղում կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման խնդրում: Հասարակական շարժման լիդերների կարծիքով՝ հենց հասարակական հատվածն է կանանց սկզբնական քաղաքական սոցիալականացման իիմնական ինստիտուտը: Հասարակական կազմակերպությունների գործունեությունը կանանց ներուժի զարգացման, քաղաքացիական դիրքորոշման ձևավորման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ուղղությամբ նպաստում է կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանը և հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը: Զարգացող համագործակցությունն օրենսդիր և գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների հետ նպաստում է հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման գործնական հմտությունների ձեռքբերմանը, լիդերական որակների ձևավորմանը: Կանանց ՀԿ-ների կրթական ծրագրերը ներառում են բնակչության տարբեր շերտերը հանրապետության բոլոր տարածաշրջաններում՝ հաղորդելով լայն ոլորտի գիտելիքներ, այդ թվում՝ իրավական և հասարակական-քաղաքական:

Կանանց ոեսուրսային կենտրոնի համանախագահ Գոհար Շահնազարյանի կարծիքով. «Այսօր հենց ՀԿ-ներն են պատրաստում կանանց քաղաքա-

կան գործունեության: Մեր կազմակերպությունը հասուն կանանց քաղաքական լիդերությամբ, կանանց քաղաքական ակտիվությամբ չի գրաղփում, սակայն մեր կազմակերպության կրթական ծրագրերը նպատակառությունը են կանանց ներուժի զարգացմանը և նրանց դերի ակտիվացմանը, և ամենազդիակուրոր՝ պարագնունքների ժամանակ մենք շեշտոք դնում ենք աղջկների և կանանց ինքնազնահատականի բարձրացման վրա: Կանանց ցածր քաղաքական ակտիվությունն իրականում պայմանավորված է ոչ այնքան զիտելիքներով՝ ցածր ինքնազնահատականով և ինքնարնեկալումով:

Գոյություն ունեն ՀԿ-ներ, որոնք գրաղփում են հաստկապես կանանց քաղաքական ակտիվացմամբ, օրինակ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, որը կանանց լիդերության դպրոցներ է կազմակերպում: Ինչ վերաբերում է կանանց քաղաքական ակտիվացմամբ գրաղրվող ՀԿ-ների հետ համագործակցությանը, ապա այս իմնականում տեղի է ունենում տարրեր կուալիֆիաների շրջանակներում: Օրինակ՝ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի հետ մենք ներգրավված ենք գենդերային բեմատիկ խմբում, որն էլ հաստատել է Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրը, մենք նաև գենդերային բռնության դեմ պայքարի միջզերատեսչական համձնաժողովի կազմում ենք:

Ընդլայնվել է ՀԿ-ների համագործակցությունը պետական կառույցների հետ, ինչն առաջընթաց է, քանզի հայ կանանց քաղաքական ակտիվացման հիմքն է դրվում»¹²¹:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի նախագահ Նատալյա Մարտիրոսյանը նշում է. «ՀԿ-ների դաշտն ավելի փափուկ է, և այս ինքնին գրադեցնում է կանանց համար առավել անսովոր քաղաքական գործչի պատրաստման խորշը, կանայք իրացնում են իրենց այն հնարավորությունները, որոնք միշտ չեն, որ հաջողվում է իրացնել, օրինակ՝ մասնագիտական գործունեության ոլորտում: ՀԿ-ն մի դաշտ է, որտեղ կանայք կարող են ոչ միայն դրսևորել իրենց ներուժը, կարողություններն ու հմտությունները, այլև կարող են սովորել: ՀԿ-ն ինչ-որ չափով սովորեցնում է պայքարի այն կանոնները, որոնց ստիպված ենք լինում բախվել մեզ համար անսովոր քաղաքական գործունեության մեջ: ՀԿ-ն սեփական ուժերն ու հնարավորությունները զիտակցելու և այն հմտությունները ձեռք բերելու ճանապարհ է, որոնք անհրաժեշտ են քաղաքական գործչին: Վերջին հինգ տարիներին զգալի առաջընթաց է նկատվում, և դա հասկապես վերաբերում է այն կանանց, որոնք ապրում են ոչ բերևանում, այլ հեռավոր շրջաններում և, ի դեպ, ոչնչով չեն զիջում երևանի կանանց, դեռ շատ հարցերում գերազանցում են. ավելի ակտիվ, զիտելի և նպատակապաց կանայք են: Եզ այն հանգամանքը, որ նրանք ավելի շատ են

121 Գոհար Շահնազարյանի հետ հարցազրույցից:

սոցիալական ակտիվություն ցուցաբերում, հույս է ներշնչում, որ նրանք, համենայն դեպք սկզբնական շրջանում, կընդգրկվեն տեղական ինքնակառավարման համակարգերում»¹²²:

Կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման գործում որոշակի ավանդ է շարունակում ունենալ Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան: Միջոցառումները, ծրագրերը, քաղաքացիական նախաձեռնությունները, ավելի քան 10 տարի գործող Գեներացիային հետազոտությունների կենտրոնը և կանանց լիդերության դպրոցը մեծ դեր են խաղում քաղաքականացման ակտիվ կանանց ձևավորման գործում: Այսօր քաղաքականության ոլորտում նկատվող կանանց մեծ մասը կանանց լիդերության դպրոցի շրջանավարտ է: Դպրոցները պահանջված են և Ասոցիացիայի մասնաճյուղերին կից գործում են նաև հանրապետության տարածաշրջաններում: Միայն Գյումրիում, Վանաձորում և Արտաշատում վերջին 3-4 տարում անցկացվել են կանանց լիդերության դպրոցի 7-ական հոսքերի պարագաներներ: Դպրոցներ են կազմակերպվել նաև Դիլիջանում, Ստեփանավանում, Սպիտակում, Նոր Հաճնում, Աբովյանում, Աշտարակում, Սևանում, Չարենցավանում, Եղվարդում, Էջմիածնում:

2. Քաղաքական կուսակցությունների՝ որպես կանանց քաղաքական սոցիալականացման ինաժամկետների դերը ՀԿ-ների լիդերների և ակտիվիստների գնահատմամբ

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են բազմաթիվ հասարակական կազմակերպությունների լիդերների ու ակտիվիստների կարծիքներն այս մասին, թե կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման տեսանկյունից ինչ փոփոխություններ են տեղի ունեցել կուսակցություններում 2007 թ. ընտրություններից հետո, մեծացել է արդյոք կանանց առաջ մղելու շահագրգորությունը, և ի՞նչ ազդեցություն են ունենում կուսակցությունների կանանց խորհրդարները կուսակցությունների կին անդամների դերի բարձրացման հարցում:

Ֆոկուս խմբերում անցկացված հարցումները նախևառաջ ցույց տվեցին, որ քաղաքական կուսակցությունները Հայաստանում բավական փակ համակարգ են՝ իրենց կորպորատիվ շահերով, որոնց գործունեության մասին, հատկապես՝ միջընտրական փուլերում, շատ քիչ քան է հայտնի անգամ հասարակության առավել ակտիվ հատվածին՝ ՀԿ-ների լիդերներին ու ակտիվիստներին: Գյումրիում և Եղեգնաձորում ֆոկուս խմբերի ավելի քան կեսը որևէ տեղեկություն չուներ, փաստորեն ոչինչ չգիտեր կուսակցությունների կանանց խորհրդների գործունեության մասին, Երևանում, Վանաձորում և Աշտարակում ՀԿ-ների ակտիվիստները ենթադրում էին, որ կուսակցություններում կանանց

122 Նատալյա Մարտիրոսյանի հետ հարցազրույցից:

դերի բարձրացման և նրանց քաղաքական ակտիվացման ուղղությամբ որևէ աշխատանք չի տարվում: Բոլոր ֆոկուս խմբերին ներկա Հայ օգնության միության (ՀՕՄ) ներկայացուցիչներն են միայն նշում, որ Դաշնակցություն կուսակցությունը նման աշխատանք տարվում է, թեպետ՝ ոչ ցանկալի մակարդակով:

Առավել քննադատաբար էին տրամադրված Երևանի ֆոկուս խմբերի մասնակիցները, որոնց ճնշող մեծամասնությունը կարծիք հայտնեց, որ «կուսակցությունները շահագրգուված չեն առաջ մղելու կանանց», «կանայք կուսակցությունների ներսում զբաղված են սուկ իրենց շահերով և շահագրգուված չեն, որ բարձրացնեն, ընդլայնեն, խորացնեն ազդեցությունը կանանց ակտիվության վրա, բարձրացնեն կանանց շահագրգությունը քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցելու հարցում», «նրանք նպաստում են լոկ իրենց խմբային շահերին կամ նեղ կուսակցական նպատակներ են հետապնդում», «կանայք ընդամենը գենեցիկ զարդարանք են քարոզչական արշավներում», «ակտիվություն են ցուցաբերում միայն բարեգործական և սոցիալական ծրագրերի իրականացման գործում, ընդ որում՝ հիմնականում նախընտրական փուլերում»:

Հասարակական շարժման փորձագետների գնահատականներն առավել կշռադատված և լավատեսական էին: Ըստ նրանց դիտարկումների՝ միջազգային կազմակերպությունների պահանջների ազդեցության տակ և ընտրությունների մասին օրենսդրության մեջ գեներային քվուանների ներդրման շնորհիվ սկսում է փոխավել նաև կուսակցությունների վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցության նկատմամբ, իրենց շարքերում զբագետ կին քաղաքական գործիչներ ունենալու շահագրգություն է առաջանում: Նման կարծիքի է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Հայաստանի կոմիտեի նախագահ Նատալյա Մարտիրոսյանը. «Ընտրացուցակներում կանանց ընդգրկելու անհրաժեշտությունը հանգեցնում է նրան, որ կուսակցությունները սկսում են լրջորեն մտածել, որ իրենց շարքերում պետք է ոչ միայն պարզապես կանայք լինեն, այլև զրագետ կանայք, որոնք զիտեն և կարողանում են աշխատել, այսինքն՝ բյուրեղանում է այս ըմբռնումը, որ կինը պետք է ընդգրկվի պատգամավորների թեկնածուների ցուցակներում ոչ միայն որպես կին, առ պետք է ներկայացնի կուսակցության շահերը բարձր մակարդակում, և դա, քայլ օրենքի պահանջներից, պետք է հանգեցնի նրան, որ կուսակցությունների ներսում կանանց դերի ու տեղի ուղղությամբ աշխատանքն ակտիվանա ոչ միայն նախընտրական շրջանում, և կուսակցությունները պետք է մշտական երկարաժամկետ ուղղմավարություն ունենան լրուց կազմեր պատրաստելու համար, այդ թվում և կանանց: Կուսակցություններում մեծ թվով երիտասարդ կանայք են հայտնվում, որոնք աշխատում են շատ ավելի լավ, քան երիտասարդ տղամարդիկ: Եվ դրա մեջ են շատ լավ միտում են տեսնում և հուսով են, որ այսուհետև էլ այդպես կլինի»¹²³:

123 Նատալյա Մարտիրոսյանի հետ հարցագրույցից:

Դրա հետ մեկտեղ կարծիք հնչեց նաև այն մասին, որ շատ կուսակցություններ և դրանց կանանց խորհուրդները, ինչպես նախկինում, չեն իրականացնում կանանց քաղաքական մասնակցության ակտիվացմանն ուղղված աշխատանքը: Այսպես, Կանանց ռեսուրսային կենտրոնի համանախազան Գոհար Շահնազարյանը կարծիք է հայտնում, «Քաղաքական կուսակցությունների կանանց հետ հանդիպումները ցույց տվեցին, որ կան կուսակցություններ, որոնք մինչև իրման ավանդաբար շարունակում են ընդգծել հայ կնոջ դերը որպես տիկնոջ, մոր, օջախի պահապանի... Այդ մոտեցումից էլ բխում է կուսակցությունների գենդերային քաղաքականությունը միայն առողջապահության և կրթության ոլորտում: Միևնույն ժամանակ կան կուսակցություններ, որոնց իրավես մտահոգում են կանանց խնդիրները: Այսպես, հաճելիորեն զարմացրին Ղաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ կանայք, որոնք չեն վախենում արտաքերել «Փեմինիզմ» բառը և նշում էին, որ իրենք Փեմինիստ են և զանում են փոխել հասարակության վերաբերմունքն այդ հասկացության նկատմամբ: Նրանք իրենք են կուսկացությունում բարձրացնում բազմաթիվ հարցեր, որոնք քննարկվում են և ընդունվում, իրենց կարծիքը կուսակցությունորն հաշվի են առնում»

Կոր սեղանների և ֆոկուս խմբերի շատ մասնակիցներ նշում էին, որ «այսօր կանանց խորհուրդները կին քաղաքական գործիչներ չեն պատրաստում, գուցե ապագայում ինչ-որ բան փոխվի»: ՀԿ-ների շատ լիդերներ ոչ միանշանակ վերաբերմունք ունեն կուսակցություններում կանանց հասուկ կառույցով առանձնացնելու նպատակահամարության առնչությամբ: Նրանց կարծիքով՝ կանանց խորհուրդները ոչ միայն չեն նպաստում կանանց քաղաքական սոցիալականացմանը, այլև ինչ-որ չափով սահմանափակում են ընդհանուր կուսակցական հարցերի որդումներին, ներկուսակցական ժողովրդավարության զարգացմանը մասնակցելու, կուսակցության դեկավար մարմիններում առավել ներկայացվածություն ունենալու հնարավորությունները և նեղացնում նրանց հետաքրքրությունների շրջանակը զուտ կանանց և սոցիալական հարցերի լուծմամբ, «քանի որ լուրջ քաղաքական աշխատանքով, այդ թվում թե՛ քաղաքական պրակտիկայի, թե՛ կուսակցություններում առկա գաղափարների գենդերային վերլուծությամբ նրանք չեն զբաղվում»: Դա վերաբերում է նաև կուսակցությունների ներսում ստեղծված երիտասարդական կառույցներին:

3. Ընտրություններին ՀԿ-ների մասնակցության փորձը

Հասարակական կազմակերպությունների գործունեությունը 2012 թ. ընտրական գործընթացներում, ինչպես և 2007 թ., ուղղված էր ազատ, արդար ընտրությունների ապահովմանը: Այդ նախատակով իրականացվեցին բազմաթիվ կրթական ծրագրեր՝ բարձրացնելու համար բնակչության տարրեր խմբերի իրազեկությունը ընտրությունների մասին օրենսդրության փոփոխությունների,

քաղաքացիների իրավունքների և քաղաքացիական պատասխանատվության մասին:

Գյումրիի բնապահպանական «Արքազան հող» հասարակական կազմակերպությունն ԱՍՆ դեսպանատան աջակցությամբ կրթական ծրագիր իրականացրեց ուսանողության և դպրոցների բարձրագույն շրջանում, առաջին անգամ ընտրող երիտասարդների համար:

«Հարմոնիա» հասարակական կազմակերպությունը Արարատի և Արագածոտնի մարզերի 7 համայնքներում սեմինարներ անցկացրեց երիտասարդների համար, որոնց ընթացքում մասնակիցները ներկայացնում էին իրենց ծրագրերը, անցկացնում նախընտրական բանավեճեր և դերային խաղերով նմանակում ընտրությունները:

Ընտրությունների հետ կապված ծրագրերի իրականացնան գործում, «Քառունքրփարթ ինտերնեյշնլ» կազմակերպության աջակցությամբ, ընդգրկված էին 28 հասարակական կազմակերպություններ:

Քաղաքացիական և սոցիալական օպերատուրաման հիմնադրամը ծրագրի շրջանակներում իրատարակեց «Ընտրողի ուղեցույց», որում ամփոփված են ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական կուսակցությունների նպատակներն ու գործունեությունը: Ուղեցույցն անկողմնակալ աղբյուր է, որ օժանդակում է ընտրողին ճիշտ ընտրություն անելու հարցում:

Միջին և փոքր բիզնեսի հիմնադրամն իրականացրեց մի նախագիծ, որի շրջանակներում ուսումնասիրվեցին և գնահատվեցին կուսակցությունների մոտեցումները երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, և կազմակերպվեցին բանավեճեր կուսակցությունների լիդերների, ձեռնարկատերների և հասարակական հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ:

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ն կատարեց քաղաքական կուսակցությունների ծրագրերի ուսումնասիրություն՝ քաղաքացիական հասարակության օպերատուրամանը, քաղաքացիական հասարակության կառույցների, իշխանության կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստելու տեսանկյունից: Ուսումնասիրության արդյունքները հրապարակվեցին և ներկայացվեցին կլոր սեղանի ընթացքում:

Հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ անցկացվեցին հանդիպումներ տարբեր կուսակցությունների պատգամավորի թեկնածուների հետ: **Համալսարանական կրթությամբ կանանց ասցիացիան**, ընդհանուրացնելով այն քննարկումների արդյունքները, որոնք անցկացրին մասնաճյուղերը հանրապետության տարբեր մարզերում, մշակեց «Կանանց քաղաքական օրակարգը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում», որը քննարկվեց հասարակական կազմակերպությունների

լիդերների և առաջատար քաղաքական կուսակցությունների պատգամավորի թեկնածուների հանդիպման ժամանակ, ապա ներկայացվեց բոլոր քաղաքական կուսակցություններին:

Պատգամավորի թեկնածուների հետ հանդիպում անցկացրեց World Vision-ի աջակցությամբ ստեղծված «Մոր և մանկան առողջության հայկական դաշինք» հասարակական կազմակերպությունների միավորումը, որի ընթացքում պատգամավորի թեկնածուները ներկայացրին կուսակցությունների դիրքորոշումներն առողջապահության խնդիրների լուծման հարցում:

Վաճաձորում Սոցիալ-տնտեսական և իրավական բարեփոխումների կենտրոնը կազմակերպեց ընտրողների և մեծամասնական ընտրակարգով առաջարրված թեկնածուների հանդիպում:

Այս բոլոր հանդիպումները, կլոր սեղանները, որոնք անցկացվեցին հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ, հնարավորություն տվեցին, մի կողմից, ապագա օրենսդիրների առջև հնչեցնելու հարցեր, որոնք հուզում են հասարակայնությանը, մյուս կողմից՝ ընտրազանգվածի տարրեր խմբերին ծանրացնելու այս կամ այն կուսակցության դիրքորոշումներին տարրեր հիմնախնդիրների առնչությամբ և դրանց լուծման միջոցներին՝ նախատեսված նրանց ծրագրերում:

Որոշ կանանց ՀԿ-ներ մասնակցեցին ընտրությունների նախապատրաստության կազմակերպչական աշխատանքներին: Այսպես, Վաճաձորում այնպիսի ՀԿ-ներ, ինչպիսիք էին Կանանց իրավունքների կենտրոնը, «Անվտանգ մանկությունը», «Ուկե միջինը», մասնակցեցին ընտրողների ցուցակների ճշգրտման աշխատանքներին:

Հետազոտության շրջանակներում անցկացված կլոր սեղաններին և ֆուկուս խմբերին մասնակցող գրեթե բոլոր լիդերների և ակտիվիստների գնահատմամբ, 2012 թ. ընտրություններում կանանց ՀԿ-ների ակտիվությունը 2007 թ. ընտրությունների համեմատությամբ չի բարձրացել, նույնիսկ ինչ-որ չափով անկում է ապրել:

Այսուհետեւ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ չափազանց քիչ կանանց ՀԿ-ներ են անմիջականորեն ներգրավվել ընդրական գործընթացների հետ կապված ծրագրերի իրականացման գործում: Երևանում, Գյումրիում, Վաճաձորում, Եղեգնաձորում և Արտաշատում անցկացված ֆուկուս խմբերին և կլոր սեղաններին մասնակցած 55 հասարակական կազմակերպություններից միայն մեկն էր, այն էլ ոչ կանանց, այլ բնապահպանական, որ Գյումրիում՝ երիտասարդության շրջանում, ընդհանուր կրթական ծրագիր էր իրականացրել: Աշտարակում Հայ օգնության միությունը մասնակցել էր «Փախստականներ առանց անձնագրի» ծրագրին:

Կանանց կազմակերպությունները, հետևելով օրենքի տառին, չեն անցկացրել ընտրություններին մասնակցող կին թեկնածուների աջակցության արշավներ:

Ինչպես և 2007 թ. ընտրությունների ժամանակ, 2012 թ. էլ կանանց ՀԿ-ներն ակտիվություն չցուցաբերեցին ընտրությունների ընթացքի հասարակական վերահսկողության հարցում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում որպես տեղական հասարակական դիտորդ գրանցված 53 կազմակերպություններից միայն 3-ն էին կանանց կազմակերպություն: Հարկ է նշել, որ զգալի թվով կանայք այլ ՀԿ-ների կազմում են որպես տեղական դիտորդներ մասնակցել ընտրություններին:

Միաժամանակ կանանց ՀԿ-ների շատ ակտիվիստներ ընդգրկվել են ընտրական հանձնաժողովներում: Ընտրական հանձնաժողովների ղեկավար կազմում նախագահների և քարտուղարների 37%-ը կանայք են եղել:

4. Ընտրությունների արդյունքները. գենդերային իրավահավասարության հիմնախնդիրը կանանց ՀԿ-ների գնահատմամբ

Կանանց քաղաքական և քաղաքացիական ակտիվությունը 2012 թ. ընտրությունների ընթացքում, ըստ հասարակական շարժման լիդերների գնահատման, 2007 թ. ընտրությունների համեմատությամբ որոշ անկում է ապրել. «Ազգահայտ է հասարակության ընդիանուր ապատիան՝ կապված քաղաքական ընտրական գործընթացի հետ, որը տարածվում է նաև նրա կանանց հատվածի վրա»:

Կանանց ՀԿ-ների լիդերների և ակտիվիստների՝ ընտրությունների արդյունքների սպասումների ուսումնասիրությունն արդեն իսկ նախընտրական շրջանում վկայում էր, որ նրանց կանխատեսումները բավական հոռետեսական էին՝ կապված կանանց քաղաքական ներկայացվածությունը մեծացնելու հնարավորության հետ: Քաղաքական կուսակցությունների մոտեցումները թեկնածուների ցուցակների կազմման հարցում, ցուցակներում ընդգրկված կանանց թեկնածությունների որակական կազմը շատերի մեջ թերահավատություն էին առաջացնում կուսակցությունների՝ կանանց խորհրդարան տանելու շահագրգորության առնչությամբ և մտավախություն, որ կկրկնվի 2007 թ. սցենարը, եթե քաղաքական կուսակցությունների ընտրացուցակների անցողիկ տեղերում ընդգրկված կանայք հանում էին իրենց թեկնածությունները: Ուսումնասիրության մասնակիցների ճնշող մեծամասնությունը կարծիք էր հայտնում, որ լավագույն դեպքում 2012 թ. ՀՀ ազգային ժողովում կանանց թվի աննշան մեծացում կարծանագրվի:

Թեև ուսումնասիրության ընթացքում ֆոկուս խնդերի և կլոր սեղանների ոչ մի մասնակից կասկած չի հայտնել կանանց քաղաքական մասնակցության ակտիվացման անհրաժեշտության առնչությամբ, ավելին, Վանաձորում և

Գյումրիում տղամարդկանց ելույթներում նշվեց, որ կանայք հսկայական ներուժ ունեն, որը կարող է նպաստել սոցիալական արդարության սկզբունքների իրացմանը, այդուհանդերձ՝ ՀԿ-ների լիդերներն այն համոզման էին, որ **քանի դեռ իրենք՝ կանայք, չեն գիտակցում իրենց դերի կարևորությունը և բարական, հավկապես՝ ընկրական գործընթացներին գիտակցված մասնակցության անհրաժեշտությունը, հազիվ թե հնարավոր լինի հասնել իրական փոխիտուրյունների:** ՀԿ-ների ներկայացուցիչների գնահատմամբ՝ կանանց քաղաքական ակտիվության վրա որոշակի ազդեցություն է ունենում սոցիալ-տնտեսական իրավիճակը: Մասնավորապես, «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի ղեկավար Աղավնի Կարախանյանը համարում է.

«Սոցիալ-տնտեսական չկարգավորվածությունը շատ բացասաբար է ազդում կանանց քաղաքական մոտիվացիայի և քաղաքական ակտիվության վրա: Այսպես, սուֆրաժիստուհիների, ֆեմինիստուհիների շարժումները ներկայացնում էին բարձր խավի կանայք: Նրանք կրթված էին, նյուրապես ապահովված, տնտեսապես անկախ, նրանք զրադված չէին կենցաղային հարցերով, մի կտոր հաց գտնելու խնդիրը չունեին: Սուֆրաժիստուկան շարժումը, ինչպես ասում են, ծագեց լավ կյանքից, իսկ մեզանում կանանց շարժումը ծագել է վատ կյանքից: Այս կինը, որը կարող է պաշտպանել իր իրավունքները, պետք է ակտիվ լինի, մոտիվացված, շատ պատրաստված: Մեր կանանց ձեռքը քաղաքականությանը չի հասնում, նրանք պարզապես ժամանակ չունեն և առհասարակ քաղաքականությամբ զբաղվելու ցանկություն չունեն: Ուստի կանանց շարժման դրական և քանակական ցուցանիշները սոցիալ-տնտեսական հիմք ունեն»¹²⁴:

Վանաձորի և Աշտարակի կլոր սեղանների քննարկումներում և ֆոկուս խմբերում կարծիք է հայտնվել, որ սոցիալ-տնտեսական անկայունությունը, գործազրկության բարձր մակարդակը պարարտ հող են եղել ընտրողների ձայները գնելու համար, ինչն աննախադեպ վերելք ապրեց 2012 թ. ընտրությունների ժամանակ: Այդ տարվա ընտրություններն առանձնացան ընտրակեղծիքների միջոցների կատարելագործման առաջընթացով և ընտրողների վրա ճնշում գործադրելու ցինիկ մեթոդներով: Բերվում էին այնպիսի օրինակներ, ինչպիսիք են բաց քվեարկությունների անցկացումը որոշ գյուղերում, նպաստները շվճարելը հարկավոր թեկնածուներին ընտրելու նպատակով ընտրողների վրա ճնշում գործադրելու համար, հատուկ գրիչների օգտագործումը, որոշակի անկյուններում նշումները՝ ի հաստատումն այս կամ այն թեկնածության ընտրության և այլն: Վերլուծելով կանանց հասարակական կազմակերպությունների մասնակցությունն ընտրական գործընթացներին՝ նշում էին, որ անհրաժեշտ է ոչ միայն ավելի ակտիվ աշխատել ընտրազանգվածի հետ, հատկապես՝ զյուղական վայրերում, այլև հանախմբված, նպատառլրված մասնակցել կանանց թեկնածությունների առաջադրմանն ու աջակցությանը:

124 Աղավնի Կարախանյանի հետ հարցազրույցից:

Կանանց ՀԿ-ների գնահատականի մեջ, 2007 թ. համեմատությամբ, էական փոփոխություններ չկատարվեցին նախընտրական քարոզության գործընթացներին պատգամավորի կին թեկնածուների մասնակցության ակտիվության առնչությամբ: Եթե քաղաքական կուսակցությունների թեկնածուներ Հեղինե Բիշարյանը, Թամարա Պողոսյանը, Զարուհի Փոստանջյանը, Նահրա Չոհրաբյանը, Անահիտ Բախչյանը մասնակցում էին ընտրողների հետ իրենց կուսակցությունների հանդիպումներին, ապա մեծամասնական ընտրակարգով առաջարկված թեկնածուներն ընդհանուր առմամբ տեսանելի չեն: Ընդորում, ՀԿ-ների ներկայացուցիչներն ափսոսանք էին հայտնում, որ շատ ակտիվ, մասնագիտական հմտություններ և խորհրդարանական աշխատանքի փորձ ունեցող թեկնածուներ, քաղաքական կուսակցությունների ցուցակներում զբաղեցնելով ոչ անցողիկ տեղեր, շմտան Ազգային ժողով: ՀԿ-ների ակտիվացների կարծիքով՝ «2012 թ. ընտրությունների քարոզարշավը միայն կուսակցությունների լիդերների քարոզարշավ էր, որում տեղ չկար կանանց և նրանց խնդիրների համար»:

Հատկապես նշվեցին դրական տեղաշարժերը ԶԼՄ-ների աշխատանքում, որոնք 2012 թ. իսկապես ապահովեցին անկողմնակալ, անաշառ լուսաբանում ամբողջ նախընտրական քարոզարշավի ընթացքում և բոլոր քաղաքական կուսակցությունների համար եթերային ժամանակակից օգտվելու հավասար պայմաններ:

5. ՀՀ Ազգային ժողովում գենդերայնորեն հավասարակշռված ներկայացվածության հասնելու սպասումները ընտրությունների մասին օրենսդրությունում գենդերային քվոտաները բարձրացնելուց հետո

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընտրությունների մասին ՀՀ օրենսդրությունում գենդերային քվոտաների բարձրացումից հասարակական կազմակերպությունների լիդերներն առանձնապես սպասումներ չունեին՝ հաշվի առնելով 2007 թ. ընտրությունների փորձը, որը ցույց տվեց, որ օրենքի՝ կուսակցական ցուցակներում կանանց 15%-անց ներկայացվածության պահանջն արդյունքում համարժեք ներկայացվածություն չափահովեց ՀՀ Ազգային ժողովում: Քաղաքական կուսակցությունների ցուցակներում կանանց թեկնածությունների ընդգրկման հաստատված կարգը, այն է՝ յուրաքանչյուր հնգյակում՝ սկսած 2-րդ տեղից, ՀԿ-ների լիդերները գնահատեցին որպես խորականություն կանանց նկատմամբ և ընտրությունների արդյունքում ՀՀ Ազգային ժողովում կանանց 20%-անց ներկայացվածությունը՝ բավական կասկածելի, ինչը և հաստատվեց ընտրությունների արդյունքներով: Կարծիք հայտնվեց, որ առանց քվոտաների կանանց թիվը խորհրդարանում շատ ավելի փոքր կիմներ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հասարակական հատվածում ավելի ու ավելի է ամրապնդվում այն գիտակցությունը, որ անհրաժեշտ է ոչ միայն պահ-

պանել գենդերային քվոտաները, այլև աստիճանաբար բարձրացնել դրանք և Ազգային ժողովում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև գործադիր իշխանության բոլոր մակարդակներում համապատասխան գենդերային հավասարակշռություն ապահովելու մեխանիզմներ ներդնել:

Կանանց ՀԿ-ների շատ ներկայացուցիչների կարծիքով՝ օրենքի պահանջ քաղաքական կուսակցությունների ցուցակներում կանանց թիվը մեծացնելու վերաբերյալ ստիպում է կուսակցությունների դեկավարներին մտածել գրագետ, որակավորված կանանց պատրաստելու մասին և կհանգեցնի նրան, որ կանանց քաղաքական մասնակցության ուղղությամբ տարվող աշխատանքը կակտիվացվի ոչ միայն նախընտրական շրջաններում:

6. Հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը

ՀԿ-ների ակտիվիստների գնահատմամբ՝ հասարակության վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցությանը վերջին 5 տարվա ընթացքում փոխվել է դեպի դրական ընկալումը. «Հասարակությունն ավելի քարյացակամ է տրամադրված կանանց նկատմամբ», «ՀՀ Ազգային ժողովի նիստերում, քաղաքական կուսակցությունների միջոցառումներում կանանց տեսնելի ու լսելը սովորական է դարձել», «Զաղաքացիներն այլև այդ փաստին կլորացած աշքերով շեն նայում, ընդհակառակը՝ ինչ-որ շափով հպարտանում են, որ կանայք այս կամ այն ոլորտում հաջողությունների են հասնում»:

Ընդգծվեցին նաև փոփոխությունները երիտասարդական միջավայրում: Երիտասարդ աղջիկները տարեցտարի ավելի ու ավելի ակտիվ են դառնում, ինչը բնականոն է ընկալվում երիտասարդ տղամարդկանց կողմից, աստիճանաբար կոտրվում են հասարակության մեջ կանանց դերի կարծրատիպային պատկերացումները:

Հասարակության՝ կանանց քաղաքական մասնակցության ընկալման վրա դրական ազդեցություն է ունեցել, անկասկած, վերջին 5 տարիների ընթացքում կին պատգամավորների ցուցաբերած ակտիվությունը: Սակայն հակասական էին նրանց ակտիվության աստիճանի և գործունեության որակի գնահատականները: Ոնանք համարում էին, որ կանայք շատ ավելի նշանակալի ակտիվություն են ցուցաբերել Ազգային ժողովի աշխատանքներում, քան շատ տղամարդկեր ավելի քննադատաբար էին արտահայտվում՝ նշելով որոշ կին պատգամավորների պասիվությունը:

Այսուհանդերձ, կարծիք հայտնվեց, որ հասարակության առանձին շերտերում դեռևս պահպանվում է կարծրատիպային վերաբերմունքը կանանց դերին քաղաքականության մեջ և կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցությանը: Այսպես, ՀՀ Հանրային խորհրդի ժողովրդագրության և գենդե-

բային հարցերի հանձնաժողովի նախագահ Ելենա Վարդանյանը համարում է. «...Հասարակությունը ժողովրդավարացվում է, բայց կարծրատիպերը ավելի ու ավելի ամրանում են: Հատկապես մերժողական վերաբերմունքը կանանց քաղաքական մասնակցության առնչությամբ ոչ թե միջին կամ ստորին խավում է արտահայտվում, այլ հենց վերին խավում: Այս մարդիկ, որոնք ակտիվ մասնակցում են քննարկումներին, ակտիվ ստորագրում են միջազգային պարտավորություններ, այդ նոյն մարդիկ կարող են իրենց կարծիքը, որպես անձնական կարծիք, ներկայացնել, որ կնոջ տեղը ամեն դեպքում քաղաքականությունից դուրս է»¹²⁵:

Այն հարցին, թե նպաստո՞ւմ է արդյոք հասարակական կարծիքը կանանց քաղաքական մասնակցությանը, և ի՞նչ պատճառներ են խանգարում կանանց քաղաքականության մեջ առաջ տանելուն, ֆոկուս խնդերի մասնակիցների մեծամասնությունը պատասխանում էր, որ հասարակական կարծիքը մեծ ազդեցություն է ունենում կանանց վարքագծի վրա, որ հասարակության քարյացական վերաբերմունքն օժանդակում է կանանց քաղաքական ակտիվությանը, նպաստում նրանց առավել վստահ գործողություններին: Միևնույն ժամանակ Գյումրիի մի քանի ակտիվիստներ կարծիք հայտնեցին, որ «հասարակական կարծիքը կառավարելի երևույթ է, որը կարելի է անտեսել», «հասարակական կարծիքը ազդեցություն չի թողնում, հատկապես՝ կին պատգամավորների վրա», «եթե կինն իր առջև նպատակ է դրել, կիասնի դրան, և հասարակական կարծիքն այդ դեպքում որևէ նշանակություն չի կարող ունենալ»:

Հնդիանարացներով ֆոկուս խնդերի, կլոր սեղանների և հարցագրույցների մասնակիցների կարծիքները՝ կարելի է առանձնացնել այն առավել հաճախ նշված գործոնները, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական մասնակցությունը.

- քաղաքական համակարգը, որը դժվարությամբ է կին լիդերներին թույլ տալիս ներգրավել քաղաքականության մեջ, քանի որ համակարգում գործող մեխանիզմները կիրառելի չեն կանանց համար,
- իշխանության կառույցների՝ կանանց քաղաքական աճին աջակցելու քաղաքական կամքի բացակայությունը,
- ֆինանսական և սոցիալական կապիտալի բացակայությունը կանանց շրջանում, ոչ միայն ֆինանսական միջոցները, այլև սոցիալական կապերը, որոնք հաճախ ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան փողը, այդ կապերից դուրս լինելն արդեն իսկ խոչընդոտ է, քանի որ շատ կանանց համար անթույլատրելի է մտնել զուտ «տղանարդկային» խաղի մեջ,
- ոչ բավարար ձևավորված քաղաքական մշակույթը, հայրիշխանական մտածողությունը, դժվար հաղթահարելի գենդերային կարծրատիպերը,

125 Ելենա Վարդանյանի հետ հարցագրույցից:

- կանանց ցածր ինքնազմահատականը և անվստահությունը սեփական հնարավորություններին,
- կանանց կրկնակի ծանրաբեռնվածությունը, տնային պարտականությունների ծանր բեռը, մասնագիտական գործունեությունը հասարակական-քաղաքական աշխատանքի հետ համատեղելու անկարողությունը:

7. Մուտք քաղաքականություն. մոտիվացիայի գենդերային հայեցակետերը

2007 թվականից հետո ՀԿ-ների ակտիվիստների միահամուռ կարծիքով՝ քաղաքականություն մտնելու մոտիվացիան՝ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց դեպքում զուտ անձնական շահերն ու կարիերան, որոշ փոփոխության է ենթարկվել, տարրեր կարծիքներ են արտահայտվել, որոնց վրա, անկասկած, ազդեցություն է ունեցել նախորդ գումարման Ազգային ժողովի կին պատգամավորների ակտիվ գործունեությունը:

Չնայած այն հանգամանքին, որ մեծ թվով հարցվածների շրջանում պահպանվում է այն կարծիքը, թե կանանց մոտիվացիան տարրերվում է տղամարդկանց մոտիվացիայից, որոնք խորհրդարան են մտնում «ինքնահաստատվելու, մասնագիտական առաջխաղացում ունենալու», «կառավարման որոշակի լծակներին մոտ լինելու և դրանցից հնարավորինս օգտվելու», «սեփական բիզնեսի համար տանիք ունենալու կամ նոր բիզնես սկսելու», «անձեռնմխելիություն ձեռք բերելու», «նյութական բարեկեցությունը բարելավելու» նպատակով, միաժամանակ ընդգծվում էր, որ շարժադիրները պայմանավորված են ոչ այնքան պատգամավորի սեռով, որքան անձնային արժեքներով, մարդու մտածելակերպով:

«Տղամարդկանց և կանանց դրդապատճառները նույնն են: Ամեն անհայտ իր մտածելակերպով, զաղափարներով է մոտենում: Չէի ասի, որ բոլոր տղամարդիկ պաշտոնի կամ բիզնեսի համար են գնում: Նրանք էլ են մտածում երկրի այսօրվա դիրքի փոփոխանան համար, նույնն էլ նաև կինը: Ըստ անհատի մտածելակերպի ու զաղափարի»:

«Ես հեռու եմ այն մտքից, որ բոլոր կանայք շատ լավն են, իսկ բոլոր տղամարդիկ՝ վատը: Անկասկած, որպես կանոն, պատճառները նույնն են թե՝ տղամարդկանց, թե՝ կանանց հանրությունում, բայց չափարաժինները կարող են տարրեր լինել: Եթե տղամարդկանց որոշ տոկոսը պատրաստվում է խորհրդարանի պատգամավոր դառնալ, որպեսզի անձեռնմխելիություն ձեռք բերի, ապա հնարավոր է, որ կանանց շրջանում այդ տոկոսն ավելի փոքր է: Երկու ընկերակցությունում էլ կան մարդիկ, որոնք առաջնորդվում են մաքուր ալտրուիզմի զաղափաներով, իրենց երկրին, իրենց ընտանիքին օգտակար լինելու

ցանկությամբ և այլն, բայց, իհարկե, կան նաև մարդիկ, որոնք զուտ պրագմատիկ գաղափարներով են առաջնորդվում»¹²⁶:

Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում, բայց ավելի քիչ չափով, կան այնպիսիք, որոնք ծգտում են խորհրդարան ոչ միայն շահի համար, այլև հանուն հանրապետությունում իրավիճակը փոխելու բարի նպատակների: Ընդ որում, ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների դիտարկումների, կին պատգամավորներն ավելի ակտիվ են, ավելի պատասխանատու են վերաբերվում իրենց պարտականություններին, «4-րդ գումարման Ազգային ժողովի բոլոր 12 կանայք ակտիվ մասնակցել են բոլոր քննարկումներին, բարձրաձայնել արդի հիմնախնդիրները, պաշտպանել իրենց դիրքորոշումը, ինչի շնորհիվ հանրապետության քաղաքացիները բոլորին դեմքով լավ ճանաչում են, ինչը չի կարելի ասել շատ տղամարդ պատգամավորների մասին»:

«Երկրում քաղաքականությամբ զբաղելն ավելի շուտ վաստակելու միջոց է կամ վաստակ ապահովելու, քան ծառայելու: Բայց եթե գնահատում ենք պատգամավոր կանանց և պատգամավոր տղամարդկանց վարքագիծը, ապա այստեղ ես լուրջ տարրերություն տեսնում եմ: Նախ՝ շահերի մակարդակները տարրեր են, եթե վերցնենք կանանց ու տղամարդկանց նյութական հնարավորությունները: Ուստի արդարացի չի լինի մեղադրել կանանց, թե նրանք նոյն պես շահի հետևից են գնում քաղաքականություն, ամեն դեպքում նկատելի են Ազգային ժողովում կանանց վարքագծի տարրերությունները: Նրանք ավելի ակտիվ են, ավելի պատասխանատու և ստացած աշխատավարձն արդարացնում են իրենց ներկայությամբ, արտահայտվելով, կարծիքներ հայտնելով, ծրագրերի մշակման յուրաքանչյուր քայլին իրենց մասնակցությամբ: Ազգային ժողովի բոլոր կանայք ընդհանուր առնամբ իրենց ակտիվությամբ մի աստիճան բարձր են բոլոր տղամարդկանցից»¹²⁷:

Կարծիք է արտահայտվել նաև, որ կանանց քաղաքականություն մտնելու մոտիվացիան արմատապես տարրերվում է տղամարդկանց մոտիվացիայից, որ «տղամարդիկ հիմնականում ավելի շատ իշխանություն ձեռք բերելու, իշխանությունն օգտագործելու համար են գնում դրան, քան անգամ փողի, իսկ կանայք, թերևս նրանց մեծ մասը, հաշվի չառնենք մասնավոր դեպքերը, այնուամենայնիվ, մտածում են հասարակական փոփոխությունների մասին ավելի, քան տղամարդիկ», «եթե տղամարդու համար հիմնականում նպատակը բիզնես զարգացնելն ու գումար վաստակելն է, ապա կանայք ավելի շատ իրենց ընտանիքի համար են անհանգստանում, երեխաների ապագայի, և կինը միայն ընտանիքով չի սահմանափակվում, նա մտածում է նաև մյուսների՝ թեկուզ բարեկամների, ժողովրդի մասին», «կանայք խորհրդարան են զնուս որպես կուսակցության անդամներ, գաղափարախոսական նկատառումներով»:

126 Ֆոկուս խմբերի մասնակիցների ելույթներից:

127 Ֆոկուս խմբերի մասնակիցների ելույթներից:

իսկ տղամարդիկ մեծ մասամբ օլիգարխներ են, գործարար մարդիկ, ուզում են իրենց դիրքն ապահովել, գնահատելի լինել, մեծ իրավունքներ ունենալ», «կանանց և տղամարդկանց նպատակները խորհրդարանում խիստ տարրեր են, կան կանայք, որոնք իրենց օրինակով ուզում են փոխել գոյություն ունեցող այն կարծրատիպը, թե քաղաքականությունը սույ տղամարդկանց գործունեություն է»¹²⁸:

Բնութագրական է, որ նման կարծիքի կողմնակից էին Վայքի ու Եղեգնաձորի ֆոկուս խմբերի մասնակիցների մեծ մասը և հասարակական շարժման որոշ փորձագետներ:

8. Կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների համագործակցությունը որպես հասարակության ժողովրդավարացման գործոն

Կանանց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ու վերջիններին կանանց խորհուրդների համագործակցության զարգացման շարժնթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել են այդ կառույցների և քաղաքացիական հասարակության փոխազդեցության ձևերն ու ոլորտները: Կանանց ՀԿ-ները բազմաթիվ հանդիպումներ են նախաձեռնում, համատեղ սեմինարներ, կլոր սեղաններ, համաժողովներ, որոնք նպաստում են կապերի հաստատմանը, տեղեկությունների փոխանակմանը, տարրեր հիմնախնդիրների և դրանց լուծման ճանապարհների որոնմանը: Հասարակական կազմակերպությունները գրականություն, անցկացվող հետազոտությունների արդյունքներ տրամադրելու, կուսակցությունների անդամ կանանց կրթական մակարդակը բարձրացնելու ծառայություններ են մատուցում՝ անցկացնելով հատուկ դասընթացներ դրանց ակտիվիստների համար և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հասարակական կազմակերպությունները խոր ըմբռնում են ցուցաբերում և գիտակցում են այդ կառույցների միջև համագործակցության դերը քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարական գործնթացների զարգացման խնդրում: Հետպահետև ավելի հաճախ են քաղաքական կուսակցությունների կանայք ընդգրկվում արդի հիմնախնդիրների համատեղ ըննարկումներում, մասնավորապես՝ օրենսդրական դաշտի կատարելազորդմանն ուղղված նախաձեռնությունների քննարկումներում, ինչի օրինակն են ընտրական օրենսգրքում փոփոխությունների, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրինագծի վերջերս կայացած քննարկումները:

128 Ֆոկուս խմբերի մասնակիցների ելույթներից:

ՀԿ-ների լիդերների գնահատմամբ՝ նման միջոցառումներն ուսանելի են եղել քաղաքական կուսակցությունների կանաց համար, նրանք սկսում են զիտակցել, որ հսկայական տեղեկատվություն կարող են ստանալ ՀԿ-ներից. Վիճակագրական տվյալներ, ՀԿ-ների անցկացրած հետազոտություններ, դեպքեր, այսինքն՝ այն ամենը, ինչ իրենք չունեն և ինչի համար ռեսուրսներ ու հնարավորություններ չունեն: Միևնույն ժամանակ, ՀԿ-ների ակտիվիստների մեծ մասի եզրահանգմամբ, այդ գործընթացը համագործակցություն որակելու համար առաջմն իմբռեր չկան, նախ այն պատճառով, որ «քացակայում է հակառակ շարժումը կուսակցություններից դեպի ՀԿ սեկտոր, դեպի ժողովուրդ»: Սակայն նախընտրական արշավների փոլում քաղաքական կուսակցություններն ակտիվորեն օգտագործում են հասարակական կազմակերպությունների հնարավորությունները որպես քարոզչության հարթակ»:

Քաղաքացիական հասարակության այս երկու հատվածների միջև իրապես գործընկերային փոխհարաբերությունների զարգացումը, հասարակական շարժման լիդերների խորին համոզմամբ, հնարավոր է միայն միասնական նպատակների և ուսումնական առկայության պարագայում, որոնց շուրջ նրանք կարող են միավորվել:

9. Խոչընդոտմերը կանաց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների համագործակցության ճանապարհին

Չնայած ընդլայնվող համագործակցությանը՝ դեռևս չի հաջողվել հաղթահարել գոյություն ունեցող անվատահությունը քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների միջև, պահպանվում է կուսակցությունների կողմից ՀԿ-ների՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի դերի ու նշանակության թերագնահատումը, «չի դրսողվում հասարակության և բարձրագույն ու ոչ բարձրագույն իշխանության միջև կապի ըմբռնումը, այն բանի ընկալումը, որ կուսակցությունը հենակում է հասարակական կարծիքի վրա: Այդ կապը, որպես կանոն, կամ մեկ խողովակով է իրականացվում, կամ բավականաշափ հիմնավորված չէ»¹²⁹:

Կանաց հասարակական կազմակերպությունները մտավախություն են հայտնում, որ կուսակցությունները կարող են սեփական քաղաքական շահերի համար իրենց օգտագործել որպես ամքիոն և վերածել կուսակցության հավելուկների, որոնք ավելի շատ կուսակցության խնդիրնեն են լուծում, քան իրականացնել սեփական կանոնադրական նպատակներն ու առաքելությունը:

129 Ֆոկուս խմբերի մասնակիցների ելույթներից:

10. Հասարակական կազմակերպությունների դիրքորոշումը կին թեկնածուներին պաշտպանելու հարցում

Հետազոտությունը ցույց է տվել, որ Հայաստանի կանանց կազմակերպությունները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի կին թեկնածուների առաջադրման և պաշտպանության խնդրում իրենց առաքելությունը նախկինի պես տեսնում են ոչ այնքան ընտրական գործընթացներում կանանց անմիջականորեն պաշտպանելու գործում, որքան միջընտրական ժամանակաշրջանում մշտական, նպատակաուղղված ու հետևողական աշխատանքի մեջ՝ ուղղված կանանց քաղաքական մասնակցության պատրաստմանն ու ակտիվացմանը, դրա համար բարենպաստ սոցիալական և իրավական պայմանների ստեղծմանը, որոնք կապահովեն կանանց և տղամարդկանց առաջմղման հավասար հնարավորություններ: Չբացառելով տեսականորեն կին թեկնածուների պաշտպանության հնարավորությունը որոշ պայմաններում կամ կանանց հասարակական կազմակերպությունների կողմից միասնական թեկնածուների առաջարրումը, լիդերների և ակտիվիստների մեծ մասը, այսուհանդերձ, տարակույսներ ուներ նման մոտեցման նպատակահարմարության ու ճշմարտացիության հարցում, համարելով, որ հասարակական կազմակերպությունների հիմնական գործառույթն ազատ, արդար, ազնիվ ընտրությունների ապահովմանն աջակցելն է:

Այսպես, Կանանց հանրապետական խորհրդի նախագահ Արդա Թոփուզյանը նշում է. «Կանանց հանրապետական խորհրդունքը երրևէ որևէ մեկին չի աջակցել և չի պատրաստվում աջակցել: Մենք արդար, քափանցիկ ընտրական գործընթացների կողմնակից ենք: Մեր կազմակերպությունը վերահսկում է գործընթացը և ցանկանում է, որ ընտրությունները լինեն արդար ու քափանցիկ: Մենք չենք աջակցում ոչ կուսակցությունների, ոչ առանձին անհատների»¹³⁰:

«Կանանց ոեսուրսային կենտրոն» ՀԿ-ի նախագահ Գոհար Շահնազարյանը նշում հավաստիացնում էր. «Մեր կազմակերպությունը կարող էր կազմակերպել նաև PR արշավ՝ օգտագործելով մեր ոեսուրսները, եթե կին թեկնածուի մոտեցումները համապատասխանեն մեր մոտեցումներին: Եվ նման աջակցությունը կարող էր ուղարկած առումով ճշշտ լինել: Բնական է, եթե հնարավոր լիներ ՀԿ-ների կուալիֆիկացիոն ստեղծել կին թեկնածուներին պաշտպանելու համար, ապա արդյունքը շատ ավելի արդյունավետ կլիներ»¹³¹:

«Ես վստահ չեմ, որ կանայք պետք է քվեարկեն կանանց օգտին, - նշում է Նատալյա Մարտիրոսյանը: - Չեմ ուզում ասել, թե կանանց ՀԿ-ները չեն քարոզում, ընդհակառակը, նրանք ամեն կերպ նպաստում են, որ կանայք առաջ գնան, որ կանայք ոչ միայն առաջադրվեն, այլև ընտրվեն: Այնպես որ կարծում եմ՝ այս առումով աջակցությունը շոշափելի է և պետք է լինի: Դա անհրաժեշտ

¹³⁰ Արդա Թոփուզյանի հետ հարցազրույցից:

¹³¹ Գոհար Շահնազարյանի հետ հարցազրույցից:

է, քանի որ կին թեկնածուների և կանանց կազմակերպությունների ուղմավարական նպատակները պետք է համբակնեն: Եթե ուզում ենք, որ խորհրդարանում կանանց լուրջ ներկայացուցություն լինի, ապա դա ենթադրում է նաև աջակցություն կանանց կազմակերպությունների կողմից, որպեսզի հետո հնարավոր լինի պահանջել կին պատգամավորներից: Աջակցության ձևերը կարող են տարբեր լինել. վստահված անձանց ներկայություն, աշխատանք մեծամասնական ընտրակարգով առաջադրված կին թեկնածուների տեղական շտաբներում»¹³²:

«Կանանց կազմակերպությունների կողմից իրենց թեկնածուներին առաջդրելու և պաշտպանելու որոշակի օրինակներ չգիտեմ, - կարծիք է հայտնել Աղավնի Կարախանյանը: - Կանանց շատ կազմակերպություններ, մասնավորապես՝ Համասարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, առաջարկել են, որ թեկնածուներ առաջադրվեն նաև կանանց կառույցներից: Հասարակական գործիչները, բնական է, մեծամասնական ցուցակներում չեն լինի, իսկ կուսակցության անդամ դառնալ հետազոյւմ կուսակցական ցուցակում հայտնվելու համար նույնանուայնքան էլ լավ «մտադրություն» չէ: Եվ ստացվում է, որ գործ ունենար փայտի երկու ժայրերի հետ: Ստացվում է, որ գործունեության դաշտը շատ փոքր է: Եվ չեմ կարծում, թե դա լիարժեք քաղաքական մասնակցություն կլինի»¹³³:

«Հաստատ համաձայն չեմ, որ հասարակական կազմակերպությունը պետք է քաղաքական կուսակցությունների կողքին լինի և առավել ևս օգնի թեկնածուներին: Ես՝ որպես հասարակական կազմակերպության նախագահ, - ընդգծում է Նոննա Մարգարյանը, - շփման կետ չեմ տեսնում: Բացի այդ, կարծում եմ՝ իրենք՝ քաղաքական գործիչները պետք է ՀԿ-ների կողքին լինեն»¹³⁴:

11. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԳԱԿԱՐԳԸ և ՈՎԱԳՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՔ ԿԱՆԱՆԳ և ՄՊԱՄԱՐԴԼԻԿԱՆԳ ՀԱՎԱՍԱՐԱԿԵՇՉՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՓԱՀԻՆՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ դեռևս վաղ է խոսել հասարակության կյանքում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության ապահովման վրա ՀՀ կառավարության կողմից ընդունված Գենդերային քաղաքականության հայեցակարգի և ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի ազդեցության մասին: Ռազմավարության իրականացումն ամենուրեք չի սկսվել: Երեք տարածաշրջաններից միայն Վայոց ձորի մարզում է սկսվել գենդերային հավասարության խնդիրների մասին գիտելիքների բարձրացման աշխատանքը: Փոխմարզ-

132 Երևանի ֆոկուս խմբում Նատալյա Մարտիրոսյանի ունեցած ելույթից:

133 Երևանի ֆոկուս խմբում Աղավնի Կարախանյանի ունեցած ելույթից:

134 Նոննա Մարգարյանի հետ հարցագրույցից:

պետի և համայնքների ղեկավարների ակտիվ մասնակցությամբ անցկացվել է սեմինարների շարք բնակչության տարբեր խմբերի համար, ներառյալ՝ երիտասարդությունը և դպրոցականները։ Երևանում և Գյումրիում հասարակական կազմակերպությունների լիդերներն այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին տեղյակ չեին, ավելին, Գյումրիի ֆոկուս խմբի 21 մասնակիցներից միայն երկուսը գիտեին հաստատված հայեցակարգի և ռազմավարական ծրագրի մասին։ Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հավանաբար ոչ բոլոր մարզերում է, որ ծրագրի իրականացման համար պատասխանատու անձինք ամենայն բարեխնությամբ են կատարում իրենց վրա դրված պարտականությունները։ Առաջին ընթերցմամբ ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի մասին գիտեին միայն Երևանում գործող հասարակական կազմակերպությունների լիդերները, և նրանց եզակի անցումներ էին ծանր օրենքի բովանդակությանը։

Երևանում և մարզերում անցկացված ֆոկուս խմբերի մասնակիցները մտավախություն էին հայտնում, որ այդ փաստաթղթերը կարող են արժանանալ կանանց դրության բարելավման մասին նախորդ փաստաթղթերի ճակատագրին, որոնք այդպես ել մնացին բորբի վրա։ Այդ կապակցությամբ առաջարկություններ հենցին ռազմավարական ծրագրի իրականացման հասարակական մշտադիտարկման, ինչպես նաև առկա հաստիքների շրջանակներում մարզպետարաններում և քաղաքապետարաններում գենդերային քաղաքականության իրականացման համար պատասխանատու անձանց նշանակման և ռազմավարության իրագործման համար ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտության մասին։

ՎԵՐՋԱԲԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍԻՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններն անցել են ՀՀ ընտրական օրենսգրքում որոշակի փոփոխություններ կատարելուց հետո, մասնավորապես՝ գենդերային քվոտան 15%-ից բարձրացվեց մինչև 20%, և պահանջ դրվեց կանանց թեկնածություններն ընդգրկել քաղաքական կուսակցությունների ցուցակների յուրաքանչյուր հճայակում՝ սկսած 2-րդ համարից, յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների 80%-ից ոչ ավելի հարաբերակցությամբ:

Ընտրությունների արդյունքներով՝ ՀՀ Ազգային ժողով անցավ 5 կուսակցություն. Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացավ ծայների 44,1%-ը, «Քարգավաճ Հայաստանը»՝ 30,2%-ը, «Ժառանգությունը»՝ 5,8%-ը, ՀՅ դաշնակցությունը՝ 5,7%-ը, «Օրինաց երկիրը»՝ 5,5%-ը և կուսակցությունների «Հայ ազգային կոնգրես» դաշինքը՝ 7,1%-ը:

Կանանց ներկայացվածությունը ՀՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովում կազմում է 10,67% 2007 թ. ընտրությունների 9,2%-ի դիմաց, այսինքն՝ քվոտայի բարձրացումն ապահովել է անհան առաջընթաց:

ՀՀ Ազգային ժողովում տեղերի մեծ մասը ստացած Հայաստանի հանրապետական կուսակցության խմբակցության 69 պատգամավորների թվում ընդդամնենը 9-ն են կին կամ՝ 13%-ը:

Թվաքանակի մեծությամբ երկրորդ խմբակցության՝ «Քարգավաճ Հայաստանի» կազմում 37 պատգամավորներից սույ 2-ն են կին, ինչը կազմում է ընդդամնենը 5,4%, այն դեպքում, եթե չորրորդ գումարման Ազգային ժողովում կանայք այդ խմբակցությունում կազմում են 12%:

«Հայ ազգային կոնգրես» խմբակցության 7 պատգամավորների շարքում միայն մեկ կին կա՝ 14%: ՀՅ դաշնակցության խմբակցությունը խորհրդարան մտավ առանց կանանց, այն դեպքում, եթե 2007 թ. ընտրությունների արդյունքներով ՀՅ-ն այն երկու կուսակցություններից մեկն էր, որոնք, իրենց կազմում

ապահովելով կանանց 18,7%, գերազանցեցին օրենքով հաստատված 15%-ի քվոտան:

Հիմքերորդ գումարման Ազգային ժողովում ներկայացված վեց խմբակցություններից միայն երկուսն են ապահովել իրենց կազմում կանանց 20%-ի ներկայությունը՝ «Ժառանգությունը» և «Օրինաց երկիրը»՝ ներկայացնելով 1-ական կին 5 պատգամավորից բաղկացած խմբակցությունում:

Քաղաքական կուսակցությունները, համամասնական ընտրացուցակներում ներկայացնելով միջինը 22,8% կանանց, դեռ ֆակտո, ըստ ընտրությունների արդյունքների, իրենց խորհրդարանական խմբակցություններում ընդգրկեցին ընտրական ցուցակներում ներկայացվածի կեսից էլ քիչ թվով կանանց:

Քանի որ 14 կանանցից երկուսն ընտրվել են մեծամասնական ընտրակարգով, կարելի է պնդել, որ խորհրդարանական կուսակցությունները որևէ առաջընթաց չունեցան օրենքով նախատեսված գենդերային քվոտան ապահովելու հարցում:

Ավելին, ընտրական օրենսգրքում ամրագրված 20%-անոց քվոտան, որ կոչված էր ապահովելու կանանց համապատասխան մասնակցությունը, որոշ իմաստով արժեգրկվեց: Ըստ Էության, կանանց թիվը մեծացնելուն նպաստելու համար օրենքով նախատեսված մեխանիզմը չգործեց ներկուսակցական փոխատեղումների և ինքնարացարկների պատճառով:

Մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավոր ընտրված կանանց թվի շարժընթացի ուսումնասիրությունը՝ սկսած 1995 թվականից, վեր է հանում նվազման միտում, ինչը բացատրվում է մեծամասնական ընտրակարգով ընտրությունների դաժան պայքարով և առևտրայնացմամբ, սև տեխնոլոգիաների կիրառմամբ և սուլ մասամբ միամանդատ ընտրատարածքների թվի նվազմամբ: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հետևանքով միամանդատ ընտրատարածքների թիվը ԱԺ երկրորդ գումարումից (1999) մինչև չորրորդ գումարումը (2007) նվազել է մոտավորապես երկու անգամ, այն դեպքում, եթե մեծամասնական ընտրակարգով առաջադրված կանանց թիվը նվազել է 10 անգամ:

Այսուհետերձ, հարկ է նշել մեծամասնական ընտրակարգով ընտրություններում կանանց մասնակցության որոշակի ակտիվացումը 2007 թ. ընտրությունների համեմատությամբ: Եթե 2007 թ. պառաջարդված 11 կանանցից 6-ը հետագայում ինքնարացարկ հայտնեցին՝ այդպես էլ շմտնելով ընտրական մրցավագրի մեջ, ապա 2012 թ. ընտրություններում ընդամենը մեկ ինքնարացարկ է հայտնվել, այն դեպքում, եթե մեծամասնական ընտրակարգով ինքնարացարկ է հայտնել 40 տղանարդ թեկնածու: Մեծացել է նաև այն կանանց թիվը, որոնք քեարկել են մեծամասնական ընտրակարգով ինքնառաջադրման սկզբունքով: Եթե 2007 թ. բոլոր իինք քեարկվող կանայք առաջադրվել էին իրենց

կուսակցությունների նախաձեռնությամբ, ապա 2012 թ. ընտրություններում քվեարկվող 11 կանանցից 6-ն անկուսակցական էին, և միայն 2-ն էին ինքնառաջարկվել կուսակցությունների կողմից:

Կանանց ներկայացվածության նվազումը Ազգային ժողովում այն իրողության հետևանքն է, որ 2012 թ. ընտրություններում, ինչպես 2007 թ., պահպանվեց հետքնտրական ինքնարացարկների գործելակերպը: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ ինքնարացարկի դիմում է ներկայացրել պատգամավորի 102 թեկնածու, որոնցից 26-ը՝ կանայք, ինչը կազմում է 25%, ընդ որում, նրանցից 24-ը ներկայացրել են այն կուսակցությունները, որոնք պատգամավորական մանդատների բվով, ըստ ընտրությունների արդյունքների, զբաղեցրել են առաջին և երկրորդ տեղերը: Եվ եթե Հայաստանի հանրապետական կուսակցության 14 ինքնարացարկ հայտնած կանանցից միայն մեկն էր ցուցակի անցողիկ տեղում, իսկ մնացածը ներկայացված էին 46-րդ տեղից սկսած, ապա «Բարգավաճ Հայաստան» 10 մանդատից հրաժարված կանանցից 3-ը տեղեր էին զբաղեցնում կուսակցական ցուցակի մինչև 28-րդ համարը, այսինքն՝ անցողիկ տեղերում էին:

Այսպիսով, օրենսդրությամբ ներդրված 20%-անոց քվուրան և քաղաքական կուսակցությունների ցուցակներում կանանց յուրաքանչյուր հնգյակում ընդգրկելու պահանջը, սկսած միայն 2-րդ համարից, կանանց ներկայացվածության իրական մեծացում չապահովվեցին: ՀՀ նորմատիվ Ազգային ժողովի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության մարմնի գեներատյին կազմը շարունակում է մնալ գեներացյանուն անհավասարակշիռ: Կանայք ՀՀ Ազգային ժողովում կազմում են ընդամենը 10,67%, ինչը զգալիորեն ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից, որը կազմում է 19,6%:

Որոշ դրական փոփոխություններ գեղի ունեցան ՀՀ Ազգային ժողովի ղեկավարությունում և նրա մշտական հանձնաժողովներում: Խորիրդարանի փոխսխոսնակ ընտրվեց Հերմինե Նարդայանը, Եվրոպական ինտեգրացիայի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Նաիրա Զոհրաբյանը, մարդու իրավունքների և հասարակական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ Էլինար Վարդանյանը:

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության դիտարկումն ու գնահատումը հնարավորություն տվեցին վեր հանելու ընտրություններում կանանց ցածր մրցունակությունը պայմանավորող պատճառները և այն գործոնները, որոնք խոչընդոտում են կանանց քաղաքական կարիերան.

- **պետական մակարդակով կանանց կաղութիւնի պարագանական համակարգի և առաջարկման համար կաղութիւնի ուղղելի բացակայությունը,**

- կանանց սահմանափակ ներկայացվածությունը հասարակության կենսագործունեության այն ոլորտներում և կառավարման այն մակարդակներում, որպես կանայք կարող են բաղարական պալրաստության դպրոց անցնել և որպեսից կարող են բաղարականության ոլորտ առաջ քաշվել,
- կանանց առաջնամասն, պետական կառավարման ոլորտի որոշումների ընդունման մակարդակում գենդերային անհավասարակշուրթյան հաղթահարման ուղղված պետական գենդերային բաղարականության դանդաղ դեմքերը,
- բաղարական կուսակցությունների կողմից «ՀՀ Ազգային ժողովում որպես ներկայացուցչական մարմնում, կանանց ներկայացվածության բարձրացման միջոցների մշակման անհրաժեշտության բերագնահապումը,
- ներկուսակցական ժողովրդավարության դեֆիցիդը, կանանց բաղարական սոցիալականացման և հասարակական-բաղարական ոլորտում նրանց մասնակցության ակտիվացման կուսակցական մեխանիզմների բացակայությունը,
- ընկրական գործընթացների անկարարությունը, բաղարական պայքարի քրեականացումը և ընկրությունների առևտությանացման բարձր ասրիճանը,
- ժողովրդավարական ինսպիրուվակների՝ հասարակական կազմակերպությունների, առաջին հերքին՝ կանանց կազմակերպությունների բոլորությունը, ինչպես նաև կանանց հասարակական շարժում չձևավորվելը,
- կանանց շրջանում բաղարական պայքարի փորձի բացակայությունը և բեկնածու կանանց՝ ընկրարշավի վարման ժամանակակից դեխենողգիաներին չփրապելը,
- հասարակության բաղարական մշակույթի ոչ բավարար մակարդակը և կանանց բաղարական լիդերության պալրաստման ու զարգացման համակարգի բացակայությունը,
- անվարահությունը կին բեկնածուների նկատմամբ, որ պայմանավորում է խպրական գործելակերպերը չգիրակցելը հասարակության մեջ և իրենց իսկ կանանց շրջանում,
- կանանց ցածր ինքնազնահապականը և ներքին հոգեբանական արգելքները՝ որպես կուսակցություններում և հասարակական շարժման մեջ կանանց բաղարական սոցիալականացման համակարգի բացակայության հետևանքը,

- **հասարակության մեջ հայրիշխանական նախապրամադրվածության և գեներացին կարծրագիտերի գերիշխումը, դակավիճական կանանց քաղաքական մասնակցությունը չխրախուսելը,**
- **հասարակության քաղաքական կյանքում կանանց մասնակցության սահմանափակ ոլորտի մասին կարծրագիտային պարկերացումների դարձումը ՁԼՄ-ներում:**

Երաշխավորություններ

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության դիտարկման ու գնահատման արդյունքները մի շաբթ հանձնարարականների հնարավորություն են տալիս.

Պետքության կողմից ՍՎԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիայի, 2002-2007 թթ. ժամանակաշրջանի համար Հայաստանի զեկույցի կապակցությամբ ՍՎԿ-ի Կանանց նկարմամբ իսլրականության վերացման կոմիտեի հանձնարարականների իրականացման և գեներացին հավասարության հասնելու նպատակով Հայաստանի օրենսդրության կարգահագործման ոլորտում.

▪ ՀՀ կառավարությանը

- ապահովել պետության միջազգային պարտավորությունների կատարումը, մասնավորապես՝ Արևելյան գործընկերության միջոցառումների, գեներացին հավասարության հասնելու և քաղաքական գործունեության մեջ կանանց ներգրավելու ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկել պետական գեներացին քաղաքականության իրականացման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, ապահովել նախարարությունների և տարածաշրջանային իշխանության մարմինների կողմից կառավարման համակարգի որոշումների ընդունման մակարդակում կանանց առաջ նղելու վերաբերյալ Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման լայն վերահսկողություն,
- ուսումնասիրել եվրոպական երկրների փորձը, պետական գործելակերպում դրական խտրականության մեթոդների ներդրման հնարավորությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գեներացին հավասարակշռության հասնելու համար,
- քաղաքական կուսակցությունների գործունեության ֆինանսավորումն իրականացնել՝ հաշվի առնելով նրանց կողմից իրականացվող գեներացին քաղաքականությունը և կանանց քաղաքական մասնակցության առաջնորդման ապահովումը:

ՀՀ Ազգային ժողովին

- արագացնել ՀՀ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հմարավորությունների ապահովման մասին» օրենքի ընդունումը՝ դրանում նախատեսելով հասարակության հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովման գործիքներ,
- ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հանձնարարականներին համապատասխան՝ քննարկել ՀՀ ընտրական օրենսգրքում կուսակցական ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան առնվազն 25%-ի բարձրացման փոփոխություն մտցնելու հարցը, օրենտդրուեն ամրագրել, որ ցուցակի յուրաքանչյուր հենցակում պետք է մյուս սերի առնվազն մեկ ներկայացուցիչ լինի, իսկ պատգանապորական մանդատից կնոջ հրաժարվելու դեպքում նրա տեղը պետք է գրադարձնի ցուցակում ընդգրկված հաջորդ կինը:

Քաղաքական կուսակցություններին

- մշակել և իրականացնել համալիր միջոցառումներ քաղաքական կուսակցությունների ծրագրերում և գործելակերպում գենդերային բաղադրիչներն ընդգրկելու ուղղությամբ, իրականացնել կուսակցությունների անդամների գենդերային լուսավորությունը,
- ուսումնասիրել եվրոպական քաղաքական կուսակցությունների գենդերային հավասարության հասնելու փորձը և դրական խտրականության մերոդների կիրառման հնարավորությունը,
- նպաստել կուսակցություններում կանանց կաղըների պատրաստմանը, ձևավորել կուսակցությունների դեկավար կառույցներում կանանց առաջմղման մեխանիզմներ,
- կատարելագործել կանանց քաղաքական առաջխաղացման հարցերում քաղաքական կուսակցությունների կանանց խորհուրդների և կանանց հասարակական կազմակերպությունների համագործակցության ձևերը:

Հասարակական կազմակերպություններին

- աջակցել ՀԿ-ների կանանց լիդերության դպրոցների կազմակերպմանը՝ մայրաքաղաքում և համբավետության մարզերում առավել մրցունակ կին լիդերների ընտրության սկզբունքի կիրառմամբ,
- մշակել մողովներ և ներդնել ընտրարշավանդներին կանանց պատրաստման համալիր ծրագրեր, ներառյալ քաղաքական-իրավական և տնտեսական գիտելիքների հարստացումը, ընտրարշավանդների կազմակերպման և ԶԼՄ-ների հետ համագործակցության տեխնոլոգիաների ուսուցումը, լիդերության հոգեբանական վարժանքները:

▪ **ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԼՈՒԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

- ընդլայնել գենդերային դասընթացների ներդրումը դպրոցական և բուհական կրթության համակարգերում,
- իրականացնել բնակչության գենդերային լուսավորության կրթական ծրագրեր ԶԼՄ-ների բոլոր տեսակների ու խողովակների միջոցով,
- կազմակերպել հասուկ կրթական ծրագրեր լրագրողների համար կանանց լիդերության աջակցության նպատակով, խրախուսել ԶԼՄ-ներում փիար արշավների ներդրումը՝ ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը և կանանց առաջմնանը, հատկապես՝ ընտրությունների շրջանում:

Հայելված 1

**Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման
կին պատգամավորները**

Հանրապետական կուսակցության խմբակցություն՝ 9 կին

1. **Հերմինե Նաղդալյան,** Ազգային ժողովի նախորդ գումարման պատգամավոր, ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ, տնտեսագիտության թեկնածու
2. **Շուշան Պետրոսյան,** Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատար, ՀՀ վաստակավոր արտիստ, ՀՀԿ անդամ, գեղանկարիչ-գրաֆիկ
3. **Կարինե Աճեմյան,** Ազգային ժողովի նախորդ գումարման պատգամավոր, ՀՀԿ կանանց խորհրդի անդամ, դերասանուհի
4. **Ռուզաննա Մուրադյան,** Գ.ր. Զոհրապի անվան թիվ 43 ավագ դպրոցի տնօրեն, ՀՀԿ կանանց խորհրդի անդամ, ֆիզիկոս, մանկավարժական գիտությունների թեկնածու
5. **Մարգարիտ Եսայան,** լրագրող («Առավոտ» թերթ), ՀՀԿ անդամ, հայոց լեզվի և գրականության մասնագետ
6. **Նաիրա Կարապետյան,** ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային խորհրդի քարտուղարության PR պատասխանատու, Միացյալ ազգատական ազգային կուսակցության (ՄԻԱԿ) անդամ, արևելագետ
7. **Արփինե Հովհաննիսյան,** Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, ՀՀԿ անդամ, իրավաբան
8. **Կարինե Պողոսյան,** թիվ 17 ընտրատարածք, Արտաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրեն, ՀՀԿ անդամ, ֆիզիկոս-մանկավարժ
9. **Մարինե Մարաբյան,** թիվ 40 ընտրատարածք, «Ինտերնեյշնլ Մասիս Տոբակո» ՍՊԸ գործադիր տնօրեն, բանասեր-արևելագետ

«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն՝ 2 կին

- 10. Նախրա Չոհրարյան,** Ազգային ժողովի նախորդ գումարման պատգամավոր, թատերագետ
- 11. Էլինար Վարդանյան,** ՀՀ փաստաբանների պալատի անդամ, «Առաջին հիփոթեքային ընկերություն» կազմակերպության իրավախորհրդատու, իրավագետ-փորձագետ

«Հայ ազգային կոնգրես» խմբակցություն՝ 1 կին

- 12. Լյուդմիլա Սարգսյան,** Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության ատենապետ, մաքենատիկոս-ծրագրավորող

«Օրինաց երկիր» խմբակցություն՝ 1 կին

- 13. Հեղինե Բիշարյան,** «Օրինաց երկիր» կուսակցության փոխնախագահ, Ազգային ժողովի նախորդ գումարման պատգամավոր, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, մանկավարժական գիտությունների թեկնածու

«Ժառանգություն» խմբակցություն՝ 1 կին

- 14. Զարուհի Փոստանջյան,** Ազգային ժողովի նախորդ գումարման պատգամավոր, իրավաբան-իրավագետ

**Կանայք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հիմգերորդ
գումարման դեկավարության կազմում**

ՀՀ Ազգային ժողովի դեկավարության կազմում ընտրվել է երեք կին.

փոխխոսնակ Հերմինե Նադալյան, ՀՀԿ խմբակցություն, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահ,

Եվրոպական ինստեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նահիրա Չոհրաբյան, «Քարգավաճ Հայաստան» խմբակցություն,

մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Էլինար Վարդանյան, «Քարգավաճ Հայաստան» խմբակցություն, և

խորհրդարանական խմբակցություններից միայն մեկը՝ «Օրինաց Երկիր» խմբակցությունն է կին գլխավորում՝ Հեղինե Բիշարյանը:

**Կանանց ներկայացվածությունը ՀՀ Ազգային ժողովի մշտական
հանձնաժողովներում**

Գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում ներկայացված է 5 կին:

Երեք կին պատգամավորներ՝ Հեղինե Բիշարյանը, Զարուհի Փոստանջյանը և Լյուդմիլա Սարգսյանը համատեղում են աշխատանքը երկու հանձնաժողովներում:

Կանայք ներկայացված չեն 12 հանձնաժողովներից 4-ի կազմում.

- արտաքին հարաբերությունների,
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի,
- պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի,
- ֆինանսավարկային և բյուջետային հարցերի:

Հավելված 2

Տվյալներ տեղական և միջազգային դիտորդների վերաբերյալ

Ընտրություններին որպես տեղական դիտորդ մասնակցել են 54 հասարակական կազմակերպություններ, 31451 դիտորդ:

Որպես միջազգային դիտորդ՝ 11 կազմակերպություն, 647 դիտորդ:

Միջազգային դիտորդներն ընտրություններին կանանց մասնակցության մասին

Հայաստանում 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում ԵԱՀԿ/ԺՀՍԻՊ դիտորդական առաքելության դեկավար Ռադմիլա Շեկերինսկան, ներկայացնելով միջանկյալ գեկույցը, դրական է գնահատել կանանց ներկայացվածությունը կուսակցությունների նախընտրական ցուցակներում:

«Ուշագրավ է, որ նոր ընտրական օրենսգրքում նախատեսված էր քաղաքական զործքներացներին կանանց մասնակցության համար քվոտայի բարձրացում: Քվոտայի նշանակությունը և կիրառումը զգայի էին և դրական նշանակություն ունեցան, սակայն տվյալ հարցում առկա են նաև որոշ մտավախտություններ: Կուսակցական ցուցակներում ընդգրկված կանայք ընտրվելուց հետո հաճախ ներկայացնում են դիմումներ ինքնարացարկի մասին, և այդ դեպքում քվոտաների նշանակությունը համահարթեցվում է», - հայտարարել է Շեկերինսկան՝ նշելով նաև, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում նախագահների **32%-ը** և անդամների **44%-ը** կանայք են եղել:

«Դա նշանակում է, որ ... գենդերային քվոտան ընտրությունների կազմակերպման ընթացքում պահպանվել է: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները նոյնպես շատ ակտիվ էին, տեղական դիտորդների մեծ մասը կանայք էին, ինչը կարելի է միայն ողջունել», - նշել է Ռադմիլա Շեկերինսկան¹³⁵:

135 Ռադմիլա Շեկերինսկայի ելույթից:

Հավելված 3

Ընդունական հանձնաժողովների գենդերային կազմը

Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմում յոթ անդամներից երեքը կին են, որոնցից մեկը ԿԸՀ նախագահի տեղակալն է:

Ընտրատարածքային ընտրական 41 հանձնաժողովներում կանաց ներկայացվածությունը կազմել է **30,5%**, ընդ որում Երևանի ընտրատարածքային հանձնաժողովներում՝ **34%**, մարզերի ընտրատարածքային հանձնաժողովներում՝ **28%**:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների դեկավար կազմում ընդամենը **16%-ն** է կին, նրանցից նախագահ են միայն 3-ը, 8-ը տեղակալ են, 9-ը՝ քարտուղար:

Տեղամասային 1982 հանձնաժողովներում կանայք կազմել են **44%**, տեղամասային հանձնաժողովների նախագահների մեկ երրորդը կանայք են:

Հա-
վել-
ված-
ներ

**ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՅՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

**ԿԱՆԱՅՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԵՐԻՆ
Վերլուծական տեսություն**

**Գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար՝
Զեմմա Հասրաբյան**

**Խմբագրական կազմ՝ Զեմմա Հասրաբյան (գլխ. Խմբագիր),
Անահիտ Հարությունյան, Լիլիթ Զաքարյան,
Թամարա Հովհաննյան, Գայանե Արմաղանովնա**

**Հայերեն տեքստի խմբագրում՝
Համակարգչային ապահովումը՝
Մակետավորում՝**

**Անահիտ Հարությունյան
Իրինա Շահինյանի
Անուշ Մեսրոպյանի**

**Համալսարանական կրթության կանանց ասոցիացիա
0002, Երևան, Սարյան 22, 12-րդ հարկ:
Հեռախոս՝ (374 10) 53 68 02,
Փաքս՝ (374 10) 53 67 92,
E-mail: awue.armenia@gmail.com**

Տարածվում է անվճար



**Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» իրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա, 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ info@asoghik.am**

